



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines



Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:


- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.


About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>



35







Kristonakan vayayetutun
Or Sari...
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ 198

ՎԵՐԴԵՊԵՏՈՒԹՅՈՒՆ

որ

Ճ 36 հ

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՎԱՀԱՌՈՒԹԵԱՄԱՅ

ՀԵՐԵՒՈԾԵՐ ԿԸ ՍՈՒՐՎԱՑՈՒՆԵ, ՔՐԻՍ-
ՏՈՆԵԱԿԱՆ ՀԵՐԵՒՈԾ

ԳԻՏԵԼԻ ԵՐԵՄ

ԶՈՐՈՐԻ ՏՊԵՐՈՒԹԵԱ

ՆՈՐ ԵՕՐՔ


Ի ՏՊԵՐՈՒ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՏԵՂՄԱԿԻ ՀՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1888

Jones' Catechism. Armenian.

UNIVERSITY OF ARIZONA LIBRARIES



ԷՐԻԱ

ԵԶԴ

ՀԱՅ ԱՐ

ՎԲՈՒ մանկութենէդ 'ի վեր Սուրբ Գևորգը գիտես ,
որոնք կրնան խմաստուն ընել քեզ փրկուելու՝ Վրիստոս
Ծիստւսի վրայ եղած հաւատքովը : Խոլոք Գևորգը Սո-
տուծոյ շռւնջն է , և օգտակար է սորվեցունելու , յանդի-
մանելու , շիտկելու , ու արդարութեան խրատելու հա-
մար . որ Խստուծոյ մարդը կատարեալ ըլլայ՝ ամեն բարի
գործքերու պատրաստուած : բ Տիւ • 4 • 15-17 :

GRAB
ELEN
520
CL. 10. 44

ՅԱՅԻՆ ԱՐՄԵՐԻ ԹՒԻՆԵՐ

ԽՐԱՐԻ ՏՊԵՐՈՒԹՅԱՆ

Վրիստոնէական ճշմարիտ հաւատքին Նի միայն հաստատ հիմը՝ ու Վրիստոնէի մը լուսաւոր ճամբան առաջնորդողը՝ միայն Առւրբ Կիրքը ըլլալը՝ ինչպէս որ ամէն Վրիստոնէայ ազգ կը վկայէ, ասանկ ալ՝ ան անխախտելի հիմն վրայ հաստատուած և անոր վկայութիւնովը լեցուած գիրգերը կարող են առաջնորդել մեզի դէպ'ի ան շիտակ ճամբան երթալու, և անոր լըմին ալ հաղորդ ըլլալը։ Ուստի աս գրքիս նպատակն ալ ուրիշ բան չէ՝ բայց միայն ան լուսաւոր ճամբային շտկել ամէնուն դիտաւորութիւնը՝ որ անով լուսաւորուին։ ու (ինչպէս որ Խռաքեալը կ'ըսէ) թող տան խաւարին գործերը։ Աս ճշմարիտ պատճառներէս և մանաւանդ շատ ձայազգի ընթերցմունք սիրողներուն միշտ թախանձանքներէն ստիպուելով՝ որոնք առջի ու երկրորդ տպագրութենէն մեծ օգուտ քաղելով։ Կը փափաքին անոնց ամէն մէկենին աս պիտանի գրքէն ունենալ՝ թէ՛ իրենց և թէ՛ զակլներնուն լուսաւորութեանը համար և առջի ու երկրորդ տպուածներուն թիւը հերիք լըլլալը՝ յիշեալ բարեկամներուն փափաքը լեցունը համար մեռք զարկինք անոր երրորդ ապագրութեանը։ Եթէ առհասարակ ամէն մարդուն և մանաւանդ տղայոց ալ դիւրին հասկըցուելու ըլլալու համար՝ բոլորովին պարզ ու անզարդ բառեր գործածեցինք, չնայելով բնաւ ձայոց լեզուին ընդարձակ ճոխաբանութեանը՝ որով գուցէ ամենահարկաւոր գիտելիքները շատերուն մութ պիտի մնային։

Ուստի ասիկայ՝ թէև փոքրիկ Վահրք մըն է , բայց մեծ օգուտներ կրնայ տալ որ և իցէ հասակի մարդոց . մանաւանդ որ իր պարզութեամբը՝ ռամփիկ մարդիկ և նոր հասած տղաքն ալ ճշմարտութեան սկզբունքները կրնան համառօտարար ասկից քաղէլ : Ամէն մէկ յօդուածին սկիզբը դրուած գլուխները՝ նոյն յօդուածին իմաստին վերաբերելուն համար՝ կարդացողը երբոր անոնց հանդիպի , կրնայ բանալ Վասուածաշունչը և նոյն գլուխը կարդալ :

Նք՞՝ կը յուսանք որ հոգեսէր վարժապետները իրենց ձեռքի աշակերտներուն , և բարեպաշտ ծնողք իրենց նոր հասած զաւկըներուն մնոքին մէջ բարեպաշտութեան հոգին վառելու համար՝ պիտի փափազին կարդացունել անոնց՝ աս ՔԸՒՍՏՈՒԼԵՎԿԱՆԻ , և թէ որ կարելի է սերտել տալ . որպէս զի անոնք մանկութեան ժամանակէն կը թուելով հոգենոր գիտութեան մէջ՝ մեծցած ժամանակնին աղջին բարեկարգութեանը՝ և մանաւանդ քրիստոնէութիւնը օրէ օր աւելի ծաղկեցունելու հոգ տանին , իրենց քրիստոնեայ անուններուն համեմատ՝ քրիստոնէավայել վարքով ալ ծաղկելով 'ի փառս Քրիստոսի յուսոյն մերս :

ՅԵԿ

ՄԵԾՈՎ Ը

ԱՍՏՈՒԹՅԱՆ ՎՐԵՅ

ա .	Աստուծոյ ինչ ըլլուսն , և գնե ինչու իրեն երիբահութիւն ընկնուս վրայ	9
բ .	Աստուծոյ յարիութիւններուն վրայ	12
1 .	Աստուած անմահ է	12
2 .	Աստուած ամեն տեղ ներկայ է , ու ամեն բան զիտէ	14
3 .	Աստուած ամենակարող է	16
4 .	Աստուած սուրբ է	18
5 .	Աստուած բարի ու ողորմած է	20
6 .	Աստուած արդար է	24
7 .	Աստուած ճշմարտութեան Աստուած	28
գ .	Առաջ Խրիստոսիւան վրայ	32

ՄԵԾՈՎ Ի

ՀԻՆՉԱՏԵԿՆԵՐՈՒԹՅԱՆ ՎՐԵՅ

ա .	Բարդ հրեցանիներուն վրայ	37
բ .	Չար հրեցանիներուն վրայ	41

ԱՐԾՈՒԹՅԱՆ ԳՐԱՑ

ՄԵՐԴՈՒՆ ՎՐԵՅ

ա .	Ասպոտծոյ սովելդաբործութեանը վրայ	47
բ .	Դրախտին վրայ	50
գ .	Մարդուն փոքրաթեանը վրայ	52
դ .	Մարդուն առաջին մեղն ու էյալ	56
ե .	Մեր առաջին ձնողացն իշխալ ու վրայ	60
	1 . Ենոնք անիծուեցան ու Դրախտէն դուրս ճգուեցան	60
	2 . Մեր առաջին ձնողաց բոլոր սերունդը կորսուեցաւ իրենց մէկ մեղքովը	64
դ .	Փրկութեան ժամբուն վրայ	69
	1 . Կատուած կը պատրաստէ մեզի համար կատարեալ փրկութիւն	69
	2 . Ըխուս Վրիխատոսի մեր փրկչին ով ըլլալը .	73
ա .	Խնչը Ասպոտծ է	73
բ .	Խնչը Հորդ է	77
	3 . Խնչը Վրիխատոս մարդ եղաւ	81
	4 . Վրիխատոս մեզ պատրիէն կ'ազատէ	85
	5 . Ըխուս Վրիխատոս շարշարուեցաւ ու մեռաւ մեզի համար խաչին վրայ	89
6 .	Տէր Ըխուս մեռաւ ամենուն համար	94
7 .	Ենոնք միայն կը փրկուին՝ որ Ըխուսի կը հաւատան	97
8 .	Խօնչ է Ըխուս Վրիխատոսի հաւատալը .	99
է .	Մեր Վրիխատոսի գալան ու Երիխոնի համար պատրաստութեան վրայով	105
	1 . Ոչնք կամք շունինք Վրիխատոսի գալու մեր փրկութեանը համար . հապա Կատուած	

է որ կը փոխէ մեր սիրտերը ու իր ձու-	
գիովը Կը բասոսի կ'առաջնորդէ մեզ	• 105
2 • Ս' ենք պարտինք սրտի փոփոխութիւն ունե-	
նալ ։ առ սրտի փոփոխութիւնը ի՞նչ է,	
և ի՞նչպէս Սուրբ Հոգին իր գործը կը	
կատարէ ու Խրկինքին համար կը պատ-	
րաստէ մեզ	• • • • • • • • • 110
3 • Սուրբ Հոգին կը խօսի մեզի Այսուածա-	
շունչով	• • • • • • • • 115
4 • Սուրբ Հոգին ով ըլլալը	• • • • 123
Ը • Անհուան վրայ	• • • • • • • 127
1 • Արարմինին մեռնելուն վրայ	• • • • 127
2 • Հոգին ի՞նչ կ'ըլլայ երրոր մարմինը մեռնի	131
թ • Յարութեան վրայ	• • • • • • • 133
ժ • Դատաստուանին վրայ	• • • • • • • 139
ժա • Երիշների վրայ	• • • • • • • 144
ժը • Դաժուինին վրայ	• • • • • • • 149

ՄԵԾՈՒՅԹ

ԵՍՏՈՒԹՈՅՑ ՕՐԵՆՎԻԼԻՆ ՎՐԵՅ

ա • Օրենք արուելուն վրայ	• • • • • 155
բ • Տասը Պատուիրաններուն վրայ	• • • • • 158
Առաջին Պատուիրանքը	• • • • • 158
Երկրորդ Պատուիրանքը	• • • • • 162
Երրորդ Պատուիրանքը	• • • • • 167
Չորրորդ Պատուիրանքը	• • • • • 169
Հինգերորդ Պատուիրանքը	• • • • • 175
Վեցերորդ Պատուիրանքը	• • • • • 180

Խօթներորդ Պատուիրանքը	• • • • • 187
Ուժերորդ Պատուիրանքը	• • • • • 193
Դններորդ Պատուիրանքը	• • • • • 198
Տամներորդ Պատուիրանքը	• • • • • 202
գ • Առանձանոր պարտաւորությաներու վրայ	• • • 207
1 • Երիկներուն պարտաւորութիւնը	• • • 207
2 • Կոմիկներուն պարտաւորութիւնը	• • • 209
3 • Շառողքներուն պարտաւորութիւնը	• • • 211
4 • Տղայոց պարտաւորութիւնը	• • • • 216
5 • Տերերուն պարտաւորութիւնը	• • • • 216
6 • Շառաներուն պարտաւորութիւնը	• • • 218
7 • Եշխաններուն պարտաւորութիւնը	• • • 220
8 • Ժողովարդին պարտաւորութիւնը	• • • 222*

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱԾՆ Վ ԵՐԴԵՊԵՏԱԿԱՆ ԹԻՒ

ՄԵԾՈՅ Ե ԵՍՈՒՏՅՈՌՈ ՎՐԵՅ

Հ. ԵՍՈՒՏՅՈՌՈ ԵԿԱ ԸԼԼԵԼՅԻՆ, ԵՒ ՄԵՆՔ
Ի՞նՉՊԱՇ ԻՐԵՆ ԵՐԿՐՊԵԳԱՌԹԱՒԻՆ
ԸՆԵԼՆՈՒՑ ՎՐԵՅ :

Հարց . Ի՞նչ է Աստուած :
Պարագիռն . Աստուած Հոգի է :
(Անիկայ) մարդիկներէն մէկը չտեսաւ, ու ալ տեսնե-
լու կարող է : ա ՏԻ . կ. 16 :

Հ. Մնաք Բնչպէս երկրպագութիւն ընելու ենք Աս-

տուծոյ :

Պ. “Հոգիով ու ճշմարտութիւնով” : Յահ . գ .
23, 24 :

Հ. Օրը քանի՞ անգամ Աստուծոյ երկրպագութիւն
ընելու ենք :

Պ. Պանէ ամէն առաջու ու իրիկուն :
Իրիկունը՝ առաջու ու կէս օրը պիտի բողոքեմ ու հա-
ռաչեմ, և անիկայ պիտի լէ իմ ձայնս : Աազ . Ճ . 17 :

Ն . Աստուծոյ Հոգի ըլլալուն վրայով ի՞նչ կ'ըսէ Աստուծաշունչը :

Պ . “Աստուծած Հոգի է . և իրեն երկրպագողներուն ալ պէտք է որ հոգիով ու ճշմարտութիւնով երկրպագութիւն ընեն” : Յուհ . դ . 24 :

Ն . Ի՞նչ բանի համար ստեղծուեցանք :

Պ . Տէրով երկրպագութիւն ընելու և իրեն ծառայելու համար :

Ինչու որ ամէն բաները անկէ , ու անով , և անոր համար են . իրեն փառք յաւիտեանս . ամէն : Հոգիլ . ժա .

36 : Աբդ՝ թէ՛ ուտէք թէ՛ խմէք՝ և թէ՛ ի՞նչ գործ որ ընէք , ամէն բան Աստուծոյ փառքին համար ըրէք : ա Աորնի . ժ . 31 :

Դուք հիմա գիտէք Աստուծոյ ի՞նչ ըլլալը : Այնք միս ու արիւն ունեցող մարմիններ ունինք . բայց Աստուծ մեզի պէս չէ . Ինքը Հոգի է . Ինքը ամէն տեղ ներկաց է . բայց մենք չենք կրնար տեսնել զնիքը :

Հիմա գիտէք թէ ի՞նչպէս երկրպագութիւն ընելու էք Աստուծոյ . “Հոգիով” . սյսինքն Հոգիի մը պէս (ա) .

ա . Դուռն քեզի կուռք չչինե՞ս ոչ ալ վերը երկինքի մէջ՝ կամ վարը երկրի վրայ՝ կամ երկրին տակի ջուրերուն մէջ եղած բաներուն մէկ նմանութիւնը . Ենոնց երկրպագութիւն չընե՞ս , ու զանոնք չպաշտե՞ս . ինչու որ ես քու Տէր Աստուծած՝ նախանձոտ Աստուծած եմ որ կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդւոցը վրայ՝ մինչեւ անոնց երրորդ ու չորրորդ ազգը՝ որ կ'ատեն զիս . Եւ կ'ողորմիմ անոնց մինչեւ հազար ազգը որ կը սիրեն զիս ու իմ պատուիրանքներս կը պահեն : Երիրորդ Պատրոսիբան + . Եւէց ի . 4-6 : Որովհետեւ Աստուծոյ ցեղէն ենք , պէտք չէ որ անանկ սեպէնք թէ Աստուծածութիւնը նման ըլլայ ոսկիի կամ արծաթի կամ քարի , որ մարդուս վարպե-

և ձեր հոգիովը , ձեր սրտովը իրեն աղօթելով ու մեղքեր-նիդ խոստովվանելով , զինքը օրնելով՝ սիրելով՝ և ձեր բոլոր սրտովը իրեն ծառայելով : “ Պէտք է երկրպագութիւն ընէք ճշմարտութիւնով ալ ” , այսինքն առանց կեղծաւու-րութեան , անկեղծ սրտով :

Վ . Վատուած կը սիրէ ու կը հասնի միայն անոնց՝ որ հոգիով ու ճշմարտութիւնով երկրպագութիւն կ'ընեն իրեն : ՞ Զգուշացէք ուրեմն որ Վատուծոյ երկրպագութիւն ըրած ատեննիդ հոգիով ու ճշմարտութիւնով ընէք :

Դ . Վմէն մարդիկ՝ ծեր ու պատանի , երկրպագութիւն ընելու են Վատուծոյ , հրապարակաւ ու առանձին : ՞ Զրա-պարակաւ եկեղեցին մէջ , և ընտանեաց մէջ . առանձին՝ գոնէ օրը երկու անգամ , առտու ու իրիկուն մէկ մասնա-ւոր տեղ մը՝ ուր որ մէկը չկընար տեսնել կամ լսել բայց միայն Վատուած (ա) :

Ումանք երկրպագութիւն կ'ընեն Վատուծոյ՝ օրը իրեք անգամ , առտու , ու ցորեկը , ու գիշերը :

Գ . Վատուած մեզ իրեն համար ստեղծեց , որ միշտ իրեն երկրպագութիւն ընենք ու իրեն ծառայենք : Ուստի թէ որ կ'ուզէք որ Վատուած սիրէ ձեզ ու ձեզի բարի ընէ , թէ որ կ'ուզէք երջանիկ ըլլալ աս աշխարհիս մէջ ու գա-լու աշխարհին մէջն ալ , երկրպագութիւն ըրէք Վատու-ծոյ “ Հոգիով ու ճշմարտութիւնով ” : ա Տիմ . գ . 8 , 9 : “ Վատուծոյ մօտեցէք , ու անիկայ ձեզի պիտի մօտե-նայ ” : Յամ . գ . 8 :

տութիւնովը ու խելքովը քանդակւած է : Գաործ . Ժէ . 29 : “ Իուք Վատուածը որմէւ կը նմանցունէք , ու զանի-կայ լինչ նմանութեան հետ կը հաւասարցունէք : Լաւայ . ին . 18 :

ա . Վատիր քու ներքին սենեակդ , ու դուռդ գոցէ : Վատիր . կ . 6 :

• ԱՍՏՈՒԹՅՈՅ ՅԵՏԱՊԻԹԻՆԱՆԵՐՈՒՄ
Այց :

1 • Աստուած անմահ է

- Հ • Ո՞վ ստեղծեց ու Քվ կը խնամէ ամէն բաները :
- Պ • Աստուած : Ծանր . ա . 1 :
- Հ • Աստուած ինքը ստեղծուած է :
- Պ • ԶԵ : Խոսայ . իդ . 6 :
- Հ • Հայր ունի :
- Պ • ԶԵ : Ինքը հայր չունի : Խժես . դ . 6 :
- Հ • Ուրեմն թէ որ Աստուած ստեղծուած չէ ու հայր աւ չունի , Քվ իրեն կեանք կու տայ :
- Պ • Մէկը չտար :
- Հ • Ուրեմն հայր Աստուած ի՞նչպէս ունի իր կեանքը :
- Պ • Հայրը իր անձին մէջը ունի կեանք : Ետիւ . Ե .

26 :

- Հ • Աստուած սկիզբ ունեցմաւ :
- Պ • ԶԵ :
- Հ • Աստուած փոփոխութիւն կամ վերջ ունի :
- Պ • ԶԵ : Ծանր . իա . 33 : Ատղ . դ . 2 :
- Հ • Մէր ու ամէնուն կեանքը Քվ կու տայ :
- Պ • Աստուած . քանզի “ Անով կ'ապրինք և կը շարժիք ու կանք ” : Գարդ . ժէ . 28 :
- Հ • Յաւիտեանս յաւիտենից պիտի ապրինք :
- Պ • Մէր մարմինները պիտի մեռնին , բայց հոգիններնիս պիտի ապրինք :
- Հ • Հապա մէր մարմինները պիտի յարութիւն չառնեմն վերջն օրը նորէն ապրելու համար :
- Պ • Այս . “ Յարութիւն պիտի ըլլայ , թէ արդարներուն և թէ մեղաւորներուն ” : Գարդ . իդ . 15 :

Աստուած անմահ է . ինքը բնաւ սկիզբ լցւնեցաւ , բնաւ վէրջ ալ պիտի ըռւնենայ : Ինքը չփոխուիր . ինքը նոյն է երեկ , այսօր , և յաւիտեան :

Ե . Ինքն է յաւիտենական հայրը , ինքն է կենաց Եղբիրը ու ամէն բաներուն մեզի Տուողը : “ Ենով կ'ապրինք և կը շարժինք , ու կանք ” : Հայրենիս և մայրենիս ու բարեկամներնիս աս աշխարհիս մէջ կը մեռնին , ու մեզ մինակ կը ձգեն . բայց մեր երկնաւոր Հայրը ասոնցմէտ աւելի մեծ է , և անմահ : Ինքը անմահ է ու կընայ հոդտանիւ մեզի՝ մեր տղայութենէն մինչեւ գերեզմանը : Ատով . ճգ . 1-5 :

Ի . Եւ քանզի ինքը կենդանի է , մենք ալ կենդանի պիտի ըլլանք : Անգր անմահ ննիք . մեր մարմինները կը մեռնին , բայց Աստուած նորէն պիտի յարուցանէ անոնք . մենք հոգիով ու մարմինով պիտի ապրինք յաւիտեան . աս է Ճշմարտութիւնը : Բ Տիմ . ա . 9 , 10 :

Դ . Եւ աս ուրախութիւն տուող Ճշմարտութիւն մըն է մեզի՝ թէ որ մենք արդար ենք : Ծնէ որ մենք արդար ենք , Աստուածոյ հետ երկինքին մէջը պիտի ըլլանք յաւիտեան : Բայց ցաւելու Ճշմարտութիւն մըն է թէ որ մենք չար ննիք . ինչու որ սատանաներուն հետ պիտի բնակինք դժոխքին մէջը յաւիտեան : Ատով . ին . 46 :

Ի . Ինչպէս Տէրն է՝ որ աս ներկայ կեանքերնիս կուտայ մեզի , անանկ ալ Տէրն է՝ որ անիկայ կ'առնէ մէզմե : Ուրեմն շանք ընենք անանկ ապրիլ աս ներկայ կեանքերնուս մէջ , որ երբ Աստուած անիկայ առնելու ըլլայ , մենք կարենանք պատրաստ գտնուիլ իր կէմը ելլելու , ու իր հետը փառքի մէջ բնակելու՝ գալու կեանքով (ա) :

ա . Դուք ալ պատրաստ կեցէք , քանզի Որդին մարդոյ կու գայ անանկ ժամու մէջ՝ որ դուք չէք կարծեր : Դա . ժք . 40 :

2. Աստուած ամէն տեղ ներկայ է, ու ամէն բան
գիտէ :

Ն. Աստուած Թւր է :

Պ. Աստուած ամէն տեղ է :

Ոչկը ծածուկ տեղուանք կրնայ պահուիլ՝ որ ես զանի-
կայ չտեսնեմ, կ'ըսէ Տէրը . միթէ երկնքը ու երկերը
լցունողը ես չմ, կ'ըսէ Տէրը : Երեմ . իդ . 24 :

Ն. Ինքը լօնէ կը տեսնայ ու գիտէ :

Պ. Ամէն բաները : Գարդ . ժե . 18 :

Ն. Լօնէ կ'ըսէ Առւրը Գիրքը “Տէրոջը աչքերուն”
վրայով :

Պ. “Տէրոջը աչքերը ամէն տեղ չարերը ու բարիները
կը դիտեն” : Առաք . ժե . 3 : ք Անայ . ժկ . 9 : Երեմ .
լք . 19 :

Ն. Ինաւ ինքզինքնիս կրնանք Աստուածմէ գալտուկ
տեղ մը պահել :

Պ. Զէ . մէ ցորեկ և մէ գիշեր : Երեմ . իդ . 24 :
Առաք . չկթ . 10, 12 : Յոթ . լա . 4 : Երեմ . դ . 13 :

Ն. Լօնէ էր ան անունը՝ որն որ Նազար Աստուածոյ
տուաւ :

Պ. “Տէսիլքիս ճշլ իրեցած Աստուածն ես” : Շաներ .
ժկ . 13 : Առաք . ե . 21 :

Ն. Օձէ որ ձեզմէ մէկը իմաստութեան կարօտի, որմէօ
ինդրելու է :

Պ. Աստուածմէ . ինըւ որ բոլոր գիտութեան և բոլոր
իմաստութեան Տէրը Աստուած է :

Օձէ որ ձեզմէ մէկը իմաստութեան պակաած ըլլայ, թուլ
ինդրէ Աստուածմէ՝ որ ամէնուն առատապէս կու տայ ու
շախատեր, և անոր պիտի տրուի : Յաք . ա . 5 : Առաք .
դէ . 10 : Ճիշէ . 5 : Եանայ . ին . 28 :

Հ . Աստուած ԲՈՆՀ տուաւ Առղոմնին :

Պ . “ Եշ Աստուած Առղոմնին իմաստութիւն ու խիստ շատ հանձար տուաւ ” : գ Ծատկ . դ . 29 :

Հ . Ամէն մարդու ներսիդին ԲՈՆՀ է ան՝ որն որ Աստուած միայն կատարելապէս գիտէ :

Պ . Աիրտը :

Ա ան զի բոլոր մարդոց որդիներուն սիրտը մինակ դուն զիտես : դ Ծատկ . ը . 39 : Առաջ . խէ . 21 : Հառվ . ք . 16 : ա Առնիւ . դ . 5 :

Հ . ԿՈՆՀ կ'ըսուի սրտին խարերայութեանը ու շարութեանը վրայով :

Պ . “ Աիրտը ամէն բանէն աւելի խարերայ ու խիստ չար է ” : Երկմ . ժէ . 9 : Դօմադ . կ . 5 : ը . 21 : Հառվ . դ . 10-19 : Եփես . ք . 3 : Տէտ . դ . 3 :

Հ . Ենչքւ համար Աստուած բոլոր մարդոց սիրտերը կը քննէ :

Պ . Ամէն մէկուն իր գործքերուն պէս հասուցանելու համար : ա Անաց . իք . 9 : Առաջ . ելթ . 23 , 24 : Երկմ . ժէ . 10 : Յայտ . ք . 23 :

Տէրը կը լցունէ երկինքն ու երկիրը . ինքը ներկայ է ամէն տեղ , և կը տեսնայ ու գիտէ ամէն բաները :

Ե . Ուստի թէ որ պառկինք թէ որ ելլանք , կամ թէ որ դուրս երթանք , և կամ ներս գանք , ուր որ ըլլանք , ԲՈՆՀ ընելու ըլլանք , Աստուած մեր բոլորտիքն է : Անք կրնանք մարդոցմէ պահուիլ , բայց Աստուծմէ բնաւ շնոք կրնար : Յորեկը ու գիտերը մէկ է անոր . միշտ յիշնոք ան անունը՝ որն որ Հագար Աստուծոյ տուաւ . “ Տեսիլքիս մէջ երեցած Աստուածը ” . և վարուինք իրը թէ իր ներկայ ըլլալը զգալով . վախնանք գողնալէն , կամ սուտ խօսելէն , կամ անիծելէն կամ ու և իցէ չար բան մը ընելէն . քանզի ամէն բան Աստուած կը տեսնէ ու գիտէ :

Դ . Ինքը նաև կը տեսնէ չէ թէ միայն մեր շար գործքերը , հապա բարի գործքերնիս ալ : Ուստի եկէք քաջալերուինք բարի ընելու . Աստուած կը տեսնէ , և ներկայ է մեզի հետ , ու պիտի օրիէ մեզ . մենք չպիտի կորսընցունենք մեր վարձքը : Այս . գ . 18 :

Գ . Միայն Աստուած գիտէ սիրտը . ինքը չէ թէ միայն մեր գործքերը կը տեսնէ , հապա մեր սիրտերուն պինտ զաղտուկ խորհուրդներն ալ : Ինքը մեզմէ աղէկ գիտէ մեզ . մենք կրնանք մարդ խարել , բայց Աստուած չնաք կրնար խարել : Ինքը կը զրէ ու պիտի դատէ ամէն սիրտ ամէն գաղտուկ խորհուրդները : Աղաչենք Աստուածոյ Քըրիստոսի անսունովը որ զայ ու իշխէ մեր սիրտերուն մէջ և փոխէ ու սրբէ անոնք , և անանկ մեզ երկինքին համար պատրաստ ընէ :

Դ . Իոլը իմաստութեան Տէրը Աստուած է . և բարի կերպով կը նայի ամէն բաները : Մենք փափաքելու ենք որ Աստուած մեզի համար անանկ ընէ ձիշտ ինչպէս որ իրեն աղէկ կը թուի . և մենք հաճելու ենք ինչ որ ինքը ընէ . և երբոր իմաստութեան կարօսինք , երբոր ուզենք գիտնալ թէ ինչ պարտինք ընել կամ չընել , Աստուածնէ ինդրելու ենք որ ինքը մեզի սորվեցունէ :

3 . Աստուած ամենակարող է :

Ա . Աստուած իր ամենակարող զօրութիւնը ցուցունելու համար ի՞նչ ըրաւ :

Պ . Աշխարհը արեգակը՝ լուսինը՝ և աստղերը ստեղծեց ու կը կառավարէ անոնք : Օձնոր . առ . 1 : Յոթ . իշ . 7 : Եսուայ . իս . 26 : Կող . առ . 15 , 16 : Երբ . առ . 2 , 3 , 10 :

Ա . Աստուած ի՞նչպէս ստեղծեց անոնք :

Պ . Իր կարող խօսքովք : Օձնոր . առ . 3 : Ապղ . լէ . 6-9 : Երբ . առ . 3 :

Հ . Մէկը կրնամյ արգիլել զինքը՝ իր ուզածը ընելէն :
Պ . Ձէ : Եսոյ . խգ . 13 : ‘ Դան . դ . 3 :

Հ . Ամենակարող Աստուածը մեր Աստուածը ու մեր
Փրկիլը ունենալու համար թօնչ պիտի ընենք :

Պ . Պարտինք մեծապէս ուրախանալ :

Հ . Արնանք մեղքի մէջ ամուր պահել ինքզինքնիս
Ամենակարող Աստուածոյ դէմ ու յաջողութիւն ալ գըտ-
նալ :

Պ . Ձէ :

Միիկայ սրտով իմաստուն՝ և ուժով կարող է . Թվ
անոր դէմ իր սիրաը խատացուցեր ու յաջողութիւն գտեր
է : Յոբ . թ . 4 : Ամրարիշտները դժոկքը պիտի դառ-
նան և ան ամէն ազգերը որ զԱստուած կը մոռնան : Սաղմ .

թ . 17 : Կզ . 7 :

Հ . Ո՞րո՞ն ձեռքը իյնալը սոսկալի բան է :

Պ . Կենդանի Աստուածոյ ձեռքը :

Արդ իմացէք ասիկայ՝ ով դուք Աստուած մոռցողներ ,
շըլայ որ ձեզ պատուեմ , և ազատող մըն ալ չգտնուի :
Սաղմ . ծ . 22 : ‘ Դուն ով Տէր , Դուն ահաւոր ես՝ և ով
կրնայ կայնիլ քու առջիդ քու բարկութեանդ ատենը :
Սաղմ . հէ . 7 : ‘ Ռորբդած կրակով վրէժ առնելու ա-
նոնցմէ՝ որ Աստուած չեն ճանչնար , և որ մեր Տէր Յիսուս
Քրիստոսի Եւետարանին չեն կազանդիր . որոնք պիտի
պատժուին յաւիտենական սատակումով՝ Տէրոջը երեսէն ու
անոր զօրութեանը փառքէն : Բ Ծակո . ա . 8 , 9 :

Աստուած ամենակարող է . ամէն բաները ինքը ստեղ-
ծեց ու ինքը կը պահէ իր կարող խօսքովը : “ Ինքը ըսաւ ,
ու եղաւ ” . Աստուածոյ առջին դժուարին բան մը չկայ .
դուք կրնաք արգիլել մարդը , բայց ոչ զԱստուած : Ե-
րեմ . լթ . 27 :

Ա . Խնքը կարող է փրկելու . ուստի մինակ իր յաւիւտնական զօրութեանը ապաւինելու ենք : Խնքը կարող է բռլըր մեզի պէտք եղածը տալու , մեզ ամէն վասնգներէ ապատելու և մեզ ամէն փորձութիւններուն մէջէն ապահով տանելու : ք Կողմի . ժք . 9 : Ոչ մարդու՝ ոչ ալ սատանային զօրութիւնը կրնայ վասնել մեզի՝ թէ որ Նոտուած մեզի հետ ըլլայ : ք Տի . է . 17 , 18 : Հոդիին փրկութիւնը ապահով է երկրի վրայ . թող ուրախանան իր ժողվուրդները (ա) :

Ե . Խնքը կորսցնցունելու ալ կարող է . մէկը չկրնար կայսիի իր առջեւ , ոչ ալ շատ զօրաւոր մեղաւորները : Խնքը կրնայ կտոր զարդել անոնք , ու մէկը չկրնար ապատել անոնք : Իր բարկութիւնը ահագին է :

“ Առոկալի բան է կենդանի Կատուծոյ ձեռքը իյնալը ” : Եթք . ժ . 31 : Կատուծոյ զօրութիւնը շարերուն դէմ կը դառնայ , անոր համար թող շարերը վախնան , և ապաշխարեն ու Յիսուս Քրիստոսի միջնորդութիւնովը Կատուծոյ դառնան :

4 . Կատուած սուրբ է :

Հ . Երբոր Երայի մարդարէն Տէրը իր աթոռին վրայ նստած՝ ու հրեշտակներուն իրեն երկրպագութիւն ընելունսաւ , անոնք Բ՞նչ կը կանչէին մէկզմէկու :

Պ . “ Առորբ , սուրբ , սուրբ , Օօրութեանց Տէրը , լեցուն է իր փառքովը բոլոր երկիրը ” : Եսայ . է . 1-4 : Յայր . է . 8 :

Հ . Այսիրաւութիւն մը կմյ Կատուծոյ քով :

Պ . Չէ . ոչ մեղք , ոչ անօրէնութիւն և ոչ անիրաւութիւն : Ատղ . ճժամ . 6 : Եսայ . իսք . 15 : “ Իործ .

ա . Որ Կատուծոյ զօրութեամբը պահպանուած էք հաւատքով ան փրկութեանը համար՝ որ պատրաստուած է վերջին ժամանակը յշտնուելու . որ անով կ'ուրախանաք : ա Պիտք . ա . 5 :

դ . 14 : Ըստ՝ առ 13-17 : Հայով . թ . 14 : առ ՀՅՈՒ .
առ 5 :

Հ . Խօնչ տեսակ տեղ մըն է երկինքը՝ ուր որ Աստուած
կը բնակի :

Պ . Առւրբ տեղ մըն է : Յայտ . իա . 10 , 27 : իթ .
14 , 15 :

Խս բարձր ու սուրբ տեղը կը բնակիմ : Խսոյ . ծէ . 15 :

Հ . Խօնչ կ'ընէ Աստուած շարերը :

Պ . Կ'ատէ զանոնք : Ասդ . ե . 4 , 5 : ժա . 5 , 7 :
Լդ . 16 : Յաբ . ժէ . 14-16 :

Հ . Խօնչ կ'ընէ Աստուած արդարները :

Պ . Աը սիրէ զանոնք : Ասդ . ժա . 7 :

Հ . Ձեւ որ մենք սուրբ չըլլանք : Աստուած մեղ եր-
կինքը պիտի ընդունի :

Պ . Շէ :

Խւ հոն բնաւ անմաքրութիւն մը պիտի չմտնէ , ու աւ
պղծութիւն ու ստութիւն գործող մը : Յայտ . իա . 27 :

Հ . Աստուած մեր սուրբ ըլլալուն վրայով Բօնչ կ'ընէ
մեզի :

Պ . “Ամւրբ եղիք , քանզի ես սուրբ եմ” : ա Պիտր .
առ 15 , 16 : “Աւագ . ժթ . 2 :

Հ . Խօնչ բանի պարտինք հետևիլ՝ թէ որ Տէրը տես-
նել ուզենք :

Պ . “Արբութեան” :

Խաղաղութեան ետևել՝ եղիք ամենուն հետ՝ և սրբու-
թեան , որ առանց ասոր մէկը պիտի չտեսնէ Տէրը : Խբր .
ժք . 14 : Խաղակ որ ձեր անդամները անօրէնութեան հա-
մար ընծայեցիք՝ պղծութեան և անօրէնութեան ծառաներ
ըլլալու , անսանկ աւ հիմա ձեր անդամները սրբութեան
համար ընծայեցէք՝ արդարութեան ծառաներ ըլլալու :

Հայով . դ . 19 :

Վատուած սուրբ է . Եր բնութիւնը իսկապէս սուրբ է . իր սրբութիւնն է իր փառքը . Խնքը անհուն մաքրութիւն է բոլոր իր խորհուրդներուն և խօսքերուն ու ճամբաներուն մէջ : Խնքը կ'ատէ մեղքը մեծ ատելութիւնով :

Ե . Ձեէ որ Վատուած սուրբ ըլլար , իր ստեղծուածներուն սիրյան արժանի չպիտի ըլլար :

Ո . Խնքը կը սիրէ արդարները . Խնքը պիտի հոգայ անոնք , ու երկինքին մէջ իր առջելը տեղ պիտի տայ անոնց :

Գ . Խնքը կ'ատէ շարերը , և պիտի կորսընցունէ զանոնք . վայ իր սրբութիւնը արհամարհողներուն . Թռող մարդ չուսայ թէ իր մեղքերուն մէջ առաջ երթալով՝ զԱստուած պիտի տեսնայ խաղաղութեամբ :

Դ . Ուրեմն բնաւ մենք չենք կրնար երջանիկ ըլլաւ , ու ալ Վատուածյ շնորհքը առնելու յուսալ՝ թէ որ չպատարինք մեղքէն ու սրբութեան չհետեինք : Անր սրբութիւնը իր օրէնքին նազանդիլն է , խորհրդով՝ խօսքով՝ գործով : Ու աս սրբութիւնը Տէրոջմէն կը ստանանք (ա) :

Ե . Վատուած բարի ու ողորմած է :

Ա . Ո՞իայն մվ բարի է :

Պ . Վատուած միայն կատարելապէս բարի է ինքիրմէն , և բարի կ'ընէ մեզի ու ամէն արարածներուն : Այս :

Ա . Ո՞վ Վատուած՝ իմ մէջս մաքրու սիրտ ստեղծէ՛ , և իմ ներսիդիս ուղիղ հոգի նորոգէ՛ : Իս երեսէդ մի՛ ձգեր , ու քու Ասուրը չողիդ ինծմէ մի՛ հաներ : Աաղմ . ծան . 10-12 : Իսայ որոնք որ զինքը ընդունեցին , անոնց իշխանութիւն տուաւ Վատուածյ որդիներ ըլլալու , որոնք կը հաւատան իր անուքանը . որ անոնք ո՛չ արիւնէ և ո՛չ մարմինի կամբէ՛ ո՛չ ալ մարդու կամբէ , հապա Վատուածմէ ծնան : ՀՅհ . ան . 12 , 13 : Եր ուզելովը մեզ ծնաւ չշմարտութեան խօսքովը որ մենք իր ստեղծածներուն երաւայրի մը ըլլանք : ՀՅա . ան . 18 :

Ճ. 68 : Առարլ . ժթ . 17 : ա Անաց . ժկ . 34 :
Խվշ ՀՔ . 6 :

Ճ . Ասէ ինծի Աստուծոյ քեզի ըրած բարիքներուն
մէկ քանին :

Պ . Աստուծած ինքը կու տայ մեզի հայր ու մայր , ու
տելիք ու խմելիք , և հագնելու լաթեր . և երբոր մենք
հիւանդ ըլլանք՝ ինքը մեղ կ'առողջացունէ :

Ճ . Ասոնցմէ պինտ աւելի մեծ բարութիւններն ալ
չընհօր Աստուծած :

Պ . Այսու . Աւետարանը տարածուած երկրի մէջ մեղ
կը բնակեցունէ , և մեզի իր սուրբ պատգամը կու տայ :

Ճ . Աստուծոյ մեզի ըրած բարերարութիւններուն
մենք արժանի՞ ենք :

Պ . Չէ :

Ճ . Խնչքւ համար :

Պ . Խնչքւ որ իրեն դէմ մեղանչեցինք :

Ճ . Անզի մեղանորներուս համար Աստուծած լինչ ամե-
նամեծ բան ըրաւ . որ կը ցուցընէ թէ ինքը ոչ միայն բարի
է , այլ նաև ողորմած :

Պ . Խնքը իր Որդին մեզի համար մեռնելու խրկեց : ա
Յօհ . դ . 9 , 10 :

Ճ . Աստուծած՝ որ մեզի հետ բարի ու ողորմած կերպով
վարուեցաւ՝ Բնապէս կը պատուիրէ մեզի իրարու հետ վա-
րուիլ :

Պ . Անչք ալ իրարու հետ բարի ու ողորմած կերպով
վարուելու ենք : Առարլ . ե . 44 :

Գիթած եղիք՝ ինչպէս որ ձեր ճայրն ալ դթած է :
Դառք . կ . 36 : Ուրեմն դուք կատարեալ եղիք՝ ինչպէս որ
ձեր երկնաւոր ճայրն ալ կատարեալ է : Առարլ . ե . 48 :

Ճ . Աստուծոյ բարութիւնն ու ողորմութիւնը մեզ
Բնչ բանի կ'առաջնորդէ .

Պ . “Վազգնարութեան” :

Վնոր անշափ քաղցրութիւնը և համբերութիւնն ու երկայնմտութիւնը կ'արհամարհնո՞ս , չդիտնալով որ Վստուծոյ քաղցրութիւնը քեզ դէպ' ապաշխարութիւն կ'առաջնորդէ : Հառմէլ • Է • 4 :

Վստուած բարի է , և բարի կ'ընէ . երկինքն ու երկերը լցուն են իր բարութիւնովք . ամէն կենդանիները կը վայելն իր բարութիւնը : Բնաշնչները , անասունները , ձուկերը , ճճիները , սողունները իր առասուլց ձեռքովք կը կերակրին : Խեցք քաղցր խնամքով հոգ կը տանի անոնց ամենուն (ա) : Աաղմ . Ճդ . 19-30 : Յոթ . Լթ . 41 :

Ոչնք զՎստուած բարկացուցինք մեր վրայ՝ իրեն դէմ մեղք գործերվանիս , անանկ որ արժանի չենք իր բարութեանը : Աւստի մեզի ըրած բոլոր իր բարութիւնները ողըմութիւն է . իր ողըմութիւնն է որ մենք կ'ապրինք ու կը տեսնենք արեգակին և լուսնին զուարձալի լոյսը , և կը վայելնեք գարունը երբոր ծատերը ու խոտերը կը կանանչնան . ամառը՝ երբոր կ'ուտենք գեղեցիկ պառուղներ . աշունը՝ երբոր կը ժողվենք ցորենը . և ձմեռը՝ երբոր կը տաքսնանք կրակին տաքութիւնովք : Իր ողըմութիւնն է որ մենք հայր ու մայր ունինք , ուտենիք ու խմելիք , մէջը բնակելու համար տուներ՝ և հագնելու լաթեր :

Իր ողըմութիւնն է որ մենք երբոր հիւանդ ըլպանք , մեզ կ'առողջացունէ . և երբոր մենք վնասուելու կամ սպաննուելու վտանգին մէջն ըլպանք , ինքը մեզ կ'ազատէ :

Վ,մէն բանէն աւելի իր ողըմութիւնն է որ իր Որդին մեզի համար մեռնելու խրկեց . և որ մենք կը բնակինք անանկ երկրի մը մէջ՝ ուր որ Յիսուս Քրիստոսի Վշետա-

ան . Վմէնուն աշբերը քեզի կը սպասեն + ու ժամանակին անոնց կերակուրը դուն անոնց կու տաս : Վու ձեռք կը բանաս , ու ամէն կենդանիին փափաքը կը լցոնես : Աաղմ . Ճին . 15 , 16 :

բանը գիտցուած է ու կը քարոզուի . քանզի տակաւին միլոնաւոր մարդիկ կան որ Աւետարանը չունին և չեն գիտեր : Իայց մենք ունինք Աստուածաշռւնչը , եկեղեցիներ , Արքակին , Վրիստոնէական գիրքեր , և բոլոր ան բաները որ հարկաւոր են մեր հոգիներուն փրկութեանը համար :

Ա . Պէտք է մեզի որ զգանք մեր մեղանչականութիւնը ու անարժանութիւնը , և փառաբանենք զԱստուած մեզի ցուցուցած բոլոր իր ողորմութիւններուն համար : Ծակ որ Աստուածոյ ողորմութիւնը չըլսար , չէնք կրնար ապրիլ աշխարիք ալ չէր կենար : Այսով . Ժկ . 4 :

Եւ պէտք է որ իր ողորմութիւնը մեզ ապաշխառութեան առաջնորդէ : Հառով . Ժկ . 4 :

Իայց մենք մեր կենացը մէջ ՞րչափ ատեն Աստուածոյ ողորմութիւնը չարաշար գործածնեցինք ու իր Որդին անարգեցինք : Ասանկ կենցաղավարութիւն ունենալին աւելի ուրիշ ի՞նչ բան կրնայ ցուցընել մեր սիրտերուն խորունկ չարութիւնը :

Չար կերպով գործածուած ողորմութիւնը աւելի սոսկալիք բարկութիւն կը բերէ մեր վայ : Այսով . Ժկ . 21-24 : Ուրեմն շուտ ապաշխարութիւնով Աստուածոյ հետ հաշտութիւն խնդրելու ենք իր Որդիին միջնորդութիւնովը :

Գ . Անք պարտինք ողորմած ըլլալ , ինչպէս որ Աստուած ողորմած է իր ամեն արարածներուն :

Անք պարտինք մնուցանել և հոգ տանիլ մեր բոլոր տիքը եղած բոլոր արարածներուն . մեղք է բուն մեր զուարձութեանը համար անոնք մեղցունել , անօթի կամ ցուրտ պահելով աստկեցունել , ծեծել , չարչըրկել , չափէն աւելի աշխատցունել , կամ անոնցմէ մէկը տանջել : Աստուած ստեղծեց անոնք , և մեզի պէս անոնք ալ զգացում ունին (ա) :

Եւ պարտինք իրարու ողորմած ըլլալ , մեզի դէմ եղած

ան . Արդարը իր անասուններուն կենացը համար հոգ կը տանի . բայց ամբարիշտներուն աղիքները անողորմ են : Այսով . Ժկ . 10 :

անիրաւութիւնները ներելով , անիծողը օրֆելով , ատելութեան փոխարէն սէր՝ չարին փոխարէն բարի հատուցանելով . ամենուն բարերար ըլլալով և մանաւանդ խեղձերուն , հիւանդներուն , անօգնականներուն , տառապեալներուն : Այսով . Է . 7 : Հառավ . Ժք . 17-21 : Այսով . Է . 43 , 44 : Յակ . Ք . 13-16 :

6 . Աստուած արդար է :

“Օձնո՞ւ . Ժք . 1-28 :

Հ . Երբեր արդարները կը մեռնին , Թւր կ'երթան :

Պ . Երկինք :

Հ . Խակ չարերը Թւր կ'երթան :

Պ . Դժոխք :

Հ . Ո՞վ կը խրկէ զանոնք հոն :

Պ . Աստուած :

Հ . Աստուած ամենուն Դատաւորն է , և միշտ ի՞նչ որ իրաւ ու արդար է ան պիտի ընէ :

Պ . Արամերես :

Քամ լիցի քեզ ասանկ բան ընելը՝ որ արդարը ամբարշտին հետ մեռցընես , ու արդարը ամբարշտի պէս ըլլայ . քամ լիցի քեզ . Միթէ բոլոր երկրին Դատաւորը արդարութիւն պիտի ընէ : “Օձնո՞ւ . Ժք . 25 : Դաշու որ կու գայ երկիրը դատելու . պիտի դատէ աշխարհքը արդարութիւնով , ու ժողովուրդները իր ճշմարտութիւնովը : Այսով . զի . 13 :

Հ . Աստուածոյ ամեն մարդ վարձատրելուն վրայով ի՞նչ պէս կ'ըսէ Առւրը Դիբքը :

Պ . “Եմէն մէկուն իր գործերուն համեմատ հատուցում պիտի ընէ” : Այսով . Ժք . 27 : ա կարծի . գ . 8 : Ք Այսոյ . Ժք . 7 :

Հ. Խօնչ ըրաւ Աստուած ան հրեշտակներուն՝ որ մեղանչեցին երկինքին մէջը :

Պ. Դժոխիքը ձգեց զանոնք :

Ա. Ասան զի թէ որ Աստուած մեղք գործող հրեշտակներուն չխնայեց, հապա խաւարի կապերով տարտարոսութագած՝ դատաստանի պահել տուաւ : բ. Պիտու ։ բ. 4 :

Հ. Խօնչ ըրաւ Աստուած հին աշխարհի մեղաւորներուն :

Պ. Վահեղեղով խղդեց զանոնք : Շօմադ. դ. Է գլուխութը :

Հ. Խօնչ ըրաւ Առողում Գատմոր չար քաղաքները :

Պ. Արակով ու ծծմբով այրեց զանոնք : Շօմադ. Ժ. :

Հ. Խօնչ կը սորվինք աս ամէն բաներէն :

Պ. Աս ամէն բաներէն կը սորվինք թէ Աստուած անշուշտ պիտի պատժէ չարերը :

Ասօրէնները թէև ձեռքի տալով միաբանին, անպատճ պիտի չմնան : Աստու ։ Ժա. ։ 21 :

Հ. Աստուած Թը մարդը փրկեց տապանով՝ երբոր հին աշխարհը կորսընցուց :

Պ. Արդար Կեցյը :

Հ. Աստուած Թը մարդը փրկեց երբոր Առողում ու Գատմոր քաղաքները այրեց :

Պ. Արդար Կովտը :

Հ. Խօնչ կը սորվինք ասկէց :

Պ. Ասկէց կը սորվինք թէ ինքն անշուշտ պիտի փրկէ արդարները :

Հ. Արնայիջնք Աստուած սիրել ու իրեն ապաւինիլ՝ թէ որ ինքը ամէն բան իրաւունքով ու արդարութեամն չընէր :

Պ. Զէ :

Հ . Յմէ որ Վատուած՝ միշտ ինչ որ իրաւ ու արդար է ան կ'ընէ , մեզմէ ալ ի՞նչ ընել կը պահանջէ :

Պ . Ինչ որ իրաւ ու արդար է :

Ուստի ամէն ի՞նչ որ կ'ուզէք՝ որ մարդիկ մեզի ընեն , դուք ալ անոնց անանկ ըրէք . քանզի աս է օրէնքն ու մարդարէները : Ուստի . է . 12 :

Հ . Յմէ որ մէկը անիրաւութեամբ վարուի մեզի հետ ու զրկանք մը ընէ , որին նայելու ենք , և մեզի օգնելու համար հիշ կանչելու ենք :

Պ . Վատուծոյ դիմելու ենք :

Իայց ինձի ասիկայ ոչինչ բան մըն է , որ ձեզմէ դատուիմ՝ կամ մարդոց դատողութենէն , մանաւանդ որ ճա ալ իմ անձն չեմ դատեր . (վասն զի ես իմ անձնի վրայով չար գործ մը չեմ զիտեր . բայց չէ թէ ասով կ'արդարանամ .) հապա զիս դատողը Տէրն է : Ուրեմն ժամանակէն առաջ դատողութիւն մի՛ ընէք , մինչեւ որ զայտ Տէրը՝ որ խաւարին գաղտնիքը 'ի ըլյո պիտի հանէ , ու սրտերուն խորհուրդները յայտնի պիտի ընէ . և ան ատենը ամէն գովութիւնը Վատուծմէ պիտի ըլլայ : ան Աոնն . դ . 3-5 : Որ կը նախատուէր , և փոխարէնը չէր նախատեր . կը չարչարուէր , ու սպառնալիք չէր ըներ . հապա ինչ- չնուը արդարութեամբ դատողին կը յանձեր : ան Պիտ . բ . 23 : Չարութեան փոխարէն մէկուն չարութիւն մի՛ հատուցանէք . ամէն մարդոց արջել բարի բաներ ընելու հոգ տարէք : Որչափ որ կարելի է մեզի՝ ամէն մարդոց հետ խաղաղութիւն ունեցէք : Աիրելիք , վուժինդրութիւն մի՛ ընէք մեր անձերուն համար , հապա բարկութեան տեղ տուէք . ինչու որ գրուած է . Ալքէժինդրութիւնը իմն է . ես պիտի հասուցանեմ՝ կ'ըսէ Տէրը : Ուստի թէ որ քու թշնամիդ անօթեցեր է՛ հաց տուր անոր , և թէ որ ծարաւի է՛ ջներ տուր անոր . քանզի աս

Ընելով՝ անոր գլխում վկայ կրածի կայծեր պիտի դիզես : Չարէն մի՛ յաղթուիր, հապա բարիով յաղթէ չարին : Հոռվ . ժը . 17-21 :

Հ . Խօնչպէս պէտք է սիրել զԱստուած :

Պ . Ո՞չնք պարտինք սիրել զԱստուած մեր բոլոր սըրտովը, միտքովը և զօրութիւնովը :

Հ . Խօնչպէս պէտք է սիրել մեր ընկերը :

Պ . Պարտինք սիրել մեր ընկերը մեր անձին պէս .

Աստուած արդար է . անկարելի է որ Աստուած անանկ բան մը ըսէ կամ ընէ որ իրաւ ու արդար չըլայ : Իր արարածները կատարեալ արդարութեամբ կը դատէ : Խնքը մէկ մեղք մը պիտի չճգէ առանց դատելու . ինքը մէկու մը աշառութիւն պիտի ընէ . ոչ պատիկի, ոչ մեծի, ոչ արուի ոչ ալ եզի, ոչ հարուստի ոչ ալ աղաքատի, ոչ ծառայի ոչ ալ ազատի, ոչ իմաստունի ոչ ալ յիմարի, ոչ հրեշտակի ոչ ալ մարդու : Խնքը պիտի քննէ և յայտնէ ամէն սրտերուն գաղտնիքները, ու պիտի վարձատրէ ամէն մարդուն իր գսրծքերուն պէս : Ամէն մարդուն պիտի ըլլայ անաշառ քննութիւն և արդար դատաստան :

Ե . Ուրախացէք Աստուածոյ արդարութեանը համար, քանզի ամէն բան ուղիղ պիտի երթայ վերջը : Արդարները պիտի վարձատրուին և չարերը պիտի պատժուին : Ոտզ . Հդ : Եշտէ . ժա . 21 : բ . Պիտ . բ . 4-9 : Եւ երբոր խստութեամբ ու անիրաւութեամբ վարուելու ըլլան մեզի հետ, մեր պարտքը Աստուածոյ արդար դատաւորին նային է մեզ պաշտպանելու համար, և ինքը անշուշտ այնպէս պիտի ընէ (ա) :

ա . Եւ սեղանէն լսեցի՝ որ կ'ըսէր . Եւի՛ Ամենակալ Տէր Աստուած, քու դատաստաններդ արդար եւ Ճշմարիտ նն : Օտյու . ժկ . 7 :

Բ. Անկք պէտք է որ դողանք արդար Կատուծոյ առջելը .
մենք ամէկս մեղաւոր չենք . մեր մեղքերը արդարապէս
պատժուելու արժանի չեն . Բնշպէս պիտի ազատինք
անկէց՝ միայն Հյաստա Վրիտոսով : Խնդը կը վճարէ Կա-
տուծոյ մեր մեղքերուն համար , ու Կատուած կը ներէ մեզի
իրեն համար : Իայց թէ որ մենք չաւատանք Հյաստաին՝
թէպէտ կարելի է որ անպատիթ մանկը աս աշխարհին մէջ ,
բայց անշուշտ պիտի պատժուինք գալու աշխարհին մէջ :
Հառվ . է . 20-26 : ա Յօհ . ա . 9 : Ստով . Ճշ . 3 , 4 :

Գ. Խնչպէս որ Կատուած արդար է , մեզմէ ալ անանկ
արդար ըլլալ կը պահանջէ : Պէտք է որ արդար ըլլանք
առ Կատուած . իր սուրբ անունին արժան եղած փառքը
տառով , սիրելով ու պաշտելով զինքը բոլոր սրտով ,
միտքով ու զօրութիւնով : Պէտք է որ արդար ըլլանք առ
մարդիկ ամենուն մեր պարտաւորութիւնը կատարելով :
Այրէ քու ընկերդ քու անձիդ պէս : Ատորն . է . 12 :
Հառվ . ժգ . 8-10 : ա Արքիլ . դ . 8-10 : Արած պէտք
է որ արդար ըլլանք դէպ՚ի մեր անձին : Կռաջ մեր խիստ
լաւ օգուտու խնդրելով՝ այսինքն մեր անմահ հոգիներուն
փրկութիւնը (ա) :

7. Կատուած Ճշմարտութեան Կատուած է :

Գարդ . Է . 1-10 :

Ա. Կատուած Ճշմարտութեան Կատուած է ու միշտ
Ճշմարտութիւնը կը խօսի :

Պ. Ճրամերես : բ Օքին . լք . 4 : Ստով . Ճի . 15 :

ա . Իայց առաջ խնդրեցէք Կատուծոյ թագաւորութիւնը
և անոր արդարութիւնը , ու ատ բոլոր բաներն ալ ձեզի
պիտի տրուի : Ատորն . դ . 33 : Խնչու որ մարմինին վար-
ժութիւնը քիչ բանի օգտակար է , բայց Կատուածպաշ-
տութիւնը ամէն բանի օգտակար է , որ թէ՛ ներկայ և թէ
ապառնի կենաց խոստմունքն ունի : ա Տի . դ . 8 :

Հ . Խօնչ կ'ըսուի Աստուծոյ անսուա ըլլալոն վրայով :
Պ . “ Ենկարելի է Խստուծոյ սուս զրուցել ” :

Որ երկու անփոփոխելի բաներով՝ որոնցմով անկարելի է Աստուծոյ սուս զրուցել , հաստատուն միմիթաղութիւն ունենանք մենք՝ որ ապաստանեցանք առջևնիս դրուած յոյսը ամուգը բռնելու : Եթ . դ . 18 : Յաւիտենական կենաց յուսովը , որ ինքը անսուտ Աստուածը խոստացաւ յաւիտենական դարերէն առաջ : Տիտ . ա . 2 : Այսպիս Աստուած ճշմարիտ թողլ ըլլայ , և բոլոր մարդիկ՝ սուս . ինչպէս որ գրուած է . Որ քու խօսքերուդ մէջ արդար ըլլաս , և գատուելու ատենդ դժոն յաղթես : Հառմէ . Ք . 4 :

Հ . Խօնչ է ան պատուիրանքը որ մեզի կ'ըսէ , “ Աըտութիւնը մէկդի ձգելով ” :

Պ . “ Ուստի ստութիւնը մէկդի ձգելով , ճշմարտութիւն խօսեցէք ամէն մէկերնիդ իր ընկերին հետ ” : Եժեւ . Ք . 25 : դ . 14 : Առղ . Ք . 9 :

Հ . Խօնչ կ'ըսուի սուտ խօսող ըլթունկներուն վրայով :

Պ . “ Այստ ըլթունքը Տէրոջը զզուելի է ” : Առաջ . Ժբ . 22 :

Հ . Եւ Խօնչ կ'ըսուի սուտ խօսող լեզուին վրայով :

Պ . “ Այստ ըլթունքը Տէրոջը զզուելի է ” : Առաջ . Ժբ . 22 : դ . 16 , 17 .

Հ . Ո՞րոնք էին՝ սուտ մը զրուցելուն համար՝ մահով պատժուղները :

Պ . Ենանիան ու իր կնիկը Ասփիրան : Գարդ . է . 1-10 :

Հ . Կընմնք սուտ մը զուրցել ու Աստուած չգիտնայ անիկայ :

Պ . Զէ :

Հ . Տոլոր սուտ խօսողները , իրենց բաժինը մէր պիտի ունենան :

Պ . “ Արակով ու ծծումբով վառած լջին մէջը ” :
Ծայր . իս . 8 , 27 : իք . 15 :

Վատուած ձշմարտութեան Վատուած է . անկարելի է իրեն որ սուտ խօսի . հիմա ինքը չխօսիր մեզի երկինքն : Վրաջուց կը խօսէր . և իր մեզի ըսելու ամէն բաները , այսինքն իր պատգամները , պատուիրանքները , խոսամնենքները , սպառնալիքները Վատուածաղւնչին մէջը կը գտնենք , այսինքն՝ Վատուծոյ Գրքին մէջ , որն որ բոլոր ուրիշ գրքերէն պիտ շատ վէր է , և է Գրք Ճշմարտութեան :

Ա . Ո՞նք բնականաբար հակամիտեալ ենք Վատուծոյ շաւատալու . և թէպէտ կ'ըսենք որ կը հաւատանք իրեն , բայց անանկ կը շարժինք՝ որպէս թէ իր ըսածը սուտ էր . աս է Վատուած սուտ զրուց ընելը և իր բարկութիւնը մեր վրայ բերելը :

Ի . Ո՞նք մեր թերահաւատութեանը վրայ սուդ ընելու ենք . և աղաչելու ենք Վատուծոյ որ տայ մեզի հաւատացող սիրտ մը , որ լմնք ու ֆազանդինք իր ձայնին : Իր խօսքերուն ապաւինելու ենք . եթէ ինքը ըսէ որ երկինք ու դժոխք կան , կան ուրեմն երկինք ու դժոխք . եթէ ինքը ըսէ մեզի , թէ անոնք որ կ'ապաշխարեն ու կը հաւատան պիտի փրկուին : և անոնք որ չն ապաշխարեր ու չն հաւատար՝ պիտի կորառւին , անանկ պիտի ըլլայ . վերջապէս ինչ որ ըսէ ինքը՝ Ճշմարիտ է . ուրեմն մեր պարտքը ու մեր օգուտն է մտիկ ընել ու ֆազանդիլ իր խօսքին :

Գ . Վատուած կը պահանջէ մեզմէ Ճշմարիտ ըլլաւ խօսքի ու գործքի մէջ՝ ինչպէս որ ինքն անանկ է :

‘ Աախ՝ Ճշմարիտ ըլլաւ մեր երկրպագութեանը և Վատուծոյ պաշտօնին մէջ : Երբոր մենք իր պաշտօնին մէջ Ճշմարիտ ըլլանք , ինքը կ'ուրախանայ մեր վրայ , և մենք

կրնակք ինքզինքնիս իր հաւատարիմ պահպանութեանը յանձնել (ա) :

Երբոր ճշմարիտ չըլլանք , ինքը մեզի ստախօսներու և կեղծաւորներու ու անհաւատներու պէս կը նայի որ լիճին մէջը պատժուելու համար պատրաստուած են (բ) :

Երկրորդ՝ մեր բոլորտիքը եղած ամենուն հետ ճշմարիտ ըլլալու ենք . ստախօսը գէշ անձ է՝ որ անիկայ Աստուած ալ կ'ատէ , մարդն ալ : Աստղըուցին վերջը միշտ գէշ է : Աստանան է սուտը և սոտութեան հայրը (գ) : Աստ ապահով ու լաւ է մեզի որ միշտ ճշմարիտ խօսիք ամէն բանի մէջ (դ) : Ընէ որ յանցանք մը ընես կամ ուրիշ ներուն յանցանք ընելը տեսնես , անոր վկայով շիտակը ըսէ : Ընէ որ բան մը խոստանաս , կատարէ անիկայ . թէ որ բան մը պարտք ունիս , վճարէ անիկայ . թէ որ մէկն

ա . Տէրը մօն է ան ամենուն՝ որ զինքը կը կանչեն , ան ամենուն որ ճշմարտութեամբ զինքը կը կանչեն : Ատոմ . Ճին . 18 : Աւստի անոնք որ Աստուածոյ կամացը համեմատ կը չարչարուին , բարիք գործելով իրենց հողիները թող անոր յանձնեն , իբրև հաւատարիմ Ատեղծողին : ա Պիտք . է . 19 :

ի . Ահա դուն ճշմարտութիւն կ'ուզես երիկամունքներու մէջ , ու ծածուկ պիտք իմաստութիւն պիտի գիտցունես ինձի : Ատոմ . ծա . 6 : Ընէ որ ըսենք թէ Անոր հետը հաղորդութիւն ունինք , ու խաւարի մէջ պարտինք , սուտ կը զրուցենք՝ և ճշմարտութիւնը չենք ըներ : ա Հյօհ . ա . 6 : Ան որ կ'ըսէ թէ Խս անիկայ հանչքայ , ու անոր պատուիրանքները չպահեր , ստախօս է , և անոր մէջը ճշմարտութիւն չկայ : ա Հյօհ . բ . 4 :

գ . Դուք ձեր հօրմէն սատանայէն էք , ու ձեր հօրը բաղձանքը կ'ուզէք ընել . անիկայ սկիզբէն հետէ մարդասապան էր , և ճշմարտութեան մէջ չկեցաւ , ինչու որ անոր ներսի դին ճշմարտութիւն չկայ . երբոր անիկայ ստութիւն խօսի , բռն իրեններէն կը խօսի . քանզի անիկայ ստախօս է և անոր հայրը : Հյօհ . ը . 44 :

է . Ճշմարտախօս չըթունքը միշտ հաստատ կը մընայ . բայց ստախօս լեզուն վայրկենական է : Արտէ . ժը . 19 :

բան մը կ'ուզես , խնդրէ անկեց . ուղիղ լեզուի պէս ուշիղ ձեռք ունեցի՛ր . սուտգրուցները Աստուծոյ արքայութիւնը չեն կրնար մտնել . անոնք թշուառաբար պիտի կորսուին :

Գ . ՍՈՒՐԲԻ ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆԵՐՆ ՎՐԵՅ :

Այսորի . ի՞լ . 1-20 :

Հ . ՎԲանի՛ Աստուած կայ :

Պ . Կայ միայն մէկ կենդանի ու Ճշմարիտ Աստուած մը : Ք Օքին . կ . 4 : Խառայ . խէ . 6 , 8 : ա Կորմին . ը . 4 :

Հ . ՎԲանի՛ անձինք կան Աստուածութեան մէջ :

Պ . Երեք :

Հ . Կ՞ոնչ են անոնց անունները :

Պ . Հայր , Որդի , և Ուրբր Հոգի : Այսորի . ի՞լ . 19 : Ք Կորմին . ժէ . 13 :

Հ . Ես իրեք անձինքը միայն մ.օկ Աստուած են :

Պ . Հարամերես . միայն մէկ կենդանի ու Ճշմարիտ Աստուած են :

Հ . Կ՞ոնչպէս ստուգիւ գիտենք ասիկայ :

Պ . Աստուածաշունչը ասանկ կ'ըսէ մեզի :

Հ . Մեր Փրկիչը Բ՞նչպէս մկրտել պատուիրեց Վռաւքեալներուն , և անոնցմէ ետքը եղած բոլոր պաշտօնեաներուն :

Պ . " Յանուն Հօր , և Որդւոյ , և Հոգւոյն Արբա " :

Հ . Ենչու աս անուններով մկրտուելու ենք , ու անոնց երկրպագութիւն և պաշտօն մատուցանելու ենք :

Պ . ՎԲանզի ան իրեք անձինքը միայն մէկ կենդանի ու Ճշմարիտ Աստուած են : ա Յօհ . ե . 7 :

- Հ . Անք Երկնաւոր Հայրը Բօնչ ըրաւ մեզի համար :
- Պ . Եր Որդին մեզի համար մեռնելու խրկեց :
- Հ . Որդին Բօնչ ըրաւ :
- Պ . Որդին մեռնեղով խաչին վրայ մեր մեղքերուն հատուցումը ըրաւ , և հիմա իր Հօրը աջ կողմը նստած անդադար բարեխօսութիւն կ'ընէ մեզի համար :
- Հ . Սուրբ Հոգին մեզի համար Բօնչ կ'ընէ :
- Պ . Անք սիրտերը կը փոխէ , և մեզ երկինքին համար կը պատրաստէ :
-

Այս միայն մէկ Կատուած Ատեղծիւ երկնի և երկրի . և Կատուածութեան մէջ իրեք անձինք կան . Հայրը , Որդին և Սուրբ Հոգին . աս իրեքը մէկ Կատուած են . “նյին են էութեամբ , հաւասար են զօրութեամբ և փառօք” : Ասկէց զատ ուրիշ Կատուած մը չկայ : Կամիկայ գիտենք , ինչու որ բուն Կատուածոյ խօսքէն ասանկ կը սորվինք :

Ե . Խոնդք որ Կատուածոյ Բանը լուսին՝ իրենց տգիտութիւնովք և չարութիւնովք կը կարծեն որ շատ աստուածներ կան , և իրենք կուռքեր կը շնեն ու անոնց երկրպագութիւն կ'ընեն : Եղոթենք Կատուածոյ որ խրկէ անոնց Կատուածաշնչնը , որ մէկ դի ճգնէն իրենց սուստ աստուածները , և սիրեն ու պաշտեն ճշմարիտ Կատուածը :

Ի . Կան ոմանք ալ որ Կատուածոյ խօսքերը ունին , բայց շխտակ չեն հասկընար և չեն ուզեր շխտակ հասկընալ . անոնք կ'ըսեն թէ Կատուածութեան մէջ իրեք անձինք չկան : Խոնդք կործանեալ սիսակի մէջ են , և մենք աղօթելու ենք Կատուածոյ որ իր Բանը լսելու պինտ աղէկ իմացողութիւն տայ անոնց :

Գ . Որովհետեւ միայն մէկ Կատուած կայ , պարտինք երկրպագութիւն չընել և չծառայել ուրիշ մէկու մը Կատուածոյ պէս . և Կատուածոյ տեղը՝ հրեշտակի մը՝ կամ մարդու մը՝ և կամ ուրիշ ստեղծուածի մը երկրպագութիւն

Ընելը , կամ աղօթելը , կամ կազանդիլը , դատապարտելի մեղք մըն է :

Դ . Անգր պարտինք երկրպագութիւն ընել և պատուել այցը և Որդին և Ասւրբ ողբին իբրև Կատուած , որ արժանի են հաւասար սիրոյ և օրկութեան և փառաց : Եսկէ զատ ուրիշ կերպով չենք կրնար հաճոյական երկրպագութիւն մատուցանել Կատուեցոյ . բայց ասկէ բոլը ուրիշ երկրպագութիւնները և բոլը կրօքները սուս և դատարկ են :


Ե . Կատուածաշունչը կը սորվեցունէ մեղք՝ թէ միայն մէկ Կատուած կայ , և թէ՝ Կատուածութեան մէջ իրեք անձինք կան : Անգր բաւական չենք գիտեր աս ինչպէս ըլլալը իմանալու կամ զուցելու . մենք՝ տկար ու տգէտ արարածներո՞ւ որ ինքզինինիս անգամ չենք գիտեր , այսինքն մեր հոգիներուն և մեր մարմիններուն ինչպէս մէկ տեղ միաւորած ըլլալը , արդեօք կրնանք իմանալ Կատուեցոյ էութիւնը կատարելապէս : “ Եշա Կատուած մեծ է և մենք զինքը չենք գիտեր ” : Օրվեալ ըլլայ իր սուրբ անունը , որ իր բնութեամբը և փառքովը բարձրացեալէ բոլը իր արարածներուն գիտութենէն գեր 'ի վերյ , և ինքն անոնց Կատուածն ըլլալուն համար պէտք է որ ասանկ ըլլայ :

Զ . Երբոր մենք կը զգանք մեր տգէտ՝ մեղաւոր ու կորսուած արարածներ ըլլալը , որ կը բնակինք փորձութեան՝ ձախորդութեան՝ չարչարանաց ու մահուան աշխարհին մէջ , ան ատենը կ'իմանանք թէ մեր Կատուածը ճիշտ անանկ Կատուած մըն է որուն մենք կը կարօտինք :

Անգր Երկնքը այց մը ունինք որ հոգ կը տանի , և գութ ունի մեր վրայ՝ մեր ողորմելի վիճակին մէջ : Անգր Կմենակարող Փրկիչ մը ունինք որ հաճեցաւ չարչարուելու ու մեռնելու , Երդարը անարդարներուն համար : Եր մենք Խարենորհ Առւրբ ողորի մը ունինք որ անոր գործը մեզ մեղքէն մաքրել է , մեզ կեանքի մէջ բաջալերել ու միիթարել է , և մեզ մահուան՝ դատաստանին՝ և երկինքին համար պատրաստել է : Ալ ի՞նչ բանի կը կարօտինք : Լավն է հոգիին հատուցանող բաժինը :

Կայսպէս մենք Առւրբ Գիբքերէն կը սորվինք որ Կա-

տուած հողի է , անմահ , ամէն տեղ ներկայ և ամէն բաները գիտցող , ամենակարող զօրութիւն ունի , մէկը չկրնար արդիւլ զինքը իր կամքին բոլոր ուզածներն ընելին . որ ինքը բարի ու ողորմած Աստուած է , արդար ու ճշմարիտ բոլոր իր խօսքերուն ու գործքերուն և ճամբաներուն մէջ . և թէ Տէրը մէկ Աստուած մըն է , բայց իրեք անձինք ըլլալով կայր , Որդի , և Առորք Հոգի , նոյն են Էռլթեամբ , հաւասար զօրութեամբ և փառքով . և աս իրեքը մէկ Աստուած են :



ՄԵԾՈՒՅԹ

ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ՎՐԱՅԻ ՎՐԵՄ

Հ. ԲԵՐԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ՎՐԱՅԻ :

Դաստիարակության 1-10:

- Հ. Ե՞ն բարի հրեշտակները :
- Պ. Փառաւորեալ ու սուրբ էակներ :
- Հ. Ո՞վ ստեղծեց անոնք :
- Պ. Եսոսուած ստեղծեց : Կող. ա. 15, 16 :
- Հ. Ո՞րչափ բարի հրեշտակներ կան :
- Պ. Եսթիւ բազմութիւն են : Դաստի. Է. 9, 10 :
- Ժամկ. իր. 19 : Սաղմ. կը. 17 : Յայտ. ե. 11 :
- Նբր. ժը. 22 : Մատի. իկ. 53 : Դաստի. բ. 13 :
- Հ. Ո՞ւր տեղ է անոնց բնակարանը :
- Պ. Երկինքը : Մատի. իր. 30 : Մարկ. ժը. 25 :
- Ժ Ժամկ. ա. 7 :
- Հ. Ե՞ն կ'ընեն Երկինքին մէջը :
- Պ. Եստուած կը փառաբանեն և իր կամքը կը կատարեն : Սաղմ. ձք. 20, 21 : Մատի. կ. 10 : Դաստի. է. 11-13 :
- Ժ. 13, 14 : Յայտ. ե. 11-13 :
- Հ. Եստուած երբեմն անոնք աս երկիրը կը խրկէ :
- Պ. Հրամերես, մանաւանդ հին ատենները շատ անգամ անոնց ձեռօքը կը խրկէր իր պատգամները հին ատենի սուրբ մարդոցը :

Հ . Ե՞նչ դիտաւորութեան համար :

Պ . Իարի ընել անոնց՝ որ Աստուած կը սիրեն : Եշք :

Ա . Ասով՝ զան 11, 12 : Ուագի . ժը . 10 :

Հ . Ե՞նչ էր ան հրեշտակին անունը՝ որն որ Աստուած կոյս Ամարիամին խրկեց, անոր Յիսուսի ծննդեան աւետիսը տալու :

Պ . Գաբրիէլ : Դասի . ա . 11-38 :

Հ . Աստուած ուրիշ Բ՞նչ բանի համար երբեմն բարի հրեշտակները աշխարհ խրկեց :

Պ . Զար մարդիկները պատճելու ու կորսվնցունելու համար : Դասի . ժթ . 1 : Ք Անաֆ . ժթ . 35 :

Հ . Ե՞նչ է ան չար թագաւորին անունը՝ որն որ Տերոջը հրեշտակը զարկաւ, անանկ որ որդնալից եղաւ ու մեռաւ :

Պ . Հերովդէս : Գարդ . ժթ . 21-23 :

Հ . Իարի հրեշտակները մեր փրկութեանը հոգ տանելու առան համար Բ՞նչ կ'ըսէ Առորք Գիրքը :

Պ . “ Աւրախութիւն կ'ըլլայ Աստուածոյ հրեշտակներուն առջելը մեղաւորի մը համար որ կ'ապաշխարէ ” : Դասի . Ժե . 10 : ա Պիտք . ա . 10-12 : Եշքն . ք . 10 :

Հ . Երրորդ բարի մարդ մը մեռնի, Քվ անոր հոգին երկինք կը տանի :

Պ . Իարի հրեշտակները :

Հ . Ե՞ն աղքատին անունը Բ՞նչ էր որ մեռաւ ու հրեշտակներուն ձեռքովք Արքահամին գիրկը տարուեցաւ :

Պ . Դասի ազգրոս : Դասի . ժկ . 22 :

Հ . Պէտք է հրեշտակներուն աղօթել ու անոնց երկըրապագութիւն ընել Բ՞նչ և իցէ կերպով :

Պ . Շէ . քանզի մած մեղք է :

Ու ես Յովհաննէս լսեցի ու տեսայ աս բաները . և երբ որ լսեցի ու տեսայ, ինկայ որ երկրպագութիւն ընեմ ան

հրեշտակին սովերուն առջևը՝ որ աս բաները ինծի կը ցուցընէր : Եւ ըսաւ ինծի . Օգուշացի՞ր՝ մի՛ ընէր . ինչու որ ես քուկին՝ ու քու եղայրներուդ՝ մարգարէներուն՝ ու աս դրքիս խօսքերը պահողներուն ծառայակիցն եմ : Յայտ . իբ . 8 , 9 : Ես ալ անոր սովերուն առջևը ինկայ , որ անոր երկրպագութիւն ընեմ . ու ըսաւ ինծի . Օգուշացի՞ր՝ մի՛ ընէր . ինչու որ ես ալ քու ծառայակիցդ եմ՝ ու քու եղայրներուդ՝ որոնք Յիսուսի վկայութիւնը ունին . Աստուծոյ երկրպագութիւն ըրէ : Յայտ . ժթ . 10 :

Հ . Տարի հրեշտակները պիտի գմն Վիրիստոսի հետ Դատաստանին մեծ օրը :

Պ . Հրամերես : Ոյտով . իբ . 31 : Ք թուն . ա . 7 , 8 : ա թուն . գ . 15 : Յայտ . 14 :

Հ . Հրեշտակները մարմին ունին : Պ . Զէ . քանզի անոնք հոգիներ են , անտեսանելի և անմահ : Լուս . իբ . 39 : Առա . ա . 16 : Ոյտ . ժթ . 24 , 25 : Լուս . ի . 35 , 36 :

Հ . Պիտի տեսնենք ու գիտնմնք և պիտի սիրենք բարի հրեշտակները՝ թէ որ երկնք երթանք :

Պ . Հրամերես : Եթի . ժթ . 22 : Լուս . ժկ . 22 : Յայտ . է . 9-17 :

Հ . Տարի հրեշտակներուն քանիին անունները գիտենք , և ՞վ են անոնք :

Պ . Երկուքին . Գաբրիէլի և Արքայէլի : Դանէ . ը . 16 : ժթ . 21 : Լուս . ա . 19 , 26 : Յայտ . ժթ . 7 :

Ոյրդոցմէ զատ՝ ուրիշ իմաստուն և հաշիւ տուող Աստուծոյ ստեղծուածները կան , հրեշտակները : Իսյց թէ որ Աստուծոյ խօսքը քըլար , բնաւ մենք բան մը պիտի

Հքիտնայինք անոնց վրայով՝ ինչու որ մենք անոնք ժէ կըր-
նանք տեսնել, ոչ կընանք լսել, ոչ ալ կընանք զգալ,
որովհետև անոնք մարմին ու արիւն չունին մեզի պէս, հա-
պա միայն հոգիներ են :

Մնոնց վրայով ըստւած Աստուծոյ Խօսքին նայելով,
բարի հրեշտակները պէտք է որ ըլլան՝ լեզուի պատմել
կրցածէն աւելի լուսափայլ ու գեղեցիկ, փառաւորեալ ու
երջանիկ : Մնոնք սուրբ են, անոնք բնաւ չմեղանչեցին,
և բնաւ պիտի չմեղանէն : Աստուծ անոնք սուրբ վիճակի
մէջ հաստատեց : ա Տի. ե. 21 : Մնոնց բազմութիւնը
անթիւ է . անոնց բնակարանը Երկինքն է . անոնց գործը
Աստուծ փառաբանել և իր կամքը ընել է : Մնոնք Մս-
տուծոյ հրամանովը երկինքէն կ'իշնեն մարդոց ողորմութիւն
կամ վրէժինդրութիւն ընելու համար, և հովի կամ փայ-
լակի պէտով կը շարժին : Մնոնք շատ հոգ տանելով
մեր փրկութիւնը կ'ուզեն, և երկրպագութիւն կ'ընեն,
Տէր Յիսուսին իր զարմանալի սիրոյն համար : Երբոր մե-
ղաւոր մը կ'ապաշխարէ, երկինքը կը լեցուի անոնց ուրա-
խութիւնովը : Ուրախութեամբ օգնութիւն կը համնին
Քրիստոսի աշակերտաներուն, և անոնց բոլորութիւնը կը հըս-
կեն բարի ընելու համար . և երբոր մեռնին՝ հրեշտակները
երկինքը կը տանին անոնք ցնծութեան ձայներով : Եւ
վերջն մեծ օրը անոնք պիտի գան Տէր Յիսուսին հետը իր
փառքովը, և աշխարհի դատաստանին վերջին սարսափելի
գործին ներկայ պիտի գտնուին :

Ե . Իայց մէկը թող չկարծէ որ մենք բարի հրեշտակ-
ներուն աղօթելու կամ երկրպագութիւն ընելու ենք :
Ասիկայ հոգին կորսընցունող մեղք մը կ'ըլլայ ետքը .
անոնք բնութեամբ աստուածներ չեն, հապա մեզի պէս
արարածներ, թէպէտե աւելի փառաւոր : Աստուծ
ստեղծեց անոնք, և ինքն է որ անոնք կենդանի կը պահէ,
և սուրբ ու երջանիկ վիճակի մէջ դրած է . և անոնք բան
մը չեն կրնար ընել իրենց կամ մեզի համար առանց Մս-
տուծոյ օգնելուն :

Իայց մենք պատուելու ենք անոնց սուրբ վարքը, և գոհ
ըլլալու ենք անոնցմէ՝ իրենց մեզի ցուցուցած բարեկամու-
թեանը և մարդասիրութեանը համար : Ինչու որ անոնք

կ'օգնեն Վրիստոսի ծառաներուն աս աշխարհիս մէջ , թէւ մնկը չենք կրնար տեսնել կամ զգաւ անոնք :

Ի . թէւ որ անոնք այսչափ կը զցան՝ կամ մեր փրկութեանը համար այսչափ ուրախութեամբ կ'աշխատին , մնկը ալ զգալու և ջանք ընելու ենք ապահով ընել բուն մեր փրկութիւնը . և մեր կարողութիւնովը ամեն պէտք եղածը ընելու ենք , ուրախութիւնով ուրիշներուն փրկութիւնն ալ ապահով ընելու համար :

Դ . Եշ կատարեալ սիրոյ՝ ու Խստուծոյ Դազմանդելու համար՝ մեզի օրինակներ են անոնք : Անք չանք ընելու ենք Խստուծոյ կամբը կատարեալ երկրի վրայ , ինչպէս որ երկնքը կ'ըլլայ անոնցմով . և ինչպէս որ անոնց սրբութիւնը երջանիկ կ'ընէ անոնք , նյոնպէս թէ որ մնկը ալ սրբութեան հետևինք , մնկը ալ պիտի տեսնենք Խստուած և անոնց պէս երջանիկ պիտի ըլլանք Վրիստոսով :

Ե . Եշիկներին մէջը մնենք պիտի տեսնենք և գիտնանք ու սիրենք անոնք , և անոնց ընկերութիւնը պիտի աւելցունէ մեր ուրախութիւնը :

Հ . ԶԵՐ ՀՐԱՄԱԿԱՆԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՅ :

Խառարել . Է . 1-11 :

Հ . Հրեշտակները բնաւ մեղանչեցին Խստուծոյ դէմ :

Պ . Հրամելես , անոնցմէ ոմանք մեղանչեցին : Ըստ :

6 : բ . Պիտի . բ . 4 :

Հ . Ենոնք մըրչափ էին :

Պ . Հաս մեծ թուով :

Հ . Ո՞ւ էր անոնց գլուխն ու մեղաց առաջնորդողը :

Պ . Աէղղէբուղը , կամ դէը : Խառարել . Բ . 34 :

Ժ . 24 :

Հ . Խստուած մւր ճգեց անոնք մեղանչելուն համար :

- Պ . “Դժոխք” : բ Պիտ . բ . 4 : Յառա . 6 :
- Հ . Խօնչ առեն չար հրեշտակները մեղանչեցին :
- Պ . Եստուած չըսաւ մեզի :
- Հ . Եստուած ըսաւ մեզի անոնց ինչ մասնաւր մեղք գործելը :
- Պ . ԶԵ : ա ՏԻՄ . դ . 9 : Յօհ . ը . 44 : ա Պիտ . է . 8 :
- Հ . Ն . Հիմայ անոնց բնաւորութիւնը Բ՞նչպէս է :
- Պ . Ենքարին չար է :
- Հ . Եստուած անոնց Փրկիչը մը տուածւ ինչպէս որ մեզի տուած :
- Պ . ԶԵ : Եթր . բ . 16 :
- Հ . Ենոնք կրնան փրկուիլ :
- Պ . ԶԵ : անոնք յաւիտեան կորսուած են : բ Պիտ . բ . 4 : Յառա . 6 : Անտր . ի է . 41 : Յայտ . ի . 10 :
- Հ . Հիմայ անոնք Թւրկէց կը վախնան :
- Պ . Եստուձմէ ու գալու գատաստանէն : Յաէ . բ . 19 : Անտր . ը . 29 :
- Հ . Խնաւ անոնք աս աշխարհէքը կու գան :
- Պ . Հրամերես :
- Հ . Խօնչ դիտաւորութեան համար :
- Պ . Անգի չար ընելու համար :
- Հ . Երբոր Տէր Յիսուս աս աշխարհիս մէջն էր , մարդոցմէ դևերը չհանեց :
- Պ . Հրամերես : Անտր . դ . 24 : Լաւէ . դ . 36 : Ժա . 20 : ժ դ . 16 : Անտր . է . 8 : Գարդ . դ . 38 :
- Հ . Աստանան Բ՞նչ անունով կը կոչուի , որն որ աս աշխարհիս մէջ իր ունեցած գործերը կը ցուցընէ մեզի :
- Պ . “Փորձող” : Անտր . դ . 3 : ա Բնէո . դ . 5 :
- Հ . Ուրիշ անուններ ունի :
- Պ . Հրամերես , շատ անուններ : Անտր . դ . 3 :

ԺՌ · 24 : Յահ · ԺՌ · 31 : ԺՔ · 30 : բ Արդիք · Ք · 4 :
Յայտ · ի · 2 :

Հ · Աստանան կրնմյ փորձել մեղ ու մեղք գործել
տալ թէ որ մենք մեղանչել չուզենք :

Պ · ԶԷ :

Հ · Խ՞նչ կըսուի սատանային առիւծի մը պէս պոռա-
թող ըլլալուն վրայով :

Պ · “Աստանան մննչող առիւծի պէս կը պուսի , ու
կը վնսուէ թէ ով կլէ” : ա Պիտ . Ե · 8 : ‘Ղումք · իք ·
31 : Յոք · ա · 6 , 7 : բ · 1 , 2

Հ · Խ՞նչ պիտի ընէ ան , թէ որ մենք իրեն հահառակ
կենանք :

Պ · Անզմէ պիտի փախչի : Յավ · Ք · 7 :

Հ · Աստանան Բ՞նչ իշխանութիւն ունի չարերուն
վրայ :

Պ · Աստանան մեծ իշխանութիւն ունի չարերուն սիր-
տելը փորձելու ու անոնց վրայ իշխալու : Խժես · բ · 2 :
կ · 10-16 : բ Արդիք · Ք · 4 : բ ՏՄ · բ · 26 : Ատրի ·
Ք · 15 :

Հ · Աստանան մեր Փրկիչն ալ փորձեց երբոր անիկայ
երկրի վրայ էր :

Պ · Հրամերես : Անտի · Ք · 1-11 : Ղումք · Ք ·
1-13 :

Հ · Ո՞վ կարող է և ով աշխարհ եկաւ սատանան ու
անոր գործքերը կորսընցունելու համար :

Պ · Տէր Յիսուսը :

Ուստի որովհետեւ զաւակները մարմինին ու արիւնին
հաղորդ եղան , ինքն ալ նմանապէս անոնց բաժանորդ
եղաւ որ իր մահովը փանցունէ անիկայ՝ որ մահուան իշխա-
նութիւնը ունէր , այսինքն Է սատանան : Խթք · բ · 14 :
Եւ ան որ մեղք կը գործէ՝ սատանային է . ինչու որ սա-

տանան սկիզբէն 'ի վեր կը մեղանչէ . ասոր համար Արտուր ծոյ Որդին յայտնուեցաւ , որ սատանային գործքերը քաշէ : ա Յօհ . է . 8 :

Հ . Դատաստանն օրը մեր Փրկիլը չարերուն Թւր գացէք պիտի ըսէ :

Պ . “ԱՆԿԵԴԻ գացէք ինձմէ անիծեալներ՝ յաւիտենաւ կան կրակին մէջը , որ պատրաստուած է սատանային ու իր հրեշտակներուն” : Անտլ . ին . 41 :

Հ . Հրեշտակները առաջ երբոր ստեղծուեցան սուրբ էին , բայց ազատութիւն ունէին կայնելու ալ կամ իյնալու ալ : Ըատերը չինկան ու հիմն անոնք սուրբ հրեշտակներ են : Ըատերն ալ ինկան , ու հիմն անոնք ինկած կամ չար հրեշտակներ են . ասոնցմէ սատանան գլուխնին է : Անիկայ էր առաջին մեղանչողը և մեղքի առաջնորդողը : Խօրբ մեղանչցին , և Բ՞նչ էր անոնց մասնաւոր մեղքը , Խստուած չըսաւ մեղքի : Բայց անոնց մեղանչելն ետքը Խստուած անոնք երկինքին վար գժոխքը ճգեց . անոնց համար Փրկիլ մը չըսրկեց . անոնք բնաւ չպիտի կըրնան փրկուիլ , հապա կորսուած են յաւիտեան :

Անոնց բնաւորութիւնը այնչափ գէշ է որչափ որ կրնայ ըլլաւ , անոնք Խստուծոյ ու մարդոց դէմ կը պատերազմին : Անոնք աս աշխահը կու գան մեղ փորձելու ու մեղքի առաջնորդելու , և աս պատճառաւ կը կորսընցունեն մեր հոգիները յաւիտեան : Աստանան՝ որ Տէր Յիհուսը փորձեց , կ'երեայ թէ կ'ուզէր կորսնցընել Խստուծոյ մեր փրկութեան համար ունեցած գաղափարը , և երկինքին վրայ մեր ունեցած բոլոր յոյսերը : Իր անօրէնութեանը մէջ ինքն համարձակ է . բայց բոլոր իր մեղքերը և իր հրեշտակներուն մեղքերը իրենց գլխուն վրայ պիտի իյնան . յաւիտենական կրակ պատրաստուած է իրենց համար , և կը գողան երբոր կը խորհին գալու դատաստանին վրայով :

Ա . Դարի հրեշտակներուն իյնալէն սորվեցէք որ բարի անձ մը սուրբ վիճակի մէջ անգամ կրնայ մեղք գործել ,

թէ որ անիկայ շատ զգուշութիւն չընէ , ու Կոստուած ալ չպահպանէ զինքը : Սատանան և իր հրեշտակները մեղան-չեցին երկինքին մէջը . Եղամ՝ ու Խւան ալ դրախտին մէջը :

Դ . Դարձեալ սորվեցէք թէ մեղաւոր մը կրնայ ապա-կանել շատ բարի մարդիկներ ու շատերը մեղքի մէջ ձգել : Սատանան մեղանչեց և շատերն ալ իրեն հետևեցան . զգայլ կեցիր չար ընկերներէն՝ որ ինքվնքդ չկորչնցու-նսն , և զգայլ կեցիք ուրիշները չարութեան մէջ ձգելէն՝ որ դուք չկորչնցունէք անոնք :


Գ . Անդաւոր մը չպիտի թողուի երկինքին մէջը մինչև անդամ թէ որ հրեշտակ մըն ալ ըլլոյ :

Սատանան երկինքէն դուրս ճգուեցաւ և իր հրեշտակ-ներն ալ :

Դ . Ծիեցէք որ դուք մեծ թշնամի մը ունիք՝ սատա-նան , որ խորամանկ ու զօրաւոր է փորձութեան մէջ : Չար մարդոց սիրտերուն ինքը կը տիրէ . համարձակ կը փորձէ ամէն մարդ , բնաւ մէկն ազատ չէ իր փորձութեանէն : Խնդը մեր բարձրացեալ և սուրբ Փրկիչն ալ փորձեց :

Ե . Դայց իրմէն աւելի մեծ մէկը կայ՝ մեր Տէր Ծիսու-սը , որ կրնայ կորսընցունել սատանան և անոր ամէն զործ-քերը . անիկայ աս դիտաւորութեանս համար աշխարհ ե-կաւ . և աս դիտաւորութիւնը բուն իր ատենը պիտի կա-տարէ և բոլոր աշխարհ Ծիսուսին իշխանութեանը տակը պիտի ըլլան :

Զ . Օրվենք Կոստուած իր մեր վրայ ունեցած սիրոյն ու մեզի պէս մեղաւորներուն տուած Փրկչին համար , որ մեղանցող հրեշտակներուն չտուաւ : Կոտոնք փրկուելու պատեհութիւն չունին , բայց մենք ունինք . ձեռք ձգենք անիկայ սիրով . ապաշխարենք և հաւատանք Տէր Ծիսու-սին , ու ինքը պիտի տայ մեզի զօրութիւն ու չնորհք՝ ա-տել և դէմ կենալ սատանային և անոր ամէն գործերուն . և ան ատենը անիկայ պիտի փախչի մեզմէ , և ան թշուառ բազմութեան մէջը չպիտի ըլլանք որոնց պիտի ըսէ վերջին օրը , “ Անկդի գացէք ինծմէ անիծեալներ՝ յաւիտենական կրակին մէջը , որ պատրաստուած է սատանային ու իր հրեշտակներուն ” :



ՄԵՍԻ Գ

ՄԵՐԴԱՌԻՆ ԱՐԵՅ

ա . ԸՍՏՈՒԹՈՒՅ ՍՏԵՂՈՅԵԳԻՐՈՅՈՒԹԱԾՆԻ
ԱՐԵՅ :

‘Օմնդ . ա . 24-31 : ա . 1-7 , 18-25 :

Ճ . Կանի՞օ օրուան մէջ ստեղծեց Եստուած երկինքն ու
երկիրը :

զ . Անց օրուան մէջ : ‘Օմնդ . ա . 26-31 :

ճ . Ո՞ր օրը ստեղծեց մարդը :

զ . Անցերորդ օրը : ‘Օմնդ . ա . 26-31 :

ճ . Ո՞վ էր առաջին մարդը :

զ . Եղամ : ‘Օմնդ . բ . 18 : ա Առնել . ԺԵ . 45-47 :

ճ . Ո՞վ էր առաջին կնիկը :

զ . Եւա : ‘Օմնդ . գ . 20 :

ճ . Խչէ՞ն ստեղծեց Եստուած մարդը :

զ . Երկրի հողէն : ‘Օմնդ . բ . 7 : ա Առնել . ԺԵ .

47 :

ճ . Խչէ՞ն ստեղծեց Եստուած կնիկը :

զ . Եղամին կողէն : ‘Օմնդ . բ . 21 , 22 :

ճ . Երբոր Եղամ ու Եւան ստեղծուեցան , չափահաս
մարդիկ էին :

զ . Եւյն , կատարեալ մարդիկ էին :

ճ . Տէրը անոնց բանական ու անմահ հոգի տուած :

զ . Հրամերես :

Եւ Տէր Շատուած գետնի հողէն շմեց մարդը , և անոր քիթին ծակերուն կենդանութեան շունչ փէց , մարդը կենդանի հողի եղաւ : ՞Օձնդ . բ . 7 : Են ատենը հողը երկիրը պիտի դառնայ՝ առջի եղածին պէս , ու ձողին Շատուածոյ պիտի դառնայ , որ անիկայ տուաւ : Ժաղ . ժբ . 7 :

ձ . Ադամ ու Եւան որին պատկերին նմանութեանը ստեղծուեցան :

Պ . Շատուածոյ պատկերին նմանութեանը : ՞Օձնդ . ա . 26 , 27 : Աղ . գ . 9 , 10 :

ձ . Շատուած բօնցպէս ստեղծեց մարդը :

Պ . Ուղիղ : Ժաղ . է . 29 :

ձ . Կինիկը բնչիւ համար ստեղծեց Շատուած :

Պ . Ամրդուն օգնելու ու անոր ընկեր ըլլալու համար : ՞Օձնդ . բ . 18 : ա Կորին . ժա . 7-12 : Եգիս . է . 23-25 : Աղ . գ . 18 , 19 :

ձ . Շատուած եօթներորդ օրը ի՞նչ ըրաւ :

Պ . ձանգստացաւ : ՞Օձնդ . բ . 2 , 3 :

ձ . Շատուած որի՞ն տուաւ աշխարհը :

Պ . Շատուած բոլոր աշխարհը մարդուն տուաւ , ու զինքն անոր վրայ տէր ըրաւ : ՞Օձնդ . ա . 26-28 : թ . 2 : Սաղ . ը . 5-8 :

ձ . Ադամին առաջին անցուցած օրը Քրն էր :

Պ . Շարաթ օրը :

Այց օրուան մէջ Տէրը երկինքն ու երկիրը ստեղծեց . Անցերորդ օրը իր ուրիշ գործքերը լմցունելէն ետքը մարդն ստեղծեց արու և եղ : Վրացին մարդուն անունն Ադամ էր , և առաջին կնկան անունը Եւա էր : Ադամ երկի հողէն ստեղծուեցաւ , և Եւան Ադամին մէկ կողէն : Տէրն անոնք կատարեալ մարդիկ ստեղծեց , բանական ու անմահ

Հոգիներով , և իր պատկերին նմանութիւնով : Վնոնք արդար ու սուրբ էին , բոլոր բարիին հակամիտելով : Եղէկ էք մարդուն որ մինակ ըլլար , և կնիկը ստեղծուեցաւ իրեն օգնական ըլլալու համար , և յստուած անիկայ Եղամին կնիկ ըլլալու տուաւ , ու ետքը յստուած պատուիրեց անոնց որ ածին ու բազմանան և երկիրը Եցունեն , ու երկիրն անոնց ձեռքը յանձնեց ժառանգութեան համար որ իշխեն անոր : Հետևեալ եօթներորդ օրը , սուրբ հանգստութեան օրն էր , և յստուած իր գործերէն հանգստացաւ ու մարդն ալ իրեն հետ հանգստացաւ :

Ե . Յստուծոյ վերջին և ազնիւ գործն է մարդը՝ որ կանգուն անձ ունի՝ և դաշտերւն անաստուններէն աւելի գեղեցիկ է , և բանական ու անմահ հոգի ալ ունի , որ անիկայ անաստունները չունին :

Ը . Յստուած մարդն իր պատկերին նմանութեանը ստեղծեց գիտութիւնով ու ճշմարիտ սրբութիւնով և երկիր իշխողութիւն ունենալով : Յստուած մարդն արդար ստեղծեց անիկայ մաքուր գլուխ ու ուղիղ սիրտ մը ունէր . անիկայ կատարեալ էր : Յստուած նայեցաւ իր գործքերուն ու ըսաւ որ բարի է : Փառաւորեալ ու սուրբ էակ մըն էր մարդը , երբոր յստուած ստեղծեց անիկայ :

Դ . Մարդն ստեղծուեցաւ արու և էգ . ամուսնութեան վիճակի մէջ : Խնիկը էրիկ մարդուն համար եղաւ : Ենոր համար էրիկը կնկանը գլուխն է . և աս առաջին ամուսնութիւնը որ մեր նախնիքներուն մէջ եղաւ , բոլոր իրենց տղաքներուն վայելուշ հարսանեաց օրինակն է :

Ե . Յստուած աշխարհը մարդուն տուաւ իր ժառանգութեանը պէս . անոր համար մենք բոլոր կենդանիներուն վրայ կ'իշխենք : Ենոնք մեզմէ կը վախնան՝ բայց մենք ողբրմութիւնով տիրելու ենք անոնց փրայ , և աշխարհ ու անոր մէջ եղած բաներն անանկ կերպով մը գործածելու ենք , ինչպէս որ յստուծոյ հաճնիկ է :

Ֆ . Եղամին երկրի վրայ անցուցած առաջին օրը Ծարաթն էր . անիկայ ան օրը յստուծոյ հետ անցուց . ասով յստուած Եղամին կը սորվեցունէ թէ մարդուս առաջին և բարձրագոյն և ամենաբարի պաշտօնը յստուծոյ սէր ունենալ և իրեն ծառայութիւն ընեն է :

Վասնկ մենք երկրպագութիւն ընելու ենք Տէրովը մեր
Ատեղծողին , և մեր առաջին և բարձրագոյն ու լաւագոյն
գործն է զինքը սիրել ու պաշտել :

Ք . ԴՐԵԽՏԻՒՆԵՐՆԵՐ :

ԴԱՆՆԴ . Ք . 8-15 :

Ա . Վատուած մարդը ստեղծելէն ետքը ԲՇնչ ըրաւ ա-
նոր համար :

Պ . Հաճէլի պարտէզ մը տնկեց անոր համար՝ դրախ-
տը՝ որ հոն բնակի : «Օննդ . Ք . 8 :

Ա . Եղամին ու Խւային համար ուտելու ԲՇնչ ըրւսաւ
պարտէզին մէջը :

Պ . Եմն պատուական պտուղները : «Օննդ . Ք . 9 :

Ա . Ես զուարձալի պարտէղը ԲՇնչպէս կը ջոռուէր :

Պ . Գիտով մը : «Օննդ . Ք . 10 :

Ա . Տէրը անոնց ԲՇնչ գործ տուաւ որ պարտէզին մէջ
գործեն :

Պ . «Գործել ու պահել անիկայ» : «Օննդ . Ք . 15 :

Ա . Տէրը վար իջաւ ու խօսեցաւ Եղամին հետ՝ դէմ
առ դէմ :

Պ . Հրամերես : «Օննդ . Ք . 8 :

Ա . Եղամ ու Խւան ԲՇնչ վլճակի մէջ էին :

Պ . Առւըր ու երջանիկ վլճակի մէջ էին , ու ԲՇնչ որ
կ'ուզէին՝ ունեցան : «Օննդ . ա . 31 :

Պարդը ստեղծուելէն ետքը Վատուած ինքիրմէն պար-
տէզ մը տնկեց , և աճեցուց հոն ամէն ծառ որ հաճէլի էր
տեսնելու՝ և բարի ուտելու . և առատօրէն կը ջոռուէր գե-

տով մը . և հոն գրաւ իր ստեղծած մարդը որ վայելէ աս գեղցիկ և առատ պարտէզը . մարդուն գործը պարտէզը գործել ու պահելն էր . և Տէրն ինք վար կ'իջնէր ու անոնց հետ կը խօսէր :

Ե . Մարդուն առաջին վիճակը սուրբ ու երջանիկ էր . Ըդամ ու Խաւան Ծատուծոյ հետ էին . և տեսան ու սիրեցին և պատուեցին զնիքն ամեն բաներէն աւելի : Խնոնք Ծատուծոյ տնկած պարտէզին մէջը բնակեցան . անոնք անօթութիւն չեին գիտեր . ոչ ալ ծարութիւն , ոչ հիւանդութիւն , ոչ ալ ցաւ , ոչ մեղք , ոչ ալ մահ : Խնոնք երկինքի հրեշտակներուն պէս սոսրը ու երջանիկ էին : Ես էր մարդուն առաջին և խիստ լաւ վիճակը . սրբութիւնն ու երջանկութիւնը միշտ մէկ տեղ կ'երթան :

Ի . Ծատուծոյ մեծ բարութիւնն էր որ Խդամն ու Խաւան այնչափ առատութեամբ լեցուց . և անոնք պարտաւոր էին զնիքը սիրել ու շնորհակալ ըլլալ իրմէն՝ իր անօթիւ բարերարութիւններուն համար : Ծատուծոյ մեծ բարութիւնը շպակսիր Ծամին տղաքերուն . ինքն է որ մեզ կը նախախնամէ , ու կու տայ կեանք և կերակուր ու հանդերձ և ան ամենը որ կը վայելնիք երկրի վրայ , և պարտաւոր ենք սիրելու զնիքն ու շնորհակալ ըլլալ իրմէն՝ իր բարութիւններուն համար :

Գ . Բնէ որ ուզենք երջանիկ ըլլալ և Ծատուծոյ բարութիւնն ու սէրը և իր տեսութիւնը վայելիլ , պարտինք սուրբ ըլլալը ջանալ : Ծատուած պիտի չզգէ մեզ երկրի վրայ պարտէզի մը մէջ , հապա երկինքն եղած պարտէզը պիտի տանի մեզ յաւիտեան իր հետը բնակելու համար : “ Իարութիւն մը պիտի զպակսեցունէ ուղղութեամբ քաւմուներէն ” : Աաղմ . ձկ . 11 :

Դ . Մարդը ստեղծուեցաւ ժիր և գործունեայ ըլլալու համար՝ գործելով ու պահելով պարտէզը : Են պարտէզին գեղցկութիւնը և առատութիւնը բուն իր հոգ տանելին կախում ունէր . ասանկ ալ՝ մենք ժրածան ու ճարտարամիտ ըլլալու ենք , և կրնանք ըսկել թէ ան որ շատ աշխատաւէր է՝ ուրիշերէն աւելի յաջողութիւն կը գտնէ : Իատարկակեաց կեանքի մէջ յաջողութիւն ու երջանկութիւն չընար ըլլալ . դատարկութիւնը գէպի մեղքը՝ և

թշուառութեան կը տանի մարդը . թէ որ մարդս ընելու բան մը չըւնենար , հազար անդամ աւելի գէլ պիտի ըլլար :

Ք . ՄԱՐՄԻՋՈՒՆ ՓՈՐՉՈՒԹՅԵԼՇՆԲ ԱՐԵՅ :

“Օձուր . ք . 15-17 :

Ա . Ի՞նչ էին ան երկու մասնաւոր ծառերուն անունները , որնք դրաւ Աստուած պարտէզին մէջը :
Պ . “Օառ կենաց , ու ծառ դիտութեան բարւոյ և շարի :

Ա . Տէրը աս ծառերուն որմէն չուտել հրամայեց մարդուն :

Պ . Իարիի ու շարի դիտութեան ծառէն : “Օձուր . ք . 16 , 17 : գ . 2 , 3 :

Ա . Ինչու Տէրը աս ծառը պարտէզին մէջը տնկեց ու հրամայեց մարդուն որ չուտէ անկեց :

Պ . Ենիկայ փորձելու համար որ նայի թէ իր պատուիրանքները պիտի պահէ :

Ա . Ինէ որ մարդը սիրէր Աստուած և անոր պատուիրանքները պահէր , ու ան ծառէն չուտէր , ի՞նչ շահ պիտի ունենար Աստուածէ :

Պ . Աստուածոյ բարեկամութիւնը :

Ա . Եւ թէ որ Աստուած չի պատուիրանքները չպահէր , հապա աս ծառէն ուտէր , ի՞նչ պիտի շահէր :

Պ . “Ամահը” . քանզի Տէրն ըսաւ , “Ենիէ կերած օրդ անշուշտ պիտի մեռնիս” : Առաջ . ե . 12 : կ . 23 : Ըսէ . գ . 14-36 : ե . 24 : ա կորնի . կ . 9 : Ծակ . ա . 15 :

Հ . Արամ ու Խւան կարմղ էին Աստուած սիրել և ապատուիրանքը կատարելապէս պահել :

Պ . Արամերես : Ժառ . Է . 29 :

Հ . Տէրը մեր առաջին ծնողքը միայն իրենց համար փորձութեան մէջ ձգեց , թէ իրենցմէ ետքը եղած տղաքներուն համար ալ :

Պ . Խբենց տղաքներուն համար ալ : Շօնադ . Է . 1 , 2 : Առավ . Է . 12-19 : ա Արդին . ՃԷ . 15 , 21 : Գարդ . ՃԷ . 29 :

Հ . Քաէ որ մեր առաջին ծնողքը իրենց փորձութեանը մէջ սուրբ ու երջանիկ մնային , անոնց տղաքները ի՞նչ պիտի ըլլային :

Պ . Ենոնք ալ սուրբ ու երջանիկ պիտի ըլլային

Հ . Բայց թէ որ անոնք մեղաց ու թշուառութեան մէջ իյնային , մենք ալ ի՞նչ պիտի ըլլայինք :

Պ . Ոչնք ալ անշուշտ մեղքի՝ ու թշուառութեան մէջ իյնալու էինք . ինչպէս որ եղաւ :

Հ . Աստուած բարի ծնողքներուն որդւոցը ողորմնաթիւն կը ցուցընէ :

Պ . Արամերես , մինչև անոնց հազար ազըք : Խվա Է . 6 :

Հ . Խւ չար ծնողքներու չարութիւնը անոնց տղոցը կը հասուցանէ :

Պ . Այս . մինչև անոնց երրորդ ու չորրորդ ազքը : Խվա Է . 5 :

Արամին ու Խւային պաշտօնն էր Աստուած սիրել ու իրեն կազմանդիլ կատարելապէս՝ որ տեղծեց անոնք ու բոլոր ունեցածնին ինքը տուաւ անոնց : Խւ Աստուած փորձեց անոնք Դրախտին մէջը , գիտնալու համար թէ

արդեօք պիտի սիրե՞ն ու կազմանդի՞ն իրեն՝ թէ չէ : Առնոնց մէկ պարզ ու դիւրին պատուէր մը տուաւ որ պահեն . և Աստուծոյ կամացը սահմանադրութիւնն էր փորձել անոնք՝ չէ թէ միայն իրենց համար , հապա իրենցմէ ետքը եղած իրենց տղաքներուն համար ալ : Աստուած ձնողքաները իրենց տղոցը տեղը գրաւ . աս յայտնի կը տեսնենք , ինչու որ երբոր ծնողքներն ինկան , բոլոր տղաքներն ալ ինկան . որպէս թէ Տէրն ասանկ ըսած էր Ադամին ու Եւային . “Իշ կը հաստատեմ” աս բարւց ու շարի գիտութեան ծառը պարտէզին մէջ , որ փորձեմ ձեզ թէ արդեօք պիտի սիրե՞ք ու կազմանդի՞ք ինծի : Ընէ որ աս ծառէն չուտէք՝ հապա զիս սիրե՞ք ու ինծի կազմանդիք , անատենը ձեզի ու ձեզմէ ետքը ձեր տղաքներուն ալ Աստուած ես պիտի ըլլամ : Ոչ դուք՝ ոչ ալ անոնք բնաւ շար բան մը պիտի գիտնան , հապա բարի ու միայն բարի : Իայց թէ որ աս ծառէն ուտէք և անանկ ինծի շնազանդիք , ու իս ձեր Աստուածը մէկ դի ձգելու ըլլաք , ես ոչ ձեզի՝ ոչ ալ ձեզմէ ետքը եղած ձեր տղաքներուն Աստուած պիտի ըլլամ : Իմ շնորհք պիտի հեռանայ ձեզմէ . դուք և անոնք պիտի կորսընցունէք բոլոր ձեր բարութիւնները և երջանկութիւնները , ու շարունակ շարը պիտի գիտնաք : Ձեր բոլոր սերունդը մեղք , աշխատութիւն , տրտոնութիւն , ցաւ , մահ պիտի ունենան թէ աս աշխարհին մէջ ու թէ զալու աշխարհին մէջ . ես ձեր առջեր կը դնեմ կեանքն ու մահը ձեզի ու նաև ձեր տղաքներուն համար” :

Աս էր մեր առաջին ծնողացը փորձութիւնը , և անոնք բոլորովին կարող էին անոր համեմերել : Անոնք կարող էին կայնելու , բայց թէ որ ուզէին կրնային իյնալ . ուստի անոնք որ ինկան՝ իրենց յանցանքովն էր :

Ա . Եղամն ու Եղւան փորձուեցան , և չէ թէ միայն իրենց համար , հապա իրենց տղայոց համար ալ , այսինքն՝ մարդոց ցեղին ամենուն համար : Ծնէ որ անոնք կայնէին , մինք ալ անշուշտ պիտի կայնէինք . թէ որ անոնք իյնային , մինք ալ անշուշտ պիտի իյնայինք , ինչպէս որ եղաւ : Այսպէս մեր առաջին ծնողքներուն հետ մենք ալ փորձուեցանք : Եւ անոնք փորձուեցան բոլորովին բաց ու յայտնի

դիւրին փորձութիւնով մը՝ որ մեծ ու երկելի փորձ մըն էր ան . ինչու որ չէ թէ միայն իրենց երջանկութիւնը երկինքին մէջ կամ թշուառութիւնը դժոխիքին մէջ անկէց կախում ունէր , հապա իրենցմէ ետքը եղած իրենց միլինաւոր տղաքներուն ալ երջանկութիւնը երկինքին մէջ՝ ու թշուառութիւնը դժոխիքին մէջ :

Դ . Վասուած ասանկ հաճեցաւ որ անոնք փորձուին իրենց համար՝ ու մեզի իրենց տղաքներուն համար . ինքը մեզի չշարցուց . անտեսնը մենք ծնած չենք . բայց թէ որ ծնած ըլլայինք , անշուշապիտի ընդունէինք առ բանը . ուրեմն զգանք որ Վասուածոյ կամքը անշափ իմաստուն ու արդար է , և թէ ամէն բաները շխտակ ըրած է :

Գ . Վասուած ան ատենէն մինչև հիմա միշտ այնպէս կ'ընէ , այսինքն ծնողքները իրենց զաւկըներուն տեղը բռնել կու տայ աւելի կամ նուազ աստիճանով մը . ինչ պէս որ ծնողքներն են , անանկ ալ ընդհանրապէս տղաքները պիտի ըլլան . թէ որ ծնողք ենք՝ բարի ըլլանք , որ մեր տղաքներուն ալ բարի ըլլայ . թէ որ բարի ծնողաց զաւկըներ ենք՝ աշխատինք անոնց նմանիլ . և թէ որ չար ծնողաց զաւկըներ ենք , լանք Վասուածոյ առջելը անոնց չարութեանը համար , և աղօթենք իրեն որ մեզ արդարացունէ ու յաւիտենական կենաց արժանի ընէ :

Դ . Տէրը փորձեց Վամա՞ ու Եւան Դրախտին մէջը . անոնք Վասուածոյ ստեղծուածներն եին , և պարտաւոր էին սիրել Վասուած ու անոր կազմանդիլ . մենք ալ անոնց տղաքները՝ Վասուածոյ կը վերաբերինք և պարտինք զինքը սիրել ու իրեն կազմանդիլ . մենք ալ փորձութեան մէջ ենք , բայց մեր փորձը տարբեր է անոնց առաջնն փորձութենէն : Ես է մեր փորձութիւնը . Վասուած կը սպասէ մեզի ամէն օր՝ տեմնելու թէ պիտի դառնանք իրեն ապաշխարելով ու հաւատալով իր Որդւոյն Յիսուսի Քրիստոսի : Ուստի լաւ գործածենք աս փրկութեան պատեհութիւնը որ ունինք :

Ք · ՄԵՐՄԻԱԽՆ ՍԹԵՎ.ՆԻԿ ՄԵԴԱՅԻՆ ԱՆ
ԻՉԱՆԱԼԻ :

‘ՕԱՆԴ · Ք · 1-13 ·

Հ · Տէրը փորձեց Ադամ ու Եւան ՚Իրախտին մէջը ·
անոնք ինկան թէ չէ :

Պ · Ենկան :

Ղ · Ենոնք ՞րշափ ատեն կեցան պարտէզին մէջ իրենց
մեղանչելէն ու իյնալէն առաջ :

Պ · Շենք գիտեր ճշգիւ , բայց կ'երեայ թէ քիւ
ատեն :

Հ · Ի՞նչ էր անոնց մեղքը :

Պ · Արգելեալ պտուղէն ուտելնին էր :

Հ · Ենոնց ՞րին առաջ կերաւ :

Պ · Եւան :

Հ · Եւան ի՞նչպէս կերաւ ան :

Պ · Սատանայէն փորձուելով : Յօհ · Է · 44 :

Հ · Սատանան ի՞նչ կերպարանքով ցուցուց ինքզինքը
Եւային՝ երբոր փորձեց անիկայ :

Պ · Օքի կերպարանքով : ‘ՕԱՆԴ · Ք · 1-5 ·

Հ · Ադամ ի՞նչպէս մեղանչեց :

Պ · Եւայէն փորձուելով : ‘ՕԱՆԴ · Ք · 6 :

Հ · Ենոնք արգելեալ պտուղն ուտելէն ետքը շուտով
գիտցմն որ մեղանչեցին :

Պ · Հրամերես . և ամէցան ու վախցան : ‘ՕԱՆԴ ·

Ք · 7 :

Հ · Երբոր Տէրոջը գալը լսեցին , ի՞նչ ըրին :

Պ · Ինքզինքնին պահեցին : ‘ՕԱՆԴ · Ք · 8 : Երեմ :

ԻՔ · 24 :

Հ · Տէրն ի՞նչ ըստ Ադամին :

Պ . “Ո՞ւրես” :

Հ . Ադամ թօնչ պատճառ բերաւ Տէրովը անկեց պահուըտելուն համար :

Պ . “Ա ախցայ , ինչու որ մերկ էի” : ա Յօհ . գ .
20 : Ք . 18 :

Հ . Երբոր Տէրն անոնց մեղք գործելուն վրայով հարցուց , խոստովանեցման եթէ ինքզինքնին արդարացուցին :

Պ . Կաքզինքնին արդարացունել ուզեցին : Յօհնտ .
գ . 11-13 :

Հ . Ադամ որո՞ւն վրայ ձգեց յանցանքը :

Պ . Եւային վրայ : Յօհնտ . գ . 12 :

Հ . Եւան որո՞ւն վրայ ձգեց յանցանքը :

Պ . Օձին վրայ : Յօհնտ . գ . 13 : ա ՏԻ . բ . 14 :
բ կրտնել . ժամ . 3 :

Հ . Ենոնց ինքզինքնին արդարացունելը Տէրը ընդունեց :

Պ . ԶԵ , չքննունեց :

Հ . Ե՞նչ պէտք էր որ ընէին :

Պ . ԱԵղքերնին խոստովանելու էին : Դառն . ժը .
13 : ա Յօհ . ա . 9 :

Հ . Ե՞նչ կ'ըսէ Առորբ Գիշը անոր վրայով որ իր մեղքերը կը ծածկէ :

Պ . “Եր յանցանքները ծածկողը յաջողութիւն չգրտներ . բայց պանուն խոստովանողն ու մէկդի ձգողը ողորմութիւն կը գտնէ : Առանք . իը . 13 :

^{*} ԱԵկը չկրնամք ճշդիւ հաստատել թէ Ադամ ու Եւան Դրախտին մէջը դրուելն որչափ ատեն ետքը արդեալ պառողին կերան , և սրբութեան ու երջանկութեան վի-

Ճակէն մեղքի ու թշուառութեան վիճակի մէջ ինկան - բայց կը կարծուի թէ շատ երկար ատեն պիտի չըլլայ :

Աս իյնալրուն առաջին դրդողը Աստանան էր , որ պատեհութիւն գտնելով՝ ինքզինքը օձի կերպարանքով ծածկեց և փորձեց կնիկը երրոր մինակ էր : Եւան անոր փորձութեանը մտիկ ըրաւ . ծառին վրայ նայեցաւ որ պտուղը գեղեցիկ էր տեսնելու , և ուտելու բարի կը թուէր . կը փափաքէր անիկայ ուտելու , և մանաւանդ անիկայ ուտելով կը կարծէր որ իմաստուն պիտի ըլլար , իր աշքերը պիտի բացուէին , և Աստուծոյ պէս պիտի ըլլար և բարին ու չարը պիտի գիտնար : Առաւ պտուղէն ինք կերաւ և իր էրկանն ալ տուաւ , և ան ալ կերաւ : Աղամ կերաւ անիկայ գիտութեամբ , խորհրդածութեամբ , կաման , ինչու որ “խարուած չէր” : Ինք իր կնկանը խօսքին աւելի մտիկ ըրաւ , քան թէ Աստուծոյ պատուիրանքին . մեղք գործածնուն պէս աշքերնին բացուեցան . զիտցան յանցագնին : Խիղձնինբն տասնչեց իրենք , ամչքան . և չէ թէ միայն ամբչցան , հազար վախցան ալ . անոնք Աստուծոյ ներկայութենէն սոսկացին , և իրմէն փախան . բայց անօգուտ էր անոնց փախիլը : Աստուած կանչեց անոնք իր առնվազանը . անոնք ինքզինբնին արդարացունելու շանք ընելով աւելի շատցուցին իրենց մեղքերը : Անոնց պարտաւորութիւնը իրենց ըրած ինոնարհարար խոստվանին ու ինքզինբն Աստուածային ողորմութեանը յանձնեն էր . Աստուած ընդունեց անոնց ինքզինբնին արդարացունելը , ինչու որ մեղքը չկընար արդարանալ :

Ա . Դուռք հիմա հասկըսաք թէ ինչպէս մեղքը աս աշխարհը մոտաւ մեր բոլոր տառապանիներովք . մեղքը աստանային ձեռքովք բերուեցաւ որ անիկայ ամէն արդարութիւններուն թշնամին է : Ինքն աշխարհի սկիզբէն մառդասպան է . երկնից ու երկրի մէջ մեղքին հայրն ինքն է . և ինկած հրեշտակներուն ու մարդոց չարութիւններուն համար՝ որ ինքն ըրաւ և կ'ընէ , պատասխան պիտի տայ դատաստանին օրը : Ինչպէս որ մեծագոյն մեղաւորը ինքն է , անանկ ալ բոլոր տիեզերքի մէջ ամենաթշուառ էակն ինքը պիտի ըլլայ :

Բ . Զագայւ կեցիք որ մէկու մը մտիկ չընէք երբոր կը

փորձէ ձեզ գէշութիւն ընել տալու : Եշան մօիկ ըրաւ ու ինկաւ . թէ որ դուք ալ փորձութեան հետևելու ըլլաք , դուք ալ պիտի իյնաք : Աչկ դի՛ ճգեցէք չար փորձիք , ով որ ըլլայ թող ըլլայ , ձեզմէ հեռու թող կենայ , կամ դուք ինքանին հեռացուցէք անկէց . մեր Փրկչին օրինակին հետևեցէք : Ատուրի . է . 1-11 : ժկ .

21 , 33 :

Գ . Դուք բուն ձեր գօրութեանը մի՛ ապաւինիք . եթէ Արամ ու Եւան սուրբ վիճակին մէջն ըլլալով ինկան , մենք որչափ դիւրութեամբ պիտի իյնանք մեղանչական վիճակի մէջ ըլլալով . աղօթեցէք Աստուծոյ ըսելով , թէ “Տէր , մեզ փորձութեան մէջ մի՛ ճգեր , հապա չարէն փրկէ մեզ” :

Դ . Եւային՝ Ադամը մեղք գործելու փորձելը կը ցուցնէ թէ ի՞նչպէս մեծ աղղեցութիւն կրնայ ունենալ մէկը մէկակին վայ : Երիկներն ու իրենց կնիկները մեծ աղղեցութիւն ունին իրարու վայ՝ բարիի կամ չարի : Անք շատ մօտ ու սիրելի բարեկամները և ազգականները շատ անգամ մեր ամենայաջող փորձիչները կ'ըլլան . աղօթենք Աստուծոյ որ ոչ մէկը փորձէ մեզ , ոչ ալ մենք մէկէ մը փորձուինք . այլ ջանանք որ մենք ամէն մարդիկ գէպի Դուտուած առաջնորդենք և չէ թէ Աստուծմէ հեռացունենք : Գ թօւագ . իա . 25 : Յաբ . բ . 9 :

Ե . Աստուծոյ գէմ մեղանչող մարդ մը չկրնար երջանիկ ու բարեյածող ըլլալ : Աստանան և իր հրեշտակները երակնիքին մէջ մեղանչելուն պէս՝ շուտ մը ամօթով ու վախով լեցուեցան Աստուծոյ առջեր , և յաւիտենական դատապարտութեան տակ ինկան : Ասանկ ալ մենք մեղքին համար կ'ամենանք ու կը վախնանք , և թէ որ չապալսարենք՝ միտքերնիս հանդարտութեան մէջ պիտի չպայ , և խորունկ տրտմութեան մէջ պիտի թաղուինք յաւիտեան :

Զ . Անդք մը չկրնար ծածկուիլ . զուր տեղք պիտի փախչինք Աստուծմէ , կամ մեղքերնիս իրմէն պահենք : Խնդն ամէն տեղ ներկայ է , և ամէն բաները դիտէ ու կրնայ կանչել մեզ իր առջեր ամէն րոպէ :

Դ . Անդքը չկրնար անդատապարս մնալ . մէկ մեղքը

ԱՇԿԱԼԵՆ մեծ կրնայ ըլլաւ, բայց մեղքը թէ մեծ կամ թէ պղտիկ՝ չկրնար անպատիժ մնալ:

Ա . Եւ մեր պարտաւորութիւնն ու ապահովութիւնը մեղքերնիս խոստովանելէն ու մեկ դի ձգելէն կախումը ունի : Ըստ որ մենք խոնարհաբար խոստովանիսք մեր մեղքերը և աղաշներ Խստուած որ Կիրիստոսի համար թռողութիւն չնորհէ մեզի , ինքը պիտի չնորհէ : Հյոյս չկայ անոնց համար՝ որ չեն ուղեր խոստովանիլ ու մեկ դի ձգել իրենց մեղքերը :

Ե . ՄԵՐ ԵԽԱՅԻ.Թ.Ի.Կ. ԿԾԱՅՈՒ.ԸՑՅԱ ԽԾԱՅԱ.ՈՒ.Կ. ԱԺԸՅ :

1 . Ենոնք անիծուեցան ու Կրախտէն դուրս ձգուեցան :

“Օ՞ննդ . Գ . 1-24 :

Ա . Տէր Խստուած բարկացաւ Աղամին ու Եւային իրենց մեղանչելուն համար :

Պ . Աղամերես :

Կիանզի Խստութոյ բարկութիւնը երկինքէն կը յայտնուի մարդոց բոլոր ամբարշտութեանը և անիրաւութեանը վրայ , որոնք ճշմարտութիւնը անիրաւութեամբ բռներ են : Առաջ . առ . 18 : Խստուած արդար դատաւոր է . ու Խստուած դդաւորին ամէն օր բարկացած է : Առաջ . է . 11 : Եվշա լէ . 6 , 7 :

Ա . Եռաջ որմւ ցուցուց Խստուած իր բարկութիւնը , սատանային՝ Եւային՝ թէ Աղամին :

Պ . Եմենէն առաջ մեղանչող սատանային :

Ա . Տէրը Բօնչպէս անիծեց անիկայ :

Պ . “Եմեն անասուններէն և դաշտին ամէն դազաններէն անիծեաւ ըլլաս ” : “Օ՞ննդ . Գ . 14 , 15 :

Հ . Տէրը միայն օճն անիծեց թէ ուի կերպարանք
մնած սատանան ալ :

Պ . Երկուքն ալ :

Հ . Եւ ի՞նչ ըստ Կոստուած կնկանը :

Պ . “Ի՞ւու յղութեանդ ցաւերը խիստ պիտի շատցու-
նեմ” : ՞Օ՞նդր . գ . 16 :

Հ . Եւ ի՞նչ ըստ մարդուն :

Պ . “Երկիրը քու պատճառովք անիծեալ ըլլայ” :

՞Օ՞նդր . գ . 17-19 :

Հ . Երկիրն ի՞նչ պիտի բուացունէր :

Պ . “Փուշ ու տատասկ” :

Հ . Եղամ ի՞նչպէս պիտի ստանար իր հացը :

Պ . “Երբսին քրտինքովը”

Հ . Եւ ի՞նչ բանի պիտի գառնար :

Պ . Հողե . “Հող էիր դուն ու հող պիտի գառ-
նաս” :

Հ . Տէրը անատենը ի՞նչ խոստոնք ըրաւ :

Պ . Տէրը անատենը ողորմութեամբ Փրկիչ մը խոս-
տացաւ Եղամին ու Եւային և բոլոր իրենց կորսուած
տղաքներուն :

Եւ քուկին ու կնկանը մէջ տեղը , և քու սերունդիդ ու
անոր սերունդին մէջ տեղը՝ թշնամութիւն պիտի դնեմ .
ան քու դլուխտ պիտի ջախջախէ , և դուն անոր գարցա-
պարը պիտի խայթես : ՞Օ՞նդր . գ . 15 : Հապա ՚Քրիս-
տոսի պատուական արինովը՝ որպէս թէ ամբիծ ու ան-
արատ գառի մը . որ առաջուց ճանչքուած էր աշխարհիս
սկիզբէն առաջ , առ Պիտք . ամ . 19 , 20 : Ենոր երկրպա-
գութիւն պիտի ընեն երկրի վրայ բոլոր բնակողները ,
որոնց անունները աշխարհիս սկիզբէն ՚ի վիր մորթուած
Գառնուկին կենաց գրքին մէջը զրուած չեն : Յայտ .
ժէք . 8 :

Հ . Տէրը Բնէ տեսակ հանդերձ շինեց Աղամին ու Խւային հազգունելու համար :

Պ . “ Աղջիկ հանդերձ ” : ՞Օմատ . է . 21 :

Հ . Տէրը Աղամին ու Խւան Դրախտին մէջը կենալու թողժոց , ուր որ կենաց ծառէն պիտի ուտէին ու յաւիւ տեան ապրէին :

Պ . Ձէ . այլ դուրս վլնտեց անոնք : ՞Օմատ . է . 22-24 :

Հ . Խւ Եղամ ապրելու համար ի՞նչ պիտի ընէր :

Պ . “ Երկիրը պիտի գործէր ” :

Հ . Դրախտին մէջ ի՞նչ դրաւ Աստուած կենաց ծառէն անոնք հեռու պահելու համար :

Պ . “ Քէրովքէներն ու բոցեղէն սուր ”

Տէրը բարկացաւ Աղամին ու Խւային և իր բարկութիւնը ցուցուց անոնց . բայց կարգաւ սկսեց . առաջ խիստ հին ու շար մեղաւորին . և ամէն մէկը անփելէն ետքը , Աղամին ու Խւային կաշիկ հանդերձներ հազգուց , և ետքը անոնք Դրախտէն դուրս վլնտեց կենաց ՞օառէն ըուտելու համար . անոնք կորսընցուցին Աստուծոյ շնորհքը և կենաց ՞օառին համար ունեցած իշխանութիւնին , և բնաւ կըրցան նորէն հոն դառնաւ հրեղէն սուրով պաշտպանող քերորէին համար , որ կենաց ՞օառը պահելու կիցեր էր : Անրդը հիմա երկիրը գործելու վրայ էր իր ապրուստը ճարելու համար , և Աստուած ալ հեռացուց Աղամէն իր բարեկամութիւնը :

Ա . Անդանչելէն ետքը միշտ գիտցէք որ Աստուած պիտի բարկանայ ձեզի , և անշուշտ պիտի պատժէ ձեզ , թէ որ շապաշխարէք :

Ի . Խւ Նախկին ու մեծ մեղաւորները թող խիստ վախան , ինչու որ Աստուած ընդհանրապէս առաջ անոնք պատժել կը սկսի . ու շատ սաստիկ կը պատժէ :

Պ . Երբոր կը տեսնէք օձին երկրի վրայ սողալը , որ

ատելի է մարդուն ու անասուններուն, որ ամէն մէկը անոր գլուխը ջախճախել կուզէ մեռցունելու համար, և անիկայ ալ կը ջանայ անոնք խայթել, անատենը յիշեցէք որ Եւստուած անիծեց սատանան օձով. անէծքը վնասանց օձին՝ անոր մէջէն սատանային անցնելով :

Դ. Աստանան անիծուեցաւ բոլոր էակներէն ցած ու անարգ՝ խիստ անգոսնելի և ատելի ըլլալու, և վէրջապէս իր գլուխը ջախճախուելու ու ոտքի տակ կոխուելու համար. Խոլոր տիեզերքը պիտի տեսնէ անէծքին կատարուիլը. ասանկ՝ սատանան և բոլոր իր չար գործերը սուկալի վախճան մը պիտի ունենան. ուստի հրաժարինք իրմէն ու իր բոլոր գործերէն. թէ որ իր կողմը դառնալու ըլլանք, մենք ալ իր հետը պիտի իշանք :

Ե. Մարդը իշանէն ետքը շուտով Նստուծոյ ողորմութիւնովը Փրկիչ մը պատրաստուեցաւ, որ Յիսուս Քրիստոս է. անիկայ կարող եղաւ սատանային գլուխը ջախճախել և անոր գործերը փնացընել. մենք պարտինք նայել իրին մեր Նշանակն պէս, և իր զօրութիւնովն ու օգնութիւնովը մեղքն ալ, սատանան ալ պիտի յաղթենք: Աը կարծուի որ մեր առաջին ծնողքը ապաշխարեցին ու հաւատացին աս խոստացեալ Փրկչին, և ասանկ մեռան ու երկինք գացին :

Զ. Խոլոր հրւանդութեան, տրտմութեան, ցաւերու, աշխատութեան, ու մահին պատճառը աս աշխարհին մէջ՝ մեղքն է. բոլոր թշուառութեան աղբիւրը մեղքն է :

Դ. Խորոր Տէրը վկնտեց Նդամն իր ներկայութենէն և չնորհքէն, բոլոր անոր մերունդն ալ կրնանք ըսել թէ վկնտուեցան նյն ատենը :

Ե. Նստուծոյ ներկայութիւնը և չնորհքը՝ որն որ Նդամ կորսընցոց ու իրմով մենք ալ կորսընցուցինք, նորէն կ'ընդունինք Յիսուս Քրիստոսով: Ո՞նք միայն Քրիստոսով կրնանք Նստուծոյ գալ. Ննիկայ է ձանապարհը, ձշմարտութիւնն ու կեանքը :

Ծ. Բայց Նստուած իր ներկայութիւնը և իր չնորհքը Յիսուս Քրիստոսով նորէն կու տայ միայն անոնց՝ որոնք որ բուն ինքը կ'ընտրէ: Յօն. է. 37-44. և այլն:

Դանզի մարդ մը չպար Դրիմատոսին՝ թէ որ Հայրը չառաջ նորդէ անոր . ասանկ բոլոր մարդկային ցեղն Դատուծոյ գերագոյն ողորմութենէն կախում ունի :

2 • Առաջին Ծանողաց բոլոր սերունդը կորսուեցաւ իրենց մէկ մեղքովը :

Հառմէւ . բ . 12 - 19 :

Հ . Ադամ ու Խւան Դրախտէն վլնտուելնէն ետքը ի՞նչ եղան :

Պ . Դատուծոյ դէմ մեղանչելնուն համար իրենց արդարութիւնը կորսընցուցին ու Տէրոջը առջեր մեղաւոր եղան :

Հ . Դրենց սիրտը ի՞նչպէս եղաւ :

Պ . Վեղանչելէն առաջ անոնք կատարելապէս սուրբ էին , անոնց սիրտերը բարի էին . բայց մեղանչելէն ետքը անոնց սիրտերը չար եղան :

Հ . Տէրը աս փոփոխութեանը համար ի՞նչպէս վարուեցաւ անոնց հետ :

Պ . Տէրը ետ քաջուեցաւ անոնցմէ իր ներկայութեանը և սիրոյն անարժան սեպելով անոնք :

Հ . Յանցանին որմէնն էր որ անոնք իրենց սրբութիւնն ու երջանկութիւնը և իրենց Դատուածը կորսընցուցին :

Պ . Իուն իրենցն էր յանցանկը :

Հ . Ես իրենց յանցանկովը միայն իրենք ինկան :

Պ . Չէ , երբոր իրենք ինկան , բոլոր իրենց տղաքներն ալ ինկան :

Ադամով ամենը կը մեռնին : ա Արքի . ԺԷ . 22 : Մէկուն յանցանկովը շատերը մեռան : Հառմէւ . բ . 15 :

Ա . Խարի սիրտերմվաշխարհ կու գանք , ինչպէս որ
մեր Եղամնախահայրը մեղանչելն առաջ ունէր :

Պ . Չէ . գէլ սիրտերով , ինչպէս որ ինքը մեղան-
չելն ետքն ունէր

Ա . Որդին նմանութեամբը զաւակ ունեցաւ կ'ըսէ
Եստուածալունը :

Պ . Եր նմանութեամբը : Յօհան . Է . 3 :

Ա . Անր Փրկիչն ԲՇնչ կ'ըսէ անոր վրայով՝ որ մարմի-
նէն ծնած է .

Պ . “Այարմինէն ծնածը մարմին է” : Յօհ . Գ . 6 :
Յօհ . Ժ . 4

Ա . Եղամին աս մէկ մեղքը ԲՇնչ հետևանք ունեցաւ
մեր վրայ :

Պ . Եղամին աս մէկ մեղքին համար է որ մենք գէլ
սիրտ և խանգարեալ բնութիւն կ'ունենանք ու ասանկ
մեղքի տակ կ'իյնանք , և Եստուծոյ բարկութիւնը վրա-
նիս կու գայ , ու հիւանդութիւն , տրամութիւն , աշ-
խատութիւն , ցաւ ու մահ կ'ունենանք : Առողջ . Գ .
12-19 : ա Կորնի . Ժե . 21 , 22

Ա . Երբոր մենք կը ծնանինք թէ որ Եստուած մեր
սիրտերը չփոխէ , մեր ներսի դին բարութիւն կայ :

Պ . Չէ :

Գիտեմ որ իմ ներսիդիս՝ այսինքն իմ մարմինիս մէջ
բարի բան մը չընակիր , ինըու որ կամեցողութիւն կաց
քովս , բայց բարին 'ի գործ դնելը չեմ գտներ : Առողջ .
Է . 18 : ա Կորնի . բ . 14 :

Ա . Եռանց աս խանգարեալ բնութեան բնաւ մարդ
մը ծնամւ աշխարհիս մէջ :

Պ . Այ միայն մարդն Յիսուս Քրիստոս : Դասէ .
ա . 35 :

Ա . Եղամին մինչև աս օրս մեղաւա՞ր էին բոլը մարդեկ :

- Պ . Հրամերես :
- Հ . Ի՞նչպէս կը նայի Եստուած աշխարհի վրայ :
- Պ . Մնջով լցուած ու կորսուած աշխարհի պէս :
- Տէրը երկինքէն նայեցաւ մարդոց որդիներուն վրայ որ տեսնէ թէ՝ կայ արգեօք իմաստուն մէկը որ զՄատուած փնտուէ : Եմէնքը խոտորեցան մէկ տեղ , անպիտան եղան . աղեկութիւն ընող մը չկայ , մէկ մըն աւ չկայ :
- Առաջ . ժէ . 2 , 3 :
- Հ . Եմէն մարդ իր մեղաւոր ըլլալը կը զգայ :
- Պ . Հրամերես . մեր խղճմտանքը ինչպէս և Եստուածաշունչը միշտ կը զբուցէ մարդոց իրենց մեղաւոր ըլլալը :
- Հ . Ուրեմն բոլոր աշխարհի վիճակը ի՞նչպէս է :
- Պ . "Յանցաւոր՝ Եստուծոյ առջելը" : Հառմ . ա .
- Բ . Ք : Երիւ . բ . 3 :
- Հ . (Ձէ) որ առանց սրտի փոփոխութեան իրենց մեղաքերուն մէջը մեռնին , ի՞նչպէս պիտի պատժուին :
- Պ . Ենոնք պիտի պատժուին յաւիտենական կրակին մէջ : Մատիլ . ին . 41-46 . և այլն :

Եղամ ու Եւան կորսնցուցին իրենց արդարութիւնը և ձշմարիտ սրբութիւնը՝ իրենց մեղք զործած բոպէին . անոնք ապականեալ ու չար եղան սիրտով ու կեանքով . Եստուած երեսէ ձգեց անոնք , ու իրենց ամէն քաշած նեղութիւններուն պատճառը բուն իրենց մեղքն էր : Երբոր անոնք ինկան , իրենց տղաքներն աւ ինկան . ինչու որ մեր Եռաջն Ծննդքը փորձուեցան նաև իրենց տղաքներուն այսինքն մեզի համար :

Ուստի Եղամին՝ խանգարեալ ու մեղաւոր Եղամին զաւակ ծնաւ բուն իր խանգարեալ ու մեղսալից օրինակով : Չար հայրը չար զաւակ ունեցաւ . մարմինէն ծնածը մարմին էր . քանզի միշտ նմանն զնմանը կը ծնանի . մենք աշխարհ կու գանք գէշ սիրտերով , հակառակ

Աստուծոյ, ու շարին հակամիտեալ . մարդկային ցեղէ բնաւ մէկը սուրբ չճնաւ աս աշխարհը, բայց միայն մարդն Քիսուս ՚Քրիստոս . ու ան ալ յատուկ Աստուծոյ զօրութիւնովն էր : Եւ Եղամն մինչև հիմա բոլոր մարդիկ մեղանչեցին, ինչպէս որ ամէն մարդ կը զռայ ու գիտէ իր մեղաւոր ըլլալը : Աստուծ բոլոր աշխարհի վրայ՝ մեղաւ վց ու կորսուածի պէս կը նայի, ու աշխարհ իր առջնը յանցաւոր կ'երևնայ իր բարկութեանը տակն ինկած : Իոլոր աս մեղքն ու թշուառութիւնը մեր Եղաղին՝ Կանոնացը մեղքին հետեւութիւնն է . աս մեղքը կործանեց մարդկային սերունդը . Աստուծ անանկ կը վարուի մարդոց հետ, որպէս թէ անոնք բռն Եղամին մեղքը գործած էին . քանզի ճիշտ ան որ Եղամին վրայ եկաւ, իր իյնաւլեն ետքը՝ ճշիր իր տղաքներուն վրայ ալ կու գայ : Ենոր գործին հետևանքները իրենց վրայ կ'ընդունին, ճիշտ որպէս թէ անոնք գործած էին ան . անոնք արդարութենէ ու Աստուծոյ շնորհէն զրկուած են . ապականեալ են ու տգէտ, ցափ ու փորձութեան տակ ինկած են, ու ենթակայ անցաւոր և յափտենական մահին :

Ե . Այր Եղաղին՝ Կանողացը մեղանչենուն ետքը իրենց վարքը և վիճակը որչափ փոխուած էին . անոնք կորսնցուցին իրենց սրբութիւնն ու իրենց երջանկութիւնը : Աստուծոյ տղաքներն ու Երկնից ժառանգներն ըլլալուն տեղը՝ սատանայի տղաքներ ու ՚Կառուիքի ժառանգներ եղան : Ենչպէս հիանալի, ի՞նչպէս խորուսկ, և ի՞նչպէս սոսկալի է անոնց իյնալը :

Դ . Իրենց զաւկըներուն վարքն ու վիճակը ի՞նչպէս փոխուեցան . երբոր անոնց Եղաղին՝ Կանողքն ինկան, իրենք ալ ինկան . բոլոր մարդկային ցեղը սուրբ ու երջանիկ կրնային ըլլալ . ու բոլոր Երկիր օրկութեան ու կենաց ՚Իրախտ մը ընել : Ինյոց հիմա բոլոր մարդկային ցեղը մեղաւոր ու թշուառական են, և Երկիրը անիծեալ է, ու մժութիւնով և վայով ու մահով ծածկուած :

Ե . Ինյոց մեր Եղաղին՝ Կանողացն ու մեզի իրենց տղայցը համար փրկութիւն եղաւ : Աստուծ Փրկիչ մը պատրաստեց . արդարն Յիսուս ՚Քրիստոս . Աստուծ ամէնքը մեղքի տակ դրաւ որ ողորմի ամենուն վրայ :

“Եհա Աստուծոյ Դրանուկը , որ աշխարհի մեղքը կը վերցունէ” : Ենանկ է նե չտրտնջանք . ահա պատրաստ գեղը , և անանկ մէկ դեղ մը՝ որ ամենուն բաւական է : Քրիստոս ետ կը դարձունէ մեզի ինչ որ Նդամ կորսընցուց : Պէտք է մեզի ուրախութեամբ Օխիքը և Եր փըրկութիւնը ընունիլ , ու շնորհակալ ըլլալ Վոտուժմէ իր մեզի ցուցուած սիրոյն համար : Ուստի պատուե՞նք մեզի տրուելու շնորհաց մեր ամէն միջոցները , այսինքն Վեւտարան կարդալը , աղօթք ընելը , ևայլն :

Դ . Պէտք է մեզի որ մէկ մեղք մըն ալ գործելէն վախանանք , որչափ չնշն որ երեայ ան : Խրբոր մենք մեղքի մէջ քայլ մը ընելու ըլլանք , չնոք դիտեր թէ ուրիշ ինչ քայլեր պիտի հետեւին , կամ թէ ինչ թշուառութիւններ մեր փայ ու մեր ընկերներուն վրայ պիտի բերենք : Միայն սրբութիւնն է խաղաղութիւն ու ապահովութիւն :

Ե . Ինաւ ընունանք որ մենք չար սիրուերով ապականեալ ծնած ենք , որ բնականաբար սէր չունինք Աստուծոյ ու սուրբ բաներուն : Ո՞նք մեղքին հակամիտեալ ենք . մենք 'ի մասնկութենէ մեղքին կը հետեւինք . ի՞նչ սոսկալի շարութիւններու համանելու էինք' (որովհետև մեր մէջ ամենալին բարի բան մը չունինք մենք մեզմէ առ Վաստուած) թէ որ Տէրը ու իցէ ճամբորով մը մեզ ետ չդարձունէր : Ինականաբար մեր ընթացքը մանկութեան օրորոցէն մինչեւ դերեզման՝ դէպ'ի վար դժոխքը կ'իջնէ . մենք մեզմէ ոչ զօրութիւն ոչ կարողութիւն ունինք , և ոչ ալ կամք ետ դառնալու առ Վաստուած . ուրեմն բնականաբար մարդիկ ասատկապէս չար ու կորսուած վիճակի մէջ են :

Զ . Վս ապականեալ բնութիւնը պարտի փոխուիլ , ու Առւրբ Ճոդիին զօրութիւնովը փոխուիլ , թէ չէ չենք կրնար Վաստուած տեսնել :

Է . Ուստի պարտինք լալ Վաստուածյ առջելը մեր առաջին ծնողաց իյնալը , մեր սոսկալի ապականութիւնը բնութեամբ ու կրթութեամբ . և պարտինք խոստով մնիլ Երին որ մենք անմաքուր ենք . և Առւրբ Ճոդիին զօրութիւնովը նոր սիրա մը ունենալու՝ ու Տէր Հիսուս Քրիստոսով մեր մեղքերուն համար թողութիւն գտնելու պարտինք ինսդրել իրմէն :

Ը. Բոլոր աշխարհը մեղքի մէջ ու Աստուծոյ բարկութեանը տակ ինկած է : Անք ժրչափ ջանալու ենք որ անիկայ փրկութեան ճամբուն գիտութեանը բերենք . ժրչափ աղօթելու ենք Աստուծոյ՝ որ իր Աւետարանը տարածէ բոլոր աշխարհի մէջ , ու Աղամին բռլոր կորսուած տղաքները փրկելու հասցունէ :

Ծ. Յատուապէս թող ծնողքները զգան թէ “մարմինէն ծնածը մարմին է” . և թէ շնորհքը բնութենէն չպար , հապա Աստուծոյ պարզեն է ան . ու բնաւ չպարարին աղօթելէն որ իրենց տղայոց ապականութիւնը վերցուի՝ ու Հիսուս Քրիստոսով նոր արարածներ ըլլան : ‘Աաւ ամէն Քարոզիչներն ու Ապրժապետներն ալ նոյնպէս զգալով , իրենց ունկնդիրներուն ու աշակերտներուն ալ նոյն ընեն : Փրկութիւնը Տէրոջմէն է , մեր բաւականութիւնը Կառոււմէ է (ա) :

Դ. ՓՐԻՈՒԹՅԱՆ ՃԵՄԻՈՒՄՆ ՎՐԵՅ :

1. Աստուծած կը պատրաստէ մեզի համար կատարեալ փրկութիւն :

Եկեւ . բ . 1-22 :

Հ. Ադամ ու Խւան մեղանչելէն ետքը Տէրն անոնք ու անոնց տղաքները յաւիտեան մեղքի ու թշուառութեան մէջ կորսուելու թողթւց :

Պ. ԶԷ :

Ա. Ուրեմն Թվ է Պօղոսը՝ կամ Թվ է Ապողոսը . պաշտօնեաներ են , որոնցմիվ հաւատացիք . և ինտոր որ Տէրը տուաւ անոնց ամէն մէկուն : Խս տնկեցի , Ապողոսը ջուր տուաւ , բայց Աստուծած աձնցուց : Ուստի ոչ տնկողը բան մըն է , ոչ ջուր տուողը , հապա Աստուծած՝ որ աձնցուց : ա Ասքն . գ . 5-7 :

Հ. Խօնչ կ'ըսէ Տէրն ասոր վրայով :

Պ. “ Խաշպէս ես կենդանի եմ, կ'ըսէ Տէրը, չեմ
ուղեր մեղաւորին մեռնիլը, հապա շարը դառնայ իր ճա-
նապարհէն ու ապրի . դարձի եկէք, դարձէք մեր շար
ճանապարհէն . խնջւ մեռնիք, ով Խորացելի տունը ” :
Եղի . Ժ. 23-32 : ա Տիմ . բ . 4 : բ Պիտ . գ . 9 :

Հ. Ո՞եր առաջին ծնողքը մեղանշելնէն ետքը, Է՞րբ
Տէրը Փրկիւ մը խոստացաւ անոնց :

Պ. ‘ Կոյն օրը : ’ Ծանր . գ . 1-15 :

Հ. Ո՞վ էր խոստացեալ Փրկիլը :

Պ. Աստուած իր մեծ ու մանաւանդ անհուն սիրովը
մեզի Փրկիւ ըլլալու տուաւ իր որդին Ծիսուս Կիրիստոսը :
Յօհ . ժե . 13 : Հառմ . ե . 6-8 : շ . 92 : Խժես . բ .
7 : Տիտ . գ . 4 , 5 :

Հ. Խօնչ կ'ըսէ Տէրն մեր ասոր վրայով :

Պ. “ Խնջու որ Աստուած անանկ սիրեց աշխարհը
մինչև որ իր միածին Որդին տուաւ . որ ամէն ով որ անոր
հաւատայ՝ չկորսուի . հապա յաւիտենական կեանք ունե-
նայ ” : Յօհ . գ . 16 :

Հ. Աստուած Քվ կը խրկէ մեր սիրտերը նորոգելու,
և մեզ դէպի Կիրիստոս մեր Փրկիշն առաջնորդելու, ու
մեզ Երկինքին համար պատրաստելու :

Պ. Առուրբ Հոգին : Յօհ . ա . 13 : գ . 3-6 : ա
Առնիլ . բ . 7-16 :

Հ. Կրաւունքով Աստուած մեզի պարտաւեր էր իր
Որդին տալու՝ որ մեզ պատիմէն փրկէ, և Առուրբ Հոգին
տալու՝ որ մեր սիրտերը փոխէ, ու մեզ Երկինքին համար
պատրաստէ :

Պ. ‘ Զէ , մեր փրկութիւնը Աստուածոյ կողմանէ ձրի
շնորհքով եղաւ :

Խայց հիմա առանց օրէնքի Աստուածոյ արդարութիւնը

յայտնուած է , օրէնքէն և մարդարէներէն վկայուած ըլլալով . այսինքն Աստուծոյ արդարութիւնը՝ որ Յիսուս Քրիստոսի հաւատքէն է , ամենուն յացրնաւած է , ու ամենուն վրայ չ'ըլլայ . և խորութիւն չկայ : Ինչու որ ամենքը մեղք գործեցին , և Աստուծոյ փառքէն պակաած են : Եշ անոր շնորհքովը ձրի կ'արդարանան Յիսուս Քրիստոսով եղած փրկութեամբը . և այն : Հոռով . գ . 21-28 : Որ մեղ փրկեց , ու սուրբ կոչումով կանչեց չէ թէ մեր գործքերուն նայելով , հապա իր դիտաւորութեանն ու շնորհքին նայելով , որ Քրիստոս Յիսուսով մեզի տրուեցաւ յաւիտենական դարերէն առաջ : ք Տի : ա . 9 :

Հ . Ուրեմն որմէն շնորհակալ պարտինք ըլլալ և զննքը օրնել մեր փրկութեանը համար :

Պ1 . Խեր Տէր Աստուծմէն : Յայտ . Ե . 9-14 :

Եշ անոր՝ որ կարող է ճեղ անբիծ պահել , և իր փառքին առջել անարատ կայսեցունել ցնծութիւնով , մի միայն Աստուծոյ մեր Փրկչին մեր Տէր Յիսուս Քրիստոսին ճեռքովը փառք ու մեծութիւն , գորութիւն ու իշխանութիւն բոլոր դարերէն առաջ , և հիմա ու բոլոր դարերու մէջ , Ամէն : Յայտ . 24 , 25 :

“Եղին օրը՝ որ մեր առաջին ծնողքներն ինկան , Աստուծքերագոյն ողբրմութիւնով կատարեալ Փրկութիւն պատրաստեց անոնց՝ ու անոնց ինկած զաւկըներուն համար : Փրկիչ ալ պատրաստեց , Արբարար ալ :

Ա . Փրկութիւնը Տէրոջն է , ոչ ուրիշ էակ մը , հապա միայն Աստուծած՝ ամենուն ինքնիշխան Տէրն իր իմաստութիւնովն ու գորութիւնովը փրկութեան ճանապարհ մը ասհմանեց ու բացաւ կորսուած մարդուն համար : Մարդը մեղանչելին ետքը՝ բանը միայն Աստուծոյ մնաց ,

որ եթէ մարդն ապրելու ըլլայ՝ կամ թէ մեռնելու, Դատուած ինքը որոշէ, որ մարդը պատեհութիւն ունենայ փրկուելու, կամ կորսուի յախտեան :

Դ. Եր գերազանց սէրը զնիքը շարժեց փրկութեան ճամբայ մը բանալ : Ինքը մեր կործանեալ ու թշուառ վիճակին մէջ մեզի գժացաւ, չուզելով մեղաւորին մահը :

Գ. Եւ ինքը մեր փրկութեանը համար պատրաստութիւն ըրաւ, առանց ծափքին նայելու : Որովհետև պէտք էր որ բուն Եր միաժին Որդին մեռնի մեր տեղը . վասն որոյ Վաստուած իր Որդին չկնայեց : Հառաւ . ը. 32 : Եւ որովհետև մենք բուն իր Սուրբ Հոգիին կը կարօտինք, որ մեր սիրանը փոխէ ու մեղ Վրիստոսին առաջնորդէ, վասն որոյ Վաստուած չկնայեց իր Սուրբ Հոգին . ուստի հիմայ բան մը պահան չէ, այլ ամէն բան պատրաստ է : Յայու . իք . 17 :

Դ. Ուրեմն երբոր մենք մեր մոքին մէջը կը զգանք մեր մեղքերը և անկէց հետեւած կործանումը՝ փրկութեան համար Վաստուած նայինք ու միայն Վաստուածոյ : Փրկութեան համար իր ցուցուցած ճամբան շիտակ է, ու միայն ան է ճամբան : Վն անսնկ պապանով ու անսմալ է, որչափ որ անհուն իմաստութիւնը և զօրութիւնն ու սէրը և ողորմութիւնը կրնայ ընել անիկայ : “ Վն որ հաւատայ պիտի փրկուի ” : Այու . ժկ. 16 : Յօհ . կ. 27-29 : Ուկը թող չվախնայ Վաստուածոյ փրկութեանը ճամբան դիմելէն, բոլոր ուրիշ ճամբաները սուտ են և կործանման պատճառ :

Ե. Անիք պաշտելով յարգելու ենք Վաստուածոյ ատսէրը, որ առանց անոր՝ Դմերուն պէս Դժոխվին մէջը կատարեալ թշուառութիւնով ու յուսահասութիւնով միշտ ցոցուած մնալու էինք : Վաստուած մեր վրայ ունեցած սէրը մաշեցունելու է դէպի իրեն մեր ունեցած թշնամութիւնը . աս սիրոյն զօրութիւնը կոտրտելու է մեր քառացեալ սիրտերը : Զանիք ընենք աս մեծ փրկութիւնն ընդունելու . քանզի թէ որ մէկ դի ձգենք անիկայ, կործանման մէջ պիտի ընկղղինք՝ անիկայ չպողներէն աւելի խորունկ :

Օ. • “Եւ թէ որ Աստուած մեզ այնչափ սիրեց , մենք
ալ պարտինք մէկզմէկ սիրել” . մենք չարերուն ու ապե-
րախաներուն ալ գթած ըլլալու ու ներելու ենք , ինչպէս
որ մենք թողութիւն գտնել կը յուսանք . թող մեր
կեանքը՝ սիրոյ կեանք մը ըլլայ առ Աստուած և առ մար-
դիկ :

2. Յիսուս Կրիստոսի մեր Փրկչին ով ըլլալը :

ա. ԽԵՐԵՎԱՆ ԱՍՏՈՒԵԿՈ 1:

Յօհ . ա . 1-18 :

Հ. • Աստուածոյ Որդին Յիսուս Կրիստոս մեր Փրկիչը
թշկէ . Աստուած է , թէ մարդ :

Պ. • Աստուած ալ է մարդ ալ է :

Հ. • Խօնչպէս գիտէք թէ ինքն Աստուած է :

Պ. • Աստուածաշունչը մեզի ասանկ կ'ըսէ :

Հ. • Աստուածաշունչն անիկայ Աստուած կը կոչէ :

Պ. • Հրամերես , Կրիստոս է ամենուն վրայ Աստուած
օրինեալ յաւիտեանս : Հառով . թ . 5 : Եսայ . զ . 1-3
բաղադրել Յօհ . ժը . 41 ին հետ : Եբր . ա . 10-12
Ատղ . ճը . 22-27 ին հետ : Յօհ . ա . 1 : ա Յօհ .
է . 20 :

Հ. • Աստուած յաւիտենական է . Կրիստոս ալ յաւի-
տենական է :

Պ. • Հրամերես . ինչու որ Կրիստոսին վրայ Դաւիթ
կ'ըսէ . “Դուն նոյնինքն ես , ու քու տարիներդ պիտի
չպակսին” : Եբր . ա . 12 : Ատղ . ճը . 27 : Եսայ .
թ . 6 : ինք . 6 : Յօյտ . ա . 8 : ինք . 13 : Յօհ . ա .
1 , 2 :

Հ . Եսոտուած ամէն տեղ ներկայ է . Վրիստոս ալ ամէն տեղ ներկայ է :

Պ . Հրամերես , ինտոր որ ինքը կ'ըսէ . “Ուր որ երկու կամ իրեք հոգի ժողվուած ըլլան իմ անունովս , հոն եմ ես անոնց մէջը” : Յատի . ժը . 20 : իը . 18-20 :

Հ . Եսոտուած ամէն բան գիտէ . Վրիստոս ալ ամէն բան գիտէ :

Պ . Հրամերես :

Հ . Կրկնէ նայիմ , Պետրոս Ծխուսին ԲՇնչ ըսաւ , երբոր Ծխուս հարցուց անոր , թէ “Օքս կը սիրե՞ս” :

Պ . “Տէր՝ դուն ամէն բան գիտես , դուն գիտես որ ես քեզ կը սիրեմ” : Յօհ . իա . 17 : ժզ . 30 : Գործ . ա . 24 :

Հ . Եսոտուած ամէն բանի ստեղծին է . Վրիստոսն ալ անմնկ է :

Պ . Հրամերես , Առւրբ Գիրքը կ'ըսէ , “Ենով ամէն բան ստեղծուեցաւ , ինչ որ երկինքն ու ինչ որ երկրի վրայ , անոնք որ կ'երևնան՝ և անոնք որ չեն երեսար” : Առշ . ա . 15-17 : Յօհ . ա . 1-3 : Խթ . ա . 3 , 10-12 :

Հ . Եսոտուած միայն մեղաց թողութիւն կրնայ տալ . Վրիստոս ալ կրնայ մեղաց թողութիւնտալ :

Պ . Հրամերես , “Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու թողութիւն տալու” : Յատի . թ . 1-6 : Որդի . թ . 5 , 7-12 :

Հ . Միայն Եսոտուած կարող է աշխարհը դատելու . Վրիստոս ալ միքին օրը ամենուն դատաւիրն է :

Պ . Հրամերես : “Ա ան զի պէտք է որ ամէնքս ալ Վրիստոսի ատեանին առջեւը ներկայանանք” : բ Առնել . է . 10 : Հառլ . ժկ . 10-12 : Յօհ . է . 22 : Գործ . ժ . 42 :

Հ . Միայն Եսոտուած սիրուելու ու պաշտուելու է

Աստուծոյ պէս . Կրիստոս ալ Աստուծոյ պէս սիրուելու ու պաշտուելի՞ւ է :

Պ . Հրամերես , քանզի սուրբ Գիրքը կ'ըսէ , թէ “Եմէնը պատուեն Որդին , ինչպէս որ Հայոց կը պատուեն” : Յօհ . Է . 23 : Պարծ . ա . 24 : Է . 50 , 59 : Ունակ կ'ըսէ . “Աստուծոյ բոլոր հրեշտակներն ալ անոր երկրպագութիւն թող ընեն” : Խթ . ա . 6 : Փէլու . Ք . 9-12 :

Հ . Երկինքին մէջը բոլոր արարածները իրեն երկրպագութիւն կ'ընեն :

Պ . Հրամերես : Յայտ . Է . 8-14 Բաղդադի Փէլու . Ք . 9-11 Ի հետ :

Հ . Արդիկ իրաւունք սւնի՞ն Կրիստոսի Աստուծութիւնն ուրանալու :

Պ . Զէ , շատ մեծ մեղք է : Յօհ . Է . 23 : ա Յօհ . Է . 20 , 21 :

Յիսուս Կրիստոս մեր Փրկիչն Աստուծն է . ամենուն վրայ մեծ ու ճշնարիտ Աստուծած՝ և Օօրութեանց Խհու վան՝ Ենահ , Ենփոփոխ , ամէն տեղ՝ Երկայ , ամէն բաները Գիտցող , բոլոր տիեզերքին Ստեղծողն ու Պահապանողը . մեղքիրու թողութիւն Տուող . Ա երջին օրուան Դատաւորը . Երկնից ու Երկրի մէջ եղած ամէն արարածներն իրմէն վախնալու ու զինքը յարգելու են , իրեն Երկրպագութիւն ընելու և զինքը պաշտելու են յաւիտեանս յաւիտենից :

Ե . Մէծ գործ մը կատարուելու էր մարդոց փրկութեանը համար , և ատ գործը կատարելն ալ Գերագոյն Խակի մը կը կարօտէր . մենք կը կարօտէինք Աստուծոյ հետ հաւասար Փրկչի մը , անանկ Փրկչի մը՝ որ զԱստուծ կատարելապէս իմանայ , որ Աստուծոյ փառքն ու պատիւը՝ մեր փրկութեանը համար ինչ ընել որ կը պահանջէր , ան ալ աղէկ գիտնայ , և որ իրաւունք ու կա-

բողոքին ունենայ ան ընելու : Անկ անանկ Փրկչի մը
կը կարօտմէք որ կարինայ ազատել մեզ մեղքին՝ մահին ու
'Իժոխքին զօրութենէն . կարենայ հաշտեցունել մեզ Աս-
տուծոյ հետ և պակել մեղ Խրիմքին մէջք յաւիտենա-
կան փառքով : Ահա Յիսուս Քրիստոսն է ան Փրկիչը,
որ Անծ Աստուած է . թէ որ ինքն Աստուած չըլլար , մեր
Փրկչին կողմանէ պահանջուած զործը չէր կրնար ընել :

Ղ . Ուրեմն մեր Փրկիչը բոլորովին կարող է փրկելու
ան ամենը որ իրմով Աստուծոյ կու գան :

Անկ մեղաւիր ենք , ինքն Աստուած է և կրնայ ջնջել
մեր մեղքերը ու մեզ սուրբ ընել : Անկ տկամր ենք , ինքն
Աստուած է ու յաւիտենական զօրութիւնը իրն է , և
կրնայ մեզ զօրացունել : Անկ տղե՞տ ենք , ինքն ամենի-
մաստ է , և կրնայ մեզի իմաստութիւն սորվեցունել :
Աղքատ ենք , ինքն է ամեն բաներոն Տէրը , կրնայ մեզ
հարստացունել : Անկ մահկանացն ենք , ինքը կենաց և
մահուան վրայ զօրութիւն ունի , և կրնայ մեզ նորին
ապրեցունել : Անկ դատաստանի առջև ելլելու ենք ,
ինքն է ամենուն արդար Դատաւորը , ու մեր Փրկիչը , և
իր միջնորդութիւնովք մենք կրնանք արդարանալ : Անկ
թշուառականներս թէ ներկայ ժամանակնիս և թէ յաւի-
տենականութեան համար վատահութեամբ և ուրախու-
թեամբ աս Փրկչին կրնանք ապաւինիլ որ անհուն է զո-
րութեամբ ու փառքով :

Գ . Եւ որչափ որ կարող է նոյնչափ ալ կամեցող :

Արնանք տարակուսիլ իր կամեցողութենէն , որ ինքը
մեզի համար մեռաւ : Եւ վախնանք իրեն մօտենալու ,
որ ինքը մարդասիրութեամբ կը հրաւիրէ մեղ , և կը հաս-
տատէ մեզի որ ինքը դուրս պիտի չէգէ ան՝ որ իրեն կու
գայ : Առաջն . ժամ . 28-30 : Յօհ . կ . 37 : Եւ թէ որ
անդամ մը միաւորուելու ըլլանք իրեն հետ , բնաւ ալ
չենք կրնար զատուիլ իրմն : Հռով . ը . 28-39 : Յօհ .
ժ . 27-30 :

Դ . Ուրեմն հաւատացողին հոգին ապահով է . ուրեմն
Աստուծոյ Խրիմքին երկրի վրայ ապահով է Կրիստոսի
մեղքին մէջք , որէ ամենուն վրայ Աստուած օրինեալ յաւի-
տեանս : Առաջ . ը . 1-12 : ՀՀ . 1 :

Եր . Ենոնք որ չեն հաւատար Տէր Յիսուս Կիրիստոսին
ու թշնամի են իրեն ու իր փրկութեանը , իրաւունքով
դողալու են իր առջելը :

Ենոնք Կատուծոյ գէմ կը հակառակին , անոր գէմ՝ որ
իր թշնամիներն իր սոբքն կոխելքը պիտի ընէ . անոր
գէմ՝ որ կարող է հոդին ալ մարմինն ալ յաւիտեան
գժուիքին մէջը ձգելու : Խօնչպէս սոսկալի պիտի ըլլոյ
յատկապէս ան թշնամիներուն դատապարտութիւնը , ո-
րոնք Կատուծոյ պարզ խօսքերն իրենց ձեռքերնուն մէջն
ունենալով՝ կ'ուրանան Կիրիստոսի Կատուածութիւնը , և
ասանկ ընելով իրը թէ կը վերցունեն զինքն իր տիեզերա-
կալ Կթոռեն , և կորուտած մարդուն փրկուելուն մի միայն
լոյնը և յոյաը կը կորսընցունեն :

Բ . ԵԿԱՔՆ ՄԵՐԴԻ ԼՀ :

Ղ.ու-ի . Բ . 1-52 :

Հ . Յիսուս Կիրիստոս մեր Փրկիչ Կատուած ու մարդ-
է . մենք Կատուածաշցունչեն հասկըցանք որ ինքն Կատուած
է . դուք Խօնչպէս զիտեք որ մարդ ալ է :

Պ . Կատուածաշցունչեն կը սորվիկ՝ թէ աստուածորդին
Կրկինքեն վար իջաւ ու ինքզինքը մարդկութեան հետ
միաւորեց , անանկ որ ինքն Կատուած և մարդ ալ է մէկ
տեղ :

Հ . Աւետարանն ի՞նչ կ'ըսէ ասոր վրայով :

Պ . “ Եւ ինանը մարմին եղաւ , ու մեր մէջը բնակե-
ցաւ ” : Յօհ . ա . 14 : Փիլիպ . Բ . 5-8 :

Հ . Ո՞ւր ծնաւ Յիսուս :

Պ . Աեթզէէմին մէջ : Ակէլ . Է . 2 : Յօհ . Է . 42 :
Աստր . Բ . 1-6 : Ղ.ու-ի . Բ . 1-12 :

Հ . Ո՞վ էր իր մայրը :

- Պ ։ Այս Մարիամ՝ Խառջ . է . 14 : Շօներ . գ . 15 :
Ուոտթ . ա . 18-25 : 'Ղուկաս . ա . 26-38 :
- Հ ։ Եր կարծուած հայրն Թվ էր :
- Պ ։ Յովակի : 'Ղուկ . գ . 23 :
- Հ ։ Տէրոյք Հրեշտակն անոր անունը ԲՌԱՆՆ դնել պատուիրեց՝ երբոր անիկայ ծնանելու ըլլայ :
- Պ ։ Յիսուս , որ կընշանակէ Փրկիչ :
- Ենոր անունը Յիսուս դնես , քանզի անիկայ իր ժողովուրդն իրենց մեղքերէն պիտի փրկէ : Ուոտթ . ա . 21 :
- Հ ։ Անը Փրկչին ծնած օրէն մինչև հիմա քանի՞ տարի եղաւ :
- Պ ։ Հազար ութը հարիւր յիսուն ու վեց տարի :
- Հ ։ Եր քարոզելէն առաջ իր ծնողացը հետ քանի՞ տարի բնակեցաւ :
- Պ ։ "Երսուն տարիի չափ" : 'Ղուկ . գ . 23 :
- Հ ։ Եր ծնողացը հետ մը տեղ բնակեցաւ :
- Պ ։ 'Կազարէթ քաղաքը : Ուոտթ . բ . 23 : 'Ղուկ .
- Բ . 4 , 51 :
- Հ ։ Քարոզելու սկսելէն ետքը շուտով ձգեց 'Կազարէթը , և անատենը մը քաղաքը բնակեցաւ :
- Պ ։ Կափառնայում քաղաքը : 'Ղուկ . գ . 16-31 :
Ուոտթ . գ . 13 :
- Հ ։ Երբոր Յիսուսի քարոզելու ու սորվեցունելու ժամանակը մօտեցաւ , Եստուած անոր առջևէն մվ իրկեց ձամբան պատրաստելու :
- Պ ։ Յօհաննէս Ակրտիչ :
- Հ ։ Անը Փրկիչը խաչուելէն առաջ , քանի՞ տարի քարոզեց ու սորվեցուց :
- Պ ։ Երեք կամ չորս տարիի չափ :
- Հ ։ Իսյց ինքը մարդու պէս երկեցաւ , քնացաւ , կերաւ , պտըտեցաւ , քարոզեց , աղօթեց . ուրեմն ժու

Ղովդոցը ԲՇնչակես Ճանչքուց ու հաւատացուց թէ ինքն Վասուածային էր . Վասուած ու մարդ՝ մէկ տեղ :

Պ . Եր շատ սքանչելի գործքերովը . քանզի ըրած գործքերը անանկ գործքեր էին՝ որ միայն Վասուած կրնայ ընել : Յօհ . 4 . 1 , 2 : Է . 36 : Ժ . 37 , 38 : Ժա . 45 :

Հ . Եր սքանչելի գործքերուն մէկ քանիներն ԲՇնչ էին :

Պ . Այնենքերը յարուց , հիւանդները բժշկեց , դևերը հանեց , ու կուրերուն աշխերը բացաւ : Անորի . դ . 23 , 24 : Է . 13-34 : Խ . 20-35 : Ժդ . 25 :

Հ . Եւրիշ պատճառ ունիս ցուցընելու թէ ինքն Վասուածոյ հետ հաւասար է :

Պ . Հրամերես . զորօրինակ իր շատ անգամ և դանաղն կերպերով զրուցելը , թէ ասանկ էր : Անորի . ժա . 27-30 : Ժք . 6-8 : Ժը . 20 : Իէ . 31-46 : Իը . 20 : Անորի . բ . 1-12 : Յօհ . Է . 17-29 :

Հ . ԲՇնչ կերպով մեռաւ մեր Փրկիչը :

Պ . Այր Տէրը մեծ ամօթ կրելով ու սաստիկ շարլարուով , խաչն վրայ մեռաւ մեզի համար :

Հ . Եր մարդ ըլլալով և չարչարուելովն ու մեռնելով մեզի համար ԲՇնչ կը ցուցընէ :

Պ . Այր քայ ունեցած իր սիրոյն մեծութիւնը : Յօհ . Ժք . 34 : Ժէ . 12 , 13 :

Այր Փրկիչը Յիսուս Կրիստոս մարդ է , ինքը Կոյս Պարիամէն ծնաւ՝ Յուդային Խեթղէհէմին մէջը . Երսուն տարիի չափ իր ծնողացը հետ Գաալիեայի Կազարէթ քաղաքը բնակեցաւ , իրեք կամ չորս տարի քարոզեց , և շատ սքանչելի գործքերով յայտնեց որ ինք Վասուածոյ Որդին էր ու աշխարհի Փրկիչը : Բուն իր քաղաքակից Հրէաները

Նախանձով լցուեցան՝ու իրեն դեմ եւսն , և ինքը խաշուեցաւ և ոռվմայեցի կառավարիչ Պոնտացի Արղատոսին ատենը , թաղուեցաւ , և իրեք օրէն ետքը նորէն յարօւթիւն առաւ : Ծանաւ , ապրեցաւ , ու մեռաւ : Այսաի կը տեսնէք որ մարդու պէս ծնաւ , մարդու պէս ապրեցաւ և մարդու պէս մեռաւ :

Ա . Յիսուս Քրիստոս մեր Փրկիչը լոկ մարդ էւ , հապա Կստուած ալ և մարդ ալ է մեկ տեղ . երկինքին կամ երկրի մեջ իրեն նման մեկը չկայ . իր անունը Լամբանուէլ է , որ ըսել է “ Կստուած մեզի հետ ” : “ Կստուած մարդոնով յայտնուած ” : Աստի . ա . 23 : ա Տի . գ . 16 :

Ասոր համեմատ մենք կը տեսնենք Առորք Գիրքին մէջ որ Կստուծոյ վերաբերեալ ամէն բաները Քրիստոսի ալ կը վերաբերին . և մարդու վերաբերեալ ամէն բաները՝ Քը-բիստոսի ալ կը վերաբերին , մեղքէն ՚ի զատ :

Ի . Իր անձը մեր գիտութենէն վեր է . իր անունը “ Աքանէլի ” պիտի կոչուի : Խոսյ . թ . 6 : “ ԱԿէլ չձանչնար Որդին՝ բայց և այլը ” : Աստի . ժա . 27 : Հոս կը տեսնենք խորհուրդ մը որ Կստուած ու մարդ մեկ են : Յիսուս Քրիստոս բարձր է երկինքին պէս ու խոնարհ երկրի պէս : Ի՞նչ բարձրութիւն և ի՞նչ խորութիւն , ի՞նչպէս հեռու՝ և տակաւին ի՞նչպէս մօտ . եկէք իր առջին իյնանք , և պաշտենք ու երկրագութիւն ընենք իրեն :

Գ . Իր մարդ ըլլալը կը յայսնէ մեզի իր հիանալի խոռնարհութիւնը , իր անպատմելի սէրը , և մեր փրկութեանը համար իր ունեցած փափաքը : Խնքն իր փառքը մեկ գի թողուց , ինքն իր պատիւը չուզեց . ինքը մահին խաղանդեցաւ , ու ան ալ խացին մահուանը . Փիլքո . թ . 5-8 . Յօն . ժե . 13 : Խնքն իր թշնամիներուն համար մեռաւ : Հոռով . ե . 5-8 : Իր ողորմութիւնը և սէրն անշափի են :

Դ . Անք ուրախութիւնու , և երախտագիտութիւնով , սիրով և անկեղծ զազանդութիւնով ընդունելու ենք զինքը մեր Կստուածոյն ու մեր Փրկիչն պէս : Պինտ են անոնց սիրաերը և սոսկալի պիտի ըլլայ անոնց վախճանը , որ ուրախութեամբ չեն ընդունիր Փրկիչը : Թ Աստի . ե . 14 , 15 : Թ Խօն . ա . 7-10 :

Եր . Անք օրինակ առնելու ենք մեզի Կրիստոսի վարքն ու կեակը՝ որ ամենաբարի ու անզուգական էր երկրիս վրայ : Փեֆու . թ . 4 , 5 : Անք իրեն պէս Կատուծոյ փառքին համար և ուրիշներուն աղեկութիւն ընելու համար ապրելու ենք : Կայսեր ապրելու համար կը կարօտինք ունենալ Փրկչն ունեցած ներողութիւնը , խոնարհութիւնը , բարի նախանիւնը , սերը , հաւատոքը , աղօթքը , համբերութիւնը և իր անձնուցացութիւնը : Աակայն միայն ոգին Առորդ Կատուած կրնայ աս չնորհքները մեզի պարգևել ու աւելցունել :

3 Կօնզու Կրիստոս մարդ եղաւ :

Եբր . թ . 1-18

Հ . Կօնզու Յիսուս Կրիստոս մարդ եղաւ .

Պ . Որ կարենայ մեռնիւ մեզի համար : Յօհ . գ . 16 : Ճ . 11 :

Հ . Խնքը կրնամը մեռնիւ մեզի համար , թէ որ մարդ չըւպար :

Պ . Ձէ . “Կանզի բնաւ հրեշտակներուն մեռք չըըռներ , հապա Երահամի սերունդին մեռք կը բռնէ . անոր համար պէտք էր անոր բոլորովին եղբայրներուն նման ըւլւալ” . “Ու արիւն չթափուած թողութիւն չըլլար” : Եբր . թ . 16 , 17 : թ . 22 :

Հ . Ո՞Վ է Երկինքն իջնող Անծ վարդապետը՝ որ կատարեալ վարժութիւն կու այ մեզի Կատուծոյ ու Երկինքն , ‘Իժոկիքին ու Փրկութեան ճանապարհին վրայով :

Պ . Յիսուս Կրիստոս :

Իայց դուք Անաբբի մի՛ կոչուիք . ինչու որ ձեր Ուսուա Jones' Catechism. Armenian. 6

ցիւը մէկ մըն է , այսինքն Վիրիստոս , և դուք ամենքդ եղայր էք : Ու երկրի վրայ մէլը ձեզի Հայր մի՛ կուլէք . ինչու որ ձեր Հայրը մէկ մըն է , որ երկինքն է : Եւ դուք ուսուցիչներ մի՛ կուլուիք՝ ինչու որ ձեր ուսուցիւը մէկ մըն է , այսինքն Վիրիստոս : Առաջի ։ իգ ։ 8-10 :

Հ . Յիսուս ի՞նչ կ'ըսէ իր վրայովը :

Պ . “ Ես եմ աշխարհի ըմբռ . ան որ իմ ետևէս կու գայ . խաւարի մէջ պիտի չքալէ , հապա կենաց ըմբռ պիտի ունենայ ” : Յօհ . ը . 12 : ժբ . 35 , 36 , 46 : Լու . ը . 32 :

Հ . Խնաւ մեր գրկիւը մեղք գործեց :

Պ . “ Զէ , ինքը “ սուրբ՝ անմեղ՝ անարատ՝ մեղաւոր ներէն զատուած ” էր : Եբր . դ . 15 : է . 26 : ա Պիտ . թ . 22 :

Հ . Յիսուս երբոր աշխարհի մէջ էր , ի՞նչպէս կ'անցունէր իր ժամանակը :

Պ . “ Իարիք ընելով ” : Պարծ . գ . 38 : Յօհ . դ . 34 :

Հ . Ես իր օրինակովը ի՞նչ կը սորվեցունէ մեզի :

Պ . Կը սորվեցունէ մեզի թէ ի՞նչպէս պիտի սիրենք ու պաշտենք Աստուած , ու բարի ընենք մեր ընկերներուն : Յօհ . ժդ . 14 , 15 , 34 : ժե . 12 , 13 :

Հ . Խնքը որ մարդ եղաւ ու աս աշխարհիս մէջ ապրեցաւ , գիտէ՞ թէ ի՞նչ է աս աշխարհը , և ի՞նչպէս են մեր նեղութիւններն ու փորձութիւնները :

Պ . Հարամերես :

Ծաէ որ աշխարհ ձեզ կ'ատէ , գիտցէք որ ձեզմէ առաջիս ատեց : Ծաէ որ աշխարհէս եղած ըլլայիք , աշխարհ իրենները կը սիրէք . բայց որովհետև աշխարհէ չէք՝ հապա ես ձեզ աշխարհէն ընտրեցի , անոր համար աշխարհ ձեզ կ'ատէ : Յօհ . ժե . 18-20 :

Հ . Եւ Յիսուս մեզի հետ վշտակից կ'ըլլայ , և Բնա-
պէս մեզ միմիթարել ու փրկել պէտք է՝ գիտէ

Պ . Հրամերես :

Վանակի չէ թէ անանկ Կանանայապետ մը ունինք որ
կարող չըլլայ մեր տկարութիւններուն կարեկից ըլլալու .
Հապա ինքն ամէն կերպով փորձն առած է դոյլ նման , բայց
առանց մեղքի : Ուստի ալ համարձակութիւնով մօտե-
նանք չորհաց ամժոռին առջելը , որ ողորմութիւն ընդու-
նինք՝ ու չորհաց գտնենք պէտք եղած ատենը մոյք օգնելու :

Եբ . դ . 15 , 16 :

Հ . Երբոր որ " Ապարոս բարեկամը մեռաւ " ու ինքը
Մարթային և Մարիամին հետ անոր գերեզմանը գնաց ,
Բնա կերպով ցուցուց իր տրտմալից զգացումները :

Պ . " Յիսուս լացաւ " : Յօհ . Ժա . 35 : " Ի՞ո՞ւ .
Ժթ . 41 :

Աստուածաշունչը կը սորվեցունէ մեզի թէ ինչու համար
հարկաւոր էր՝ որ մեր երկրպագելիք Փրկիչը Աստուծոյ Որ-
դին մարդ ըլլայ :

Ե . Որ կարենայ չարչարուիլ ու մեռնիլ մեզի համար
Ենոր համար մարդ ըլլալ հարկաւոր էր իրեն՝ որ կարենայ
մեռնիլ :

Ի . Որ կարենայ մեր մեծ Ուսուցիչն ըլլալ : Խնքը
միշտ " աշխարհի ըլլալ " եղաւ ու միշտ պիտի ըլլայ :
Խնքը կը սորվեցունէ մեզի իր Հոգիովը և իր խօսքովը՝ որն
որ կը կարդանք ու քարոզուած ատենը կը լսենք : Աը սոր-
վեցունէ մեզի թէ ինչպէս մեծ մեղաւորներ ենք . թէ ինչ-
պէս պատուական է իր Փրկութիւնը . թէ ինչպէս ունայն
է աս աշխարհը . թէ ինչպէս փառաւորեալ է երկինքը :
Կը իստու մեզի Ուսուցիչ ունենալուս համար , պարտինք
զգալ որ առանց անոր յիմար ենք . պարտինք սորվելու
կամեցող ըլլալ , և պարտինք ուրախութեամբ ու անկեղծ

մոք ընդունիլ և կատարել ան ամէնը որն որ խքը կը սորվեցունէ մեզի : Յօհ . Է . 17 : Խնդն արդարութեան մեծ Արեգակն է , անոնք որ խաւարէն փախչիլ կ'ուզեն , պէտք է որ իր լրային դան :

Դա . Որ կարենայ դիրունալ ան աշխարհը որուն մէջ մանք կը բնակինք , և մարդոց նեղութիւնները , փորձութիւններն ու տրտմութիւնները : Ուր որ մենք կը բնակինք՝ ինքն ալ բնակեցաւ . ի՞նչ որ մենք կը զգանք ինքն ալ զգաց , մեղքէն ՚ի զատ : Ուրիմն կրնայ համակրութիւն ունենալ մեզի հետ , ու օդնել մեզի . և մենք իրմէն ողորմութիւն ու շնորհք պիտի գտնենք պէտք եղած ատենը : Փրկին իր եղբայրներուն նման ըլլալով եկաւ (Խբ . ք . 17) մեզի շատ մօտ , և որչափ որ մօտ է , այնչափ ալ պատուական է :

Դա . Եւ որ կարենայ բարի ու կատարեալ օրինակ մը ժուցընել մեզի՝ որ Աստուած ու մեր ընկերները սիրենք :

Եր օրինակէն կը սորվինք , թէ ինչպէս ապրելու ու մեռնելու ենք : Եր օրինակը կատարեալ է . ու որչափ որ մենք իր օրինակին կը հետևինք , այնչափ կը մօտենանք կատարելութեան և ան ամէն հանգամանքներուն՝ որ ազնիւու առաքինի , սուրբ ու բարձրացեալ են Աստուծոյ ու բոլոր աշխարհի առջելը :

Եւ . «Բը իստու ինքն Աստուած էր ու մարդ ըլլալու հանցաւ , որ կարենայ չարչարուիլ ու մեռնիլ մեզի համար , մեր Ուսուցիչն ըլլալ , և մեր կարեկից բարեկամն ու Փըրկիչը , մեր կատարեալ օրինակն ու առաջնորդը պատույ անմանչութեան . բայց թէ որ զինքը ասանկ չընդունիք , ի՞նչ օգուտ ունի մեզի : Թէ որ անարգենք ՈՒծ Աստուածն ու մեր Փրկիչը , ի՞նչ պիտի ըլլայ մեր վախճանը , ուրիշ բան չէ՝ բայց միայն կորուստ :

4. ՎՐԻՄԻՍ մեզ պատիժէն կ'աղստէ :

Եսոյ ծէք 1-12 :

Հ. Մենք մեղաւոր ենք, Կատուած ալ մեզի բարկացեր է ու ըստմն ի՞նչ պիտի յուսանք իրմէն :

Պ. Պատիժ : Յայու իթ 12 :

Կատուած արդար դատաւոր է ու Կատուած մղաւորին ամէն օր բարկացած է : Ատղ . է . 11 : Աասն զի դուն անօրէնութիւն ուզող Կատուած չես . չարը քու քովդ պիտի չնակի : Հպարտները քու աշքերուդ առջին պիտի չնենան . բոլոր անօրէնութիւն գործողները կ'ատես : Ատղ . է . 4, 5 : Աասն զի Որդին մարդոյ իր Հօրը փառքովը պիտի գայ իր հրեշտակներուն հետ . և ան ատենը ամէն մէկուն իր գործքերուն համեմատ հատուցում պիտի ընէ : Ատղ . ժդ . 27 : Տէրը գիտէ բարեպաշտները փորձութենէ ազատելը , և անիրաները տանջանքի համար դատաստանի օրուան պահելը : Բ Պիտ . թ . 9 :

Հ. Անդաւորներուն պատիժը դալու աշխարհին մէջ մըրչափ պիտի տնէ :

Պ. Յաւիտեանս յաւիտենից : Ատղ . իթ . 46 : Բ Ժնէն . ա . 7-9 : Պ Պատ . ժդ . 23-26 :

Հ. Ո՞ւր տեղ :

Պ. Դժոկիքին մէջ : Ատղ . թ . 43-48 : Ատղ . ժը . 8, 9 :

Հ. Օճապէտև մեղաւոր ենք , բայց մենք մեզմէ արժանաւոր բան մը չե՞նք կրնար ընել՝ որ Կատուած համեցունենք ու իրմէն թողութիւն գտնենք :

Պ. Չէ :

Կա գիտնալով՝ որ մարդ օրէնքին գործքերէն չկրնար արդարանալ , հապա Յիսուս Վրիստոսի հաւատքէն : Պատ .

Ք · 16 · Ձէ թէ արդարութեան գործքերէն՝ որ մենք
ըրիսք, հազար իր ողորմութեանը համեմատ մեզ փրկեց:
Տիտ · գ · 5 :

Հ · Անգք տանջանքներուն տեղը երթալէն ետքը նորէն
դուրս պիտի ելլո՞նք :

Պ · Ձէ · մեղքին պատիժը յաւիտենական է :

Եշ անոնք պիտի երթան յաւիտենական տանջանքը, իսկ
արդարները յաւիտենական կեանքը : Ուագիլ · ին · 46 :

Հ · Ուրեմն մենք յանցաւոր ու կորսուած ենք բայց
մեկը չկայ որ անհուն սիրով աշխարհ եկաւ մեզ փրկելու
համար :

Պ · Հրամերես :

Հ · Ո՞վ է անիկայ :

Պ · Յիսուս Քրիստոս Նստուծոյ Որդին : Յօհ · գ ·
16 · գ · 42 : Լուս · բ · 11 : Գաղ · գ · 4, 5 : ա
Տիտ · բ · 5 : ա Յօհ · գ · 5 : գ · 10-14 :

Հ · Անգքը մեղքերուն պատիժէն Յիսուս ԲՇնչ կերպով
կը փրկէ մեզ :

Պ · Ենքը մեր տեղը մեզի համար չարչարուեցաւ ու
մեռաւ : Հոռով · գ · 23-26 : Ե · 6-8 : ա Պիտր · գ ·
18 : ա Կորիլ · ժե · 3 : “Ենքը մեր մեղքերուն համար
վիրաւորուեցաւ, և մեր անօրէնութիւններուն համար
ծեծուեցաւ . մեր խաղաղութեան պատիժը անոր վայ
եղաւ . և անոր վէգերովզը մենք բժշկուեցանք” : Խոսյ ·
ծգ · 1-12 : Ուագիլ · իդ · 31 : Յօհ · ա · 29 : Հոռով ·
գ · 25 : Երբ · ժ · 5-10 :

Հ · Անգք փրկուելուն ուրիշ ճամբայ մը կայ Յիսուս
Քրիստոսէն զատ :

Պ · Ձէ : Յօհ · ժ · 9 :

Ուրիշ մեկով մը փրկութիւն չկայ . ինչու որ անկէ ՚ի
զատ ուրիշ անուն մը չկայ երկինքին տակը մարդոց մեջ

արուած , որ անով կարող ըլլանք փրկուելու : Գործ . Ք . 12 : Են որ Որդիին կը հաւատայ , յաւիտենական կեանք ունի . և ան որ Որդիին չնաղանդիր , անիկայ կեանք պիտի չտեսնէ . հապա Կատուծոյ բարկութիւնը անոր վրայ կը մնայ : Յօհ . Ք . 36 ՚ Քանզի մէկ Կատուած մը կայ , ու մէկ միջնորդ մը Կատուծոյ ու մարդոց մէջը՝ ՚ Քրիստոս Յիսուս մարդը . որ իր անձը ամենուն տեղը փրկանք տուաւ իր ատենին վկայութիւն ըլլալու : ա Տի . Ք . 5 , 6 :

Ա . Ուրիշ Փրկի մը կը կարօտի՞նք :

Պ . Չէ , մենք իրմով կատարեալ ենք :

՚ Քանզի գիրքը կ'ըսէ . “ Օգուշացէք՝ չըլլայ որ մէկը ձեզ կողոպտէ փիլասոֆայութիւնով ու փուճ խարեւութիւնով , որ մարդոց աւանդութեան պէս է՝ ու աշխարհիս սկզբունքներուն պէս , և չէ՛ թէ ՚ Քրիստոսի վարդապետութեանը պէս . ինչու որ անոր մէջը կը բնակի Կատուածութեան բոլոր լցունութիւնը՝ մարմնապէս : Վաղ . Ք . 8 , 9 :

Խակ դուք անկէ էք ՚ Քրիստոս Յիսուսով , որ ան մեզի Կատուծմէ իմաստութիւն՝ արժարութիւն՝ սրբութիւն և փրկութիւն եղաւ . որ ինչպէս գրուած է , Են որ կը պարծենայ՝ Տէրողմով թող պարծենայ : ա Կորին . ա . 30 , 31 :

“ Կատուծոյ բարկութիւնը պիտի յայտնուի երկինքն մարդոց ամբարձութեանն ու անօրէնութեանը դէմ ” : “ Ոնդքին վարձքը մահ է ” :

Ե . Օնէ որ մենք Փրկիշ մը չունենամք , յաւիտեանս յաւիտենից կորսուած ենք . մենք ինքղնինիս կրնանք փրկիշ . չէ՛ , չե՞նք կրնար . մենք ինքնիրենուս Կատուծոյ առջեւ արժանաւոր բան մը չե՞նք կրնար ընել , որ բոլոր մեր գործած չարութիւններուն փոխարէն մը ըլլայ , ու

այնպէս իր շնորհքը և ներելը ծախու առնենք . ինչու որ մեղանցինք . և թէպէտ ասկէ ետև մէջ մըն ալ մեղք չգործենք , բայց մեր գործած մեղքերուն համար պարտաւոր ենք պատիժ կրելու : Չենք կրնար տանշանաց տեղը երթաւլ ու մեր մեղքերուն համար պատժուիլ , ու ետքը նորեն դուրս գալ ու փրկուիլ . ինչու որ մեղքին պատիժը անվախճան ու յաւիտենական է : Անդաւորը անգամ մը դժոխք երթալու որ ըլլայ , բնաւ մէջ մըն ալ ան ահազին տեղէն դուրս պիտի չլլէ : Եշ դատարկ բան է մեզի յուսաւլ թէ մենք ինքզինքնիս թէ որ չկրնանք փրկել ալ՝ Վատուած մեր վրայ պիտի ողորմի ու մեզ պիտի չպատճէ : Վանդի ինք իմացուց որ չարերը անպատիժ պիտի չմնան . ու ինքն ալ իր խօսքն պիտի չանցնի :

Ուրեմն մենք Փրկի մը կը կարօտինք , անսնկ մէկու մը՝ որ մեզի համար մեր մեղքերը կրէ , և Վատուած թուղութիւնն ու սէրը պարզեց մեզի :

3. Յիսուս Վրիստոս է ատ Փրկիչը : Որ մեր ու Վատուած մէջ տեղը կը մտնէ մեր խաղաղարարին պէս : Որ կը հաճի անհուն սիրով մեր տեղը բռնել : Որ կը յայտնուի մեր Վատուէին պէս : Որ կը կրէ մեր մեղքերը բռն իր անձին մէջ խաչն վրայ , ու Վատուած ալ հաճութեամբ զնքը կ'ընդունի մեր տեղը . ինքը մեզի համար կը չարչարուի . ինքը կը հատուցանէ մեր մեղքին պարտիքը . կը մեռնի “Նրգարը անարդարներուն համար ” :

4. Եշ ինքն է կատարեալ ու միայն Փրկիչը :

Անք փրկութեան գործը ինքը կասարեց . մենք բան մը չենք կրնար ընել . ինքը մեզի համար ինքզինքը պատարագու զոհ մատուծուց Վատուած՝ բոլորովին հաճելի և ընդունելի ըլլալով : Ուրիշով մը փրկութիւն չկայ . ուրիշի մը չենք կարօտիր , հապա Դրմով կատարեալ ենք (ա) : Ով որ

ա . Խակ դուք անկէ էք Յիսուս Վրիստոսով , որ ան մեզի Վատուածէ իմաստութիւն՝ արդարութիւն՝ սրբութիւն և փրկութիւն եղաւ . որ ինչպէս զրուած է , Վա որ կը պարծենայ . Տէրովնով թող պարծենայ : ա Ասոնի . ա . 30 , 31 : Եշ դուք ալ անով լրուած էք . որ ինքը զլուս է բոլոր իշխանութեան ու պիտութեան : Առաջ . բ . 10 :

Ըիսուս Վրիստոսէն աւելի ուրիշ ձամբայ մը կը փնտռէ ,
չկրնար փրկութիւն (ա) :

Դ . Ծաէ մեզի և թէ բոլոր աշխարհի ամենէն մեծ ու-
րախարար աւետիս ան է , որ Կատուած իր նախատես Խը-
նամքովը մեզի Փրկիւ մը պատրաստեց մեզ մեղքէն ու
Դժոկիքէն ազատելու համար :

Ուստի խոնարհաբար խոստովանելով մեր մեղքերն ու
մեր իրաւապէս դատապարտուած ըլլալը , խոդրէնք Կո-
տուծմէ թողովթիւն ու իրեն հետ հաշտութիւն՝ միայն
Վրիստոսով , միշտ անոր միջնորդութիւնովը երթանք
Կատուծոյ և մեր աղօթքներն ու շնորհակալութիւնները
մատուցանենք անով , և անոր վրայ հաւատոք ունենալով
ապրինք . և երբոր պարծինք՝ անով պարծինք . կորսուե-
լու մարդոց փրկութիւնը միայն Վրիստոսով է . քանզի
ինքն է ամէնը՝ ամէն բանի մէջ :

Յ . Ըիսուս Վրիստոս չարչարուեցաւ ու մեռաւ մեզի
համար խաշին վրայ :

Մատիր . իէ . 1-36 :

Ա . Ո՞ր քաղաքը խաչուեցաւ մեր Փրկիւը .

Պ . Երրուսաղէմ քաղաքը :

Ա . Կ՞ոնչ էր ան տեղին անունը ուր որ ինքը խաչուե-
ցաւ :

Պ . Գողգոթա՝ ու Գագաթն : Մատիր . իէ . 33 :

Յան . Ժի՞ . 17 :

Ա . Որո՞նք զի՞նքը խաչուելու դատապարտեցին :

ա . Եւ ուրիշ մէկով մը փրկութիւն չկայ . ինչու որ
անկէ 'ի զատ ուրիշ անուն մը չկայ երկինքին տակը մար-
դոց մէջ տրուած , որ անով կարող ըլլանք փրկուելու
Գործ . գ . 12 :

- Պ . Հրեաները բռն իրեն ազգը : Յօհ . ա . 11 :
- Եսայ . ծդ . 1-3 :
- Հ . Ո՞վ մատնեց իր Տէրը :
- Պ . Յուդան : Ա՞սոլ . ժ . 4 : Յօհ . ժդ . 21-27 :
- Հ . Կահանայապեաները քանի՛ կտոր արծաթ տուխն Յուդային՝ որ Ծիսուն իրենց մատնէ :
- Պ . Երսուն կտոր : Ա՞սոլ . իկ . 14-16 : Յօհ . ժդ . 1-16 :
- Հ . Ե՞նչ էր ան պարտէզին անունը՝ որուն մէջն էր Ծիսուս, երբոր Յուդան զինքը մատնեց :
- Պ . Գէթսեմանի : Յօհ . ժդ . 1 , 2 :
- Հ . Յուդան ի՞նչպէս մատնեց Ծիսուսը
- Պ . Համբուրելով : Ա՞սոլ . իկ . 48-50 :
- Հ . Ծիսուսին դէմ ի՞նչ վկայութիւն ըրին Հրեաները :
- Պ . Առւտ վկայութիւն : Ա՞սոլ . իկ . 57-61 :
- Հ . Ենչիւ Հրեաները Ծիսուսը մեռցունել ուզեցին :
- Պ . Կանզին նախանձեցան անոր վրայ ու ատեցին զինքը : Ա՞սոլ . իկ . 18 :
- Հ . Ո՞վ էր ան Հռովմայեցի Կառավարը որն որ Հրեաները համոզեցին որ Ծիսուսը խաչը հանէ :
- Պ . Պոնտացի Պիղատոս : Ա՞սոլ . իկ . 2 :
- Հ . Ե՞նչ յանցանք ձգեցին անոր վրայ Պիղատոսին առջև :
- Պ . Թագաւոր ըլլալ կ'ուզէ, ըսին : Պատ . իդ . 1-3 :
- Հ . Պիղատոս հաւտած որ Ծիսուս յանցաւոր է ու խաչուելու արժանի :
- Պ . Զէ : Պատ . իդ . 4-15 :
- Հ . Պիղատոս Ծիսուսը թռող տալ ուզեց :
- Պ . Եյլ : Յօհ . ժթ . 4-12 :

Ա . Երբոր Պիղատոս անոնց ձեռքը տուաւ Յիսուսը որ խաչուի , թոնչ ըրաւ ժողովուրդին առջել :

Պ . Գուր առաւ ու իր ձեռքերը լուաց : Առարկ . իէ . 24 , 25 :

Ա . Պիղատոս՝ Աերովդէսը և Կահանայապետներն ու զինուրները թոնչ ըրին Յիսուսը խաչ հանելու տանելէն առաջ :

Պ . Կահեցին ու ծաղը ըրին զինքը : Ղում . իէ . 11 :

Ա . Յիսուս թոնքը կը վերցունէր իր խաչափայտը :

Պ . Արամերես , բայց երքը մէկը բռնեցին Աիմնն Աիւրենացին , որ Յիսուսի խաչը տանելուն օգնէ : Ղում . իէ . 26 :

Ա . Մոլ էին ան երկու մարդիկը՝ որ Յիսուսի հետ խացուեցան :

Պ . Երկու գողերը : Յօհ . Ժթ . 18 :

Ա . Խաչելութիւնով եղած մահը թոնչպէս մահ էր :

Պ . Շատ ցաւալի ու նախատալից :

Ա . Որմնց համար կրեց Յիսուս աս նախատինքը :

Պ . Անզի համար : Եսայ . ծգ . 10 : բ Աորդն . է .

21 :

Ա . Եր թշնամիները որ զինքը խաչեցին , թոնչպէս նախատեցին զինքը :

Պ . Աւ նախատէին զինքը իրենց գլուխը շարժելով : Առարկ . իէ . 39-44 :

Ա . Ինք թոնչպէս աղօթեց անոնց համար :

Պ . “ Ամյր՝ թողութիւն տուր ատոնց , ինչու որ չեն գիտեր ինչ կ'ընեն ” : Ղում . իէ . 34 :

Ա . Մորչափ ատեն խաւար եղաւ բոլը երկրի վրայ :

Պ . Երեք ժամ : Առարկ . իէ . 45 : Առբ . ժէ . 33 :

Ա . Խններորդ ժամուն Յիսուս բարձր նայնով թոնչ կանչեց :

- Պ . “Եստուած իմ” Եստուած իմ , բնշիւ զիս թռալուցիր” : Ատարի . իէ . 46 : Ատրի . ժէ . 34 :
- Հ . Երբոր Ծիսուս մեռնելու վրայ էր , ի՞նչ ըսաւ :
- Պ . “Եմն բան կատարուեցաւ” : “Հայր , քու մեռդդ կ'աւանդեմ իմ հոգիս” : Դասի . իէ . 46 :
- Հ . Երբոր Ծիսուս մեռաւ , ի՞նչ պատահեցաւ :
- Պ . “Երկիրը շարժեցաւ , և քարերը պատուեցան . ու գերեզմանները բացուեցան” : Ատարի . իէ . 50-53 :
- Հ . Ի՞նչ էր ան հարուստ աշակերտին անունը՝ որ միքատոսի մարմինը՝ խաչին վրայէն վար առաւ , ու իր գերեզմանին մէջք դրաւ :
- Պ . Յովսէփ : ‘Դասի . իէ . 50-53 :
- Հ . Կիրիատոս մը օրը մեռելուէն յարութիւն առաւ :
- Պ . Ծաղղուելուն երրորդ օրը՝ որ շաբաթին առջի օրն էր . այսինքն Աիրակի օր : Ատարի . իէ . 62-66 :
- Հ . Կիրիատոս Երկինք համբառնալին առաջ իր աշակերտներուն քանի՞ օր երկցաւ զանազան ատեն ու զանազան տեղեր :
- Պ . Կիրիատոս օր : Գարդ . ամ . 1-3 : ա Արդիլ . ժէ . 1-8 : Դասի . իէ : Յօհանն . ի և իան :
- Հ . Կիրիատոս մը լլունէն համբարձաւ :
- Պ . Զիթենեաց Եեռնէն : Ատրի . ժկ . 19 :
- Հ . Ծիսուս հիմա մէր կը նստի :
- Պ . “Եստուծոյ աջ կողմը” : Ատրի . ժկ . 19 : ա Ալբ . է . 22 :

Պէտք էր որ Եստուծոյ Որդին մեռնի մեզ փրկելու համար . և իր մահուան ժամանակն ու կերպը առաջուց սահմանուած էր Եստուծոյ անհուն իմաստութիւնովը :

Ե . Խնքը խաչին վրայ մեռաւ խիստ անարդ ու անողը մահով մը : Խնքը խաչելութեան ցաւերը և տագ-

Նապները կրեց անօրէն մարդոց ձեռքովը : Բայց աս ամենէն զատ՝ իր Հօրը երեսը ծածկուեցաւ իրմէն , ու անոր բարկութիւնը իր վրան ինկաւ : Ո՞նդքի համար կրած իր չարշապներուն մեծութիւնը Վատուած միայն գիտէ . նաև յեցէք իրեն՝ որ իր քաշը լու չարշարանքներն առաջնոց տեսնելով , ի՞նչպէս մեծ աշով ու դողով արիւնի մեծ կաթիւնը գետինը վազցուց Գէթսէկմանի պարտէզին մէջը : Լսեցէք նաև ան ցաւագին կանչելը , որն որ մաշդ չկրար զաւ ու իմնանալ , “ Վատուած իմ՝ Վատուած իմ , իս ինչու թողուցիր ” :

Դ . Եւ հարկաւանք էր որ Վատուածոյ Որդին մեռնէր մեր փրկութեանը համար : Այս : Աւրեմն մենք կորսուած էինք : Եւ իր արիւնէն զատ ուրիշ արիւն մը չէ ը կրար մեղքի քաւութիւն ընել : Ոչ ամենէին : Աւրեմն մեղքը իրացունէ չար ու լեղի բան մըն է : Վատուած անշուշտ կ'ատէ մեղքը և անշուշտ պիտի պատժէ , որովհետեւ բռն իր սիրելի Որդին չխնայց որ անիկայ չէ թէ ինքիրմէն մեղաւոր էր , հապա մեղաւորներուն տեղն անցնելուն , անռոց մեղքերն իր վրան առնելուն համար տանչուեցաւ , մինչև անգամ ինքզինքը ՚ի մահ մատնելով : Ուստի մեղքը չատմէնք , և չտրումի՞նք անոր վայ , ու չփափչի՞նք անկէց : բոլոր չարիքներուն ամենէն ստոկալին սեպելով անիկայ :

Ե . Եւ Ծիսուա ազատաբար յանձնառու եղաւ . ու Հայրն ալ կամաւ թողժուց իր Որդին որ ասանկ մահով մը մեզի համար մեռնի : Աւրեմն Հայրն ու Որդին կը սիրեն մեզ անհուն սիրով . (Յօհ . ժն . 13 : Հոռմ : Ե . 6-8 .) ասանկ սիրով մը՝ որ արժան է մեր քարացեալ ու ապստամբ սիրելը կոտրել ու բռնադատել որ մենք բոլորովին Վատուածոյ համար ապրինք (ա) :

Դ . Կրիստոս չարշարուեցաւ չար մարդոց ձեռքերէն ,

Ե . Եւ ամենուն համար մեռաւ , որ կենդանի եղողները՝ ալ իրենց անձեռուն կենդանի չըլլան , հապա անոր՝ որ իրենց համար մեռաւ ու յարութիւն առաւ : Բ կորնի . Ե . 15 : Բայց ես քաւ լցի որ պարծենամ , հապա միայն մեր Տէր Ծիսուա Կրիստոսի խաչովը , որ անով աշխարհ ինծի խաչը ելած է , ես ալ աշխարհի : Պատղ . կ . 14 :

նախատինք ու թուք, և ծեծ ու մահ ընդունելով մեղի համար : Ուէ որ պէտք ըլլայ, մենք ալ նոյնպէս թող լարչարուինք իրեն համար . և ինչպէս որ ինքն աղօթեց իր թշամիներուն համար ու ներեց անոնց, մենք ալ նոյն ընենք : Կարծ . է . 59 :

Ե . Ենքը մեռելներէն յարութիւն առաւ յաղթանակաւ իրեք օրէն ետքը : Եր յարութիւնը փորձով ցուցուց որ ինքն իրացունէ Աստուծոյ Որդին էր ու աշխարհի Փրկիչը . որ մեռնելն ետքը հոգին կ'ապրի . և որ բոլոր մեր մարմիններն ալ յարութիւն պիտի առնեն Աստուծոյ սահմանած օրը : Ակենքն ու անմահութիւնը ըստին գէմը կը բերուին Աւետարանով՝ չէ թէ ուրիշ բանով :

Զ . Ենքը երկնեք համբարձաւ ու Աստուծոյ աջ կողմը կը նստի : Բարձրացեալ Տէր ու Փրկիչ է ինքը՝ որ կարող է փրկել ան ամենը որ Աստուծոյ կու գան իրմով : Այլու հոն կը բնակի թագաւորելով, տիրելով, յաղթելով . իր թշամիները, և պահպանելով իր եկեղեցին ամեն ատեն : Այսու իլլ . 20 : Երգեւ . ա . 12-23 : Երջանիկ են անոնք՝ որ իր պատուական արինին քաւութենէն բաժին ունին :

6 . Տէր Յիսուս մեռաւ ամենուն համար :

Եսայ . ծԷ . 1-13 :

Ա . Տէր Յիսուս բոլոր աշխարհի համար մեռաւ՝ թէ միայն մէկ մասին համար :

Պ . Բոլոր աշխարհի համար :

Ա . Յիսուս իր աշխարհ խրկուելուն վրայով է՞նչ կ'ըսէ :

Պ . “ Հայրը իր Որդին խրկեց աշխարհի Փրկիչ ըւլլու ” : ա . Յօհ . գ . 14 :

Ա . Յօհաննէս Ակրտիչ է՞նչ ըստ Վրիստոսի վրայով :

Պ. “Ահա Աստուծոյ Գառն՝ որ աշխարհի մեղքը կը վերցունէ” : Յօհ. ա. 29 :

Հ. Տէր Յիսուս իր Առաքեալներուն հրամայեց ու Աւետարանը բոլոր աշխարհի քարոզին՝ թէ մէկ մասն միայն :

Պ. Բոլոր աշխարհի

Հ. Եր վերջին պատուիրանքն անոնց ի՞նչ էր :

Պ. “Գացէք բոլոր աշխարհ, ու Աւետարանը քարոզէք բոլոր ստեղծուածներուն” : Մարք. ժկ. 15, 16 :

Հ. Ուրեմն Առաքեալները դացին ու քարոզէցին Աւետարանը բոլոր աշխարհի :

Պ. Հրամերես : Մարք. ժկ. 20 : Գարդ. ք. 1-21 :

Հ. Տէր Յիսուս կը հրաւիրէ՛ ամէն մեղաւորներն իրեն դալու ու փրկուելու, թէ միայն անոնց մէկ մասը :

Պ. Ամէն մեղաւորները :

Հ. Բաէ նայիմ, ի՞նչպէս կը հրաւիրէ :

Պ. “Խէկէք ինծի բոլոր յոգնած ու բեռնաւորածներ, և ես ձեզ պիտի հանգչեցունեմ : Դմ լուծս ձեր վրայ առէք. և ինծմէ սորվեցէք որ հեզ եմ ու սրտով խոնարհ, և ձեր անձերուն հանգստութիւն պիտի գտնէք : Խչու որ իմ լուծս քաղցր է, և իմ բեռս թեթև” : Մարք. ժա. 28-30 :

“Հայրը իր Որդին խրկեց աշխարհի Փրկիւ ըլլալու” . Յիսուս երեցաւ և յայտնեց թէ ինքն է Փրկիւք . և յարձար ատենին ինքզինքը զո՞ւ մատուց “բոլոր աշխարհի մեղքերուն համար” : Ինքը մարդասիրութեամբ հրաւիրեց ամէնը՝ որ իրեն դան, և պատուիրեց իր Առաքեալներուն, “Գացէք բոլոր աշխարհ, և Աւետարանը քարոզէցէք բոլոր ստեղծուածներուն” :

Ա . Ծխուս Վրիստոս աշխարհի Փրկիչն է . իր պատուական արիւնը բաւական է բոլոր աշխարհի մեղքերը լուալու : Խող բոլոր աշխարհներ գայ , և իր ըրած հաշտութիւնը ամենուն համար բաւական պիտի ըլլայ : Խաքը կարող է փրկելու որշափ որ ըլլան փրկութեան փափաքողները , ամէն տեղի մէջ , ամէն վիճակի մէջ , աշխարհի սկիզբն մինչեւ վերջը : “ Ծխուս Վրիստոս նոյն է երեկ և այսօր և յաւիտեան ” :

Բ . Ուստի իրմով եղած փրկութիւնը ձրի է ամէն ուղղողներուն համար : Հոգ չէ՝ աշխարհիս որ կողմը որ ըլլանք , թէ Արևելք ըլլանք , թէ Արևմտանք , թէ Հիւսիս , թէ Հարաւ : Հոգ չէ՝ ինչ վիճակի մէջ որ ըլլանք , թէ Հարուստ , թէ աղքատ , թէ իմաստուն , թէ յիմար , բարձր կամ ցած . Հոգ չէ՝ ու ալ ինչ հասակի մէջ որ ըլլանք , թէ ծեր կամ պատանի , արու կամ էդ . ամէնքան ալ մեղաւոր ենք , ու Վրիստոս է Փրկիչ ամէն մեղաւոր ներուս համար :

Գ . Վւետարանը՝ որ անով միայն կը գտնուի փրկութիւնը , ամենուն ալ խրկուելու է : Վնոնք որ Վւետարանը ունին՝ պարտաւոր են խրկել անիկայ անոնց ալ՝ որ չունին , մեր Փրկչին վերջն պատուիրանքին համեմատ : Վմէն մարդոց պէսք է քարոզել՝ թէ Փրկիչ մը կայ , ու թէ կրնան փրկուիլ : Ճաէ որ մենք՝ որ Վւետարանը ունինք՝ զանց կ'ընենք կամ չենք հաճիր անիկայ անոնց ալ տալ որ չունին , կամ խարանելու կարողութիւնն ունենալով՝ չենք թողուր անոնց որ իրենք ալ ստանան ու կարդան , մեծապէս պատիժի արժանի ենք Վաստուծոյ առջին : Վ'նչ մեծ արտօնութիւն է մարդուս որ Վրիստոսի գիտութիւնը տարածէ ու հոգիներուն փրկութեանը օգնութիւն ընէ . և անոնք որ չեն կրնար անձամբ երթալ ու Վրիստոս քարոզել , կրնան օգնել իրենց աղօթքովը , ու իրենց ողորմնաթիւնովն ուրիշները խրկել որ քարոզին , ու անոնց հետ ալ Առւրբ Գիբբը խրկել : Վսիկայ արտօնութիւն ու պարտաւորութիւն է մեղի :

Դ . Եր փրկութիւնը անանկ ձրի , անանկ առատ է , որ ուրախութեամբ ու սրտանց ամենուն ընդունելք ըլլաւ արժան է :

Յիսուս իր բոլը սրտովը կը հրաւիրէ մեզ իրեն գալ :
Անգ իրեն հրաւերքը ընդունելու ենք , որ ասանկ մեր
փրկութիւնը կատարուի : Աենաց հացը ձրի ու առատա-
պէս պատրաստուցաւ առաջուց , “Ձեր ականչը խոնար-
հեցուցէք , ու ինձի եկէք , մոիկ ըլէք՝ ու ձեր հոգիները
ապրին պիտի” : Եշոյ . ծԵ . 3 :

7 . Անոնք միայն կը փրկուին՝ որ Յիսուսի կը հաւատան :

Յօհ . գ . 14-36 :

Հ . Տէր Յիսուսի ամենուն համար մեռնելովը ամենն
ալ պիտի փրկուի՞ն :

Պ . Ձէ . միայն անոնք պիտի փրկուին՝ որ կը հաւա-
տան իրեն : Յօհ . գ . 15-36 :

Հ . Խօնչ կը պատուիրէ Եստուած մեզի՝ իր Որդիին
հաւատալուն վրայով :

Պ . “Եւ ասիկայ է անոր պատուիրանքը որ իր Որդույն
Յիսուս Կրիստոսի անունին հաւատանք , ու մէկզմէկ սի-
րենք” : ան Յօհ . գ . 23 : Առարի . ժԷ . 5 :

Հ . Խօնչ կ'ըսէ մեր Տէրը , իրեն հաւատալու ու
մկրտուելու վրայով :

Պ . “Են որ հաւատայ ու մկրտուի , պիտի փրկուի ,
և ան որ չհաւատայ , պիտի դատապարտուի” : Առարի .
ժկ . 16 : Յօհ . գ . 47 :

Հ . Երբոր բանտապետը հարցուց Պօղոսին ու Շահ-
զարին , թէ “Տէրեր՝ ինձի ԲՌՆՀ պէտք է ընել , որ փըր-
կուիմ” : անոնք ԲՌՆՀ պատասխան տուին անոր :

Պ . “Հաւատան Տէր Յիսուս Կրիստոսին ու պիտի
փրկուիս գուն՝ և քու տունդ” : Գարդ . ժկ . 31 :

Հ . Խօնչէս Եստուածոյ որդիքը կ'ըլւանք :

Պ . “Յիսուս ՚Քրիստոսի հաւատալով” Պատ . Ք .
26 :

Ա . Ենչքւ ՚Քրիստոսը լսողներուն ամէնը չեն հաւատար իրեն որ յաւիտենական կեանք ունենան :

Պ . Ենչու որ չեն ուզեր . Յօհ . Է . 40 : Ք . 19 , 20 :
Մատթ . իբ . 1-14 :

Ա . Շատուած կ'ուզե՞՞ որ մէկը կորսուի :
Պ . ԶԵ :

Տէրը երկայնամիտ կ'ըլլայ . չուզեր որ մէկը կորսուի ,
հապա որ ամէնքը ապաշխարանքի գան : Բ Պէտք . Ք . 9 :
Ենչու որ ես կենդանի եմ՝ կ'ըսէ Տէր Եշովան , որ ամբարշտին մեռնիլը չեմ ուզեր . հապա որ ամբարիշտը իր
ճամբայէն դառնայ ու ապրի . դարձէ՞ք՝ դարցէ՞ք մեր չար
ճամբաներէն . վան զի ինչքւ մեռնիք՝ ով Եարայէլի
տունը : Եշէվ . ԸԳ . 11 :

Ա . Մշղաւոր մը որ իրեն կու գայ , Յիսուս ալ անիւ-
կայ փրկելէն պիտի հրաժարի՞ :

Պ . ԶԵ . քանզի Տէրը կ'ըսէ . “Են ամէնը որ Հայրը
ինծի կու տայ , ինծի պիտի գայ . և ան որ ինծի կու գայ ,
բնաւ դուրս պիտի չհանեմ” : Յօհ . կ . 37 : ‘Լուս .
իք . 42 , 43

Ա . Ուրեմն թէ որ մենք կորսուինք , յանցանքը
որո՞ւնն է :

Պ . Բառն մերն է յանցանքը : Երանէ . ա . 24-33 :
Հոռով . Ք . 6-11 :

Յօհէն Տէր Յիսուս մեռաւ ամենուն համար , և իր պատուական արիւնը բաւական է բոլոր աշխարհի մեղքերը
լուալու ,

Ա . Իսցը թող մէկը չկարծէ որ ամենքն ալ պիտի
փրկուին , ան ամէնը որ ՚Քրիստոսի կը լսեն՝ մէկ բան մը

ումին ընելու . և ամեն մէկը պարտին նշյն բանն ընել . այսինքն մենք պարտինք իրեն հաւատալ . թէ որ չհաւատանք , չենք կրնար փրկուիլ :

Դ . Արդոց կորսուելուն պատճառն ան չէ որ Կատուած կ'ուզէ անոնց կորուստը . հապա բուն իրենք չեն ուզեր որ փրկուին . Կատուած չամիր մեղաւորներուն մահուանը կամ պատիժին . բայց մեղաւորն իր մեղքերն ու ներկայ աշխարհը աւելի սիրելով՝ իր կամքովը կը մերժէ Քրիստոս . և Կատուած արդար ըլլալով՝ մեղաւորը պարտի կորսուիլ :

Գ . Ուրեմն կորսուած մեղաւորը՝ իր կորսուելուն համար , բուն ինքը յանցաւոր պիտի սեպուի յաւիտեանս յաւիտենից ն :

Դ . Ենչափ մեծ է մեր բնական կուրութիւնը և չարութիւնը որ Սուրբ Հոգին կը կարօտինք որ մեզի ցուցունէ մեր մեղաւոր ու կորսուած ըլլալը , ու մեզ դարձնունէ Քրիստոսի : Եռանց անոր չնորհքին օգնութեանը մենք բնաւ Քրիստոսի չենք կրնար գալ :

8 . Խօնէ Յիսուս Քրիստոսի հաւատալը :

Դաստիարակութեան 1-24 :

Հ . Երբոր տղաքը յանցանք մը գործեն , այսինքն՝ իրենց հօրը կամ մօրը չնազանդին , Բօնէ պէտք է որ զգան :

Պ . Տրտմաւթիւն :

Հ . Եւ Բօնէ պարտին ընել :

Պ . Օմողութիւն ինդրել ու մէկ մըն ալ անանկ չընել :

Հ . Կատուած ներող և ողորմնեն է :

Պ . Արամերես : Եւվա Լդ . 6 , 7 :

Անկայն ամէն բան Կատուածմէ է , որ մեզ իրեն հետ

հաշտեցուց Յիսուս Կրիստոսի մեռքովը , ու տուաւ մեզի հաշտութեան պաշտօնը : Այսինքն Կատուած էր , որ Կրիստոսով աշխարհս իրեն հետ հաշտեցուց , և անոնց յանցանքները իրենց չեղեց , ու հաշտութեան խօսքը մեր մէջք դրաւ : Ուրեմն Կրիստոսի կողմանէ դեսպանութիւն կ'ընենք , իրբւ թէ Կատուած կը բարեխօսէր մեզմով . կ'աղաշենք յէպէ Կրիստոսի կողմանէ , հաշտուեցէք Կատուծոյ հետ : Ասան զի Կատուած անիկայ՝ որ մեղք չէր գիտեր , մեզի համար մեղաւոր սեպեց , որ մենք անոր միա ջոցովը Կատուծոյ արդարները ըլլանք : Ք Առնալ . Ե . 18-21 :

Հ . Ուստի՝ երբոր մենք Կատուծոյ դէմ մեղանշենք , երբոր մեր Խրկնաւոր Հարը շնազանդինք , Բ՞նչ պէտք է որ զգանք :

Պ . Խորունկ տրտմութիւն :

Հ . Եր ուրիշ Բ՞նչ ընելու ենք :

Պ . Ծաղկութիւն ինդրելու ու մէյմն ալ անանկ ընելու չենք :

Հ . Ասոր վրայով Բ՞նչ կ'ըսէ Առւրբ Գիրքը :

Պ . “ Ձնէ որ խոստովանինք մեղքերնիս , հաւատարիմ ու արդար է անիկայ մեր մեղքերուն թողութիւն տալու , և մեզ բոլոր անիրաւութենէ սրբելու ” : ա Քօհ . ա . 9 : Առով . Ճ . 9 , 10 :

Հ . Պէտէկոստէին օրը ժողովուրդները խորունկ մը զգացին թէ մեղաւոր էին , և ըսին Պետրոսին ու բոլոր Առաքեալներուն թէ՝ “ Արդիիկ Խղայրներ , Բ՞նչ ընենք ” , Պետրոս ալ Բ՞նչ պատասխան տուաւ անոնց :

Պ . “ Ապաշխարեցէք , ու մեզմէ ամէն մէկը թող մկրտուի Յիսուս Կրիստոսի անունովը՝ մեղաց թողութեան համար ” : Գործ . ք . 38 :

Հ . Ե՞նչ է մեր մեղքերուն վրայ ապաշխարելը :

Պ . Ենոնց վրայ տրտմիլ , և անոնք խոստովանիլ ու առնցմէ հեռանալ : Գարծ . ժթ . 18 : բ կորնի . է . 9-11 :

Իր յանցանքները ծածկողը յաջողութիւն չգտներ . բայց զանոք խոստովանողն ու մէկդի ձգողը ողորմութիւն կը գտնէ : Առաջ . իլ . 13 :

Հ . Բայց մեր մեղքերուն համար տրտմելին և անոնք Աստուծոյ խոստովանելին ու մէկդի ձգելին ետև , որմւն արժանաւորութիւնովք Աստուծած պիտի ներէ մեզի :

Պ . Այսպէս Կրիստոսի արժանաւորութեանը համար :

Հ . Ի՞նչ կ'ըսէ Առւրբ Գիրքը ներողամիտ ըլլալու վրայով :

Պ . “ Եւ իրարու հետ քաղցր եղիք , գթած , ներեւով իրարու , ինչպէս որ Աստուծած՝ Կրիստոսով ներց ձեզի ” : Եփես . դ . 32 : Առ . դ . 13 :

Հ . Աստուծած մեր աղջկ ըլլալուն կամ մեր բարեգործութեամնը համար կը ներէ մեզի թէ բոլորովին Կրիստոսի համար :

Պ . Առլորովին Կրիստոսի համար : Եփես . բ . 5-8 :

Որդի մը պիտի ծնանի , ու անոր անունը Յիսուս դնես . քանզի անիկայ իր ժողովուրդը իրնց մեղքերէն պիտի փրկէ : Այտի . ա . 21 : Ինչու որ Որդին մարդց եկաւ կորսուածը փրկելու : Այտի . ժը . 11 : Անոր կը վկայեն բոլոր մարդարէները թէ ամէն իրն հաւատացուները իր անունովք մեղաց թողութիւն կ'առնեն : Գարծ . շ . 43 : Ինչու որ ամէնքը մեղք գործեցին , և Աստուծոյ փառքէն պակսած են : Եւ անոր շնորհքովը ճրի կ'արդարանան : Հոռմ . դ . 23 , 24 : Որ երբ որ գեռ մեղաւոր էինք , Կրիստոս մեզի համար մեռաւ . ուրեմն հիմա որ իր արիւնովք արդարացանք , որչափ աւելի իրմով պիտի աղատինք բարփութենէն : Ասան զի թէ որ թշնամի եղած ատեննիս Աստուծոյ հետ հաշտուեցանք իր Որդւոյն

մահովք, որչափ աւելի մեր հաշտուած ատենը պիտի ապ-
րինք անոր կեանքովք : Հոռով . Ե . 8-10 :

Ա . Յիսուս իր կենաց ճանապարհ ըլլալուն վրայով
ի՞նչ կ'ըսէ :

Պ . " Եւ եմ ճամբան ու ճշմարտութիւնն ու կեանքը .
մէկը հօրը քով ցար , եթէ ոչ ինձմով " : Յօհ .
ժդ . 6 :

Ա . Ուրիշ ի՞նչ կ'ըսուի ասոր վրայով :

Պ . " Եւ ուրիշ մէկով մը փրկութիւն չկայ . ինչու
որ անկէ ՚ի զատ ուրիշ անուն մը չկայ երկինքին տակը
մարդոց մէջ տրուած , որ անով կարող ըլլանք փրկուե-
լու " : Գործ . Ժ . 12 :

Ա . Յիսուս Վրիստոսի հաւատալը ի՞նչ կը պատ-
ճառէ մեղաւորին սրտին :

Պ . Խոաղաղութիւն և ուրախութիւն :

Եւ զանոնք իր տունը տանելով անոնց առջելը սեղան
գրաւ , և բոլոր տօնովք ուրախ եղաւ՝ Կստուծոյ հաւա-
տալով : Գործ . Ժ . 34 : Ը . 8 , 39 : Հոռով . Ժ .
13 : ա թաւո . ա . 6 :

Ա . Երկինքին մէջ յաւիտեանս յաւիտենից Քվ պիտի
օրնենք՝ մեզ իր արիստովք փրկելուն համար :

Պ . Տէր Յիսուսը : Յայտ . ա . 5 , 6 : Ե . 9-14 :

Վրիստոսով փրկութիւն ստանալու համար , պէտք է՝

Ե . Եպաշխարութիւն . ինչու որ առանց ապաշխա-
րութեան անկարելի է որ մէկը Վրիստոսի գայ : Անիք
պարսինք փորունկ ու սրտով տրտմիլ մեր Կստուծոյ դէմ
գործած մեղքերնուս համար . պարտինք բան մը չծածկել
ու չպահել , հապա խոստովանիլ Կստուծոյ առջելը բոլոր
մեր մեղքերը , և յայտնել թէ ի՞նչպէս սաստիկ ցաւ և
դժում կը զգանք անոնց համար . ի՞նչպէս կ'ատենք անոնք .

նաև պարտինք խօսք տալ Աստուծոյ որ իր շնորհքին մեզի օգնելովը մէկդի պիտի ձգենք անոնք , ու սուրբ կեանք մը պիտի վարենք , Ճիշտ լնչպէս որ ինքը կ'ուզէ ու կը պահանջէ :

Դ . Փրկուելու համար մեր բոլոր յոյսերը Վրիստոսի վրայ , ու միայն Վրիստոսով պիտի ըլլան : Անք պարտինք աղաւել Աստուած՝ որ մեզ ընդունի շնորհքով . Ճէ թէ մենք մեզմէ բարի ենք ու կրնանք անանկ բարի գործերը ընել՝ որով արժանի ըլլանք իրմէն թողութիւն ու շնորհք ընդունելու . ինչու որ մենք մեզմէ անարժան ենք , արժանի ըլլալով միայն բարկութեան , ու չենք կրնար բան մը ընել Աստուծոյ շնորհքին արժանաւոր ըլլալու համար . մէկ խօսքով կորսուած ենք , ու պարտինք Աստուծմէ թողութիւն ու շնորհք ինդրել միայն Վրիստոսի համար : Անք չենք կրնար փրկել ինքզինքնիս , Վրիստոս կը փրկէ մեզ : Ուստի պարտինք Վրիստոսը մեզի փրկիչ առնել և իրեն միայն ապաւինիլ փրկութեան համար : Ինքը քաւութիւն ըրաւ մեր մեղքերուն համար և ինքը բարեխօսութիւն կ'ընէ մեզի համար Աստուծոյ առջելը . Աստուած ալ զինքը մեղաւորներուն միջնորդ կ'ընդունի , և անոր ամէն ըրածներուն ու չարչարանքներուն համար կը ներէ ու կը փրկէ մեզ : ա Կորնի . գ . 11 : Հառմէ . դ . 22-25 :

Գ . Երբոր մենք ապաշխարենք ու Յիսուսին հաւատանք , և թողութիւն գտնելու յոյս ունենանք ու զզանք որ Աստուծոյ սէրը մեր սրտին մէջը ունինք , շատ աղէկ իրաւունք պիտի ունենանք ուրախանալու , և իրաւ պիտի ուրախանանք : Հառմէ . ե . 1-11 : Է . 1-39 : Ըօհ . Ձ . 27-30 :

Դ . Անք արգարութեանն ու մեր փրկութեանը բոլոր փառքը և պատիւը Յիսուս Վրիստոսի տրուելու են յաւիտեան : Ան որ մեզ կը փրկէ , մեր փրկութեան փառքն ու պատիւը անշուշտ պէտք է որ ինք ունենայ : Անք կ'աղաղակենք՝ “Ճէ թէ մեզի , ուլ Տէր՝ չէ թէ մեզի , հապաքու անուանդ փառք տուր ” : Առաջ . Ճէ 1 : ա Կորնի . ա . 30 , 31 : Որչափ որ Առւրբ Հոգին գօրութիւնովը մեր մեղքերը կը զցանք և Տէր Յիսուսը սիրով կ'ընդու-

նիսք մեր Փրկչին պէս , այնշափ աւելի կը խոնարհնաք . ու
կը փափաքինք որ բոլոր փառքը ինքն ունենայ : Փիքու գ .
7-9 : Գաղ . դ . 14 :

Եր . Ա տանգաւոր վիճակի մէջ են ու պիտի կորսուին
յաւիտեան ամէն անձնք՝ որ Յիրիսու Վիրիստոսի հաւատ-
քովը եղած արդարութիւնն ու փրկութիւնը կը մերժեն ,
և արդարութեան ու փրկութեան համար բուն իրենց բարի
գործերուն՝ կամ իրենց արդարութեանը վրայ կը հաստա-
տեն յշսերնին : Ենոնք չընեցած բաներնուն կը յուսան :
Մարդիկ՝ բուն իրենք ըլլաւ կ'ուզեն իրենց Փրկիչը , բայց
ասիկայ անկարեկ բան է (ա) :

Ա . Են որ Արդիին կը հաւատայ , յաւիտենական
կեանք ունին . և ան որ Արդիին չնազանդիր , անիկայ
կեանք պիտի չտեսնէ . հապա Աստուծու բարկութիւնը
անոր վրայ կը մնայ : Յօհ . գ . 36 : Ենչու որ ես կը
վկայեմ անոնց համար , թէ Աստուծոյ նախանձաւորու-
թիւնը ունին , բայց ոչ թէ գիտութեամբ : Ա ասն զի
անոնք Աստուծոյ արդարութիւնը չքիտնալով , ու իրենց
արդարութիւնը հաստատել ուզելով , Աստուծոյ արդա-
րութեանը չնազանդեցան : Վանզի օրէնքին վարձանը
Վիրիստոս է՝ ամէն հաւատացեալին արդարութեան հա-
մար : Ենչու որ Առովես օրէնքէն եղած արդարութիւնը կը
ստորագրէ , թէ զանոնք կատարող մարդը անոնցմով
պիտի ապրի : Բայց հաւատաքէն եղած արդարութիւնը
ասանկ կ'ըսէ . Ան՛ ըսեր քու սրտիդ մէջը , թվ պիտի ելլէ
երկինքը , (այսինքն Վիրիստոսը իջեցունելու .) Կամ թէ
Ա՞շ պիտի իջնէ անդունդը , (այսինքն Վիրիստոսը մե-
ռելներէն հանելու :) Հապա Բ՞նչ կ'ըսէ . Խօսքը մօտ է ,
քու բերնիդ մէջը , և քու սրտիդ մէջն է , այսինքն հա-
ւատաքին խօսքը որ մենք կը քարոզենք : Ենչու որ՝ եթէ քու
բերնովք Յիրսուը Տէր խոստովանիս , ու քու սրտիդ մէջը
հաւատաս թէ Աստուած անիկա մեռելներէն յարուց ,
պիտի փրկուիս . (Ա ասն զի սրտով կը հաւատայ մէկը
արդարանալու , ու բերնովք կը խոստովանի փրկուելու :)
Վանզի գիրքը կ'ըսէ . Ամէն ով որ անոր հաւատայ՝ պիտի
չամշայ : Հոռով . Ժ . 2-11 :

**Է . ՍԻԵՐ ՎՐԻՍՏՈՍԻ ԳԵԼՈՒՆ ՈՒ ԵՐԿԻՆ-
ՔԻՆ ՀԵՄԸԸ ՊԵՏՐՈՍՈՒՆՆՈՒՆ ՎՐԵ-
ՅԱՊ :**

1 . Ո՞նք կամք չունինք Վրիստոսի գալու մեր փրկու-
թեանը համար . հապա Նստուած է որ կը փոխէ մեր
սիրտերը ու իր ձոդիով Վրիստոսի կ'առաջնորդէ
մեզ :

2 . Նստուած իր Որդին մեզի համար մեռնելու խրկած
ըլլալը գիտնալովիս կամք ունի՞նք զբարը սիրելու ու իբրև
մեր Փրկիչն ընդունելու անիկայ :

Պ . Չէ . Քանզի մեր սիրտերը խիստ չար են :

Աիրոտը ամէն բանէն աւելի խարերայ ու խիստ չար է :
Երբ . Ճէ . 9 :

Խաչու որ մարմնաւոր եղողները մարմինին բաները կը
մտածեն , ու հոգեոր եղողները հոգիին բաները : Ա ան
զի մարմնաւոր խորհուրդը մահ է , և հոգեոր խորհուրդը՝
կեանք ու խաղաղութիւն : Վանզի մարմնաւոր խորհուրդը
Նստուծոյ դէմ թշնամութիւն է . ինչու որ Նստուծոյ
օրէնքին չնազանդիր , մանաւանդ չկրնար ալ : Ա ան չէ
մարմնով եղողները , չն կրնար Նստուծոյ հաճոյ ըլլալ :

Ճառավ . ը . 5-8 :

Ետք մարմինին գործերը յայտնի են , որ ասոնք են .
շութիւն , պոռնկութիւն , պղծութիւն , գիճութիւն ,
կոապաշտութիւն , կախարդութիւն , թշնամութիւններ ,
կոփներ , նախանձններ , բարկութիւններ , հակառակու-
թիւններ , երկպառակութիւններ , բաժանումներ , չար
նայուածքներ , մարդասպանութիւններ , գինովութիւն-
ներ , անառակութիւններ , ու ինչ որ ասոնց նման են .
որ հիմնակուց ես ձեզի կը զբուցեմ , ինչպէս առաջուց ալ

կը զբուցէի , որ ասանկ բաներ գործողները Աստուծոյ արքայութիւնը պիտի չժառագեն : Գաղ. Է . 19-21 :

Հ . Երբոր Յիսուս մեզ իրեն գալու ու փրկուելու կը հրաւիրէ , մենք ան ատենը ի՞նչ ընել կը սկսինք :

Պ . “ Ամենքս ալ ես քաշուելու կը սկսինք : ” Ե . ու .
Ժ . 16-20 :

Հ . Ո՞նք երբեմն չլ՞ոնք բարկանար անոնց՝ որ մեզ կը յանդիմանեն մեր մեղքերուն համար և կը ստիպեն որ մեր մեղքերը մէկ դի ձգենք ու Աստուծոյ ծառայենք :

Պ . Հարամերս :

Աշխարհն ձեզ չկրնար ատել , բայց զիս կ'ատէ , ինչու որ ես անոր վրայով կը վկայեմ թէ իր գործքերը չար են : Յօհ . Է . 7 : Բայց հիմա կը փնտռէք սպաննել զիս , անտենք մարդ մը՝ որ ձեզի ճշմարտութիւն խօսեցայ , որն որ Աստուծմէ լսեցի . Երբահամ ատ բանը լըրաւ : Յօհ .

Է . 40 :

Հ . Ուրեմն ի՞նչ տեսակ սիրտերու կը կարօտինք :
Պ . “ Ե, որ սիրտերու :

Ո՞վ Աստուծ , իմ մէջս մաքուր սիրտ ստեղծէ , և իմ ներսիդիս ուղիղ հոգի նորոգէ : Ատղ . ծա . 10 :

Հ . Ո՞նք ինքնիրեննուս կրնանք մեզի նոր սիրտ նոռոգել :

Պ . Ձէ ամենեին :

Բայց որոնք որ զինքը ընդունեցին , անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու , որոնք կը հաւատան իր անուանը , որ անոնք ոչ արիւնէ և ոչ մարմինի կամքէ՝ ոչ ալ մարդու կամքէ , հապա Աստուծմէ ծնան : Յօհ . ա . 12 , 13 : Խակ շշաւոր մարդը Աստուծոյ Հոգիին բաները չընդունիր . ինչու որ անոնք իրեն յիմարութիւն են , ու չկրնար ալ գիտնալ , ինչու որ հոգեոր կերպով կը քննուին : ա Առին . ք . 14 :

Հ . Ըիսուս ԲՇնչ կ'ըսէ ասոր վրայով :

Պ . “Դուք չեք ուզեր ինձի գալ, որ կեանք ունենաք” : Յօհ . Է . 40 :

Հ . Ի՞նչ է կ'ըսէ մարդոց դատապարտութիւնը :

Պ . “Եւ աս է դատապարտութիւնը՝ որ լոյսը աշխարհ եկաւ, ու մարդիկ իսաւարը լոյսէն աւելի սիրեցին. ինչու որ իրենց գործերը չար էին : Ա ան զի ամէն ով որ չար կը գործէ, անիկայ լոյսը կ'ատէ, և լոյսին քովը չար՝ որ իր գործերը չանդիմանուին : Յօհ . Գ . 19, 20 :

Հ . Մարդիկ կամ հրեշտակները կրնան փոխել մեր սիրտերը բուն իրենց զօրութիւնովը :

Պ . Զէ : ա Կորնի . գ . 5-7 :

Հ . Ուրեմն որհվ կը փոխուին մեր սիրտերը :

Պ . Միայն Սուրբ Հոգիով : Յօհ . գ . 3-8 :

Հ . Ի՞նչ կ'ըսէ մեր գրկիչն ասոր վրայով :

Պ . “Աէկը չընար ինձի գալ, թէ որ զիս Խրկող Հայոց քառէ” : Յօհ . Է . 44, 45 :

Հ . Հայոց մեզ ԲՇնչակս դէպ'ի Կրիստոս կը քառէ :

Պ . Սուրբ Հոգիով :

Հ . Ուրեմն ԲՇնչ պիտի ըլլանք՝ թէ որ Կատուած մեր սիրտերը փոխելու ու մեզ դէպ'ի Կրիստոս քաշելու համար Սուրբ Հոգին չերկէ :

Պ . Պիտի կորսուինք յաւիտեան :

Հ . Երբոր բանտապետին նոր սիրտ տրուեցաւ ու դէպ'ի Կրիստոս քաշուեցաւ, ԲՇնչ ըսաւ իր կորսուած մեղաւոր մը ըլլալը զգալէն ետքը :

Պ . “Ինձի ԲՇնչ պէտք է ընել որ փրկուիմ” : Կործ . Ժկ . 30 :

Հ . Ո՞վ ազգեց բանտապետին թէ Կատուած բարկացեր էր իրեն, և թէ ինքը կորսուած մեղաւոր մըն էր :

Պ . Սուրբ Հոգին :

Եւ ինքը երբ որ զայ՝ աշխարհը պիտի յանդիմանէ մեղքի համար, և արդարութեան համար, ու դատաստանի համար։ Անգլքի համար՝ որ ինձի չեն հաւատար։ արդարութեան համար՝ որ ես իմ հօրս քով կ'երթամ, և ալ զիս չէք տեսներ։ և դատաստանի համար՝ որ աս աշխարհիս իշխանը դատապարտուած է։ Յօհ։ Ժկ.

8-11 :

Հ. Եւ Պօղոս ու Ծիղա Ի՞նչ ըսին բանտապետին։

Պ. “ Հաւատած Տէր Յիսուս Վրիստոսին, ու պիտի փրկուիս դուն՝ և քու տունդ”։

Հ. Ո՞վ բանտապետին նոր սիրտ մը տուաւ ու զնիքը Տէր Յիսուսի հաւատալու առաջնորդեց։

Պ. Սուրբ Հոգին։

Հ. Եստուած իրմէն ինդրողներուն Սուրբ Հոգին կու տամյ։

Պ. Հրամերես։

Ուստի եթէ դուք՝ որ չար էք, ձեր զաւակներուն աղէկ ընծաներ տալ գիտէք, որչափ աւելի ձեր Հայրը երկինքէն Սուրբ հոգին պիտի տայ անոնց, որ իրմէ կը ինդրէն։ Դաւ։ Ժա։ 13։

Կ'նչպէս հիանալի է որ Եստուած “ Իուն իր Որդին չխնայեց, հապա մեր ամենուս համար մատնեց”։ բայց տակաւին չենք երթար իրեն որ փրկուինք։

Ե. Եհա յայտնապէս կը տեսնենք մարդկային սրտին կատարեալ՝ խորունկ՝ կամակոր և անփոփոխ վատթարութիւնն ու չարութիւնը։ Եսիկայ ամենեին մէկ կերպով մը չփոխուիր, բայց միայն Եստուած կրնայ փոխել։ քանզի թէ որ մէկը զգուշացընէ ու խրատէ մեզ, թէ որ վախցունէ մեզ Եստուծոյ սպառնալիքն ու մեզի տալու տանջանքներն իմացունելով, ասոնց բոլորը անօգուտ են ու չեն կընար փոխել սիրտը։ և երբոր Եստուած իսան-

դակաթ սիրով կը հրաւիրե ու կը համնգէ մեզ , մնք ամէնքս միաբանութեամբ կը սկսինք ես քայլուիլ : Անկը կ'ըսէ , “ Ես շատ պղտիկ եմ ” : Անկալը “ Ես ալ շատ ծեր եմ ” : Երրորդը “ Ես գործ ունենալուս համար ժամանակ չունիմ ” : Չորրորդը “ Ես տակաւին շատ ժամանակ ունիմ ” , երբոր ուզեմ կրնամ ” : Անգերորդը “ Ես տակաւին աշխարհը չվայելցի , ետքը կ'ապաշխարհը ” : Եւ ասանկ ամէն մէկը հրաժարելու բան մը կը գտնէ մէկ դի ձգելով իր խիստ հարկաւոր գործը այսինքն հոգիին փրկութիւնը : Դշմարիսն աս է որ մարդիկ բնականարար սէր չունին առ Աստուած , ու իրենց սրտերնուն մէջը կ'ըսեն Աստուածոյ , Քրիստոսի , Առուրբ Առաջին , ու Աստուածաշունչին , “ Անկ դի գայցէք մեզմէ ” : Անոնք թշնամի են Աստուածոյ , լոյսը կ'ատեն ու չեն ուզեր անոր գալ :

Ի . Բայէ որ իրենց մնայ , մարդիկ բոլորովին պիտի կորսուին իրենց ապականութեան մէջը :

Գ . Անոնց սրտին փոփոխութիւնը Առաջին Առուրբ Աստուածոյ գործն է միայն . միայն ինքը՝ որ երկնքն ու երկերը ստեղծեց , կրնայ մաքուր սիրտ մը ստեղծել մարդուս սըրտին մէջ (ա) :

Դ . Փրկութիւնը բոլորովին ձրի շնորհքէ է . Աստուածոյ շնորհքն է որ իր Արդին մեզի համար մեռնելու կուտայ . Աստուածոյ շնորհքն է որ իր Առուրբ Առաջին մնը սիրտերը փրխելու համար կու տայ . և Աստուածոյ շնորհքն է որ իր Առուրբ Առաջին որու որ ինք ուզէ կու տայ : “ Անկը Քրիստոսի չկրնար գալ , թէ որ Այրը անիկայ չքաշէ ” : ու որուն որ Այրը հաճի , անիկայ կը քաշէ . այնչափ որչափ որ ինք ընտրեց (բ) :

ա . Ա ասն զի Աստուած՝ որ հրաման ըրաւ խաւարէն լոյս ծագել , ինքը մեր սրտերուն մէջ ծագեց՝ Աստուածոյ փառաց գիտութեան լոյսը տալու համար Յիսուս Քրիստոսի անձովը : բ Արդի . գ . 6 :

բ . Եր ուզելով մեզ ծնաւ ձշմարտութեան խօսքովը՝ որ մենք իր ստեղծածներուն երախայրի մը ըլլանք : Յաչ :

ա . 18 :

1. Ժամկ մեղաւորները ծեր ու պատանի սորվին իրենց սիրտերուն լրժշուելու գէութիւնը : Ենոնք չեն կրնար ինքինքնին աւելի աղէկ ընել , ու աւ ինքնիրեննուն կըրնան փոխել ինքզինքնին . անոնք ասանկ բան մը ընելու յոյ թող չունենան . և թող ինքզինքնին Յիսուս Քրիստոսով Վասուծոյ ողորմութեանը յանձնեն , ու աղօթեն Առւրբ Հոգին ընդունելու համար՝ որով կարենան նորոգուիլ ու փրկուիլ :

2. Մենք պարտինք սրտի փոխսխութիւն ունենալ . առ սրտի փոխսխութիւնն ի՞նչ է , և ի՞նչպէս Առւրբ Հոգին իր գործը կը կատարէ ու Երկինքն համար կը պատրաստէ մեզ :

Յօհ . Գ . 1-21 :

Հ . Փարիսեցիներէն , ու Հրեից իշխաններէն Թվեւ կաւ Յիսուսին գիշերով :

Պ . “Եիկոդեմու : Յօհ . Գ . 1-9 :

Հ . Յիսուս ի՞նչ ըստ անոր :

Պ . “Դշմարի՛տ ճշմարիտ կ'ըսէմ քեզի . թէ որ մէկ մարդ մը նորէն չծնանի , զկրնար Եստուծոյ թագաւորութիւնը տեսնել ” : Յօհ . Գ . 3 :

Հ . Ի՞նչ է ան բանը , որ առանց անոր մէկը Տէրը պահտի տեսնէ :

Պ . Արբութիւն : Եօդ . Ժք . 14 :

Հ . Ուրեմն անկարելի՞ է մեզի Երկինք երթաւ առանց սրտի փոփոխութեան :

Պ . Այո , անկարելի է :

Հ . Երբոր մարդ մը Առւրբ Հոգիով նորոգուի , մեծ փոփոխութիւն է :

Պ . Հրամերես . քանզի անով կը դառնայ ապաշխարելու , Յիսուսի հաւատալու , Կատուած սիրելու , և բարի կեանք մը վարելու :

Եսնաց աչքերը բանալու , փաւարէն՝ լոյսի , ու Աստանայի իշխանութենէն՝ Կատուծոյ դարձնելու , որ անոնք մեղաց թողութիւն առնեն , և սուրբերուն հետ մասնակից ըլլան՝ ինծի հաւատալով : Գարդ . իշ . 18 : Ասան զի Կատուած՝ որ հրաման ըրաւ խաւարէն լոյս ծաղել , ինքը մեր սրտերուն մէջ ծագեց՝ Կատուծոյ փառաց գիտութեան լոյսը տալու համար Յիսուս Քրիստոսի անձովը : բ Աորհն . է . 6 :

Հ . Կորոգուած մարդը ի՞նչ տեսակ սիրտ ունի :

Պ . Կոր սիրտ :

Եւ ձեզի նոր սիրտ պիտի տամ , ու ձեր ներսիդին նոր հոգի պիտի գնեմ , և ձեր մարմիններէն քարեղէն սիրտը պիտի հանեմ , ու ձեզի մարմնեղէն սիրտ պիտի տամ : Եղին . լէ . 26 : ժա . 19 :

Հ . Կնիկայ ի՞նչ տեսակ արարած մըն է :

Պ . Կոր արարած :

Ուրեմն թէ որ մէկը Կրիստոսի մէջ է , անէլոյ նոր ստեղծուած մըն է . հիները անցան , և ահա ամէն բան նոր եղաւ : բ Աորհն . է . 17 : Ենչու որ Կրիստոս Յիսուսով ու թվատութիւնը բան մըն է , ու ալ անթըւլ փատութիւնը , հապա նոր ստեղծուած ըլլալն է բանը : Գառ . է . 15 : Եփու . է . 23 , 24 : Աոր . է . 10 :

Հ . Կնանկ մէկը ի՞նչպէս ծնած կ'ըսուի Ուռը Գրքին մէջը :

Պ . “Կորէն ծնած” . “Հոգիէն ծնած” . “Կատուծմէ ծնած” : Յօհ . ա . 13 : է . 1-9 : ա Պէտք . ա . 23 : ա Յօհ . է . 9 :

Հ . Հիմա անիկայ որի՞ն որովին է :

Պ . Աստուծոյ որդին : Համբ . Է . 14-17 :

Ճ . Եւ Թւր պիտի երթայ :

Պ . Երկինք : Համբ . Ե . 1 , 2 :

Ճ . Է՞նչպէս կրնաս հասկընալ թէ մէկը Առւըր Հոգով իսկապէս նորոգուած է , թէ չէ :

Պ . Եր բռնած ճամբայէն , ու ամէն օրուան վարքէն :

Ամէն ով Աստուծմէ ծնած է , մեղք չքործեր , ինչու որ անոր սերմը իր մէջը կը մնայ , ու չկրնար մեղք գործել , քանզի Աստուծմէ ծնած է : Ասով յայտնի են Աստուծոյ որդիքը ու սատանայի որդիքը : ա (Յօհ . Գ . 9 , 10 : Ո՞տով . Է . 16-27 :

Ճ . ‘Եոր սիրո ունենալէն առաջ Բ՞նչպէս կեանք մը կը վարէր :

Պ . Զար կեանք :

Երդ՝ մարմինն գործքերը յայտնի են , որ ասոնք են՝ շնութիւն , պոռնկութիւն բարկութիւններ , հաւկառակութիւններ , երկառակութիւններ , բաժանումներ , չար նայուածքներ , մարդասպանութիւններ , զինուփութիւններ , անառակութիւններ , ու ինչ որ ասոնց նման են : Պատղ . Ե . 19-21 :

Ճ . ‘Եոր սիրո մը ունենալէն ետքը Բ՞նչպէս կեանք մը պիտի վարէ :

Պ . Դարի կեանք մը :

Դարք եք աշխարհի լոյսը . քաղաք մը՝ որ լեռան վրաց կեցած է , չկրնար պահուիլ : Ու ճրագը չեն վառեր և դներ գրուանի տակ , հապա աշունակի վրայ , և լոյս կու տայ բոլոր տանը մէջ եղողներուն : Անանկ թող լուսաւ սորէ ձեր լոյսը մարդոց առջնն , որ տեսնեն ձեր բարի գործքերը ու փառաւորեն ձեր Հայրը՝ որ երկինքն է : Ո՞տով . Ե . 14-16 : Ժդ . 23 :

Ճ . Երբոր Հոգին փոխէ մեր սիրտերը , ան ատենը

մեզ կատարելապէս սուրբ կընէ՞ , անանկ որ մենք բնաւ մէլըն ալ չմեղանչենք որչափ որ ապրելու ըլլանք :

Պի . Ձէ . հապա միայն կը սկսի ան ատենը մեզ սուրբ ընելու :

Խնդր որ ամէնքս ալ շատ յանցանքներ կ'ընենք . թէ որ մէկը խօսքով յանցանք չընէ , անիկայ կատարեալ մարդ է , որ կարող է բոլոր մարմինն ալ սանձելու : Յա՞ . գ . 2 : Թէ որ ըսենք՝ թէ մենք մեղք մը չունիք , ինքինքնիս կը խարենք , ու մեր մէջը ճշմարտութիւն չկայ : ա չՅօհ . ա . 8 : ա Կորնել . թ . 24-27 : Աս մասին վասահ ըլլալով թէ ան որ ձեր մէջք բարի գործ մը սկսեց , մինչև Յիսուս Քրիստոսի օրը պիտի կատարէ : Փէլք . ա . 6 :

Հ . Ուրեմն Հոգին Բ'նչ պէտք է որ մեզի ընէ :

Պի . Պիէտք է որ մեզի հետ մնայ ու մեր մէջը իր ակած բարի գործը լնեցունէ , մեզ բարեպաշտութեան մէջ յառաջացունէ քանի որ կ'ապրինք , և այնպէս մեզ Երկինքին համար պատրաստէ :

Իայց արդարներուն ճամբան՝ ծագող լոյսին պէս է , որ երթալով կը լուսաւորուի , մինչև որ կատարեալ օր ըլլայ : Եստա՞ . գ . 18 : Աստա՞ . ժգ . 31-33 : Հոգով . ը . 11 : ա Կորնել . գ . 16 :

Հ . Ենանկ է նէ որի՞ն փառք տալու ենք Երկինքին համար մեր պատրաստութեանը վրայով :

Պի . Առւրբ Հոգիին :

Անր Փրկիւը կ'ըսէ . “ Թէ որ մէկ մարդ մը նորէն չծնանի՝ մընար Աստուծոյ թագաւորութիւնը տեսնել ” : “ Պիէտք է ձեզի նորէն ծնանիլ ” :

Ա . Առանց սրտի փոփոխութեան մենք բնաւ Եկրինք մնար մննել : Աստուած սրբութեան Աստուած է . Jones' Catechism. Armenian. 8

ուրեմն չարերը պիտի վրընտէ իր ներկայութենէն . Ինքը ճշմարտութեան ու արդարութեան Վատուած է . ուրեմն պիտի պատժէ չարերը յաւիտեան Դժոխքին մէջ : Երկինքը սրբութեան ու Վատուածոյ հետ հաղորդութեան տեղ է . ուրեմն հարկաւոր է սրբութիւնը ան ամենուն՝ որոնք որ հոն պիտի երթան : Անշաւորը չկրնար Վատուածոյ հետ հաղորդութիւն ունենալ, ոչ ալ սուրբերուն ու հրեշտակներուն հետ . ու թէ որ Երկինքը գտնուելու ըլլայ, հոն ուրախ և հանգիստ պիտի ըլլայ, ինչու որ ան սուրբ տեղին համար սրտի պատրաստութիւն պիտի չունենայ . պիտի զայ թէ Երկինքը բուն իր տեղը չէ : Ըատերը առանց սրտի փոփոխութեան կ'ուղեն որ մեռնենքն ետքը Երկինք երթան, չէ թէ Երկինքը կը սիրեն ու անիկյ վայելու յարմարութիւն ունին, հապա 'Դժոխքէն ազատելու կը փափաքին : Բայց թէ որ Երկինքը մտնելու վճռուած ըլլային ալ, թշրւառական պիտի ըլլային հոն՝ իրենց մեղքով ու անհաւատութիւնով լիցուն հին սրտերուն պատճառաւաւը :

Դ . Ծառող աս աղէկ մոտմտան անոնք ըր տակաւին նորոգուած չեն . թէ որ ասանկ վիճակի մը մէջ մնալով մեռնին, պիտի իշնեն անոնք բուն իրենց տեղը, այսինքն Դժոխքը :

Երշեցէք որ եթէ աս աշխարհիս մէջ չնորոգուիք, բնաւ ամեննին ալ նորոգուելու չէք : Յայտ . իր . 11 : 'Դուք չէք գիտեր թէ երկար ատեն ապրելու էք թէ կարճ . ուրեմն իմաստուն եղէք ու շուտով սկսեցէք և ինքնինքնիդ անհոգ մի՛ թողուք, մինչև որ ան մեծ ու երջանիկ փոփոխութիւնը ստանաք :

Եֆ . Վս փոփոխութիւնը ճշմարտապէս մեծ ու երջանիկ է : Վանզի մեղաւորին ունեցած խաւարը ըլյսի կը փոխուի, անոր ատելութատանայէն հեռանալով՝ կը մօտենայ Վատուածոյ, 'Դժոխքէն կը փրկուի՝ դէպ'ի Երկինքը կ'առաջնորդուի : Եւ արդարե շատ երանելի է ան մեղաւորը, ինչու որ Վատուածոյ որդին կ'ըլլայ անիկայ՝ Յիսուս 'Երիստոսի հաւատքովը :

Դ . Վս սրտի ճշմարիտ նորոգութեան նշանը՝ վարքի

փոփոխութիւն մըն է : ‘Եսր սիրուը նոր վարքի մը կ’առաջնորդէ . մեղաւորը՝ չէ թէ ինչ որ առաջ էր , անանկ կը մնայ , հապա նոր արարած մը կ’ըլլայ . մեղքին ու յիմարութեան բոլոր հին ճամբաները մէկ դի կը ձգէ , և անոնց տեղը կը ստանայ աղօթքը՝ օրկութիւնը՝ հաւատքը՝ և սէրը՝ ու սուրբ կազմանդութիւնը՝ որ նոր բաներ են : Եւ անիկայ որչափ . որ փորձութիւններ քաշելու ըլլայ , Կատուծոյ Հոգիին օգնութիւնովը այնչափ աւելի աղէկ կերպով կը յառաջանայ . իր շաւիդն լոյսը քիւ . քիւ աւելնարով պայծառ . կը լուսափայէ մինչև որ կատարեալ կ’ըլլայ կէս օրուան լուսին պէս , երբոր պիտի տեսնէ Կատուծ փառքով : Եւ ովք որ աս կերպով շառաջանար առաքինութեան ճամբուն մէջ՝ անոր նորոգութիւնը ճշմարիտ չէ :

Եւ . Կը իստոննեաները բնաւ մոռնալու չեն որ միայն Առւրբ Հոգիին չնորհքովը և օգնութեամբը կրնան յառաջանալ դէպ’ի երկինք երթալու ճամբուն մէջ . նոյն չնորհքը տուող ու կարող Հոգին՝ որ բարի գործը կը սկսի յառաջ տանիլ մեր մէջը , պէտք է որ ինք յառաջ տանի ու կատարէ ան : Օգուշանանք ուրեմն Առւրբ Հոգիին դէմ հակառակելէն ու զինքը վշտացունելէն . քանզի թէ որ ինքը հեռանայ մեզմէ , ամէն բան կ’ըլլայ մեզի ինաւար ու մեղք , թշուառութիւն ու մահ :

3 . Առւրբ Հոգին կը խօսի մեզի Կատուծաշունչով :

Առաջ . Ժիշ . Ժիշ . 1-14 :

Ա . Ո՞ր գիրքին մէջ Առւրբ Հոգին կը խօսի մեզի :

Պ . Առւրբ Կատուծաշունչին մէջ :

Ա . Գլխաւորապէս Առւրբ Հոգին Բնչ կ’ըսէ մեզի աս Գլխին մէջ :

Պ . Գլխաւորապէս մեզի կը ծանուցանէ թէ մենք մեղաւոր ենք , և թէ Երկինք ու դժուկ կայ , և թէ Կը իս-

տոս մեռաւ մեղ փրկելու համար , և թէ մենք պարտինք նոր սիրտ ունենալ , թէ չէ՝ Նրկինքը չենք կրնար մանել :

Հ . Խնաւ կրնայի՞նք գիտնալ աս մեծ ճշմարտութիւններուն մէկը , թէ որ Աստուածաշունչը շունենայինք :

Պ . Չէ :

Ե՞ն նոյն ժամուն Յիսուս հոգիով ուրախացաւ ու ըսաւ . Ըսորհակալ եմ քեզմէ , ով Հայր , Տէր երկնի և երկի , որ աս բաները ծածուկ պահեցիր իմաստուներէն և գիտուներէն , ու աղոց յայտնեցիր . այս , ով Հայր , ինչու որ քու առջիդ ասանկ հաձելի եղաւ : 'Ղուէ . Ժ . 21 : 'Ի անգի որովհետև Աստուծոյ իմաստութեամբը աշխարհ շնանցաւ զԱստուած էր իմաստութիւնովք , Աստուած հաձեցաւ քարոզութեան յիմարութիւնովք հաւատացեալները ապրեցունելու : ա Ասրին . ա . 21 :

Հ . Որի՞ն խօսին է Առւրբ Գիրքը . մարդոյ թէ Աստուծոյ :

Պ . Աստուծոյ . "Խոլոք գիրքը Աստուծոյ շունչն է , և օգտակար է սորվեցունելու , յանդիմանելու , և շտկելու , ու արդարութեան խրատելու համար " : բ Տիմ . դ . 16 :

Հ . Պօղոս Բ'նչ կ'ըսէ Տիմոթէոսին՝ Առւրբ Գիրքին վրայով :

Պ . "Եւակ ուս մանկութենէդ 'ի վեր Առւրբ Գիրքերը գիտես , որոնք կրնան իմաստուն ընել քեզ փրկուելու՝ Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքովք " : բ Տիմ . է . 15 :

Հ . Պետրոս Բ'նչ կ'ըսէ Աստուածաշունչը գրովներուն վրայով :

Պ . "Ենչու որ մարդարէութիւն մը երբէք մարդոց կամքին պէս շտրուեցաւ . հապա Աստուծոյ սուրբ մարդիկը Առւրբ Հոգիէն շարժուած՝ խօսեցան " : բ Պիտ . ա . 21 :

Հ . Ի՞նչ կերպով խօսեցան :

Պ . Սուրբ Հոգին ըստ անոնց ինչ գրելին ու ինչ խօսելին , և միշտ անոնց հետ էր՝ անոնք սխալ ընելին պահելու համար :

Ես ալ Հօրը պիտի աղաւեմ , և ուրիշ Ախիթարիշ մը պիտի տայ ձեզի , որ յաւիտեան ձեզի հետ բնակի . Ճշմարտութեան Հոգին , որ աս աշխարհս անիկայ չկրնար ընդունիլ . ինչու որ չտեսներ անիկայ , ու չճանշնար անիկայ . բայց դուք կը ճանշնաք անիկայ , ինչու որ ձեր քովը կը բնակի , և ձեր հետը պիտի ըլլայ : Յօհ . Ժկ . 16 , 17 : Իայց Ախիթարիշը՝ Սուրբ Հոգին՝ որ Հայրը իմ անունով պիտի խրկէ , անիկայ ձեզի բոլորը պիտի սորվեցունէ , և ինչ որ ձեզի ըսի՝ միտքերնիդ պիտի բերէ : Յօհ . Ժկ . 26 :

Հ . Փրկուելու ուրիշ ճամբայ մը կայ ան ճամբայէն զատ , որն որ Սուրբ Հոգին կ'իմացունէ մեզի Կատուածաշունչին մէջք :

Պ . Զկ :

Դիրքերը քննեցէք . ինչու որ դուք անոնցմով կը սեպէք յաւիտեանական կեանքը ունենալ . և բուն անոնք են որ ինծի համար կը վկային : Յօհ . Ե . 39 : Եւ ուրիշ մէկով մը փրկութիւն չկայ . ինչու որ անկէ 'ի զատ ուրիշ անուն մը չկայ երկինքին տակը մարդոց մէջ տրուած , որ անով կարող ըլլանք փրկուելու : Գարձ . Ղ . 12 :

Հ . Կատուածաշունչը կարդալէն զատ ի՞նչ ուրիշ միջոց սահմանած է Կատուած , որ մարդիկ սորվին Սուրբ Գիրքին վարդապետութիւնները և փրկութեան ճամբան :

Պ . Կատարանին քարոզութիւնը՝ որ յատուկ պաշտօն մըն է և Սուրբ Հոգիէն կանցւած մասնաւոր մարդոց կը յանձնուի

Օգուշացէք մեր անձերուն և բոլոր հօտին , որուն վրայ Հոդին Առւրբ ձեզ տեսուչ դրաւ՝ Կատուծոյ եկեղեցին հովուելու , որն որ իր արիւնովը ստացաւ : Գործ . ի . 28 : Կատուծոյ հօտը որ մեր մէջն է՝ արածեցէք , վերակացու ըլլալով չէ՛թէ ակամայ՝ հապա կամաւ . չէ՛թէ անարդ շահամնդրութեամբ , հապա յօժարութեամբ . չէ՛թէ վիճակներուն վրայ տիրելով , հապա հօտին օրինակ ըլլալով . և Հովուապետին երկեցած տաենը փառաց անթառամ պսակը պիտի ընդունիք : ա՛ Պիտ . ե . 2-4 : Խօսքը քարոզէ՛ . մատգրութեամբ գործոխտ պարապէ՛ տաենին ու տաենէ գուրս , յանդիմանէ՛ , սաստէ՛ , յորդորէ՛ ամէն երկայնմտութիւնով ու վարդապետութիւնով : Իսյց գուն ամէն բանի մէջ արթուն կեցիր , նեղութիւններու համբերէ՛ , աւետարանիչի գործ գործէ՛ , քու պաշտօնդ կատարէ՛ : բ Տիմ . դ . 2 , 5 : Եւ ինքը պատուիրեց մեզի՞ որ ժողովուրդին քարոզենք ու վկայութիւն տանք , թէ՛ անիկայ է Կատուծմէ սահմանուած՝ կենդանիներուն ու մեռելներուն գատաւորը : Գործ . Ժ . 42 : Անկը կը քարոզենք խաչեալ ՚Քրիստոսը՝ ՚ըրէաներուն գայթակղութիւն ու ՚Յոյներուն յիմարութիւն . բայց անոնց՝ որ կանչուած են , թէ՛ ՚ըրէաներուն ու թէ՛ ՚Յոյներուն , ՚Քրիստոսը՝ Կատուծոյ զօրութիւնը , և Կատուծոյ իմաստութիւնը : ա՛ Արդին . ա . 23 , 24 :

Հ . Ուստի յատուկ քարոզիչներէն զատ՝ հասարակ մարդիկ չեն կրնար աւետարանը քարոզել իրենց խօսակցութեանը մէջ :

Պ . Կրնան քարոզել . քանզի հիմա պէտք է որ ամէն մարդ սորմեցունէ իր քաղաքացին ու իր եղօրը Տէրը ճանչնալու ճամբան : Երբ . ը . 11 :

Եւ ան օրը մեծ հալածում եղաւ Երուսաղեմի մէջ եղող եկեղեցին վրայ , և առաքեալներէն 'ի զատ՝ ամէնն ալ

ցիրուցան եղան Նըրէտատանի ու Աամարիայի երկիրներուն
մէջ : Եւ ան ցլուցցան եղածները կը պտըտէին՝ ու խօսքը
կը քարոզէին : Գարդ . ը . 1 , 4 : Եւ ան որ կը լսէ՛ թող
լսէ՛ , Երկուր : Յայտ . իբ . 17 : Տես նաև Գարդ . ժամ .
19-21 : Արարտ . ե . 19 : Գարդ . ժը . 2 , 3 , 24-26 :
Նոռալ . ժկ . 3 , 12 :

Հ . Անք փրկուելուն համար յոյս մը կայ թէ որ ան-
արգենք Խստուածաշունչ կարդան ու քարոզ լսելը :

Պ . ՋԷ :

Եւ Նքրահամ ըսաւ անոր . Ենոնիք Աովկէսը ու Աար-
դարէները ունին , թող անոնց մորիկ ընեն : Են ալ ըսաւ .
ՋԷ՝ հայր Նքրահամ , հապա թէ որ մեռելներէն մէկը
անոնց երթայ , պիտի ապաշխարեն : Եւ անիկայ ըսաւ
անոր . թէ որ Աովկէսին ու Աարգարէներուն մորիկ չեն
ըներ , ոչ ալ թէ որ մեռելներէն մեկը յարութիւն առ-
նելու ըլլայ , պիտի համոզուին : Պատ- . ժկ . 29-31 :
Աէկը թէ որ Աովկէսին օրէնքը անարգէր , առանց ողոր-
մութեան երկու կամ իրեք վկաներով կը մեռնէր . ալ
ժրչափ սաստիկ պատժոյ արժանի պիտի սեպուի անիկայ ,
որ Խստուծոյ Որդին ոտքի տակ առաւ , և ուխտին արիւնը
հոգին նախատեց : Երբ . Ժ . 28 , 29 :

Հ . Երբոր մեր հոգիին փրկուելու ձամբան գիտենք ,
Բնչ պարտինք ընել :

Պ . Պէտք է որ ուրախութեամբ և մեր բոլոր ջանքովը
անոր փրկութեանը ջանանք :

Հ . Երբոր գիտենք թէ Աուրբ Հոգի մը կայ՝ որ կըր-
նայ առաջ տանիլ մեզ փրկութեան մեծ ու երեելի գոր-
ծին մէջը , Բնչ պէտք է որ ընենք :

Պ . Պէտք է որ շնորհակալութեամբ ջանանք և աղա-
շենք Խստուած Աուրբ Հոգիին համար՝ որ մեր սիրուելը

փոխէ ու մեզ՝ Քրիստոսի տանի , թէ չէ պիտի կորսուինք յաւիտեան : Եռուն . ա . 24-27 :

Ա . Երբոր մէկը քրիստոնեայ կ'ըլլայ Առւրբ Հոգին նորոգելովը , անատենն ալ օգուտ ունի՞ իրեն Աստուածաշունչը :

Պ . Հարամերես . քանզի Աստուածաշունչին միջոցովը Առւրբ Հոգին կը քաջալիրէ անիկայ ու կը սորվցունէ անոր բոլոր իր պարտաւորութիւնները :

Տէրոջը օրէնքը կատարեալ է . հոգին կը նորոգէ . Տէրոջը վկայութիւնը ճշմարիտ է . տդէտը իմաստուն կ'ընէ : Տէրոջը կանոնները շիտակ են . սիրտը կ'ուրախացունեն . Տէրոջը պատուիրանկները պայծառ են , աշքերուն լոյս կու տան : Տէրոջը վախը տուրբ է , յաւիտեան կը մնայ . Տէրոջը դատաստանները ճշմարիտ ու բոլըրովին արդար են : Յանկալի են անոնք ոսկիեն , ու շատ փորձուած ոսկիեն . ու խորիսիսէ կաթած մեղքէն անուշ են : Կաև քու ծառադ անոնցնով կը խրատուի , ու զանոնք պահելուն վարձը շատ է : Այս . ժիշտ . 7-11 :

Ա . Ուրեմն ի՞նչպէս պարտինք գործածել Աստուածաշունչը :

Պ . Այնք պարտինք սիրել անիկայ և սորվիլ , ու հընազանդիլ անոր՝ բոլոր մեր կենացը մէջ :

Աս օրինաց գիրքը քու բերնէդ զատուի , հապա գիշեր ցորեկ անոր վրայ մոտածես , որ բոլոր անոր մէջն գրուածները պահէս ու կատարես . քանզի ան ատենը քու գործքերդ առաջ կը տանիս , և ան ատենը յաջողութիւն կը գտնես : Յիս . ա . 8 : Երանելի է ան մարդը՝ որ ամբարիշաններուն խորհուրդին մէջ չքալիր , ու մեղաւորներուն ճամբուն մէջ չկենար , և ծաղը ընողներուն նստած տեղը չնստիր : Հապա անոր կամքը Աստուծոյ օրէնքին մէջն է , և ցորեկ ու գիշեր անոր օրէնքին վրայ կը մտածէ :

Եւ ս' իկայ ջուրի ճամբաները տնկուած ծառի մը պէս պիտի ըլլայ , որ իր ժամանակին իր պտուղը կու տայ . ու անոր տերերը պիտի չթափի , և ինչ բան որ ընէ՝ պիտի յաշողի : Այսպ . ա . 1-3 :

Հ . Եւ մեր բոլոր կենացը մէջ հր Հոգիին կը կարօտինք՝ որ մեզի սիրել տայ Կատուածաշունչն ու սորվեցունէ , և նազանդեցունէ անոր :

Պ . Առւրբ Հոգիին :

Խակ մենք չէ թէ առ աշխարհիս Հոգին առինք , հապա ան Հոգին՝ որ Կատուածմէ է . որ մենք ճանշնանք ան բաները որ Կատուածմէ տրուեցան մեզի . որոնք նաև կը խօսինք , չէ թէ մարդկային իմաստութեան սորվեցուցած խօսքերովը , հապա Հոգիին սորվեցուցածներովը . և հոգեւոր բաները հոգեւորի հետ կը յարմարցունենք : Խակ շնչաւոր մարդը Կատուածյ Հոգիին բաները շնդունիր . ինչու որ անոնք իրեն յիմարութիւն են , ու շկրնար աւ գիտնալ , ինչու որ հոգեւոր կերպով կը քննուին : Ի՞սց ան որ հոգեւոր է՝ ամէն բան կը քննէ , ու ինքը մէկի մը շքննուիր : Վասնզի ՞վ զիտցաւ Տէրովը միտքը , որ անոր իրաատ տուող աւ ըլլայ . բայց մենք Վրիսառոի միտքը ունինք : ա կորիլ . բ . 12-16 :

Առւրբ Հոգին մեզի հետ կը խօսի Կատուածաշունչով , որն որ Խրմէն ընտրուած սուրբ մարդիկներէն գրուեցաւ . ու անոնք իրմէն այնշափ սորված և օգնութիւն ընդունած էին ան գրելու համար՝ որ Կատուածաշունչը Առւրբ Հոգիին ճիշտ ուզածին պէս եղաւ : Են կատարեալ է . ան է միայն ու ամենաբաւական կանոնը հաւատքին . ան՝ հաւատալու և ընելու բաները մեզի կը սորվեցունէ . ան Կատուածոյ խօսքն է :

Ե . Մենք ամենէն աւելի պատուելու ենք Կատուածաշունչը . որ ամենազերազանց զիրք մըն է . ամէն ուրիշ

գիրքերը՝ մարդոցմէ եղած գիրքեր են, բայց աս գիրքը Աստուծմէ եղած է։ որն որ Աստուծած ու Հաւիտենականութիւնը աչքի առջև կը բերէ։ Ե՞ն կը սորվեցունէ մեզի բուն մեր անմահութիւնը և մեր փրկուելու ճամբան։ ան է կենաց գիրքը։ Ուր որ Աստուծածաշունչը ճանչցուած է և կը կարդացուի ու կը քարոզուի, և կը հաւատան ու կը խազանդին անոր, հոն կայ գիտութիւն ու սրբութիւն, խաղաղութիւն ու յաջողութիւն։ Եւ ուր որ չկայ, հոն կայ տգիտութիւն ու մոլութիւն, խոռվութիւն ու կործանում։ Ուստի Աստուծածաշունչը շատ հարկաւոր է մեզի։

(1. Ե՞նք պարտինք ընդունել Աստուծածաշունչը մեր մի միայն ու ամենաբաւական հաւատոյ ու վարքի կանոնին պէս։ ամէն ինչ որ Ասուրը Հոգին ատ գիրքին մէջը մեզի կը հրամայէ հաւատալ՝ մենք պարտինք հաւատալ։ ամէն ինչ որ ատ գիրքին մէջը մեզի կը պատուիրէ ընել՝ մենք պարտինք ընել անիկայ։ Բայ որ մէկը Աստուծածաշունչին հակառակ հաւատար ունենայ կամ սորվեցունէ կամ քարոզէ կամ գործէ, անիկայ սիսալ կը հաւատայ և կը սորվեցունէ ու կը քարոզէ և կը գործէ։ Եւ ամէն մէկ զգացումներուն և գործերուն ուղղող կամ սիսալ ըլլալը Աստուծածաշունչը պիտի քննուի։

(2. Իայց ի՞նչ օգուտ պիտի ընէ մեզի աս Գիրքը, թէ որ մենք զգուշութեամբ անոր չհետեինք ու անկից ընդունելու խրատներուն պատեհութիւնները անհոգութեամբ կորսնցունենք։ “Գիրքերը քննեցէք” կը պատուիրէ մեզի Փրկիչը։ Փրկութեան ճամբան թէպէտեայնչափ դիւրին ու պայծառ է Աստուծածաշունչին մէջ՝ ու պղոտիկ տղաքներն ալ կրնան սորվիլ, բայց Աստուծածաշունչը իր բարձրութիւնովն ու խորունկութիւնովը բոլոր գիտութիւններէն գերազանց է։ Բայ որ մարդիկ բոլոր իրենց կեանքերնուն մէջ անոր հետեին, թէ որ մինչև մերջին կէտը անոր պարապին, տակաւին անոր մէջը սորվելու բաներ կը մնան։ Ե՞ն գիրքը Աստուծոյ Գիրքն է։

Իայց աս Ասուրը Գիրքը կարդալու ժամանակնիս՝ պէտք է որ խօսարհութեամբ և հեղութեամբ ընդունինք ինչ որ մեզի կը սորվեցունէ, թէ չէ անօգուտ կ'ըլլայ մեր կարդալը։

Դ . ՃՇմարիս քրիստոնեաները որչափ որ կ'ապրին՝
այնչափ աւ իրենց սէրը կ'աւելնայ Եստուածաշունչին
վրայ : Ատզ . ՃԺԾ . 97-104 ևայն : Եւ որչափ երկար
որ ապրին , այնչափ աւելի կը զան իրենց ունեցած Առւրբ
Ճողիին կարօտութիւնը որ կարող ըլլան Առւրբ Գիրքը
իմանալու ու անոր կազանդելու :

Ե . Եւ գիտնալով հիմա՝ որ կորսուած մարդիկը միայն
Եստուածաշունչով Փրկութիւն կը դանեն , կը ֆափարին
որ ամէն մարդիկ ան Աննաց Գիրքը ունենան , ու կը ջա-
նան որ անիկայ ամէն ազաց մէջ տարածեն :

Մշոնք՝ որ իրենց պէս եղբայրները Եստուածաշունչ կար-
դալէն կը զրկեն , Եստուծոյ ու մարդոց թշնամինեն են .
Քանզի Եստուածաշունչը իրաւունքով ամէն մարդու կը
վերաբերի . ու բոլոր աշխարհի համար գրուեցաւ :

Զ . Ենոնք որ Եստուածաշունչը Եստուծոյ խօսքը ըլլալ
չեն ընդունիր , հապա ծաղը կ'ընեն անիկայ , և չեն պա-
րապիր անոր ընթերցմանը , չեն հաւատար , չեն կազան-
դիր անոր , ամէն ասոնք՝ թէ որ աս ըրածներնուն վրայ
շապաշխարեն՝ պիտի կորսուին յաւիտեան :

4 . Առւրբ Ճողիին ով ըլլալը :

Յօհ . ԺԷ . 15-31 :

Հ . Ո՞վ է Առւրբ Ճողին :

Պ . Ենիկայ Եստուած է . ինչպէս որ կը խոստովանիք
Եմնասուրբ Խրորդութիւնը , Ճայր՝ Արդի՝ և Առւրբ
Ճողի , իրեկ անձն ու մէկ Եստուած :

Հ . Ի՞նչպէս զիտէք թէ ինք Եստուած է

Պ . Եստուածաշունչին մէջ անիկայ Եստուած կը կո-
չուի : Գործ . Ե . 3 , 4 : բ ՏԵ . գ . 16 :

Հ . Կրիստոնէական մկրտութիւնը որմւ անունով կը
կատարուի :

Պ . Եալպէս Հօրը ու Որդիին անունովը՝ անանկ ալ Առւրբ Հոգիին անունովը։ Մատի . իշ . 19 :

Հ . Ժաղովուրդը եկեղեցին արձակուելուն յնչև Կ'ըստի իրենց :

Պ . “Տէր Յիսուս Քրիստոսի շորհցը՝ և Աստուծոյ սէրը՝ ու Հոգւոյն Արքոյ Հաղորդութիւնը ձեր ամենուն հետք ըլլայ . Ամէն” : ք Արդի . ժդ . 13 :

Հ . Աստուած միայն գիտէ ամէն բաները . Առւրբ Հոգին ալ գիտէ՞ ամէն բաները :

Պ . Հրամերես . “Հոգին ամէն բան կը քննէ , Աստուծոյ խորունկ բաներն ալ” : ա Արդի . ք . 10 :

Հ . Աստուած միայն գիտէ գալու բաները . Առւրբ Հոգին ալ գիտէ՞ .

Պ . Հրամերես :

Երբոր Բնքը՝ Ճշմարտութեան Հոգին գայ , ամէն Ճըշմարտութեան պիտի առաջնորդէ ձեզ . ինչու որ չէ թէ Բնքիրմէն պիտի խօսի , հապա ինչ որ լւէ՝ պիտի խօսի , ու գալիքները ձեզի պիտի պատմէ : Քօհ . ժդ . 13 : Եսայ . Խէ . 9 , 10 :

Հ . Աստուած միայն ներկայ է ամէն տեղ . Առւրբ Հոգին ալ ամէն տեղ ներկայ է :

Պ . Հրամերես :

Ուր երթամ քու Հոգիէդ , և քու երեսէդ Թւր փախչիմ : Թէ որ երկինքը ելլեմ , դուն հոն ես , թէ որ դժոխքը անկողինս ընեմ , ահա դուն հոն ես : Յմէ որ արշալոյսին թեերը առնեմ , և ծովուն վերջի ծայրերը բնակիմ , հոն ալ քու ձեռքդ ինծի պիտի առաջնորդէ , և քու աջ ձեռքդ զիս պիտի բռնէ : Ատպ . Ճ.թ . 7-10 :

Հ . Աստուած միայն Վմենակարող զօրութիւն ունի . Առւրբ Հոգին ալ Վմենակարող զօրութիւն ունի՞ :

Պ . Հրամերես . քանզի Վոաքեաները անոր զօրու-

թիւնովն ամէն տեսակ հրաշագործութիւններն ըրին : ա
կորմ . ժք . 8-11 : Եբբ . ք . 4 : Գարդ . ք . 4 , և
այլն :

Հ . Ո՞րն է ան մեղքը որն որ Կատուած բնաւ պիտի
շներէ ոչ աս աշխարհիս մէջ և ոչ գալու աշխարհին մէջք :

Պ . Առւրբ Հոգին դէմ եղած հայհոգութիւնը :
Մատու . ժք . 24-32 : Լուս . ժք . 10 : Արք . գ .
22-30 :

Առւրբ Հոգին՝ որ կը փոխէ մեր սիրաերը՝ մեզ ՚Քրիս-
տոսին կը քաջէ , ու Երկրագին համար կը պատրաստէ՝
ճշմարիտ Կատուած է , երկրպագելի Երրորդութեան եր-
րորդ անձը :

Ե . Ուստի մենք վախնալու՝ սիրելու՝ երկրպագութիւն
ընելու ու ծառայելու ենք իրեն Կատուծոյ պէս : Ենքն է
Կատուծոյ ՚Քրիստին հեղինակը , ու ինք աս գիրքին մէջք
մեզի յայտնեց ամէն եղածներն ու գալիքները մինչեւ աս
աշխարհիս վերջը , ան ամէն բաները՝ որ մենք պարտինք
հաւատալ ու ընել մեր գրկութեանը համար : Ենքն է որ
Արագարէներուն ու Եռաքեալներուն ձեռքովը զօրաւոր
հրաշքներ գործեց : Ենքն է որ աշխարհի ամէն կողմերը
ներկայ է մի և նոյն բուգէին մարդոց մեղքերը յանդիմնե-
լով , անոնց սիրտերը փոխելով , անոնք դէպ'ի ՚Քրիստոս
առաջնորդելով , ՚Քրիստոսնեաններուն սրտին մէջ բնակե-
լով ու անոնք սրբելով , Պաշտօնեաններ որոշելով ու ա-
նոնց խօսել տալով , և եկեղեցիներուն հոգ տանելով :

Ի . Եր սեպհական գործն է մարդոց սիրտերը փոխել
ու սրբել : Անք չենք կրնար փոխել բուն մեր սիրտերը ,
ինչու որ բոլորովին մենք չար ենք , ու մեր սիրտերը միշտ
չարութիւն ընելու պատրաստ են : Անք զգալով մեր
տկարութիւնն ու չարութիւնը՝ պարտինք Երեն երթալ
ձիւդ աս գիտաւորութեամբ : Եշխարհիս դէպ'ի ՚Քրիստոս
դառնալու բոլոր յոյսերը՝ Կատուծոյ Հոգին շնորհէն
կախում ունին :

Գ . Մենք ամէն պէտք եղածն ընելու ենք Առւրբ և ու-
գին հրաւիրելու , որ զայ մեր սիրու բնակի , միանգա-
մայն հեռու կենացով ան ամէն բաներէն՝ որ զինքը մեզմէ
կը հեռացունեն : Արբելի է որ ինքն իր սրբազնն ներդոր-
ծութիւնը մեր սիրտերէն դադրեցունէ , կարելի է որ ինքը
վշտանայ ու մեզմէ մէկ դի քաշուի յաւիտեան : Ուրեմն
շուրանանք իր Աստուածութիւնն ու իր ամենակարող զօ-
րութիւնը . երդում չընենք իր Արբազնասուրը անունո-
վը , չանարդենք իր սուրբ Խօսքը՝ իր պաշտօնեաները և իր
ժողովուրդը : Իր կամքին դէմ եղածը չընենք , ինչու որ
չկրնար բնաւ մէկ կերպով մը մեղքին հետ հաղորդութիւն
ունենալ :

Դ . Խնքը բարեգութ ու երկայնամիտ է դէպի ամէն
մարդիկ : Բնակ որ ինքը մարդասէր ու երկայնամիտ չըլլար ,
բնաւ չէր բնակեր աս գէշ աշխարհիս մէջը , բնաւ չէր
բնակեր մարդոց սրտին պես ապականեալ տեղ մը : Եւ
երբոր ինքը չնորհաց գործ մը սկսի մեր մէջը՝ թէպէտե
մենք շատ անգամ անոր կամքին դէմ կը կենանք , այսու
ամենայնիւ կը համբերէ և իր սկսած գործը չդադրեցունե-
լով՝ շարունակ յառաջ կը տանի մինչև վերջին կէտը :
Խնքը Ընորհաց ձոդի է . ճիշդ անանկ ձոդի՝ որուն
մեղաւորները կը կարօտին :

Ե . Ճ' շմարիտ Քրիստոնեան ինչպէս զօրաւոր և ինչ-
պէս երջանիկ է : Խնոր ձայրը Աստուած է . անոր Փըր-
կիչը Աստուած է . և անոր Արքարարն ալ՝ Աստուած է .
“ Բնակ որ Աստուած մեր կողմն ըլլայ , ճՎ պիտի ըլլայ
մեզի հակառակ ” :

Զ . Խայց շարերն ու անգեղջները՝ անզօր ու թշուա-
ռական են . անոնք ոչ Երկնաւոր ձայր ունին , ոչ պա-
տուական Փրկիչ , ոչ ալ բարեգութ Արքարար : Անոնք՝
ձօր և Որդւց և Ճոգւղյն Արքոյ հակառակ են . և Ճայ-
րը՝ Որդին և Սուրբ Ճոդին ալ անոնց հակառակ է : Աս-
տուածմէ մեզի համար նախապատրաստուած մեծ Փրկու-
թենէն անոնք մասն ու բաժին ըւնին :

Հ. ՄԵՇԱՌԵՎՈՅԻ ՎՐԵՅ :

1. Արամինին մեռնելուն վրայ :

(Յահ. ժամ. 1-44 :

Հ. Խօնչ է պատճառը՝ որ մենք ամենքս կը մեռնինք :

Պ. Քանզի մենք ամենքս աշղաւոր ենք : «Օմատ».

Բ. 17 : Ոտղ. Ճթ. 48 : Հառվ. Ե. 12 :

Հ. Ըստ որ բնաւ մեղք մը լըլլար աշխարհի մէջ, մահ պիտի ըլլամբ :

Պ. Չէ :

Քանզի մեղաց վարձքը մահ է . բայց Աստուծոյ ճրի պարգևը յաւիտենական կեանք՝ մեր Տէրոջը Յիսուս Քըրիստոսի ճեռքովը : Հառվ. կ. 23 :

Հ. Գիտէք որ ատեն պիտի մեռնիք :

Պ. Չէ . միայն Աստուած գիտէ ան ատենը

Ոնցունողը ու ողղացունողը, գերեզմանը իջեցունողը ու վեր հանողը Տէրն է : ան թառք . բ. 6, 7 : Որ ամեն ապրողին անձը՝ ու բոլը մարդկային մարմնոյ հոգին անոր մեռքն է : Յակ. ժթ. 10 : Երբոր քու երեսդ կը ծածկես, կը խոռվին : Երբոր անոնց հոգին կ'առնես, կը մեռնին, և իրենց հողը կը դառնան : Ոտղ. Ճթ. 29 :

Հ. Գիտէք արդեօք թէ ի՞նչ տեսակ մահուամբ պիտի մեռնիք :

Պ. Չէ, միայն Աստուած գիտէ ան :

Հ. Ոնք ընդհանրապէս աս աշխարհիս մէջ շմատ կապրինք՝ թէ քիչ :

Պ. Կիչ . ժամանակ :

Հօնչ է մեր կեանքը . յիրաւի շոգի մըն է, որ քիչ մը

առեն կ'երևայ , ու ետքը կ'ոչնամայ : Յաէ . է . 14 ,
15 : Վասն զի ամէն մարմին խոտի պէս է , և մարդուն
բոլոր փառաւորութիւնը խոտի ծաղկի պէս . խոտը կը
շրնայ , ու անոր ծաղկեց կը թափթափի : ա Պիտ . ա .
24 : Յոք . ժգ . 1 , 2 : Առաջ . զ . 5 . լիթ . 5 :

Ն . Անը տեսած ամենէն ծեր անձինքը քանի՞ տարե-
կանի չափ կան :

Պ . Խօթանասուն կամ ութսուն տարեկանի չափ :
Անը տարիներուն օրերը եօթանասուն տարի են . ու թէ
որ գօրութիւնով ութսուն տարի ըլլան , տակաւին անոնց
փառքը աշխատանք ու ցաւ է . ինչու որ անոնք շուտով
կ'անցնին , ու մենք կը թռչնիք : Առաջ . զ . 10 :

Ն . Թքհեղեղէն առաջ մարդիկ քանի՞ տարի կ'ապ-
րէին :

Պ . Աւթը կամ ինը հարիւր տարի :
Ն . Եստուածաշունչին մէջ ըսուած ամենէն ծեր մարդը
մէջ էր :

Պ . Անթուապալայ : Կյանք . ե . 1-32 :
Ն . Ենչիւ Եստուած կարճեցուց մարդկային կեանքը :
Պ . Արդոց մեղքին համար :
Ն . Երկու բարի մարդկի կային , որոնք ընաւ չմեռան .
Եստուած անոնք աշխարհքէն դուրս հանեց և Երկինք տա-
րաւ : Ի՞նչ էին անոնց անունները :

Պ . Ենովք և Եղիշա : Կյանք . ե . 24 : Երբ . ժամ .
5 : դ Ժամէ . բ . 11 :

Ն . Երբոր մարդ մը մեռնի , ի՞նչ կ'ընենք անոր մար-
դինը :

Պ . Հողին մէջը կը թաղենք անիկայ :
Ն . Ետքը ի՞նչ կ'ըլլայ ան մարմինը :
Պ . Հող կը դառնայ :
Ն . Եղամը մեղանչելէն ետև՝ Եստուած ի՞նչ ըսաւ :

Պ. "Հող եր գուն և հող պիտի դառնաս." :
Շնոր. է. 19 :

Հ. Առսկալիք բան մըն է մեռնիլը , թվ կրնայ միր-
թարել մեզ խաղաղութեամբ մեռնելը :

Պ. Եստուած :

Ուր է , ով մահ՝ քու խայթոցդ , թւր է , ով գերեզ-
ման , քու յաղթութիւնդ : Իսոց գոհութիւն Կասուածոյ ,
որ մեզի յաղթութիւն կու տայ մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսի ձեռքովը : ա Կորնլ . ժե . 55 , 57 : Ծանկան վայ
գալով՝ բարձրաձայն աղաղակեց , Տէր՝ աս մեղքը մի' սե-
պեր ատոնց . և աս ընելով՝ ննջեց : Գարդ . է . 59 : Եւ
թէ որ երթամ ու ձեզի տեղ պատրաստեմ , նորէն կու
դամ՝ և ձեզ քովս կ'առնեմ . որպէս զի ուր որ ես եմ՝
Դուք ալ հոն ըլլաք : Յօհ . Ժի . 3 :

Հ. Խոչ կերպ մահով մեռնելու պարտինք փափաքիլ :

Պ. "Յակորին փոշին թվ կրնայ համրել , և Խարյու-
լին քառորդը թվ կրնայ հաշուել . թուլ իմ անձս արդար-
ներուն մահովը մեռնի , ու իմ վախճանս անոնց կափճանին
պէս ըլլայ " : Օճառոց իի . 10 :

Հ. Որովհետև մեր մեռնելուն ժամանակը կամ ի՞նչ
մահով մեռնելիս չենք գիտեր , միշտ ի՞նչպէս ապրիլ
պարտինք :

Պ. Միշտ մահուան պատրաստ ըլլալով :

Հ. Խոչ կ'ըսէ Յիսուս Փրկիչը ասոր վրայով :

Պ. "Դուք ալ պատրաստ կեցեք , քանզի Որդին մար-
դոյ կու գայ անանկ ժամու մեջ՝ որ դուք չեք կարծեր " :
Դասէ . Ժի . 40 :

նոյ : Մահը թագաւորեց մարդոց վրայ Նուամէն մինչև առ օրս , և պիտի թագաւորէ մինչև վերջն օրն ալ :

Ե . Ես բաներէն կը սորվինք թէ ի՞նչ գէշ ու լեզի բան մըն է մեղքը . մահը և բոլոր վայերը անիկայ բերաւ մեր ամենուս վրայ . թէ որ մեղք ըլլար , մահ ալ պիտի ըրլար , մեղքն ու մահը իրարու հետ կապուած են :

Ի . Դուք մեռնելու համար ծնած էք : “ Հող Եր դուն , ու հող պիտի դառնաս ” կ'ըսէ Եմինակարողը : Ուրեմն մի՛ հպարտանաք ձեր անձին գեղեցիութեանը կամ զօրութեանը կամ առողջութեանը վրայ : Այ՛ Հազանդիք ատ մարմինին ցանկութիւններուն : Մարմինը ուրիշ բան չէ բայց միայն հող . խոնարհ և խորհրդածու եղիք մահուան վրայ :

Գ . Չեք գիտեր թէ ե՛րք պիտի մեռնիք . կարելի է մահը ենզ յափշտակէ տարիէ մը ետքը , կամ թէ ամիսէ մը ետքը , կամ թէ գալ շաբթու , կամ վաղը և կամ գուցէ այսօր : Այսելի է որ մեծութեան հասակնուդ հասնիք , և կամ տղայութեան ժամանակնիդ մեռնիք : Գացէք գերեզմաննատունը , ու հոն պիտի գտնէք պիտի տղայոց գերեզմաններ՝ ինտոր նաև պատանիներու՝ և մեծ մարդոց գերեզմաններ : Այսակէն աւելի փոփոխական բան մը չկայ : Ալղուան վրայ դուք ենզմէ մի՛ պարծիք , ըսելը թէ վաղը աս կամ ան բանը ընենք . գալ տարի հոս կամ հոն պիտի երթանք : Յատ . դ . 13 , 14 : ‘ Դուք միշտ զգալու և ըսելու էք “ Ճաէ որ Տէրը կամենայ ” ու ապրինք , աս կամ ան բան ընենք ’ :

Դ . Չեք ալ գիտեր թէ ի՞նչ մահով պիտի մեռնիք : Հազար կերպ ճամբաններ կան մեռնելու . մահը մեր բոլորտիքը և մեր մէջն է . միշտ միտքերնիդ բերէք որ ձեր կեանքը Եստուծոյ մեռն է , և ինքը կրնայ երկընցունել կամ կարծեցունել անիկայ , որ ատեն կամ ի՞նչ կերպով որ ինքը հաճի :

Ե . Ուրեմն թող ձեր կեանքին մեծ գործը ըլլալը : Կանզի ձեր մահուան ատենը պիտի չսեպէք թէ ձեր ըրած պատրաստութիւնները շատ են : Եւ թէ որ առաջուց սկսած չէք , հիմա սկսեցէք պատրաստուիլ : Այսպերնիդ բերէք ան ժամե-

բԸ՝ որ արդեն կրտսընցուցած էք • և ան վտանգը՝ որուն
մեր հոգիները մինչև հիմա ենթակայ եղած են : Առն
զարմանք չե՞ որ դուք մինչև հիմա մահուանէ ազատ մնա-
ցեր էք, ու յաւիտենական թշուառութեանը չէք խըր-
կուեր : Ուրեմն ձեր հոգիին փրկութիւնը մահուան օրին
մի՛ թողուք, ինչու որ ասանկ ընելը մեծագոյն շարութիւն և
յիմարութիւն է : Զեր ամենէն աղեկ ժամանակը ամենալաւ-
բաներու հետեւով անցուցէք : Եւ թէ որ միամիտ սրտիւ
ապաշխարէք ու Յիսուսին հաւատաք և իրեն ծառայեցու-
համար ապրիք . դուք պիտի պատրաստ ըլլաք մահուան
համար, և Խատուծոյ շորհքովը մահը ձեզ պիտի ըմբայ
վախցունել :

2. Հոգին ի՞նչ կ'ըլլայ երբոր մարմինը մեռնի :

'Լուսութեան 19-31 :

Ն. Երբոր մարմինը մեռնի՝ ի՞նչ կ'ըլլայ հոգին :

Պ. Եւ Եսուսուած կ'երթայ :

Ն. Ինչի՞ւ առ Եսուսուած կ'երթայ :

Պ. Որ Եսուսուած անոր գործքերուն համեմատ դատէ
անիկայ, կամ Երկինք ընդունելով, և կամ Դաժոխք
խրկելով :

Ն. Ուրեմն բարի մարդը մեռածին պէս Երջանիկ կ'ըլ-
լայ արդեք Երկնից մէջ :

Պ. Հրամերես :

Ն. Դուք ի՞նչպէս գիտէք աս :

Պ. Եսուսուածաշունչին :

Ու եղաւ որ ան աղբատը մեռաւ, ու հրեշտակները
Երրահամին գողը տարին զանիկայ . հարուստն ալ մեռաւ
ու թաղուեցաւ : 'Լուսութեան 22 : Եմ Հօրս տունը
շատ բնակարաններ կան . ապա թէ ոչ՝ ես ձեզի պիտի
ըսէի . ճիշտ կ'երթամ ու ձեզի տեղ կը պատրաստեմ :
Եւ թէ որ երթամ ու ձեզի տեղ պատրաստեմ, նորէն

կու գամ՝ և ձեզ քովս կ'առնեմ։ որպէս զի ուր որ ես
եմ՝ դուք ալ հռ ըլլաք։ Յօհ. ժկ. 2, 3 :

Հ. • Ո՞չ Փրկիւք խաչին վրայ ի՞նչ ըստ աւազակին։

Պ. • “Դուք այսօր իմ հետո ‘Դրախտին մէջք պիտի
ըլլաք’”։ Ղում. իկ. 43 : Գործ. է. 58 :

Հ. • Գէշ մարդ մը մեռածին պէս թւր կ'երթայ։

Պ. • Դժոխք :

Հ. • Անծատումը մեռնելէն և թաղուելէն ետքը տան-
քանքի մէջ ըլլալով՝ Թւր բացաւ իր աշքերը

Պ. • Դժոխքին մէջը։ Ղում. ժկ. 23 :

Հ. • Ծուռան ինքզինքը կախելէն ետքը Թւր գնաց։

Պ. • “Իր տեղը”։ Գործ. ա. 25 : Յօհ. ժէ. 12 :

Հ. • Ուրեմն մենք մեռածնուա պէս, մեր հոգիները Թւր
պիտի գտուին։

Պ. • Կամ Երկինքը, կամ Դժոխքին մէջ։

Անհով՝ հոգին մարմինէն բաժնուած կը մնայ մինչև .
Յարութեան օրը։ Անրմինը երկրի մէջ կը թաղուի և
հող կը դառնայ. և հոգին առ Աստուած կ'երթայ ու կը
դատուի. և անոր վարքին համեմատ կամ Երկնից մէջ
կ'ընդունուի, կամ Դժոխք կը իրկուի։

Ե. • Ես ներկայ կեանքն է միայն Ընորհաց օրը։ Ձեւ
որ շապաշխարենք և Ծիսուս Կիրխոսով չշաւատանք քանի
որ աս աշխարհիս վրայ ենք, մենք յաւիտեան կորսուած
ենք։ Հոգին փրկելու համար պատեհութիւն չկայ մէկալ
աշխարհին մէջ։ Անհէն ետև դատաստան կու գայ։
“Եսայօր թէ որ անոր ձայնին պիտի լւէք, ձեր սիրտերը
մի՛ խստացունեք”։ Եհով ու դողով աղէկ մոմնացէք
մահին վրայ՝ ու անոր համար պէտք եղած պատրաստու-
թիւնը տեսէք։ Երդ՝ Թրչափ պատուական է աս ժամա-
նակաւոր կեանքս, որ անոր աղէկ գործածուելէն կախում
ունի մեր յաւիտենական երջանկութիւնը։

Ի. • Երդարները շատ մօտ են Երկինքին և բոլոր անոր

երջանկութիւններուն մէջը մտնելու : Խնդրու որ իսկոյն իրենք մեռած կէտին՝ Քրիստոսի հետը կ'ըլլան երկինքը : Ո՞հ , անոնք ի՞նչ մեծ իրաւունք ունին ուրախանալու : Կանզի մանք է ճշմարիտ հաւատացեալներուն մեծ շահը : Փիլի . ա . 21 : « Ոլէոք է որ անոնք հաւատարմութեամբ բարի ընեն բոլոր մարդոց՝ ինչպէս որ պատեհութիւն ունին . և որ յօժարութեամբ համբերեն աս կեանքին նեղութիւններուն , փորձութիւններուն , վիշտերուն և աշխատութիւններուն՝ գիտնալով թէ իրենց ժամանակը կարճ է , և թէ մահը շատ շանցած իրենց վարձքին և իրենց հանգստութեանը պիտի հասցունէ : » Պատ . ժք . 35-40 :

Պ . Զարերը շատ մօտ են ՚իժոփիքին և բոլոր անոր տանջանքներուն մէջը մտնելու : Օխէ որ անոնք այսօր մեռնելու ըլլային , այսօր անոնք իրենց աչքերը տանջանքներուն մէջը պիտի բանային : Ո՞հ , ի՞նչ մեծ իրաւունք ունին շարերը իրենց վիճակին մէջը դողալու , իրենց մեղքերը և յիմարութիւնները մէկ դի ճգելու և ինքզինքնին ապաշխարութեան և աղօթքի տալու , որ գուցէ Վատուածներէ անոնց Ծխուսի համար . քանզի ոչ սյլ ինչ , բայց միայն Վատուածոյ ողորմութիւնը կընայ պահել անոնք կորըստեան անդունդէն :

Ժ . ՅԵՐԱՆԻԹԱԼԵՐՆ ԱՐՅՈ :

ա Արդին . ժե . 1-58 :

Հ . Մեր մարմինները՝ որ իրենց գերեզմաններուն մէջը հող կը դառնան , հոն մնալիւ են . և բնաւ մէյմըն ալ տեսնելու կամ լսելու չե՞ն :

Պ . Ձէ՛ . անոնք նորէն ապրելու համար յարութիւն պիտի առնեն :

Հ . Ի՞նչպէս գիտենք աս բանը :

Պ . Կանզի այսպէս կը կարդանք Վատուածաշունչին մէջը . զորօրինակ՝ ա Արդին . ժե . և ա թափու . դ գլուխ :

Հ . Անր մարմինները Ի՞րբ յարութիւն պիտի առանեն :

Պ . Դատաստանին օրը :

Հ . Ո՞վ պիտի յարուցանէ անոնք :

Պ . Տէր Յիսուս Քրիստոս : Յօհ . Ժա . 25 :

Հ . Ի՞նչ կ'ըսէ Առորք Գիրքը յարութեան վրայով :

Պ . “ Ենչու որ ժամանակ պիտի գայ՝ որ բոլոր գերեզմաններու մէջ եղղները անոր ճայնը պիտի լսեն , ու դուքս պիտի գան . անոնք որ բարի գործեր են , կենաց յարութեան համար , և անոնք որ չար գործեր են , դատապարտութեան յարութեան համար ” : Յօհ . Է , 28 , 29 :

Հ . Ո՞վ ամենէն առաջ մեռելներէն յարութիւն առաւ ու նորէն շմբուաւ :

Պ . Տէր Յիսուս Քրիստոս :

Հ . Ենոր մեռելներէն յարութիւն առնելը մեզի աւ վկայութիւն կու տամյ արդեօք՝ թէ մենք աւ յարութիւն պիտի առնենք :

Պ . Եյս . քանզի Առորք Գիրքը կ'ըսէ :

Եւ թէ որ Քրիստոս յարութիւն առած չէ , ուրեմն մեր քարոզութիւնը պարապ է , ու մեր հաւատքն աւ պարապ է . և մենք աւ Խստուծոյ սուր վկաները գտնուած կ'ըլլանք . որովհետեւ Խստուծոյ համար վկայութիւն տուինք , թէ Խնքը մաւենաբերէն յարուց Քրիստոսը . որ իրաւ զարուց անիկայ , թէ որ մեռելները յարութիւն չեն առներ . քանզի թէ որ մեռելները յարութիւն չեն առներ , Քրիստոս աւ յարութիւն առած չէ : Եւ թէ որ Քրիստոս յարութիւն առած չէ , մեր հաւատքը պարապ է , ու տակաւին մեր մեղքերուն մեջն էք : ա Կորնի . Ժե .

14-17 :

Հ . Ինչց մեր մարմինները չիլց մեր հիմակուան միս ու արիւն ունեցող մարմիններուն պէօս պիտի ըլլան , որ

ուտելու և խմելու և հանգերձի կը կարօտին , և որ կը հիւանդանան և կը չարչարուին ու կը մեռնին :

Պ . ՇԵ . անոնք պիտի փոխուին փառաւոր ու պանչելի կերպով մը :

Քանզի երբոր մեռելներէն յարութիւն առնեն , ոչ կնիկ կ'առնեն , և ոչ երկան կը տրուին . Հապա երկինքի հրեշտակներուն պէս են : Առաք . ժք . 25 : Որովհետև ալ չեն կընար մեռնիլ . քանզի հրեշտակներուն հաւասար են , ու Ըստուծոյ որդիք են . ինչու որ յարութեան որդիք են : Ղուք . ի . 36 : Ըստակ ալ է մեռելոց յարութիւնը . Խարին ապականութիւնով կը սերմանուի , ու անապականութիւնով յարութիւն կ'առնէ . անարգութիւնով կը սերմանուի , ու փառքով յարութիւն կ'առնէ . տկարութիւնով կը սերմանուի , ու զօրութիւնով յարութիւն կ'առնէ . կը սերմանուի շնչաւոր մարմին , և յարութիւն կ'առնէ հոգեոր մարմին . շնչաւոր մարմին կայ , հոգեոր մարմին ալ կայ : Ասան զի պէտք է որ աս ապականացու Խարին անապականութիւն հագնի , ու աս մահկանացու անմահութիւն հագնի : ան կանոնի . ժէ . 42-44 , 53 :

Հ . ՄԵՐ յարութիւն առած մարմինները որմէն մարմինին պիտի նմանին :

Պ . Կրիստոսի փառաւորեալ մարմինին :

Առջի մարդը երկրէն է հողեղէն . բայց երկրորդ մարդը՝ Տէր է երկինքէն : Խու խսոր որ հողեղէնին կերպարանքը հագեր ենք , երկնաւորին կերպարանքն ալ պիտի հագնինք : ան կորնի . ժե . 47 , 49 : Որ պիտի նորոգէ մեր խոնարհ մարմինը՝ իր փառաւոր մարմինին կերպարանակից ըլլալու , ան զօրութիւնովը՝ որ կարող է ամէնը իր տակը կազանդեցունելու : Ժիշու . գ . 21 : Տես նաև Առաք . ժէ . 1 , 2 : Ծայր . ան . 12-16 :

Հ . Առորբ Հոգուցն ազգեցութեամբը Բնչպէս կը պատմէ Պօղոս կենդանիներուն փոխուիլը և մեռելներուն յարութիւն առնելը :

Պ . “Եհա ձեզի խորհուրդ մը կը զբուցեմ . Եմէնքս պիտի շննինք , բայց ամէնքս ալ պիտի փոխուինք , յանկարծակի աչք գոցել բանալու մէջ՝ վերջին փողին հնչուելու առենը . որովհետեւ փողը պիտի կը լուրի , ու մեռելները յարութիւն պիտի առնեն առանց ապականութեան . և մենք ալ պիտի փոխուինք : Ա ասն զի պէտք է որ աս ապականացու նորին անապականութիւնն հագնի , ու աս մահականացուն անմահութիւնն հագնի” : ա Արդին . ժԷ . 51-53 :

Հ . Ե՞նչ կ'ըսէ նաև Յօհանաղոնիկեցւոց թղթոյն մէջ :

Պ . “Յօէ որ կը հաւատանք թէ Ծիսուած ննջեցեալները Ծիսուով պիտի բերէ անոր հետ : Ա ասն զի աս կը զբուցենք ձեզի Տէրոջը խօսքովը , թէ մենք որ մինչև Տէրոջը գալուատը ողջ կը մնանք , բնաւ ննջեցեալներէն առաջ պիտի չանցնինք : Ինչւ որ ննիքը Տէրը ազդարարութեան հրամանով՝ հրեշտակապետին ձայնովը ու Աստուծոյ փողովը երկինքէն պիտի իջնէ , և Քրիստոսով մեռածները առաջ յարութիւն պիտի առնեն : Խարքը մենք ալ որ ողջ մնացած ենք՝ անոնցմով մէկ տեղ պիտի յափշտակուինք ամպերով Տէրոջը առջեր ելլելու օդին մէջը . և անանկ յաւիտեան Տէրոջը հետ պիտի ըլլանք : Ուստի մէկզմէկ միսիթարեցէք աս խօսքերով” : ա Յօէն . դ . 13-17

Յօէպէտ և մեր մարմինները կը մեռնին և հող կը դառնան , բայց վերջին մեծ օրը նորէն յարութիւն պիտի առնեն Տէր Ծիսուս Քրիստոս մեր Ամենակարող Փրկիչով :

Խւ ինչպէս որ ինքը մեռեներէն յարութիւն առաւ , այնպէս ալ մենք պիտի առնենք :

Ա . Ես վարդապետութիւնը կը սորվեցունէ մեզի , որ մեր մարմինները Տէրոջն են . և թէ անոնք թանկագին են . մենք անոնք սուրբ պահէլու ենք իրեն ծառայելու համար : Ո՞ւր պարտին է անոնց առողջութեանն ու զօրութեանը և մարութեանը համար հոգ տանիլ . և միշտ մեր հանդերձն ալ մաքուր պահէլ որչափ որ կընակք : Ո՞ւր պարտին է մեր անձը մաքուր պահէլ պոռնկութենէն , չնութենէն , որկրամութենէն , գիտովութենէն և ամէն մեղքերէն : ան կորին . կ . 9-20 : ան մատի . կ . 7 : “ Կանզի գնով ծախու առնելցաք . ուստի փառաւորեցէք զԱստուած մեր մարմիններուն ու հոգիններուն մէջը , որ Եստուծոյ են ” : ան կորին . կ . 20 :

Բ . Ես վարդապետութիւնը կը վերցունէ մահուան երկիւղը և տրտմութիւնը : թէպէտ մենք կը մեռնինք , բայց պիտի ապրինք . թէպէտ մեր մարմիններէն կը հրաժարինք , բայց ոչ յաւիտեան : Յագ . ժիշ . 25 . 26 : Ենոնք որ ապականութեամբ սերմանուած են , անապականութեամբ յարութիւն պիտի առնեն . անպատուութեամբ սերմանուած են , փառքի մէջ յարութիւն պիտի առնեն . տկարութեամբ սերմանուած են , զօրութեամբ յարութիւն պիտի առնեն : Ենոնք շնչաւոր մարմիններով սերմանուած են , յարութիւն պիտի առնեն հոգեոր մարմիններով : Քրիստոսի փառաւոր մարմինն նմանած պիտի փոխուին :

Գ . Ես վարդապետութիւնը կը միսիթարէ մեզ մեր քրիստոնեայ ազգականներուն ու բարեկամններուն մահուանը վրայով : Ո՞ւր հօրը կամ մօրը , մեր էրկանը կամ մեր կնկանը , մեր տղուն կամ մեր աղջկանը , մեր եղբօրը կամ մեր քրոջը թաղման ատենք՝ անոնց ետևէն մինչև գերեզմանը երթարպվ՝ կընանք մոռմուալ ու ըսել , հիմա ասիկայ որ Կրիստոսի կը հաւատար՝ ուրիշն յաւիտեան երկինքին մէջը պիտի տեսնենք և սիրով պիտի գրկենք անիկայ նոյն մարմինով՝ աւելի գեղեցիկ ու փառաւոր եղած , որն որ այնքան շատ կը սիրէինք երբոր երկրի վրայ էր . թէպէտ հիմա կը բաժնուինք անկէ , բայց նորէն պիտի միաւորինք . անանկ միաւորութեամբ՝ որ յաւիտեան անբաժանելի է :

Դ . Ես վարդապետութիւնը կը սորվեցունէ մեզի թէ շարերուն մարմինները յարութիւն պիտի առնեն , միայն ասոր համար որ հոգիով ու մարմինով ՚Իժոկքը ձգութին յաւիտեան : Ե՞սոնց մէկզմէկ տեսնելը՝ տրտմութեան աշխարհին մէջ պիտի ըլլայ ու չէ թէ ուրախութեան : Եռնոնկ հոգիով ու մարմինով աս երկրիա մէջը մեղքին ծառայեցին , Եստուծոյ դէմ ապատամբելով : Ուրեմն ասկից ետքը անոնկ հոգիով ու մարմինով իրենց մեղքին ու ապրատամբութեան պատիժը պիտի քաշն . Բնտօր ան հարուատը որ առաջ իր կեանքը բազմածախ հանդէսով կ'անցունէր ամեն օր՝ ետքը իր պապակեալ լեզուն զովացունելու համար կաթիւ մը հուր կը ինսդրէր :

Ե . Ես վարդապետութիւնը կը սորվեցունէ մեզի որ Յիսուս ՚Քրիստոս մեր Տէրը ամենուն բաւական ամենակարող Փրկիչ մըն է : Խ՞նչ սոսկալի , և Բ՞նչ սարսափելի կերպով իր հրամանովը ծովն ու ցամաքը իրենց խորունկութիւնով գողալը՝ խկոյն իրենց մէջը եղած մեռելները գուրս կու տան : Խ՞նչ հիսանալի տեսարան՝ ուր երկիրը անթիւ բազմութիւնով ծածկուած՝ ամէն մարդիկ աչքերնին շխտակ դէպ'ի. ան մեծ լուսափայլ Ռժունին կը վերցունեն՝ ուր որ Յիսուս փառաց թագաւորը մեծ յաղթութիւնով կը նստի : Ե՞ս ատենը ՞Վ պիտի տարակուսի իր Եստուծած ըլլալուն վրայ : Մարդուն վերջին թշնամին որ պիտի խափանի՝ մակն է : Հոգին ու մարմինը երկուքն ալ ՚Քրիստոս ինքը կը փրկէ : Անկ իր մէջը բովանդակեալ ենք . Ենք կը յաղթէ մեղքին , մահուան և ՚Իժոկքին . երանի անոնց՝ որ իրենց յոյաը Ենոր վրայ կը դնեն :

Հ. ՔԵՏԵՍԵՆԵՒՄՆ ՎՐԵՅ :

Մատթ. իե 31-46

Հ. Գատաստանի համար սահմանուած յատուկ օր կայ :

Պ. Հըրամերես :

Խնչու որ ինքը (Աստուած) մէկ օր մը սահմանեց, որուն մէջ աշխարհս արդարութեամբ պիտի դատէ՝ ան մարդուն (Քրիստոսի) ձեռքովը : Գարդ . ժէ . 31 :

Հ. Ո՞վ Կրիստոսի ատեանը պիտի ելլայ :

Պ. “Ա ան զի ամենս ալ Կրիստոսի ատեանին առ Ձեւ պիտի կայնինք” : Հառվ . ժէ . 10 :

Հ. Գատաստանի օրուան երբ գալը ժվ դիտէ :

Պ. Այսայն Աստուած դիտէ :

Խակ ան օրուան և ան ժաման համար՝ մէկը լցիտեր ու ալ երկնից հրեշտակները, հազար միայն իմ Հայրս : Մատթ . իե . 36 :

Հ. Այս օրուան գալուն վրայ Առորբ Գիրքը Բօնչպէս կ'ըսէ :

Պ. “Գողի պէս պիտի գայ” : բ Պիտ . ժ . 10 : Գարդ . ա . 11 :

Հ. Երբոր ատ օրը գայ, աշխարհը որո՞ւն դալը պիտի տեանէ ամներուն մէջ մեծ զօրութիւնով ու փառքով և Առորբ Հրեշտակները իրեն հետ :

Պ. Տէր Յիսուս Քրիստոսի գալը : Մատթ . իե . 31 : Մարտ . շ . 38 : բ Պիտ . ա . 7 : Յուդ . 14 :

Հ. Տէրը Բօնչպէս պիտի իջնէ Երկինքէն :

Պ. “Խնչու որ ինքը Տէրը ազգարարութեան հրամանով՝ հրեշտակապետին ձայնովը ու Աստուծոյ փողովը երկինքէն պիտի իջնայ” : ա Պիտ . ժ . 15 :

Հ . Երբար փողը կը մոռալներն ու կենդանիները
Բ՞նչ պիտի ըլլան :

Պ . ԱԿռեալները յարութիւն պիտի առնեն և կենդա-
նիները պիտի փոխուին : Յօհ . Է . 27-29 : ա Կորնիլ .
ԺԷ . 51 , 52 :

Հ . Յարութեան օրը Բ՞նչ պիտի ըլլայ աս երկրիս :

Պ . “Տարեքները բռնկած պիտի լուծուին , երկրս
ալ՝ ու ինչ գործքեր որ անոր մէջք կը գտնուին” : բ
Պիտ . Ք . 10 : Յայտ . ի . 11 :

Հ . “Եորեն ըսէ՛ նայիմ , թէ Տէրոջը գալը Բ՞նչպէս
պիտի ըլլայ :

Պ . “Աակայն Տէրոջը օրը գողի պէս պիտի գայ , որ
ան ատենը երկինքը սաստիկ շառավիւնով պիտի անցնի ,
ու տարեքները բռնկած պիտի լուծուին , երկիրս ալ՝ ու
ինչ գործքեր որ անոր մէջք կը գտնուին” : բ Պիտ . Ք .
10 :

Հ . “Քրիստոս Բ՞նչ տեսակ աթոռի վրայ պիտի նստի
աշխարհը դատելու համար :

Պ . Աճձ ձերմակ աթոռի մը վրայ : Յայտ . ի . 11 :
Յայտ . ի . 31 :

Հ . Ո՞վ պիտի ժողվուի իր առջևը :

Պ . “Իուլը ազգերը” : Յայտ . ի . 32 : Յայտ .
ի . 12 :

Հ . Ե՛ս ատենը Բ՞նչ պիտի բացուի :

Պ . “Գիրքերը” :

Հ . Եշ ամէն մարդիկ Բ՞նչպէս պիտի դատուին :

Պ . Եմէն մէկը իրենց գործքերուն համեմատ : Հոռով .
ի . 16 : ա Կորնիլ . Ք . 5 : բ Կորնիլ . Է . 10 : Յայտ .
ի . 12 :

Հ . “Քրիստոս Արդարները Թը կողմը պիտի նստե-
ցունե :

Պ · Եր աշ կողմը : Ուստի . ին . 32 , 33 :

Ն · Եւ չարերը Բր կողմը պիտի նստեցունք :

Պ · Զախ կողմը :

Ն · Դաերն աշ հոն պիտի ըլլան , և պիտի դատութին :

Պ · Արամերես :

կերպով՝ ինչպէս որ կը վայլէ իիստ մեծ և փառաւորեալ
ու բարի Հոգիի մը՝ որ թէպէտ մեզի անտեսանելի է ,
բայց ամէն տեղ ներկայ է : Երրորդ՝ թէ մեր երկրպա-
գութեան մէջը մեր իր վրայ ունեցած բոլոր խորհուրդնե-
րուն՝ զգացումներուն և գործերուն մէջը , խոնարհ՝ ան-
կեղծ և երկիւղած ըլլալու ենք : Եր չորրորդ՝ թէ զգու-
շութեամբ և հաւատարմութեամբ սուրբ պահելու ենք
ժամանակին՝ առ բաժինը այսինքն Աիրակի օրը , որն որ
Լնքը հաձեցաւ բոլորովին Եր պաշտօնին համար զատել
ու սրբել :

Հինգերորդ Պատուիրանքը

Բ Խառնք • Ժ Հ • 1-33 :

Հ . Ո՞րն է Հինգերորդ Պատուիրանքը :

Պ . “Պատուե՛ ուու Հայր՝ ու Այսրդ . որ ուու օքերը
Երիտր ըլլան ան Երիքն կայ՝ որն որ ուու Տեր Աստուածդ
իսու գոյց Եղիք” :

Հ . Անը կեանքը որոնցմէջ կախում ունի աս աշխար-
հիս մէջ :

Պ . “Ա,ախ Աստուածմէ կախում ունի , և ապա մեր
Ճնողքներէն :

Հ . Ո՞վ են անոնք՝ որ երբոր մենք տակաւին պղտի
տղաքներ ըլլալով՝ ու չերնալով ինքնիրեննուս մեզի հոդ

տանիլ՝ մեզ կը հոդան՝ և մեր կանչութուտելուն և յիմաւրութիւններուն ու չարութիւններուն ալ կը համբերեն :

Պ . Անը Հայրը և Ապօք :

Հ . Եշ Թվ են անոնք՝ որ կը սիրեն մեզ խանդակաթսիրով, կը դարձանեն մեզ՝ երբոր մենք հիւանդ ըլլանք, կը պահպանեն մեզ կորստեան վտանգէն, և կը պատրաստեն կերակուր ու հանդերձ մեզի համար, և բարի կերպով կը կրթեն մեզ՝ աղօթելով մեզի համար և կը ջանան իմաստուն ու բարի տղաքներ ընելու մեզ :

Պ . Անը Հայրն ու Ապօք :

Հ . Ուրեմն Բօնչ պէտք է որ ընենք մեր ծնողացը, իրենց մեզի ըրած մնամեծ խնամքներուն փոխարէն :

Պ . Պարտինք խիստ մեծ սէր ունենալ անոնց վրայ :
Դեռ . Ժիշ . 3 :

Հ . Է՞նչ կ'ըսէ Ասուրը Գիրքը ասոր վրայով :

Պ . “Ենիծեալ ըլլայ ան՝ որ իր հօրը կամ մօրը դէմ հայհութիւն կ'ընէ” : Ք Օրին . իէ . 16 :

Հ . Զաւկըներն ամէն բանի մէջ պարտի՞ն իրենց ծնողացը ՝ վազանդիլ :

Պ . Այսո, անոնց ամէն հրամանին պարտին ՝ վազանդիլ՝ ան հրամաններէն ’ի զատ որոնք լուսուծոյ դէմ են :

Որդիք՝ ձեր ծնողացը ՝ վազանդ եղիք Տէրոջմով որ ան է արժանը : Խժէս . կ . 1 : Արդ . գ . 20 :

Հ . Աղողոմն Բօնչ կ'ըսէ ծնողաց ՝ վազանդելու վրայով :

Պ . “Որդեակ իմ՝ քու հօրդ խրատը մտիկ ըրէ, ու քու մօրդ օրէնքը մի մերժեր” : Աստիք . ա . 8 : “Որդեակ իմ՝ քու հօրդ պատուիրանքը պահէ, և քու մօրդ օրէնքը մի մերժեր” : Աստիք . կ . 20 : “Հնազանդութիւն ըրէ հօրդ՝ որ քեզ ծներ է, ու մի անարգեր քու մայրէ՝ երբոր կը պառւի” : Աստիք . իգ . 22 :

Հ . Ինաւ մեր ծնողացը հետ արհամարհանք կամ խարէութեամբ վարուելի՞ւ ենք :

Պ . Չէ , ոչ իրենց երեսին և ոչ իրենց ետևէն :

Հ . Վատուած Հրէից Բօնչ պատուիրեց ընել կամակոր ու ապատամբ զաւակի մը՝ որ իր հօրն ու մօրը չէր նազանդեր :

Պ . Պատուիրեց որ մինչեւ մեռնելը քարկոծեն : Երբ իա . 15-17 : Ղ. Լու . Է . 9 : ք Օքին . իա . 18-21 : Առաք . Է . 20 : իւ . 24 :

Հ . Այս Բօնչ պիտի ըլլայ անոր աչքը՝ որ ծաղը կ'ընէ իր հայրը , և իր մօրը նազանդիլը կ'անարդէ :

Պ . “Զորերուն ագռաւները պիտի փորեն , ու զանիկայ արծիւներուն ձագերը պիտի ուտեն” : Առաք . Է . 17 :

Հ . Կրթութեան ու խրատի կարօտ եղած ատեննիս որման երթալու ենք :

Պ . Ո՞ւր Հօրը և Ո՞օրը :

Հ . Պէտք չէ՞ մեզի որ երախտագէտ ըլլանք մեր ծնողացը՝ մեզի համար բոլոր իրենց ըրածնուն ու քաշած նեղութիւներուն համար :

Պ . Եւու , ու երբոր անոնք ծերանան , կամ կոյր , կամ կաղ , կամ հիւանդ ըլլան , և չկրնան ինքզնիքներնին հոգալ , կամ աղքատութեան և թշուառութեան մէջ ըլլան , պարտինք հոգ տանիւլ անոնց՝ մեր բոլոր կարողութիւնովք : Կյանդ . խէ . 12 : իւ . 1 : Ո՞ստի . ժէ . 4-6 :

Հ . Ո՞ր տղան իր Հայրը և Ո՞այրը մեծապէս կ'ուրախացունէ :

Պ . Խարի տղան : Առաք . Ժ . 1 , 2 :

Հ . Ո՞ր տղան Հայրը և Ո՞այրը խիստ կը արտմեցնէ :

Պ . Չար տղան :

Ճ. Ա՞ր տղան ատելի է բոլոր բարի մարդիկներուն ,
ու կորսուելու ճամփուն մէջ է :

Պ. Չար տղան :

Ճ. Երբոր գուշք կը տեսնէք անանկ տղաքներ՝ որոնք
ոչ կը սիրեն իրենց ծնողքը ոչ ալ կը ֆազանդին անոնց ,
ի՞նչ պարտիք ընել :

Պ. Պարտինք անոնց ընկերութենէն ետ կենալ :

Խաստուներուն հետ քալողը խաստուն կ'ըլլայ . բայց
անմիաներուն հետ ընկերացողը չար կ'ըլլայ : Առաջ .
Ժկ. 20 :

Ճ. Այս Տերը Ծիստու երբոր տղայ էր , իր ծնողք-
ները սիրեց ու անոնց ֆազանդեցաւ :

Պ. Ճշամերես :

Եւ իջաւ անոնց հետ՝ ու գնաց Կազարեթ , և անոնց
ֆազանդ էր : Առաջ . բ . 51 :

Ճ. Ես հինգերորդ պատուիրանքին մէջը Խատուած
ի՞նչ խոստացաւ բոլը բարի տղաքներուն՝ որ կը պատուեն
իրենց ծնողքը :

Պ. Երկար կեանք :

Ճինգերորդ պատուիրանքը կը սորվեցունէ մեզի՝ մեր
ծնողքներուն ունեցած պարտքերնիս , որ Խատուծմէ ետքը
անոնցմէ կ'ընդունինք կեանք՝ կերակուր՝ հանդերձ՝ պահ-
պանութիւն և կրթութիւն :

Ես . Ուրեմն պատուելու ենք մեր Ճայրը և մեր Այցը :
‘Եախ’ մենք սիրելու ենք անոնք անկեղծ՝ հաստատուն ու
ջերմեռանդ սիրով՝ ինչպէս որ արժան է : Երկրորդ՝ ֆա-
զանդելու ենք անոնց ուրախութեամբ , կատարելով ա-
նոնց հրամաններուն բոլորը : Երբորդ՝ յարդ՝ պատիւ ու
մեծարանք ցուցունելու ենք անոնց թէ՛ առանձին՝ և թէ՛
հրապարակաւ : Եւ այսպէս ամէն մարդ տեսնելով մը
անոնց տուած յարդը՝ գիտնան թէ անոնք մեր ծնողքն են :

Անեք անոնցմէ բան մը պահելու չենք, ոչ ալ ինքզինքնիս անոնցմէ իմաստուն կարծելու ենք։ Հաղա անոնց երթալու ենք մեր ամենալաւ և բարերար բարեկամներուն պէս՝ խրատի ու խորհուրդի համար։ Շարրորդ՝ միշտ յիշելու ենք մեր անոնց երախտապարտ ըլլայն իրենց բոլոր բարերարութիւններուն և մեզի համար կրած նեղութիւններուն փոխարէն, և բնաւ ըսելու չենք որ բաւական հատուցում ըրած ենք անոնց։ Խըրոր անոնք ծերանան, կամ հիւանդանան կամ տկարանան և անօգնական մնան, կամ աղքատութեան ու նեղութեան մէջ ըլլան, ան ատենը բնաւ անտես թողելու չենք անոնք, հաղա աւելի ականջ դնելու ու հոգ տանելու ենք անոնց՝ որչափ որ կրնանք, պաշտպանելով անոնք ամէն նախատիմքներէ ու անիրաւութիւններէ։

Դ։ Անք կ'անարջենք աս պատուիրանքը՝ երրոր չենք կատարեր աս վերը յիշուած պարտաւորութիւններուն մէկը կամ ամէնը։

Ո՞վ տղաքներ՝ աս մեր պարտաւորութիւնները կատարելու հոգ կը տանի՞ք, կազանդ տղաքնե՞ր էք։ Ինչու որ անշաղանդ տղայ մը բնաւ բարեյաջողութիւն պիտի չգրտնէ։ Ինք ամօթ ու սրտի ցաւ է իր ծնողացը։ Ինքը բուն իր համբաւոյն վրայ նախատիմք կը ըերէ, իր բարի անունը կը կորոնցունէ աշխարհի մէջ, կատուծոյ որկութենէն կը զգուի, և գուցէ իր ունեցած օրերուն կէսին չափ պիտի չապրի։ բայց կազանդ տղայ մը՝ որ կը պատուէ իր չայրն ու Մայրը, միշտ սիրելն է։ Ինք օրկնեալ Փրկչին օրինակին կը հետևի, որ անիկայ երրոր երկրի վրայ էր՝ պատուց իր չայրն ու Մայրը։ Ասանք տղայ մը կատարեալ յաջողութիւն պիտի գտնէ։ մենք կրնանք յուսաւ որ ինք երջանիկ պիտի ըլլայ թէ՛ աս աշխարհիս մէջ, և թէ՛ գալու աշխարհին մէջ։

Գ։ Ճինգերորդ պատուիրանքը կը սորվեցունէ մեզի ոյ մենք պատուելու ենք մեծերը, նաև ան ամէնն ալ՝ ոյ կ'իշեն մեր վրայ։ Այս պատուիրանքը միայն ծնողաց համար կը խօսի, ինչու որ յարդութեան՝ պատույ՝ կազանդութեան և քաղաքավարութեան հիմը՝ ընտանեաց մ.ջն կը սկսի։ Յժէ որ տղայ մը իր ծնողացը կազանդին և իրենց

Հետ յարդութեամբ ու քաղաքավարութեամբ վարուի՝ ան տղան բոլոր մարդոց հետ ալ պարկեշտ ու քաղաքավար կ'ըլլայ . բայց թէ որ իր ծնողաց տունը չսկսի վազանդութիւն ու պարկեշտութիւն սորմիլ, գուցէ բնաւ ուրիշ տեղ մը պիտի չսորմի անոնք գործածելը . և այսպէս ան տղան երբոր մեծնայ, անօրէն մարդ մը պիտի ըլլայ : Ուստի ծնողաները և վարժապետները՝ պէտք չէ որ մոռնան աս բանը :

Ա Եցերորդ Պատուիրանկը :

`ԾԱՆՏ . դ . 1-16 :

Հ . Ո՞րն է վեցերորդ Պատուիրանկը :

Պ . “ Ապանութիւն Բ' ըներ ” :

Հ . Ես պատուիրանկը թու կը հասկընանկ :

Պ . Եը հասկընանկ թէ բնաւ մարդ մը սպաննելու ենք :

Հ . Կրնմնկ սպաննել անասուններն ու թռչունները :

Պ . Հրամերես, Եստուած մեզի հրաման տուաւ անոնք սպաննելու : ԾԱՆՏ . թ . 1-4 : ա Տիմ . դ . 3-5 , Եայլն :

Հ . Իսյց ինչիւ համար մեռցուննելու ենք անոնք, մեր զբօսանկբն համար՝ թէ մեր օգուտին համար :

Պ . Ախայն մեր օգուտին համար :

Հ . Հոգիին փրկութենէն ետքը թու է մարդուս խիստ պատուական բանը :

Պ . Եր կեանկը : Յում . բ . 4 :

Հ . Ոյնք որ չենք կրնար կեանկ տալ, իրաւունկ ու յիշնք առնել անիկայ :

Պ . Չէ, ան որ չենք կրնար տալ, չենք կրնար վեր բուննել անիկայ : ԾԱՆՏ . լ . 2 : դ Խատ . ե . 7 :

Հ. Բնաւ իրաւունք ունի՞ մէկը իր կեանքը կորանցուանելու :

Պ. Չէ, անձնասպանութիւնը մեծ մեղք է : ա իւագ . լա . 4 : Արտը . իէ . 3-5 : Պարծ . ա . 16-25 :

Հ. Եւ ով միայն իրաւունք ունի կեանքը վերցունելու :

Պ. Միայն Աստուած՝ որ ինքն է կեանք տուողը : Օձնու . բ . 7 : թ . 5 , 6 : Թառոց ժէ . 22 :

Հ. Ուն որ մարդ մը դիպուածով ուրիշ մը մեռցունէ, երբոր ինքը բնաւ ամենենին չէր ուզեր ընել ան մեղքը, աս պատուիրանքին տակը ինկած յանցաւմը է :

Պ. Չէ . միայն ան որ դիտաւորութեամբ թշնամութեան՝ կամ նախանձու՝ կամ ուրիշ գէշ կիրքի մը գրգռելով՝ կը մեռցունէ իրեն գոյակիցը՝ յանցաւոր է աս պատուիրանքին : Թառոց լէ . 22-25 :

Հ. Աստուած ի՞նչ օրէնք տուաւ Հրեից՝ մարդասպաներուն վրայով :

Պ. «Ա» որ մարդ մը կը սպաննէ, անշուշտ պիտի մեռցուի » : Եւ «Ով որ մարդու արիւն կը թափէ, իր արիւնն աւ մարդէ պիտի թափուի » : «Լուս . իգ . 17 : Օձնու . թ . 6 :

Հ. Տէրը մեր դրացին սպաննելը կ'արգիէ . բայց կրնանք իրեն քարկանալ, կամ զինքը ատել, կամ ծեծել, կամ իրեն հետ չարաւար վարուիլ և կամ զինքը մեռցունելու սիրտ մը ունենալ :

Պ. Չէ, բնաւ ամենենին չինք կրնար :

«Բու դրացիդ անպատճառ պիտի յանդիմանես, որ անոր համար մեղք չկրես : Այսէժ պիտի չառնես, և քու ժողովուրդիդ որդւոցը ոխ պիտի չպահես, հապա քու ընկերդ քու անձիդ պէս պիտի սիրես : «Լուս . ժթ . 17 , 18 : Լսեր էք որ ըսուեցաւ առաջնաներուն . Ապանութիւն մի՛ ըներ, և ով որ սպանութիւն ընէ, դատաս-

տանի պարտաւոր պիտի ըլլայ : Իսաց եւ մեզ կ'ըսեմ . Ո՛վ որ իր եղօրը պարապ տեղը սրբովէ , դասաստվնի պարտաւոր պիտի ըլլայ . և ով որ իր եղօրը յիմար ըսէ , ատեանի պարտաւոր պիտի ըլլայ . և ով որ իր եղօրը անմիտ ըսէ , գեհենի կրակին պարտաւոր պիտի ըլլայ : Այսին . է . 21 , 22 :

Հ . Սուրբ Գևորգին մէջը ի՞նչ կ'ըսուի ան մարդուն վրայով , որ իր եղայրը կ'ատէ :

Պ . “Ով որ իր եղայրը կ'ատէ , մարդասպան է” : ա Յան . է . 15 :

Հ . Որմէն ծոցը բարկութիւնը կը հանգչի :

Պ . “Յիմարներուն ծոցը” : Ժառ . է . 9 : Յան . ա . 19 , 20 :

Հ . Հրամանն կայ երկար ժամանակ մեր ընկերին հետ խռով կենալու :

Պ . “Չէ” , քանզի այսպէս կը կարդանք . “Արևը մեր բարկութեանը վրայ մարը ընանէ” : Խիւն . է . 26 :

Հ . Իսաց դիցուք թէ մեր դրացին թշնամի է մեզի և իր բոլոր զօրութիւնովը կ'աշխատի մեզ վասանլու ու մինչև անգամ կ'ուղէ մեր կեանքը վերցունել , անոր ի՞նչ պարտինք ընել :

Պ . Պարտինք սիրել անիկայ , ու բարի ընել իրեն :

Չարութեան փոխարէն մէկուն չարութիւն մի՛ հատու- ցանէք , ամէն մարդոց առջելը բարի բաներ ընելու հոգ տարէք : Հոռով . ժիկ . 17 : Խիւն իկ . 4 , 5 :

Հ . Անը Փրկիւց ի՞նչ կը պատուիրէ մեր թշնամիները սիրելու վրայով :

Պ . “Աիրեցէք մեր թշնամիները , օրֆեցէք մեզ անի- ծովները , բարի ըրէք անոնց՝ որ մեզ կ'ատեն , և աղօթք ըրէք անոնց համար՝ որ մեզ կը չարչըկեն ու կը հալած- են” : Այսին . է . 44 : Հոռով . ժիկ . 14 :

Ա . Ըստ նայիմ ի՞նչ կ'ըստ Պօղոս Առաքեալ վրեժ-
ինդրութիւն ընելու վրայով :

Պ . “ Ոիրելիք՝ վրեժինդրութիւն մի ընէք ձեր անձեռ-
րուն համար , հապա բարկութեան տեղ տուէք . ինչու
որ գրուած է . Այցէժինդրութիւնը իմն է , ես պիտի
հատուցանեմ ” , կօշտ Տէրը : Հառվէլ . Ժբ . 19 :

Ա . Ըստ նայիմ աս խօսքեն ետքը ի՞նչ կը հետե-
ցունէ :

Պ . “ Ուստի թէ որ քու թշնամիդ անօթեցեր է՝ հաց
տուր անոր , և թէ որ ծարաւի է՝ ջուր տուր անոր . քանզի
աս ընելով՝ անոր գլխուն վրայ կրակի կայծեր պիտի դի-
զես : Զարեն մի յաղթուիր , հապա բարիով յաղթէ՝
շարին ” : Հառվէլ . Ժբ . 20 , 21 :

Ա . Ի՞նչ կ'ըստ Ջիսուս երբոր կը նախատուէր :

Պ . “ Ենքը փոխարէնը չէր նախատեր ” : ա՛ Պիտ .
Բ . 23 :

Ա . Ենք որհնց համար մեռաւ , և որհնց համար
աղօթեց խաչին վրայ :

Պ . Եր թշնամիներուն համար : Ղաւու . իկ . 34 :
Գարդ . է . 59 : Հառվէլ . է . 6-8 :

Ա . Ի՞նչ կ'ըսուի ամենսւն հետ խաղաղութիւն ընե-
լու վրայով :

Պ . “ Ուշափ որ կարելի է ձեզի՝ ամէն մարդոց հետ
խաղաղութիւն ունեցէք ” : Հառվէլ . Ժբ . 18 : Ատղ .
Ըդ . 14 :

Ա . Ոչը ընկերը ամէն վնասներէն և մահէն ազատելը ,
և անոր ու ուրիշներուն մէջը խռովութիւն եղած ատենը
խաղաղութիւն ընելը՝ մեր պարտքը չէ :

Պ . Արամերես : Ղաւու . ժթ . 18 : Ղաւու . ժ .
36 , 37 :

Ա . Խօնէ կ'ըսէ մեր Փրկիչը խաղաղութիւն ընողներուն համար :

Պ . “Երանի խաղաղութիւն ընողներուն , ինչու որ անոնք լստուծոյ որդիներ պիտի կոչուին” : Առաջի . Ե . 9 :

Ա . Ո՞վ էր առաջին մարդասպանը , որ իր եղբայրը մեղցոց :

Պ . Այսէն . ՞Չանդ . դ . 1-8 :

Ա . Իարկացող , սիսկալ և մարդաւպան մարդը երշանիկ կ'ըլլամի արդեօք :

Պ . Չէ :

Ա . Արդասպանութիւնը գիւրին կերպով կը ծածկուի :

Պ . Չէ :

Տէրով աչքերը ամէն տեղ չարերը ու բարիները կը դիտեն : Առաջ . ժե . 3 : ՞Չանդ . դ . 8-10 : Բառոց լբ . 23 : Առաջ . ը . 21 :

Ա . Արդասպանութիւնը խիստ սոսկալի յանցանք մը ըլլալով , անոնք՝ որ աս յանցանքը կը գործեն , Թւր պիտի ունենան իրենց բաժինը , թէ որ չապաշնարեն :

Պ . Արակի լմձին մէջը : Գաղա . Ե . 21 : ա Յօհ . գ . 15 : Յայտ . իա . 8 : իբ . 15 :

Ա . Ինականաբար ատելութեամբ , բարկութեամբ , չարութեամբ և վրէժինդրութեամբ լեցուն սիրտեր չունինք մանաւանդ անոնց վրայ՝ որ կը վնասեն մեզի :

Պ . Արամերես :

Դնչու որ՝ սրտէն կ'ելլեն չար խորհուրդներ՝ սպանութիւններ , շուռութիւններ , պոռնկութիւններ , գողութիւններ , սուստ վկայութիւններ , հայհոյութիւններ : Առաջի . ժե . 18 , 19 :

Հ . Ուրեմն աս պատուիրանքը պահելու համար թշնչանակ սիրտերու կը կարօտինք :

Պ . Նոր սիրտերու : Յօհ . գ . 3-6 :

Ա Եցերորդ պատուիրանքը կը սորվեցունէ մեզի մեր պարտաւորութիւնը թէ՛ ուրիշներուն կհանդին՝ և թէ՛ մեր կհանդին նայելով :

Ե . Ո՞նք չէ թէ միայն մեր ընկերը պիտի չմեռցուանենք, և չէ թէ բարկութեան՝ թշնամութեան՝ կամ ոխակալութեան զգացումներ պիտի չունենանք անոր վրայ, հապս նաև սիրելու ու պաշտպանելու. ենք իր անձը և կեանքը բուն մերինին պէս : Ո՞նք անոր հետ խաղաղութիւնով վարուելու ենք, և ջանալու ենք որ ուրիշներն աւ այնպէս վարուին իրեն հետ . մինչեւ անգամ ինքը մեզի թշնամի ըլլայ ալ : Աս մասին պէտք կ'ըլլայ որ Ծիստսարդիսուր մեզի օրինակ առնենք :

Ի . Ո՞նք կ'անարգենք աս պատուիրանքը նախ՝ երբոր կ'ատենք մեր ընկերը ծածուկ մեր սրտին մէջը . քանզի ասանկ ատելութիւնը սրտի մէջ մարդասպանութիւն է : Երկրորդ՝ ալ աւելի կ'անարգենք աս պատուիրանքը, երբոր մեր բարկութիւնը և ատելութիւնը յայտնի ընենք իրեն հետ շխօսելով . կամ անէծքներով ու գէշ անուններով զինքը նախատենք, կամ իր պատւոյն ու իր օգուտին վասար ընենք, թէ՛ ծածուկ և թէ յայտնի կերպով : Երրորդ՝ աւելի մեծագոյն աստիճանով կ'անարգենք աս պատուիրանքը, երբոր այնպէս բարկանանք՝ որ անոր վրան վազելով՝ ծեծենք ջախջախենք և կամ մեռցունենք զինքը : Չորրորդ՝ երբոր մեր ընկերին բան մը տանք ուտելու կամ խմելու, որն որ մենք գիտենք թէ պիտի կորսնցունէ անոր առողջութիւնը և կեանքը, կամ թէ միայն վուանգի մէջ պիտի ձգէ զննքը : Հինգերորդ՝ երբոր զուր տեղը մեր համութեանը կամ մեր օգուտին համար՝ մեր ընկերին կեանքը վասանգի մէջ ձգենք, կամ զօրութիւն ունենալով պահանջներ իրմէն անանկ բան մը ընել՝ որն որ իր կորըստեան պատճառը պիտի ըլլայ : Ա Եցերորդ՝ երբոր մեր

զքառանկին համար գրգռենք ուրիշներն իրարու դէմ բարկանալու և ծեծկուելու : Խօթներորդ՝ երբոր բուն մեր կեանքը կորսնցունենք, թէ հրացանով՝ թէ կախուելով՝ թէ խեղուուելով՝ թէ անառակութեալր ուտելով և խմելով և թէ ուրիշ անժուժիկալութեան գործքերով :

Դ . Այս պատուիրանքը պահելու համար պէտք է որ նախ մեծ բան սեպենք մարդկային կեանքը որ Աստուծմէ մարդուա տրուած ամէնապատուական պարզնն է, հոգիին փրկութենէն 'ի զատ : Խըրորդ՝ պէտք է որ սիրենք ամէն մարդ և դէմ կենանք ու յաղթենք մեր բարկութեանը՝ երբոր սկսի բորբոքիլ : Խըրորդ՝ պէտք է որ փախչնիք բարկասիրտ ու ոխակալ մարդոց ընկերութենէն, որոնք մեծ ու պատուական բան մը կը սեպեն նախատինքի չհամբերելով՝ վրէժ առնենք : Չորրորդ՝ պէտք է որ խոնարհ ու հանդարտ հոգի մը ստանալու ջանանք . հպարտութիւնը, բարկութիւնը և ինքնահաւանութիւնը՝ իրենցմէ ետքը հակառակութիւն ու մահ կը բերեն : Անսգերորդ՝ պէտք է որ աղօթենք Աստուծոյ որ մեզի խաղաղասէր բնաւորութիւն մը տայ, քանզի անով կը նմանինք Քրիստոսի . և անանկ բնաւորութիւն մը խիստ ցանկալի ու քաղցր բան մըն է, որ նաև երջանկութիւն և հանդարտութիւն կը պատճառէ . բայց բարկութեան ու վրէժինդրութեան հոգին՝ թշուառութիւն է ինքիրմէն, որն որ Չարին հոգին է :

Ե . Խարկացող ու վրէժինդիր մարդիկ պարտին ապաշխարել և Աստուծմէ նոր սիրտ մը խնդրել . թէ չէ՝ բնաւ չեն կրնար պատրաստուիլ երկնից թագաւորութեանը համար, որն որ արդարութիւն և խաղաղութիւն է : Անգ Փրկիչը խաղաղութեան թագաւոր է :

ԽօԺՆԵՐՈՐԴ Պատուիրանքը :

Եռուս . Է . 27 :

- Հ . Ո՞րն է եօթներորդ Պատուիրանքը :
- Պ . “Ընաւնիւն Թ Ընկը” :
- Հ . Երազն կարգուող մարդիկը որմնք էին :
- Պ . Եդամ ու Եւան :
- Հ . Որի՞ն ձեռքովը կարգուեցան :
- Պ . Տէր Ռատուեցյ ձեռքովը : ‘Օձար . բ . 18-25 :
- Հ . Մարդիկ ի՞նչ կերպով պարտին կարգուիլ, յայտնի՞թէ ծածուկ :
- Պ . Յայնի կերպով :
- Հ . Եստուած խկապէս ներկայ է ամուսնութեան առենը՝ վկա ըլլալու համար :
- Պ . Արամերես :
- Հ . Կարգուելէն ետքը որ ատեն որ ուզեն, էրիկը կամ կորիկը կրնմն իրարմէ զատուիլ :
- Պ . Զէ : Առար . ժթ . 9 :
- Հ . Ուրիշ մէկը բնաւ զօրութիւն ունի՞ անոնք իրարմէ զատելու :
- Պ . Զէ : “Ուրեմն ան որ Եստուած միաւորեց՝ մարդթող չզատէ” : Առար . ժթ . 6 :
- Հ . Ուստի բնաւ չե՞ն կնար իրարմէ զատուիլ :
- Պ . Միայն երկու կերպով կրնան զատուիլ :
- Հ . Ի՞նչ է առջնորդ :
- Պ . Երբոր անոնցմէ մէկը չնութիւն շնէ : Առար . Ե . 32 :
- Հ . Ի՞նչ է երկրորդը :
- Պ . Երբոր անոնցմէ մէկը մեռնի : Հառվ . Է . 2, 3 :
- ա կո՞նք . Է . 39 :

Հ. Ընութիւնով բռնուած մարդիկը՝ Աստուած Բօնչը
պէս պատժելու հրաման տուաւ Արէից :

Պ. Աահով :

Ընացողն աւ շնացեալն աւ պիտի Բռնուածն : Ղ. Լու .
Է. 10 : Թաէ որ մէկը էրիկ ունեցող կնկան մը հետ պառ-
կած գտնուի , ան ատենը երկուքն աւ մեռնին , թէ ան
կնկանը հետ պառկող մարդը՝ և թէ ան կնիկը : Ք Օրին .
իբ. 22 :

Հ. Որմէն կը վերաբերին մեր մարմինները , և որմէն
համար անարատ պահելու ենք զանոնք :

Պ. Խստուծոյ համար :

Չէք գիտեր որ Աստուծոյ տաճար եք դուք՝ և Խստու-
ծոյ Առդին ձեր մէջը բնակած է : Թաէ որ մէկը Աստուծոյ
տաճարը կ'ապականէ , Աստուծոյ անիկայ պիտի ապակա-
նէ . ինչու որ Աստուծոյ տաճարը սուրբ է , որ դուք եք :
ա կորմի . գ. 16 , 17 : կ. 13-20 : ա թաէն . գ. 3-7 :
Շօննտ . լլթ . 9 :

Հ. Խ՞նչ կ'ըսուի շնացող կնկան տանը վրայով :

Պ. “ Ենոր տունը գժողիքին ճամբաններն է . անոնք
մահուան շտեմարանները կ'իջնեն ” : Առաք . է . 27 :
ե . 5 :

Հ. Արկնէ նայիմ Առղոմննին ըսածը :

Պ. “ Ենոր գացողները բնաւ չեն դառնար , և կենաց
ճամբաններուն չեն հասնիր : Առաք . ք . 19 : ե . 20-23 :

Հ. Ուրեմն անկից դառնալուն վրայով Բօնչը պատուեր
կայ :

Պ. “ Են կնիկէն ճամբագ հեռացուր , ու անոր տանը
դրանը մի մօտենար ” : Առաք . ե . 8 :

Հ. Պարտիօնք պատուել կամ ընկերութիւն ընել
անոնց հետ՝ որ աս պատուիրանքը չեն պահեր :

Պ. Չէ :

Վարարիշտներուն ճամբան մի՛ երթար , ու չարերուն ճամբուն մէջ մի՛ քալեր : Ենկէ զգուշացիր . անոր քովէն մի անցնիր , անկէ խոտորէ , ու անցիր : Եռամք . դ . 14 , 15 : ա կործ . ե ! 9-13 :

Հ . Եստուած կը պահանջէ մեզմէ աս պատուիրանկը պահել մեր բոլոր սրտովը , և բուն մեր սրտին մէջ ալ :

Պ . Հրամերես :

Եսեր էք որ ըսուեցաւ . Ծնութիւն մի ըներ . Խայց ես ձեզի կ'ըսեմ . Ով որ կնիկ մարդու կը նայի անոր ցանկանալու համար , ալ անիկայ իր սրտին մէջ շնութիւն ըրաւ անոր հետ : Ենտի . ե . 27 , 28 : Եռամք . կ . 25 :

Հ . Եռջի ժամանակուան մարդիկը ՞ր պատուիրանկն անարգեցին , և շարժեցին Եստուծոյ բարկութիւնը՝ որ ջրհեղեղով կորսնցուց անոնք :

Պ . Խօթներորդ պատուիրանկը : «Օձադ . դ . 1 , 2 : Եայլն :

Հ . Եւ Առողումնացիք ու Գյումրացիք ՞ր պատուիրանկն անարգեցին ու շարժեցին Եստուծոյ բարկութիւնը՝ որ այրեց անոնք կրակով ու ծծումով :

Պ . «Եմանապէս եօթներորդը : «Օձադ . ժԾ . 4-28 : Եստադ . 7 :

Հ . Եստուած ՞րչափ Խսրայէլացիներ կորսնցուց մէկ օրուան մէջ , աս պատուիրանկն անարգելնուն համար :

Պ . ««Քսանուչըս հազար»» : Ժայռոց իե . 1-9 : ա կործ . ժ . 8 :

Հ . Եստուած գալու աշխարհին մէջ ի՞նչպէս պիտի պատժէ պոռնիկներն ու չնացողները :

Պ . «Յաւիտենական կրակով :

Երգ՝ մարմինին գործքերը յայտնի են , որ ասոնք են , շնութիւն , պոռնկութիւն , պղեռութիւն , գիճութիւն , ու ասանկ բաներ գործողները Եստուծոյ արքայուն

թիւնը պիտի չժառանգեն : Գաղ. Ե. 19-21 : Բայց
պոռնկութեան և ամէն իւրդ պղծութեան՝ կամ ազահու-
թեան անունը անգամ չըիշուի՛ մեր մէջը , (ինչպէս որ կը
վայէ սուրբերուն ,) և գարշելի բաներ՝ կամ յիմարական
խօսքեր՝ կամ խեղիատակութիւն , որ ըմայեր , այլ մա-
նաւանդ գոհութիւն : Այս իմանալով գիտնաք , որ ամէն
պոռնիկ՝ կամ պիղծ՝ կամ ագահ՝ որ կուապաշտ է , Քը-
րիստոսի ու Աստուծոյ թագաւորութեանը մէջ ժառան-
գութիւն լուսի : Խփէս . Ե . 3-5 : Եւ վախկուաներուն՝
ու անհաւատներուն՝ ու պոռնիկներուն՝ և կախարդներուն՝
ու կուապաշտներուն՝ և պիղծներուն՝ ու մարդասպաններուն
և բոլոր ստախօններուն բաժինը՝ կրակով ու ծծումբով
վառած լիճին մէջը պիտի ըլլայ , որ է երկրորդ մահը :
Յայտ . իս . 8 :

Խօթներորդ պատուիրանքը կը սորվեցունէ մեզի մեր
պարտաւորութիւնը՝ ուրիշներուն ողջախոհութեանը վրա-
յով . ունաե մեր մարդինները ինտոք գործածեն ու սըր-
բելը :

Ե . Ամուսնութիւնը Աստուծմէ հաստատուեցաւ . և
երբոր երկու յարմար անձանց մէջ՝ յարմար կանոնով կ'ըլ-
լայ , շատ աղէկ ու երջանիկ վիճակ մըն է . և Աստուծոյ
դիտաւորութիւնն ան էր՝ որ ասանկ ըլլայ : Աստուծած կա-
տարեց առաջին ամուսնութիւնը մեր առաջին ծնողացը
մէջ . և ան ամուսնութիւնը՝ բոլոր ետքը գալու ուրիշ
ամուսնութիւններուն օրինակ էր : Օրինաւոր ամուսնու-
թիւնը միայն մէկ էրիկ մարդու և մէկ կնկան մը մէջ տեղը
կը կայանայ . ու հրապարական կատարուելու է ան հան-
գէսը , անանկ մարդիկներով՝ որ օրինաւոր իշխանութիւն
ունին ան բանին վրայ : Ոտ ազգականի հետ ամուսնու-
թիւն ապօրինաւոր է : Ամուսնանալն ետքը երկու կեր-
պով միայն զատուիլ կրնայ ըլլալ . մէյ մը՝ երբոր էրիկը

կամ կնիկը շնութիւն ընելու ըլլայ , մէյ մըն ալ՝ երբոր
երկոքին մէկը մեռնելու ըլլայ :

Դ . Արաժարելու ենք շնութիւն ու պոռնկութիւն ընելուն . և պիղծ խորհուրդներուն կամ խօսակցութիւններուն հաճինու չենք , որ պիղծ գործքերուն արմատներն են : Մենք մեր ընկերներուն կնկանը կատարեալ սրբութիւնով պիտի նայինք . և պիտի պաշտպանենք ամէն պղծութիւններէն , ինչպէս որ կ'ուզենք թէ բուն մերինը պաշտպանուի . Մեր մարմիններն ալ պատույ . մէջ պահելու ենք Վասուծյ պաշտօնին համար՝ իբրև Առուրբ Հոգին բնակելու տաճար մը :

Գ . Մենք աս պատուիրանքը կ'անարդենք նախ՝ երբոր շնութիւն կամ պոռնկութիւն կ'ընենք , Լամ պիղծ խորհուրդներուն ու ցանկութիւններուն և անպարկելով վարքերուն կամ խօսակցութիւններուն հսկութիւն կը ցուցուանենք : Երկրորդ՝ երբոր ուրիշներն ալ կը քաշալէրենք որ աս մեղքերը գործեն , ու չենք աշխատիր անոնք արզիւլլու :

Դ . Ծնութիւնն ու պոռնկութիւնը սոսկալի մեղքեր են , և Վասուծյ բարկութիւնը կը բերեն բոլոր ան մարդկիններուն վրայ՝ որ աս մեղքերը կը գործեն :

Ե . Վասուծյ անանկ մեղքեր են՝ որ չեն կրնար պահուիլ . քանզի պոռնկիններուն ու չնացողներուն մէջը՝ հաւատք չկայ . անոնք որ ինքզինքնին կը ստեն , բնաւ չեն կրնար հաւատարիմ ըլլալ ձեզի . ու թէպէտե անոնց մեղքերը գաղտուկ մնան մարդոցմէ , բայց մըրնար ծածկուիլ Վասուծմէ , որուն առջեւը ամենածածուկ մեղքերը ևս յայտնի են : « Օննդ . ժք . 17 : ի . 2-9 : Վատակ . ե . 20-21 :

Զ . Վասուծյ անանկ մեղքեր են՝ որ գործողներուն վրայ՝ ուրիշ մեղքերէն աւելի շուտով ու աւելի շատ ախտ՝ թըշուառութիւն և կորուստ կը բերեն : Վասոնք՝ որ աս մեղքերը կը գործեն՝ կը կորանցունեն բուն իրենց պատիւը և ուրիշներուն պատիւն ալ , Վասուծյ իշխանութիւնն ու կարգադրութիւնը , մարդուս խիստ երջանիկ վլաճակը , ընկերութեան ամենալու բարիքը , իրենց զաւկին բարի համբաւը . և բուն իրենց հոգիին փրկութեան յշուը : Վասոնք իրենց ցանկութիւններուն ծառայ են , անոնց սիրտը

պինդ է , անոնց միտքը խաւար է , անոնց խիղճը թմրած է , անոնց բարքը ապականած է , անոնց բնաւորութիւնն անողորմ է : Ենոնք ենթակայ են խիստ զգուելի ու առավեցուցիչ հիւանդութիւններու՝ յանկարծահաս իշխածքներու ու մահուան . և անոնց պատժապարտ հաճութիւններուն մէջ տեղը՝ շատ անգամ կորուստը շուտով կը հանի : Ենոնց ընթացքն անոնք դժոխք կը տանի :

Եւ . Ես մեղքերը արգիլուելու համար նախ թող տղաք զգուշութեամի կրթուին բոլոր մաքրութիւններով , պաշտպանուին գէւ ընկերներէն , վուանգաւոր տեղերէն և բարքերնին ապականող զրօնանքներէն : Երկրորդ՝ թող ամէն մէկը բարիխառն ըլլայ իր կենացը մէջ , աղէկ մարդիկներ ընտշէ իր ընկերութեանը համար , հեռու կենայ թատրոններէն , զինեստուններէն ու անմաքուր գիրքերէն : Երրորդ՝ իր պառկելու ու ելլելու ատենը կանուխ ու կանոնաւոր ըլլայ : Չորրորդ՝ ամէն բանէն աւելի Աստուծմէն օգնութիւն խնդրնեք և հսկենք ու աղօթենք՝ որ փորձութեան մէջ չկյանք :

Ութերորդ Պատուիրանքը :

Յէսուս . Է . 1-26 :

Հ . Ո՞րն է ութերորդ Պատուիրանքը :

Պ . “Կաղղութիւն մ' ընէր” :

Հ . Ուէ որ բան մը առնեմ ո՛չ իմն չէ , ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պ . Գողութիւն :

Քու դրացիիդ զըկանք մի՛ ըներ , և յափշտակութիւն մի՛ ըներ . քեզի վարձբով բանովին ըրտիսն վարձբը՝ մէկ գիշեր մինչև առոտու քու քովդ չմնայ : Կառ . մ'թ . 13 :

Հ . Ուէ որ բան մը գտնեմ ու տիրոջը չտամ , ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պլ. Գաղութիւն : Ղետ . կը . 1-7 :

Հ. Յօհէ որ բան մը առնեմ կամ ծախեմ՝ և շիտակ ու լման չափով ու զինով լընեմ իմ առուտուրս , ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պլ. Գաղութիւն :

Դատաստանի մէջ անիրաւութիւն պիտի լընեք , կանգումի մէջ՝ կշոքի մէջ ու չափի մէջ ալ : Ձեր կշոք-ները լման՝ ձեր իվունիք քարերը լման՝ ձեր արդուն լման ու հիմնը լման պիտի ըլլայ , ևայլն : Ղետ . ժթ . 35 , 36 :

Հ. Յօհէ որ իմ գրացիս իրաւամբ պարտք ունենամ , և կարողութիւն ունենալով՝ լուզեմ հատուցանել , ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պլ. Գաղութիւն : Խըմ . իլլ . 13 : Հառով . ժգ . 7 , 8 : ա Տիմ . ա . 10 :

Հ. Յօհէ որ բան մը փոխ առնեմ՝ որն որ բնաւ ետ տարու միտք լընենամ , կամ անոր ասոր պարտք ընեմ՝ որ անոնք հատուցանելու բնաւ դիտաւորութիւն մը լընենամ , կամ ազէկ զիանամ թէ բնաւ պիտի լկրնամ հա- տուցանել , ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պլ. Գաղութիւն :

Ամբարիշուր փոխ կ'առնէ ու չվճարեր . սակայն արդարը կ'ողորմի ու կու տայ : Առաջ . լէ . 21 : Շ Յօհանք . դ . 1-7 :

Հ. Յօհէ որ ինչ և իցէ կերպով իմ գրացնա խարեմ և իր ունեցածը ձեռքէն առնեմ , ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պլ. Գաղութիւն : Է Օրին . իէ . 17 : Առաջ . իլլ . 8 :

Հ. Յօհէ որ ես գիտնամ թէ ուրիշերը կ'ուզեն իմ գրացիս գողութիւն ընել , ու չիմացունեմ իրեն ան բա- նը , և կամ անոնց գողցածնուն բաժին առնելու համո- զուիմ , գողութիւն ըրած պիտի չըլլամ :

Jones' Catechism. Armenian. I 3

Պ . Հրամերես . Գողին հաղորդ եղողը գողին պէս
գէլ է :

Եւ թէ որ անձ մը մեղանչէ , ու երդումի ճայնը լսելով՝
վես ըլլայ , կամ բանց տեսած ըլլայ կամ գիտցած , թէ
որ չիմացունէ , յանցանքը ինքը պիտի կրէ : ՚ Լուս . Ե .
1 : Գող տեսնելով՝ անոր հետ միաբանեցար , ու շնա-
ցողներուն հետ բաժին ունեցար : Առաջ . Ճ . 18 : Գողին
ընկեր եղողը իր հոգին կ'ատէ . անիկայ երդումը կը լսէ ,
ու իր գիտցունը լսայտներ : Առաջ . իթ . 24 :

Հ . Լուս էր Աքարի յանցանքն ու անոր պատիմը :

Պ . Աս էր որ սսկի լեզու մը ու գեղեցիկ վերարկու մը
ու երկու հարիւր սիկղ արծաթ գողցաւ Երիքովի մէջ , և
քարկոծուեցաւ իր բոլոր ընտանիքով : Յիս . Է . 1-26 :

Հ . Լուս էր Աքարի և Յեղարէլի յանցանքը :

Պ . Աս էր որ Յեղարէլ մեղցունել տուաւ ՚ Արովթը ,
ու ետքը Աքար անիրաւութեամբ անոր այգին իրեն ա-
ռաւ : Ք Ծառէ . իտ . 1-21 :

Հ . Եւ Բուս եղան Աքարը ու Յեղարէլ :

Պ . Կորսուեցան : Ք Ծառէ . իթ . 34 , 35 :

Հ . Ո՞ր ծառան էր որ գողովթիւն ըրաւ ու պահեց
իր գողցածք՝ սուտ խօսելով , և բորոտութիւնով պատ-
ժուեցաւ :

Պ . Գէեղի , Եղիսէ մարգարէին ծառան : Ք Ծառէ .
Ե . 20-27 :

Հ . Ո՞վ էր ան գողը՝ որ իր Տէրը մատնեց ու ետքը
ինքինքը խղզեց :

Պ . Յուղա Խակարիովտացին : Առաջ . իէ . 3-8 :
Յօհ . ժթ . 6 : Գործ . ա . 18-25 :

Հ . Ծառ որ մէկը բան մը գողնայ ու ետքը սուտ զըռոցէ
իր գողցածք պեհելու համար , անիկայ մէկ օգուտ մը կ'ըւ-
լո՞յ իրեն :

Պ . ԶԵ , անով միայն իր մեղքը կը մեծցունէ :

Ա . Ուժնք էին Առաքելցց ատենը գողութեան ու ստա-
խօսութեան համար մեռողները :

Պ . Ենանիս ու իր կնիկը Ասպիրա : Գործ . Ե .
1-10 :

Ա . Եսոր վրայով ԲՇնչ կ'ըսէ Առւրբ Գիրքը :

Պ . “Են որ գողութիւն կ'ընէր , աւ թուղ չցողնայ ,
այլ մանաւանդ աղէկ գործի մը պարապելով՝ իր մեռքովը
աշխատի , որ կարող ըլլայ տաւ կարօտ եղողին” : Երես .

Ք . 28 :

Ա . “Յըրիստոնեաներն ԲՇնչպէս քալելու են աշխարհիկ
մարդոց առջելը :

Պ . “Երդարութեամբ” : ա Բան . Ք . 11 , 12 :

Ա . ԲՇնչպէս պիտի պահենք ինքզինքնիս գողութիւն
ընելէն :

Պ . Եստուծմէ վախնալով ու Խրեն ապաւինելով :

Ա . Գողերը և սուտզըուցները բնաւ Եստուծոյ արքա-
յութիւնը կրնան մանել :

Պ . ԶԵ :

Ու գողերը՝ ու ագակերը՝ ու գինովները՝ ու նախա-
տողները՝ ու ու յափշտակողները՝ Եստուծոյ թագաւորու-
թիւնը պիտի չժառանգեն : Արդին . Ք . 10 : Յայտ .
իս . 8 , ևայլն :

Ութերորդ պատուիրանքը մեզի կը սորվեցունէ մեր
պարտաւորութիւնը , թէ մեր ստացուածքին , և թէ մեր
ընկերին ստացուածքին վրայ :

Եւ Ես աշխարհիս մէջ մենք ու մեր ընտանիքները՝ զա-
նազան բաներու կը կարօտինք՝ միիթարութեան ու հանգըս-
տութեան համար . զոր օրինակ՝ տունի , հանդերձի , կե-
րակուրի , ևայլն : Ուստի ամէն մարդ պարտի ժիր ըլլաւ .

որ կարող ըլլայ օրինաւոր ապրուստ գտնել իրեն՝ և իր ընտանիքին համար : “Եաւ կը պահանջուի մեզմէ՝ որ մեր ընկերը թողունք որ իր ռանցածը վայելէ . ոչ իրմէն դուռը թիւն ընենք, ոչ աւ զինքը զգենք և ոչ ու կը կերպով մըն ալ անիրաւութիւն մը ընենք իրեն . հապա արդարութեամբ վարուինք իր հետը, միշտ պաշտպանենք իր ստացուածքը, և անոր առաջ երթալուն ու բարի վեճակին վրայ ուրախանանք, իրը թէ ան ամէնը ձիշդ մեր անձին եղած համարելով :

Ի . Մէկը կ'անարգենք սս պատուիրանքը նախ երբ որ մեր ձեռքը գողակթիւն ընելու երկնցունենք : Երկորդ՝ երբոր ծածուկ կամ յայսնի խարենք մեր ընկերը ինչ և իցէ կերպով . կամ երբոր ուրանանք կամ զանց ընենք պարտագերնիս հաստուցանել . կամ երբոր փոխ առնենք՝ գիտնաւով որ պիտի չկրնանք հաստուցանել, կամ բնաւ հաստուցանելու դիտաւորութիւն չընենանք . կամ երբոր պատահի որ բան մը գտնենք ու տիրոջը չոտանք : Երրորդ՝ երբոր բան մը գողցած ըլլանք կամ մեր ընկերը զգկած ըլլանք, և ետ չդարձունենք ինչ որ իրմէն առեր ենք : Չորրորդ՝ երբոր մեր ընկերը զգկողներուն հետ բաժանորդ ըլլանք, կամ գիտնանք անոնց չարութեամբ ու չիմացունենք իրեն ան բանը : Հնագերորդ՝ երբոր խստութեամբ ու բռնութեամբ վարուինք անոնց հետ՝ որ մեզի համար կ'աշխատին ու մեզմէ կախում ունին . և անոնց պէտք եղածը առատապէս չոգալէն զատ՝ իրենց արդար վարձքն ալ չաստուցանենք, և այսպէս գրեթէ անոնք գողութիւն ընելու ստիպենք . կամ երբոր տեսնենք աղքատը մէկէ մը չարչարուած ու զրկուած, և չօգնենք անոր : Ա եցերորդ՝ երբոր մենք անհոգ ըլլանք մեր գործին, պարագ կեցող կամ ծոյլ ըլլալով, և չաշխատինք ինքզինքնիս և մեր ընտանիքը կերակրելու : Ընէ որ ասանկ ընենք՝ իրաւունք չունինք մեր գրացիներէն կերակուր կամ օգնութիւն մը ինդրելու (ա) :

ա . Ա անզի երբոր մենք ձեր քովն էինք՝ աս ձեզի կը պատուիրենք, թէ ան որ չուզեր գործ գործել, հաց ալ թող չուտէ : Ք Ծակու . գ . 10 :

Գ. Ամէն մարդու պարտքն է պահել աս պատուի բանքը՝ ինչ և իցէ վիճակի մէջ որ ըլլայ։ Խրբեմն կը խորհի ծառան՝ թէ մեղք չէ իր տիրոջմէն գողութիւն ընելը, աղքասն իր հարուստ դրացիէն, ազգին զլիսաւորներն իրենց ազգէն, զաւակն իր ծնողքէն, ևայլն։ Ըստուրի մէջ ալ կը խորհին մարդիկ՝ որ կրնան գողնալ իրենց հետ առուտուր ընողներէն։ բայց ասոնց ամէնն ալ գէշ են, ու ԱՌ գողնուր պատուիրանքին դէմ։ Ուստի թէ որ բանի մը կարօտութիւն ունենանք՝ ցողնանք, հապա իր տիրոջմէն ինդրենք ինչ որ պէտք է մեզի։ Ճաէ որ կ'ուզեն յաջողութիւն գտնել, վարպետութիւն բանեցունելու տեղը՝ պէտք է որ կատարեալ արդարութիւն ընես ամենուն հետ։

Դ. Գողութիւնը զըուելի՝ նախատալից ու հոգեկորուստ մեղք մըն է։ Գողին խղճնուանքն իրեն դէմ է։ Ինքը շարունակ կը վախնայ թէ գուցէ իր ըրածն իմացուի, և զրեթէ միշտ այնպէս կ'ըլլայ, ու իր գողցած բաներէն քիչ բերկութիւն կ'ունենայ։ ամէն բարի մարդ անոր վրայ նախատինքով ու անարգութիւնով կը նայի, և ոչ ալ մէկը անոր վրայ վստահութիւն կ'ունենայ։ Աստուած ալ կը զըուի անկէ ու իր երկնաւոր թագաւորութենէն գուրս կը վունտէ։

Ե. Աս մեղքն արգիլելու համար՝ պէտք է որ գողութեան առաջնա անգամն՝ տղաքները պատժուին, և աս մեղքին անարգութիւնը, ամօթը և չարութիւնը յայտնի ցուցուի անոնց։ Աորվեցնուր անոնց՝ բարերար, ազնուամիտ ու ժիր ըլլալ։ իրենց ունեցած բաներով բաւականանալ, Աստուածմէ վախնալ և Հիսուսի ուկեղէն կանոնը միշել, այսինքն՝ Ամէն ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ձեզն ընեն, գուք ալ անոնց անանկ ըբէք։ Անորի ։ Է ։ 12։

ԽԱՆԵՐՈՐԴ Պատուիրանքը :

ա Առաջին . Ժ է . 1-13 :

Ն . Ո՞րն է խներորդ Պատուիրանքը :

Պ . “Վաս դրացիկ դեմ սուսա վկայութեան մէ՛ ըներ” :

Ն . Բնէ որ քու վկայ ձգեմ ան յանցանքը՝ որն որ ուրիշ մէկը ըրեր է , ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պ . Առաջ վկայութիւն :

Ն . Բնէ որ քու վկայովդ գէշ բաներ ըսեմ սուս տեղը , ու ջանամ ուրիշներն ալ գէշ խորհել տալ քու վկայովդ , և այնպէս կորսընցունեմ քու բարի անսանդ ու պատիւդ , անատենը ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պ . Առաջ վկայութիւն :

Ն . Բնէ որ Կոտուած վկայ բռնեմ իմ սուս խոպերս հաստատելու համար , իմ մեղքս ալ աւելի մեծ չքլար :

Պ . Հրամերեմ :

Ն . Բնէ որ քու վկայովդ սուս տեղը ուրիշներուն գէշ խօսիլն ու ամբաստանութիւն ընելը լսեմ , և գիտնամ թէ դուն անմեղ ես , և անոնց հետ մէկ ըլլալով՝ իրենք յօժարեցունեմ ատ բանին մէջ յառաջանալու , անատենը ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պ . Առաջ վկայութիւն :

Ն . Բնէ որ դատաւորին ատեանը կամ ուրիշ ու իցէ տեղ մը կանցւելու ըլլանք մեր ընկերին համար կամ անոր գէմ վկայութիւն ընելու , ի՞նչ պարտինք խօսիլ :

Պ . Ճ'շմարտութիւն :

Առաջ լուր պիտի ըտարածես . անօրէնի հետ ձեռքդ պիտի շնես անիրաւ վկայ ըլլալով : Զարութիւն ընելու համար՝ բազմութեանը պիտի չհետեխս . ու դատաստանի մէջ

իրաւունքը ծռելու համար շատերուն ետևէն խոտորելով՝ խօսք պիտի չխօսիս : Խվա իդ . 1 , 2 :

Ա . Ուստի ի՞նչ կ'արգիլէ աս պատուիրանքը :

Պ . Կ'արգիլէ ամէն տեսակ բանարկութիւնը , զըրպարտութիւնը և բամբասանքը :

Ա . Ասոր վրայով ի՞նչ կ'ըսէ Առուրբ Գիրքը :

Պ . “ Վու ժողովուրդիդ մէջը չարախօսութիւն ընելու չպարզաիս ” : Դ . Նա . Ժ . 16 :

Ա . Ի՞նչ տեսակ մարդիկ են բանարկուները , զըրպարտիչները և բամբասաները :

Պ . Խուլովարը ու վնասակար անձինք են .

Ա . Անը ընկերներուն ի՞նչ կերպով պարտինք խօսիւ ճշմարտութիւնը :

Պ . “ Արրով ” :

Ա . Ի՞նչ կ'ըսէ Առուրբ Գիրքն ասոր վրայով :

Պ . “ Եմէն դառնութիւն՝ և բարկութիւն՝ ու սրտմտութիւն՝ և աղաղակ՝ ու հայհոյութիւն վերցուի ձեզմէ ամէն շարութիւններով մէկտեղ ” : Խժէս . Պ . 31 :

Ա . Արկնէն նայիմ , ուրիշ ի՞նչ կ'ըսէ Առուրբ Գիրքը :

Պ . “ Ոնէ որ մէկը զննելով կրօնասէր կը սեպէ՝ ու իր լեզուին սանձ չդներ , հապա իր սիրտը կը խարէ , անսանկին կրօնասիրութիւնը փուշ է ” : Յաէ . ա . 26 :

Ա . Ի՞նչպէս վարուելու ենք սուտգրուցներուն հետը :

Պ . Պարտինք ատել սուտգրուցներն ու սուտ վկաները , և անսնց հետ ընկերութիւն ընելէն հրաժարիւ :

Խմաստուններուն հետ քալողը խմաստուն կ'ըլլայ . բայց անմիտներուն հետ ընկերացողը չար կ'ըլլայ : Առաւ . Ժ . 20 :

Ա . Արէաներն ի՞նչ վկայութիւն ըրին մեր Փրկչին դէմ :

- “) • Առաջ վկայութիւն : Արտի . իդ . 59-61 :
- Հ . Ըստ հարատութենէն մանաւանդ կեանքէն ալ
ի՞նչ թանկագին բան ունի մարդ :
- Պ . “Իարի անուն” : Եւուէ . իդ . 1 :
- Հ . Իարի անուն վաստըելու հոմար ԲՇնպէս ջանալու
ենք :
- Պ . Իարի ըլլալով ու աղէկութիւն ընելով :
- Հ . Մնկք որ մեծ բան կը սեպէնք մեր աղէկ անունը ,
ըօնք պարտաւորիր պաշտպանել նաև մեր ընկերինն ալ :
- Պ . Հըսամնես , կը պարտաւորինք :
- Հ . Առաջ խօսողներն ու սուստ վկայութիւն ընողները
կընմն անպատիժ մնալ :
- Պ . Չէ :
- Սուստ վկան անպատիժ պիտի չմայ , ու ստութիւններ
խօսողը պիտի չաշատի : Եւուէ . ժիշ . 5 , 9 :

Խններորդ պատուիրանքը մեզի կը սորվեցումէ մեր պար-
տաւորութիւնը՝ մեր ընկերին բարի անունին ու մեր բարի
անունին վկայով :

Ե . Եշխարհին մէջ մեր հանդառութիւնն ու երջանկու-
թիւնը , մեր յաջողութիւնը և մեր օգուտը՝ մեր ունեցած
անունն ու համբաւէն շատ կախում ունի : Ուստի մեր
պարտաւորութիւնն է բարի գործքերով աղէկ անուն վաս-
տըելու ջանալ , ու երբոր կը ստանանք՝ մեր պարտաւո-
րութիւնն է պաշտպանել անիկայ : “Ա,աև մեր ընկերին ալ
աղէկ անունն ու պատիւը պաշտպանելու ենք՝ իր վրայ ճըշ-
մարիսը խորհելով՝ ու խօսելով , առանց շղոքորթելու ,
զբարտելու , կամ անոր վրայ անիրաւ կասկած մը ունե-
նալու . ողորմութեամբ ու գթութեամբ՝ յանդիմանելով
անոր յանցանքները , ու անոնք ծածկելով ուրիշներին՝ որ-
շափ որ պէտք է ծածկել . պաշտպանելով զնուքը ան թշշ-
նամիներէն՝ որոնք անոր աղէկ անունն աւրել կ'ուզնի . և
վերջապէս թէ իրեն համար է եղեր և թէ իրեն դէմ՝ ճըշ-

մարդիտ վկայութիւն ընթաց վկայութիւն տալու կանշաւած առեննիս :

Ա . Առաջ աս պատուիրանքը կ'անարդենք նախ՝ երբոր բանապիու, շատախօս, խոռվարար կամ բանասող ըլլանք մեր հասարակ խօսակցութենանք մէջ : Երկրորդ՝ երբոր ասոր հակառակ մեր ընկերին չունեցած աղէկութիւններն իրեն տալով՝ տղգրորթութիւն ընենք : Երրորդ՝ երբոր դատաստորին առջևը մեր ընկերին համար սուտ վկայութիւն ընելով՝ զբարտութիւն մը վկան դնենք, որով գուցե՛ իր պատիւը զորմացունենք, կամ իր ընտանեցը, իր ստացուածքին և կամ իր կեանքին աւ վասար մը հասցունենք :

Ի . Մարդիկ չարին հակամիտեալ ըլլալով՝ ընդհանրապէս կը սիենն իրենց ընկերին վկայով դէւ խօսիլը ։ Նմանապիս անոնց համար ըսուած դէւ խօսքերը ընկը ։ Ասկէց է որ կը ծագի վիճաբանութիւն, հակառակութիւն, նախանձ, ատելութիւն, վրեժինդրութիւն ու կուր : Կարդան Յառաջ Հայութ Գ. 1-18 :

Դ . Ուսուած մէկն մէկը Վատուծմէ ընորհք ու զօրութիւն խնդրէ՝ աս պատուիրանք պահելու համար : Վրկէ զատ միշտ քու տկապութիւնէ յիշէ ։ Քու գործերդ քեզի բաւական զբաղմունք թողը ըլլան, որ ուրիշն զորքին խառն նուելու ժամանակ չունենաս, աղէկի մոփիկ ըրէ երկու կողմն ալ՝ թէ որ մէկը դատելու ըլլաս, ու նայէ որ մէկու մը վրայ՝ մարդոց վճիրը ընդունէս միշտ, բայց դուն քու խրճմանկովդ դատէ ամեն բան . որչափ որ կընսա, միայն աղէկը պատմէ քու ընկերիդ համար : Վատուծն Ասոնիտացոց ժէ ։ Գլուխը շատ անդամ կարդա ու մոտածէ՛ անոր վրայ . ւամբաստղներուն ընկերութենէն հեռու կեցիր . և թէ որ անոնց հետը զանուին ու ուրիշ բան մը չկընսա ընել անոնց բանասարկութիւնները խափանելու, քու լուսաթիւնդ թողը յանդիմանէ անոնք : Անդապէս Վատուծմէ խնդրէ՝ եղայրսիրութեան ընորհքը :

Ե . Խնաւ մի՛ ցանկար գէլութիւն ընելով չար մարդոց մէջ անուն ստամալու . աշխարհ ինչ որ ընելու ըլլայ քու վրայովդ՝ դուն անմեղ խրճմանք մը ունեցիր Վատուծոյ ու մարդոց առջևը . համբերէ՝ երբոր քեզի զբարտութիւն

ընեն ու անիրաւութեամբ դատեն . Եստուծոյ ձգէ քու դատաստանդ . յօժարութեամբ դէպ'ի ան դատաստանին նայէ , երբոր ամէն մարդ իր գործքին համեմատ գովութիւն պիտի առնէ Եստուծմէ : Մատթ . Ե . 11 : ա կո՞նի . դ . 3-5 :

Օ . Քրիստոնեաները յատկապէս իրենց բարի անունն ու իրենց եղբայրներուն բարի անունը զգուշութեամբ պահելու են , որ անօգուտ ըըլլան աշխարհի մէջ , և վնաս չընեն Եւետարանին պատուցին ու Քրիստոսի փառքին :

Տասներորդ Պատուիրանքը :

Գ Տօւագ . իշ . 1-16 :

Ա . Ո՞րն է տասներորդ Պատուիրանքը :

Պ . “Եսու գրացիքիդ քանել մէ ցանկուր . ուս գրացիքիդ ինկանը՝ իմ անոր ժառանային՝ իմ անոր աղասիին՝ իմ անոր իշուն՝ և ուս գրացիքիդ ամենենին մէջ բանին մէ ցանկուր” :

Ա . Եստուած ի՞նչպէս կը պահանջէ ինծմէ որ իմ ընկերս սիրեմ :

Պ . Եմ անձիս պէս : Մատթ . իիք . 35-40 : Առաջ . ժդ . 9 , 10 :

Ա . Ուրեմն պարտաւոր չմ՞մ ուրախանալու , երբոր տեսնեմ զինքը որ ամէն բարիկներով լեցուն է ու անոնք կը վայելէ :

Պ . Արամերես :

Ա . Եայց դիցուք թէ ես անոր ունեցած պատուական բաներուն վրայ նախանձիմ , ցանկալով որ անոնք իմն ըլլան , ան ատենն ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պ . Աւք տնկած կ'ըլլաս , որ աս տասներորդ պատուիրանքին դէմ է :

Հ . Ես չե՞մ իմ պարտաւորութիւնս , որ իմ ունեցած բաներովս գոհ ըլլամ , առանց իմ ընկերիս ունեցածին նախանձելու :

Պ . Հրամերես :

Հ . Ի՞նչ կ'ըսէ Պօղոս առաքեալ իր բաւականութիւն սորվելուն վրայով :

Պ . “Ես սորվեցայ գոհ ըլլալ իմ դժոնուած վիճակիս մէջ : Գիտեմ շքաւորութիւն քաշելը . գիտեմ շատը ունենալը . ամէն բանի մէջ ամէն կերպով աղէկ սորվեր եմ թէ կշտանալը , թէ անօթենալը , թէ շատ ունենալը , և թէ պակառութիւն քաշելը” : Փիլիք . գ . 11 , 12 : Գործ . ի . 33 :

Հ . Ուրիշ Բ՞նչ կ'ըսէ :

Պ . “Եստուածպաշտութիւնը բաւականութիւնով մէկտեղ՝ մեծ շահավաճառութիւն մըն է : Ենչու որ բան մը քերինք աշխարհ , ու յայտնի է որ չենք կրնար անկէ բան մը տանիլ : Հապա կերակուր ու հանդերձ ունենալով , անոնցմով բաւականանանք” : ա՛ Տիմ . զ . 6-8 :

Հ . Ո՞րմէն կ'իջնեն ամէն բարի պարգևները և ամէն բարի շնորհները :

Պ . Եստուեմէ : Յատ . ա . 17 :

Հ . Ուրէ որ մէկը ժրածան ըլլայ ու աշխատի և միշտ արդարութիւն գործէ Եստուեց առցելը , արդեօք Եստուած թող կուտայ որ ան մարդուն պէտք եղած բան մը պակսի իրմէն :

Պ . Զէ :

Երանգի Տէր Եստուած արև ու վահան է . Տէրը շնորհք ու փառք պիտի տայ . բարութիւն մը պիտի չպակսեցունէ ուղղութեամբ քալողներէն : Ատով . ձդ . 11 :

Հ . Ես պատուիրանքը կ'արգիլէ՞ մեզ՝ մեր ընկերին դէմ մինչեւ անգամ չար խորհուրդ մը ունենալէն :

Պլ. ՀՀրամերես : Թւառաց ժկ. 22 : Առաջ. ծկ. 2 :իբ. 9 :

Հ. Ապրուր սիրտ մը ունենալու համար ի՞նչպէս աղօթելու ենք Աստուծոյ :

Պլ. “Ավ Աստուած՝ իմ մէջս մաքրուր սիրտ ստեղծէ՛, և իմ ներսի դիս ուղղիլ հոգի նորոգէ՛” : Ատղ. ծա՛. 10 :

Հ. Եւ ի՞նչպէս աղօթելու ենք Աստուծոյ՝ մեր սիրտերը փորձելու համար :

Պլ. “Դիրձէ՛ զիս՝ ով Աստուած, ու գիտցի՛ր իմ սիրտս : Իս քննէ՛ ու գիտցի՛ր իմ մտածմնաքներս, և նայէ թէ արդեօք չամբու մէջ ե՞՞ն, և զիս գէպ ՚ի յաւիտենական ճամբան առաջնորդէ՛” : Ատղ. ՃՂԹ. 23, 24 :

Հ. Ի՞նչպէս է առաջին չորս պատուիրանքներուն բռվանդակութիւնը :

Պլ. “Վու Տէր Աստուած՝ բոլոր սրտովդ, բոլոր հոգիովդ ու բոլոր զօրութիւնովդ սիրես” : Բ Օքն. դ. 5 : Ատղ. իբ. 37 :

Հ. Եւ ի՞նչ է մնացած վեց պատուիրանքներուն բռվանդակութիւնը :

Պլ. “Վու ընկերդ սիրես քու անձիդ պէս” : Ատղ. իբ. 39 :

Հ. Պարտաւա՞ր ենք բոլոր պատուիրանքները կատարելապէս պահելու :

Պլ. ՀՀրամերես . և մեր պարտաւորութեան անփոփոխ կանոնն են անոնք :

Հ. Ի՞նչ պիտի ըլլան անոնք՝ որ աս պատուիրանքներուն կատարելապէս չեն ՚իազանդիր :

Պլ. Պիտի պատժուին յաւիտենական կորուստով : Գաղ. գ. 10 :

Հ. Խայց մենք որ ՚իազանդած չենք աս պատուիրանք-

ներուն , ի՞նչպէս ուրեմն պիտի փրկուինք յաւխտենական կորուստէն :

Պ . Տէր Յիսուս Քրիստոսին հաւատալով :

Հաւատած Տէր Յիսուս Քրիստոսին , ու պիտի փրկուիս դուն՝ և քու տունդ : Պարք . Ժկ . 31 : Ե՞արք ! .
Ժկ . 16

Տասներորդ պատուիրանքը կը սորվեցունէ մեզի թէ մենք այնշափ սիրելու ու պատուելու ենք մեր ընկերը՝ որ սիրտերնուս մէջն անգամ ցանկալու չենք իր ունեցած բաներուն մէկին :

Ե . Խնքն ունենալու և վայելելու է բոլոր իր ստացուածները . ու մենք՝ թէ՛ գործքով և թէ՛ սրտով՝ անիրաւութիւն մը ընելու չենք իրեն : Լրբոր ինքը յաջողութիւն ունենայ , մենք ուրախանալու ենք . և իր գործքերուն հոգ տանելու ենք . ու երբոր բանի մը կարօտութիւն ունենայ , իրեն օգնելու ենք : Ո՞նք աշ գոհ ըլլալու ենք մեր վիճակն , ինչպէս որ սահմաներ է անիկայ մեր երկնաւոր ձայրը :

Ի . Ո՞նք աս պատուիրանքը կ'անարգենք նախ՝ երբոր տժգոհ ըլլանք խառուծմէ գանգատելով , որ մեզ մեր ընկերին պէս խնատուն , աղէկ , զօրաւոր , հարուստ , պատուելի , կամ անոր պէս երջանիկ չըրաւ , լրիրորդ՝ երբոր մենք նախանձինք մեր ընկերին , և ցանկանք որ ինքը զրկուի իր ստացած բանին մէկէն , և մենք ունենանք ու վայելնք անիկայ : Լրբորդ՝ երբոր զինքը՝ կամ իր կինը կամ իր զաւակները կամ իր անասունը նեղութեան մէջ տեսնենք ու չօգնենք իրեն , այլ մանաւանդ վրան խընդանք :

Պ . Բնականաբար ամէն մարդ ինքզինքը իր ընկերէն աւելի աղէկ կը սիրէ . անոր համար մէկը մէկալին ունեցածին՝ կամ անոր յաջողութեանը նախանձելով՝ անոր աղէկ բաներուն ցանկացող ու անոր երջանկութեանը հոգ չտանող եղած կ'ըլլայ . բայց ասանկ անձնասիրութիւնը՝ բոլորովին դէշ բան է . ուստի անոր վրայ ապաշխարելու

ենք , և նոր սիրտ մը ինդրելու ենք որ կարենանք սիրել մեր ընկերը մեր անձին պէս :

Դ . Եղօթենք որ կարող ըլլանք միշտ չնորհակալ ըլլալ ի՞նչ որ ըլլայ մեր վիճակը : “ Այս աշխարհիս մեծութիւնը անցաւոր է ” : Տժգոնք ու ցանկացող մարդը միշտ նեղութեան մէջ է : “ Իաւկիթ ” ցանկացաւ Ուրիային կոսդը . Աքասաբ՝ ‘ Լարովթին այգիին . ‘ Կէեզի ’ Աէեմանին արծաթիին ու հանդերձին . Յուդա ” Արքիամին ծանրագին իւղին . բայց աստիք ամէնքն ալ իրենց ցանկութենէն թշուառեղան : Յանկացող մարդու ոչ իր ներսիդին խաղաղութիւն ունի , ոչ ալ իր ընկերներուն հետ : Խնէ որ մեզի բաժին Աստուած ունենանք՝ բաւական է :

Այս վեց պատուիրանքները՝ որոնք որ հիմա քննեցինք , Երէրորդ պատիտի էը իրաւուն , և մեզի կը սորվեցունեն մեր պարտաւորութիւնը դէս՚ի մարդիկ . այսինքն . Նախ՝ թէ մենք սիրով ու յարգութիւնով կազանդելու ենք ան ամենուն՝ որոնք որ իշխանութիւն ունին մեր վրայ : Երկրորդ՝ թէ մեր ընկերին կեանքին վաս մը պիտի չհասցունենք : Երրորդ՝ թէ անոր ընտանիացը սրբութիւնն ու մաքրութիւնը պահելու և պաշտպանելու ենք : ‘ Չորրորդ՝ թէ իր ստացուածքը յափշտակելու չնեք : Հինգերորդ՝ թէ իր բարի անունը պիտի չաւրենք : Ահցերորդ՝ թէ իր յաջողութեանն ու հարստութեանը վրայ ուրախանալու ենք , և չարութեան գաղտուկ խորհուրդ մը անգամ սիրտերնուս մէջ ունենալու չնեք իրեն դէմ :

— Ենակ ասանկ են տասը պատուիրանքները , որոնք տուաւ մեզի ամենակարողն Աստուած , մեր Ատեղծիչն ու թագաւորը :

Ենակ են մեր օրէնքը , մեր պարտաւորութեան կանոնը , որուն պարտաւոր ենք հետևելու սրտով ու գործքով կատարելապէս , ապա թէ ոչ՝ դատապարտութեան տակ-կ’իյնանք :

Ո՞նք ամէնքս ալ աս օրէնքին կատարեալ կազանդութիւն ընենուս մէջ պակաս գտնուեցանք , ինչպէս որ մեր խզմտանքն ալ ասանկ կը վկայէ . և անոր համար դատապարտուած ենք :

Ո՞նք մեզմէ բան մը չենք կրնար ընել , որ Աստուածոյ

հասուցում ըլլայ՝ իրեն գէմ մեր գործած մեղքերուն համար :

Իսյյ ինքն իր մեծ ողորմութեամբը մեզի համար Փրկիչ մը նախախնամեց, Յիսուս Կրիստոս իր Որդին. որ մեզի համար Օրէնքին անէծքը կրեց : Ուստի փրկուելու համար պարտինք անոր հաւատալ ու անոր ապաւինիլ, ապաշախարելով ու մեր մեղքերը մէկ դի ձգելով :

Օրէնքը մեզի վարժապետ կ'ըլլայ՝ մեզ Կրիստոսին բերելու համար : Մէնք մեր սիրտերն ու մեր կեանքը օրէնքին հետ բաղդատելով՝ կը սորվինք մեր անթիւ յանցանքներն ու մեղքերը . կը սորվինք ան սոսկալի պատիժը որ գալու է . ան ատենը կը դողմանք, ու կը հարցոնենք թէ Բ՞նչ պարտինք ընել : Զայն մը կու գայ որ մեզի կ'ըլլէ թէ “ Եհա Աստուծոյ Գառու որ աշխարհի մեղքը կը վերցունէ ” . և թէ “ Են որ հաւատայ պիտի փրկուի, ան որ Հաւատայ, պիտի դատապարտուի ” : Ուստի ան երկնաւոր ձայնին հաւատալով՝ մեր հոգին կատարեալ ու բախութիւն կ'ունենայ :

Գ. ՄԵԾՈՒԵԼԻՐ ՊԵՐՏԱԿՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՐԵՅ :

1. Եշրիկներուն պարտաւորութիւնը :

Եփես . Ե . 22-33 :

Հ. Եշրիկներուն իր կնկանը վրայ ունեցած իշխանութեանը համար Բ՞նչ կը սորվեցունէ Եւետարանը :

Պ. “ Եշրիկը կնկանը գլուխն է, ինչպէս որ Կրիստոս աւ եկեղեցին գլուխն է ” : Եփես . Ե . 23-25 : ա Կոդր . Ժա . 3 : ա Տիմ . ք . 12 , 13 :

Հ. Բ՞նչ է երկանը պարտքը :

Պ. Ես է՝ իր կնիկը սիրել ու անոր հոգ տանիլ : ա Տիմ . Ե . 8 :

“ Եշիկներ , սիրեցէք մեր կնիկները , խչպէս որ ԿԸ-
րիստոս աւ սիրեց եկեղեցին , ու իր անձը մատնեց անոր
համար ” : Եժեւ . Ե . 25 :

▲ . Եշիկն իշխանութիւն ունի՞ իր կնիկը ծեծելու
կամ անոր հետ չարաչար երպով վարուելու :

Պ . Չէ . քանզի հրամայուած է երիկներուն որ իրենց
կնիկներուն “ դառն ըբլան ” : Առա . Գ . 19 :

▲ . Պետրոս Առաքեալը ի՞նչ կը հրամայէ երիկնե-
րուն :

Պ . “ Ամանապէս երիկները խոհեմութիւնով անոնց
հետը բնակին . տկար անօթի պէս պատիւ տալով կնիկ-
ներուն , իբրև կենաց չորհքին ժառանգակիցներ . որ ձեր
աղօթքներուն արգելք չըլլայ ” : ա Պիտ . Գ . 7 :

▲ . Օճէ որ բարեպաշտ երիկ մը աշխարհասէր կնիկ
ունենայ , ի՞նչ պիտի ընէ անոր համար :

Պ . Աղօթք ընելու է , և ձեռքէն եկածին չափ՝ Կրիս-
տոսի դարձունելու է անիկայ : ա Առնիլ . Է . 14-16 :

▲ . Անհաւասարիմ , անգութու իրենց կնկանը հոգ
չտանող երիկները պիտի փրկութիւն :

Պ . Չէ :

Ա . Աւետարանը կը սորվեցունէ որ երիկներն իրենց
կնիկներուն զլուկին են : Իայց անոնք թող զգուշանան
իրենց իշխանութիւնն ու զօրութիւնը չարաչար գործածե-
լէն . ու նային որ բարկացող , անգութ , դաժան կամ
անհամբոյր չըլլան : Իսկ ան երիկը որ ասանկ կերպով կը
վարուի իր տկար ու անօգնական կնկանը հետ , անիկայ
նուաստ ու թշուառ հոգւոյ տէր մարդ մըն է :

Բ . Եշիկները պարտին սիրել իրենց կնիկները , երկրի
վրայ ունեցած իրենց խիստ մտերիմ ու սիրելի բարեկամ-
ները սեպելով անոնք :

Գ . Եշիկները խնամելու են իրենց կնիկները : Պէտք

է որ ժրաշխան , զգաստ ու խնայող ըլլան , որ կարողանան իրենց կնիկներուն պիտոյքներն ու միսիթարութիւնները հոգալու :

՚1. Նըրիկները պատուելու են իրենց կնիկները : Եւ պէտք է որ յարգութիւն ու պատիւ ցուցընեն անոնց՝ թէ տանը մէջ ու թէ տնէն դուրս . մանաւանդ անոնց հիւանդութեան ժանանակը քաղցութեամբ և մարդասիրութեամբ վարուին , համբերելով անոնց տկարութեանը , հեռու կենալով նախանձոտ բնութենէ , և մանաւանդ զցուշանալով որ պատճառ շտան կնիկներուն՝ իրենց հաւատարմութեանը վրայ կասկածելու :

՚2. Նըրիկները հոգ տանելու են իրենց կնկանը փրկութեանը համար : ՚Եշա էրկանն ամենէն մեծ պարտաւորութիւնը՝ որ ունի իր կնկանը վրայ : Ուստի էրիկ մը թողլ միշտ միտքը բերէ որ ինքը պիտի կային ՚Աստուծոյ տտեանին առջելը , ու հաշիւ պիտի տայ կնկանը հետ ունեցած՝ իր ամէն վարմունքին համար , և անոր վրայ ունեցած իր բոլոր ազգեցութիւններուն համար : ա կործն . է . 16 , 29-34 :

2. Կնիկներուն պարտաւորութիւնը

Եռութ . լա . 10-31 :

՚1. Կօնւ է կնիկներուն յատուկ պարտաւորութիւնը :

՚2. Աիրել ու ֆազանդիւ իրենց էրկանը :

Կրիկները իրենց էրիկներուն ֆազանդ ըլլան՝ որպէս թէ Տէրոջը : ՚Երես . է . 22 : Առաջ . գ . 18 : ա Պիտ . գ . 1 : ա Տիմ . ք . 11-15 : Տիտ . ք . 4 , 5 :

՚3. Պէտք է որ կնիկները զարդարանք սիրեն , աշխարհի զաւարձութիւն վնասուն , ու տնէ տուն պտըտելով ամէն օր այցիլութեան երթան :

՚4. Շէ : ա Տիմ . ք . 9 , 10 : ա Պիտ . գ . 3 , 4 :

՚5. Կօնւ տեսակ հոգի ունենալու են անոնք :

Պ . “Հեղ ու հանգարտ հսկի մը” : ա Պիտ . է . 4 :

Ա . Եւ ան կնիկները՝ որոնք աստուածպաշտութեանը յանձնառու կ'ըլլան , ինտիր կը վայլէ որ զարդարուին :

Պ . Եւ վայլէ որ բարի գործերով զարդարուին” : ա Տիմ . ք . 9 , 10 :

Ա . Ո՞րն է կնիկներուն սեպհական տեղը , և Քւը կը կայանայ իրենց գլխաւոր հոգն ու պարաւորութիւնը :

Պ . Իրենց ընտանիքին մէջ : Ըստ : լամ . 10-31 :

Ա . Երիկներն իրենց ընտանիքին հոգ տանիլը , ու ժրութեամբ և ինայողութեամբ ամեն բան մաքուր և 'ի կարգի պահելը՝ որոնցմէ՞ կը յուսան

Պ . Իրենց կնիկներէն :

“Որ իրատեն նորահասակ կնիկները՝ Երիկնին սիրող , զաւակնին սիրող ըլլալ , խոհեմ , ողջախոհ , տնաշէն , բարեգործ , իրենց Երիկներուն ֆազանդ . որ չըլայ թէ Եստուծոյ խօսքը հայհոյուի” : Տիտ . ք . 4 , 5 :

Ա . Իւրեպաշտ կնիկները՝ որ աշխարհասէր Երիկներ ունին , ի՞նչպէս պիտի աշխատին անոնք Վրիստոսի դարձունելու :

Պ . Իրենց բարի վարքովը : ա Լորին . է . 16 : ա Պիտ . է . 1 , 2 :

Ա . Երիկներուն և կնիկներուն ընտանեկան հոգեոր պարտաւորութիւնն ի՞նչ է :

Պ . Իւրարու համար և իրարու հետ աղօթք ընել , և իրենց ընտանիքին հետ ալ , և իրարու երջանիկ ըլլալուն աշխատիլ , թէ աս աշխարհիս և թէ հանդերձեալ աշխարհին համար :

Ա . Կնիկները՝ Եստուծմէ ետքը իրենց Երիկներուն վրայ սէր ունենալու են :

Բ . Ժորիանակ՝ բարկացող , անձասէր ու հակառակող

ԸԱՎԱԾԸ, կնիկները պիտի Խաղանդին իրենց էրիկներուն ամէն բանի մէջ, բաց ՚ի անոնցմէ՛ որ օրինաւոր չեն :

Դ. • Իրենց ամենէն մեծ հոգն ու գլխաւոր պարտաւորութիւնը կը կայանայ բուն իրենց ընտանիքին մէջ : Ուստի հարկաւոր է որ տնաշնչն, ժրածան, կանուխ արթնցող, մաքրասէր, խնայող, զգուշաւոր, խաղաղաբար և ծանրաբարոյ ըլլան . ու նաև աղէկ կառավարին իրենց զաւկըներն ու ծառաները, առանց ստէպ տուտըռալու, սպառնալու, ու ամեն ատեն գանգատ ընելու : Այս կնիկները՝ որ չափազանց զարդարանք կը սիրեն, ու միշտ տնէ տուն կը պտղուին, շաղակրատութիւն կ'ընեն, ու ըիշներուն բերնէն կը ջանան լուրեր առնել՝ որ ետքը բամբասանք ընեն ու խոռովութիւն հանեն, անանկները թշշուառութեան մէջ կը ձգեն իրենց էրիկներն ու ընտանիքը, ու իրենց անձինքը փորձութեան ու գժբախտութեան կը տանին :

Ե. • Իսրեապաշտ կնիկները՝ որ աշխարհասէր էրիկներ ունին, պարտին զգոյշ ըլլալ իրենց վարմութին ու խօսակցութեանը մէջ, որ չըլլայ թէ նաևսապաշարմունքի տակ ձգեն իրենց էրիկները . այլ ընդ հակառակն պէտք է որ ամէն միջոցով համոցն անոնք որ գարձի գան, ապաշխարին ու հաւատան :

Խ. • Էրիկներն ու կնիկները պէտք է որ միշտ միտքերնին բերնն իրենց խոստմունքները և իրենց պարտաւորութիւնները մէկզմէկու վրայ, իրենց զաւկներուն և ծառաներուն վրայ, ու մանաւանդ դէպ՚ի լստուած ալ . ու ամէն բանի մէջ պէտք է որ ջանան լստուածոյ օրնութիւնը ձեռք բերելու : Ասով . Ճիշ . 1 :

3. ԿՅԱՆՈՂՅՆԵՐՈՒՆ պարտաւորութիւնը :

Հ. • Ե՞նչ է բարեպաշտ ծնողաց առաջին պարտաւորութիւնը և արտօնութիւնը, իրենց զաւկներուն վրայով :

Պ. • Լյոնց պարտաւորութիւնը և արտօնութիւնն է :

ԽԱՆԵՐՈՐԴ Պատուիրանքը :

ա կորմն . ժք . 1-13 :

Ն . Ո՞րն է խներորդ Պատուիրանքը :

Պ . “Վաս գրացիչ դեմ սուր վայութիւն մ' ըներ” :

Ն . Թնէ որ քու վրադ ձգեմ ան յանցանքը՝ որն որ ուրիշ մէկը ըրեր է , ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պ . Առւա վկայութիւն :

Ն . Թնէ որ քու վրայովկ գէշ բաներ ըսեմ սուտ տեղը , ու ջանամ ուրիշներն ալ գէշ խորհել տալ քու վրայովզ , և այնպէս կորսընցունեմ քու բարի անունդ ու պատիւդ , անատենը ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պ . Առւա վկայութիւն :

Ն . Թնէ որ Նատուած վկայ բռնեմ իմ սուտ խոփերս հաստատելու համար , իմ մեղքս ալ աւելի մեծ չբլլար :

Պ . Հրամերես :

Ն . Թնէ որ քու վրայովզ սուտ տեղը ուրիշներուն գէշ խօսիլն ու ամբաստանութիւն ընելը լսեմ , և գիտնամ թէ դուն անմեղ եռ , և անոնց հետ մէկ ըլլալով՝ իրենք յօժարեցունեմ ատ բանին մէջը յառաջանալու , անատենը ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պ . Առւա վկայութիւն :

Ն . Թնէ որ գատաւորին ատեանը կամ ուրիշ և իցէ տեղ մը կանցուելու ըլլանք մեր ընկերին համար կամ անոր դէմ վկայութիւն ընելու , ի՞նչ պարտինք խօսիլ :

Պ . Ճ'շմարտութիւն :

Առւա ըլւը պիտի չտարածես . անօրէնի հետ մեռքդ պիտի շցնես անիրաւ վկայ ըլլալով : Զարութիւն ընելու համար՝ բազմութեանը պիտի չհետեխս . ու գատաստանի մէջ

իրաւունելը ծռելու համար շատերուն ետևէն խոտորելով՝
խօսք պիտի չխօսիս : Խվց իդ ։ 1, 2 :

Ա . Ուստի ի՞նչ կ'արգիլէ աս պատուիրանքը :

Պ . Կ'արգիլէ ամէն տեսակ բանսարկութիւնը , զըր-
պարտութիւնը և բամբասանքը :

Ա . Ասոր վրայով ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիրքը :

Պ . “Քու ժողովուրդիդ մէջք չարախօսութիւն ընելու
պարտիս” : Ղետ . Ժթ . 16 :

Ա . Ի՞նչ տեսակ մարդիկ են բանսարկուները , զըր-
պարտիները և բամբասոները :

Պ . Խոռվարար ու վնասակար անձինք են .

Ա . Անք ընկերներուն ի՞նչ կերպով պարտինք խօսիլ
շշմարտութիւնը :

Պ . “Անրով” :

Ա . Ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիրքն ասոր վրայով :

Պ . “Եմն դառնութիւն՝ և բարկութիւն՝ ու սրտմոռու-
թիւն՝ և աղաղակ՝ ու հայհոյութիւն վերցուի ձեզմէ ամէն
շարութիւններով մէկտեղ” : Խետ . դ . 31 :

Ա . Արկնե՛նայիմ , ուրիշ ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիր-
քը :

Պ . “Թուէ որ մէկը զննքը կրօնասէր կը սեպէ՝ ու իր
լեզուին սանձ չդներ , հապա իր սիրտը կը խաբէ , անան-
կին կրօնասիրութիւնը փուշէ” : Յաէ . ա . 26 :

Ա . Ի՞նչպէս վարուելու ենք սուտզուցներուն հետը :

Պ . Պարտինք ատել սուտզուցնելոն ու սուտ վկաները ,
և անոնց հետ ընկերութիւն ընելէն հրաժարիլ :

Խմաստուներուն հետ քալողը խմաստուն կ'ըլլայ . բայց
անմիտներուն հետ ընկերացողը չար կ'ըլլայ : Եռաէ .
Ժդ . 20 :

Ա . Արէաներն ի՞նչ վկայութիւն ըրին մեր Փրկչին
դէմ :

Պ) • Առատ վկայութիւն : Մատի . իդ . 59-61 :

Հ) • Ըատ հարստութենէն մանաւանդ կեանքէն ալ
ի՞նչ թանկագին բան ունի մարդ :

Պ) • “Իարի անուն” : Առատ . իբ . 1 :

Հ) • Իարի անուն վաստըկելու հումար ի՞նչպէս ջանալու
ենք :

Պ) • Իարի ըլլալով ու աղէկութիւն ընելով :

Հ) • Անգը որ մեծ բան կը սեպենք մեր աղէկ անունը ,
չը՞նք պարտաւորիր պաշտպանել նաև մեր ընկերինն ալ :

Պ) • Հրամնընս , կը պարտաւորինք :

Հ) • Առատ խօսովներն ու սռատ վկայութիւն ընողները
կի՞նմն անպատիժ մնալ :

Պ) • ԶԵ :

Առատ վկան անպատիժ պիտի չմնայ , ու ստութիւններ
խօսողը պիտի չազատի : Առատ . ժթ . 5 , 9 :

Խններորդ պատուիրանքը մեղի կը սորվեցուանէ մեր պար-
տաւորութիւնը՝ մեր ընկերին բարի անունին ու մեր բարի
անունին վկայով :

Ը) • Եշեարինս մէջ մեր հանդատութիւնն ու երջանկու-
թիւնը , մեր յաջողութիւնը և մեր օգուտը՝ մեր ունեցած
անունէն ու համբաւէն շատ կախում ունի : Ուստի մեր
պարտաւորութիւնն է բարի դորձերով աղէկ անուն վաս-
տըկելու ջանալ , ու երբոր կը ստանանք՝ մեր պարտաւո-
րութիւնն է պաշտպանել անիկայ : “Յաե մեր ընկերին ալ
աղէկ անունն ու պատիւը պաշտպանելու ենք՝ իր վրայ ճըշ-
մարիտը խորհելով ու խօսելով , առանց շողպորթելու ,
զըպարտելու , կամ անոր վրայ անիրաւ կասկած մը ունե-
նալու . ողըրմութեամբ ու գթութեամբ յանդիմանելով
անոր յանցակները , ու անոնք ծածկելով ուրիշներէն՝ որ-
շափ որ պէտք է ծածկել . պաշտպանելով զնիքը ան թշշ-
նամիներէն՝ որոնք անոր աղէկ անունն աւըել կ'ուզեն . և
վերջապէս թէ՛ իրեն համար է եղեր և թէ իրեն դէմ՝ չըւ-

մարիտ վկայութիւն ընդուվ՝ վկայութիւն տալու կանուած առենիս :

Ա . Առենք աս պատուիրանքը կ'անարդենք նախ երբոր բանսարկու , շատախօս , խովարար կամ բամբառղ ըլլ-լանք մեր հասարակ խօսակցութենանը մէջ : Երկրորդ՝ երբոր ասոր հակառակ մեր ընկերին չունեցած աղէկութիւններն իրեն տալով՝ շղզոքութութիւն ընենք : Երրորդ՝ երբոր գատաւորին առջևը մեր ընկերին համար տուտ վկայութիւն ընելով՝ զբարտութիւն մը վրան դնենք , որով գուցե՛ իր պատիւը զորանցունենք , կամ իր ընտանեցը , իր տուցուածքին և կամ իր կեանքին ալ վնաս մը հայումնենք :

Պ . Մարդիկ չարին հակամիսեալ ըլլալով՝ ընդհանրապէս կը սիրեն իրենց ընկերին վկայով դէշ խօսիլը . նմանապէս անոնց համար ըսուած գէշ խօսքերը լսելը : Խակէց է որ կը ծագի վիճաբանութիւն , հակառակութիւն , նախանձ , ատելութիւն , վրէժինդրութիւն ու կոփի : Կորդո՞ Յա՞ : գ . 1-18 :

Ի . Խնաջ ամեն մէկը Վատուծմէ նորհք ու գորութիւն խնդրէ՝ աս պատուիրանքը պահելու համար : Եսկէ զատ միշտ քու տկարութիւններ յիշէ՝ քու գործքերդ քեզի բաւական զբաղունք թող ըլլան , որ ուրիշն զործքին խառնուելու ժամանակ չընանեաս . աղէկ մոփի ըրէ՛ իրկու կողմն ալ՝ թէ որ մէկը զատելու ըլլաս , ու նայէ որ մէկու մը վրայ՝ մարդոց վճիռը չընդունիս միշտ , բայց գուն քու խղճմանակովդ դատիէ ամէն բան . որչափ որ կընաս , միայն աղէկը պատմէ՝ քու ընկերիդ համար : Վատավի Կորմաւացոց ժճ . Գլուխը շատ անդամ կարգած ու մտածէ՛ անոր վրայ . ւամբասովներուն ընկերութենէն հեռու կեցի՛ր . և թէ որ անոնց հետը գտնուեիս ու ուրիշ բան մը չկրնաս ընել անոնց բանսարկութիւնները խափանելու , քու լուսութիւնդ թաղ յանդիմանէ անոնք : Ա երջապէս Վատուծմէ խնդրէ եղայրյուիրութեան նորհքը :

Լ . Խնաւ մի՛ ցանկար գէշութիւն ընելով չար մարդոց մէջ անուն ստանալու . աշխարհ ինչ որ ընելու ըլլայ քու վրայովք՝ գուն անմեղ խղճմանք մը ունեցի՛ր Վատուծոյ ու մարդոց առջելը . համբերէ՛ երբոր քեզի զբարտութիւն

ընեն ու անիրաւութեամբ դատեն . Աստուծոյ ձգէ քու դատաստանդ . յօժարութեամբ դէպ'ի ան դատաստանին նայէ , երբոր ամէն մարդ իր գործքին համեմատ գովութիւն պիտի առնէ Աստուծմէ : Ոտարի . Ե . 11 : ա կորին . դ . 3-5 :

Օ . «Բրիստոնեաները յատկապէս իրենց բարի անունն ու իրենց եղայրներուն բարի անունը զգուշութեամբ պահպատ են , որ անօգուտ ըլլան աշխարհի մէջ , և վասընեն Աւետարանին պատույն ու Կրիստոնէ փառքին :

Տասներորդ Պատուիրանքը :

Ք Յօանէ . իմ . 1-16 :

Ա . Ո՞րն է տասներորդ Պատուիրանքը :

Պ . «Կու դրացիկ գոնը մ՛ ցանկոր . ու դրացիկ ինքունը՝ իմ անոր ծառաւոյին՝ իմ անոր աղոտիչնին՝ իմ անոր եղին՝ իմ անոր իլլան և ու դրացիկ աղնեւին մէջ ըստին մ՛ ցանկոր » :

Ա . Աստուծ ի՞նչպէս կը պահանջէ ինձմէ որ իմ ընկերս սիրեմ :

Պ . Եմ անձիս պէս : Ոտարի . իբ . 35-40 : Առաջ . Ժ ք . 9 , 10 :

Ա . Ուրեմն պարտաւոր չե՞մ ուրախանալու , երբոր տեսնեմ զինքը որ ամէն բարիքներով լեցուն է ու անոնք կը վայելէ :

Պ . Արամերես :

Ա . Դայց դիցուք թէ ես անոր ունեցած պատուական բաներուն վրայ նախանձիմ , ցանկալով որ անոնք իմն ըլլան , ան ատենն ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պ . Աչք տնկած կ'ըլլաս , որ աս տասներորդ պատուիրանքին դէմ է :

Հ . Աս չե՞ իմ պարտաւորութիւնս , որ իմ ունեցած բաներովս գոհ ըլլամ , առանց իմ ընկերիս ունեցածին նախանձելու :

Պ . Հրամերես :

Հ . Է՞նչ կըսէ Պօղոս առաքեալ իր բաւականութիւն սորմելուն վրայով :

Պ . “ Խա սորմեցայ գոհ ըլլալ իմ գտնուած վիճակիս մէջ : Գիտեմ չքաւորութիւն քաշելը . գիտեմ շատը ունենալը . ամէն բանի մէջ ամէն կերպով աղէկ սորմեր եմ թէ կշտանալը , թէ անօթենալը , թէ շատ ունենալը , և թէ պակսութիւն քաշելը ” : Փէլք . դ . 11 , 12 :

Գործ . ի . 33 :

Հ . Ուրիշ Է՞նչ կըսէ :

Պ . “ Աստուածպաշտութիւնը բաւականութիւնով մէկտեղ՝ մեծ շահավաճառութիւն մըն է : Խնջու որ բան մը չերինք աշխարհ , ու յայտնի է որ չենք կրնար անկէ բան մը տանիլ : Հապա կերակուր ու հանդերձ ունենալով , անոնցմով բաւականանանք ” : ան Տէմ . դ . 6-8 :

Հ . Ո՞րմէն կ'իշնեն ամէն բարի պարզեները և ամէն բարի շնորհքները :

Պ . Աստուծմէ : Յատ . ան . 17 :

Հ . Բաէ որ մէկը ժրաջան ըլլայ ու աշխատի և միշտ արդարութիւն գործէ Աստուծոյ առջելը , արդեօք Աստուած թող կուտամի որ ան մարդուն պէտք եղած բան մը պակսի իրմէն :

Պ . Զէ :

Վհանգի Տէր Աստուած արև ու վահան է . Տէրը շնորհք ու փառք պիտի տայ . բարութիւն մը պիտի չպակացունէ ուղղութեամբ քալովներէն : Ասով . ձէ . 11 :

Հ . Աս պատուիրանքը կ'արգիլքօ մեզ՝ մեր ընկերին դէմ մինչև անդամ չար խորհուրդ մը ունենալէն :

Պ . Հրամերես : Թւուաց ժկ . 22 : Առաջ . ծկ . 2 : իդ . 9 :

Հ . Ապօւր սիրտ մը ունենալու համար թօնչպէս աղօթելու ենք Աստուծոյ :

Պ . “ Ով Աստուած՝ իմ մէջս մաքուր սիրտ ստեղծէ՛ , և իմ ներսի դիս ուղղող հոգի նորոգէ՛ ” : Առաջ . ծա . 10 :

Հ . Եւ թօնչպէս աղօթելու ենք Աստուծոյ՝ մեր սիրտերը փորձելու համար :

Պ . “ Փորձէ՛ զիս՝ ով Աստուած , ու գիտցիր իմ սիրտս + իս քննէ՛ ու գիտցիր իմ մտածմուկներս , և նայէթէ արդեօք չար ճամբու մէջ եմ , և զիս դէպ՚ի յաւիտենական ճամբան առաջնորդէ՛ ” : Առաջ . ծլթ . 23 , 24 :

Հ . Թօնչպէս է առաջին չորս պատուիրանքներուն բռվանդակութիւնը :

Պ . “ Կու Տէր Աստուածդ՝ բոլոր սրտովք , բոլոր հոգիովք ու բոլոր զօրութիւնովք սիրես ” : բՕրին . կ . 5 : Առաջ . իդ . 37 :

Հ . Եւ թօնչէ մնացած վեց պատուիրանքներուն բռվանդակութիւնը :

Պ . “ Կու ընկերդ սիրես քու անձիդ պէս ” : Առաջ . իդ . 39 :

Հ . Պարտաւո՞ր ենք բոլոր պատուիրանքները կատարելապէս պահելու :

Պ . Հրամերես . և մեր պարտաւորութեան անփոփոխելի կանոնն են անոնք :

Հ . Թօնչ պիտի ըլլան անոնք՝ որ աս պատուիրանքներուն կատարելապէս չեն կազմանդիր :

Պ . Պիտի պատժուին յաւիտենական կորուստով : Գաղաք . կ . 10 :

Հ . Բայց մենք որ կազմանդած չենք աս պատուիրանք-

Ներուն, ի՞նչպէս ուրեմն պիտի փրկուինք յաւիտենական կորուստէն :

Գլ. Տէր Օխուս Կրիստոնին հաւատալով :

Հաւատան Տէր Օխուս Կրիստոնին, ու պիտի փըրկուիս դուն՝ և քու տունդ : Գործ ժկ. 31 : Այրէ : Ժկ. 16

Տասներորդ պատուիրանքը կը սորվեցունէ մեզի թէ մենք այնչափ սիրելու ու պատուելու ենք մեր ընկերը՝ որ սիրտերնուս մէջն անգամ ցանկալու չենք իր ունեցած բաներուն մէկին :

Ե. Խնդն ունենալու և վայելելու է բոլոր իր ստացուածները . ու մենք՝ թէ գործքով և թէ սրտով՝ անիրաւութիւն մը ընելու չենք իրեն : Երբոր ինքը յաջողութիւն ունենայ, մենք ուրախանալու ենք . և իր գործքերուն հոգ տանելու ենք . ու երբոր բանի մը կարօտութիւն ունենայ, իրեն օգնելու ենք : Ոչնք աշ գոհ ըլլալու ենք մեր վիճակէն, ինչպէս որ սահմաներ է անիկայ մեր երկնաւոր ձայրը :

Տ. Ոչնք աս պատուիրանքը կ'անարգենք նախ՝ երբոր տժգոհ ըլլանք Վստուծմէ գանգատելով, որ մեզ մեր ընկերին պէս իմաստուն, աղէկ, զօրաւոր, հարուստ, պատուելի, կամ անոր պէս երջանիկ չըրաւ : Երկրորդ՝ երբոր մենք նախանձինք մեր ընկերին, և ցանկանք որ ինքը զըրկուի իր ստացած բանին մէկին, և մենք ունենանք ու վայելնք անիկայ : Երրորդ՝ երբոր զինքը՝ կամ իր կինը կամ իր զաւակները կամ իր անասունը նեղութեան մէջ տեսնենք ու ջօնենք իրեն, այլ մանաւանդ վրան խընդանք :

Գ. Շնականաբար ամէն մարդ ինքզնքը իր ընկերէն աւելի աղէկ կը սիրէ . անոր համար մէկը մէկալին ունեցածին՝ կամ անոր յաջողութեանը նախանձելով՝ անոր աղէկ բաներուն ցանկացող ու անոր երջանկութեանը հոգ չտանող եղած կ'ըլլայ . բայց ասանկ անձնասիրութիւնը՝ բոլորովին դէշ բան է . ուստի անոր վրայ ապաշխարելու

ենք , և նոր սիրտ մը ինդրելու ենք որ կարենանք սիրել մեր ընկերը մեր անձին պէս :

Դ . Եղօթենք որ կարող ըլլանք միշտ չնորհակալ ըլլալ ի՞նչ որ ըլլայ մեր վիճակը : “ Այս աշխարհիս մեծութիւնը անցաւոր է ” : Տժգոհ ու ցանկացող մարդը միշտ նեղութեան մէջ է : “ Խաւիթ ” ցանկացաւ Ուրիային կնոջը . Աքասար՝ “ Արբովթին այգիին . Գլէեզի ” Աէեմանին արծաթին ու հանդերձին . Յուռագա՝ Արիամին ծանրագին իւղին . բայց ասոնք ամենքն ալ իրենց ցանկութենէն թշուառ եղան : Յանկացող մարդը ու իր ներսիդին խաղաղութիւն ունի , ու ալ իր ընկերներուն հետ : Ընէ որ մեզի բաժին Աստուած ունենանք՝ բաւական է :

— Այս վեց պատուիրանքները՝ որոնք որ հիմա քննեցինք , Խրէրորդ պատիտաէ իւ քըստին , և մեզի կը սորվցուանեն մեր պարտաւորութիւնը դէպ’ի մարդիկ . այսինքն . նախ՝ թէ մենք սիրով ու յարգութիւնով կազմանդելու ենք ան ամենուն՝ որոնք որ իշխանութիւն ունին մեր վրայ : Խրկորորդ՝ թէ մեր ընկերին կեանքին վասա մը պիտի չհասցուանենք : Խրրորդ՝ թէ անոր ընտանեացը սրբութիւնն ու մաքրութիւնը պահելու և պաշտպանելու ենք : Չորրորդ՝ թէ իր ստացուածքը յափշտակելու չենք : Հինգերորդ՝ թէ իր բարի անունը պիտի չաւրենք : Ա եցերորդ՝ թէ իր յաջողութեանն ու հարստութեանը վրայ ուրախանալու ենք , և շարութեան գալստուկ խորհուրդ մը անգամ սիրտսերնուս մէջ ունենալու չենք իրեն դէմ :

— Ահա ասանկ են տասը պատուիրանքները , որոնք տուաւ մեզի ամենակարողն Աստուած , մեր Ատեղծիչն ու թագաւորը :

Անոնք են մեր օրէնքը , մեր պարտաւորութեան կանոնը , որուն պարտաւոր ենք հետևելու սրտով ու գործքով կատարելապէս , ապա թէ ու՝ դատապարտութեան տակ-կ’իյնանք :

Անոնք ամենքս ալ աս օրէնքին կատարեալ կազմանդութիւն ընենուս մէջ պակաս գտնուեցանք , ինչպէս որ մեր խոճանանքն ալ ասանկ կը վկայէ . և անոր համար դատապարտուած պարտուած ենք :

Անոնք մեզմէ բան մը չենք կրնար ընել , որ Աստուածոյ

հատուցումը ըլլայ՝ իրեն դէմ մեր գործած մեղքերուն համար :

Իսյց ինքն իր մեծ ողորմութեամբը մեզի համար Փրկիչը մը նախախամից, Հիսուս Քրիստոս իր Որդին . որ մեզի համար Օրէնքին անէծքը կրեց : Ուստի փրկուելու համար պարտինք անոր հաւատալ ու անոր ապաւինիլ, ապաշ-խարիլով ու մեր մեղքերը մէկ գի ձգելով :

Օրէնքը մեզի վարժապետ կ'ըլլայ՝ մեզ Քրիստոսին բերելու համար : Անէնք մեր սիրտերն ու մեր կեանքը օրէն-քին հետ բաղդատելով՝ կը սորվինք մեր անթիւ յանցանք-ներն ու մեղքերը . կը սորվինք ան սոսկալի պատիժը որ գալու է . ան ատենը կը դողանք, ու կը հարցունենք թէ ի՞նչ պարտինք ընել : Ձայն մը կու գայ որ մեզի կ'ըսէ թէ “ Եհան Առառուծոյ Դատուր որ աշխարհի մեղքը կը վեր-ցունէ ” . և թէ “ Են որ հաւատայ պիտի փրկուի, ան որ հաւատայ, պիտի դատապարտուի ” : Ուստի ան երկնաւոր ձայնին հաւատալով՝ մեր հոգին կատարեալ ու-րախութիւն կ'ունենայ :

Գ. ՄԵՍԱՆԵԼՈՐ ՊԵՐՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ- ՎՐԵՅ :

1. Եշրկներուն պարտաւորութիւնը :

Ետես . Ե . 22-33 :

Ա . Եշրկանն իր կնկանը վրայ ունեցած իշխանութեանը համար ի՞նչ կը սորվեցունէ Եւետարանը :

Պ . “ Եշրկը կնկանը գլուխն է, ինչպէս որ Քրիստոս ալ եկեղեցին գլուխն է ” : Ետես . Ե . 23-25 : ա Աորդի . Ժա . 3 : ա Տիւ . Ք . 12, 13 :

Ա . Ի՞նչ է երկանը պարտքը :

Պ . Ես է՝ իր կնկանը սիրել ու անոր հոգ տանիլ : ա Տիւ . Ե . 8 :

“ Եշրիկներ , սիրեցէք մեր կնիկները , խչպէս որ Վը-
րիստոս աւ սիրեց եկեղեցին , ու իր անձը մատնեց անոր
համար ” : Խժեռ . է . 25 :

Ն . Եշրիկն իշխանութիւն ունի՞ իր կնիկը ծեծելու
կամ անոր հետ շարաչար կերպով վարուելու :

Պ . Չէ . քանզի հրամայուած է երիկներուն որ իրենց
կնիկներուն “ դառն ըլլան ” : Առաջ . գ . 19 :

Ն . Պետրոս Առաքելը ի՞նչ կը հրամայէ երիկնե-
րուն :

Պ . “ Ամանապէս երիկները խոհեմութիւնով անոնց
հետը բնակին . տկար անօթի պէս պատիւ տալով կնիկ-
ներուն , իրեւ կենաց չորհքին ժառանգակիցներ . որ ձեր
աղօթքներուն արգելք ըլլայ ” : ա Պիտր . գ . 7 :

Ն . Ծնէ որ բարեպաշտ երիկ մը աշխարհասէր կնիկ
ունենայ , ի՞նչ պիտի ընէ անոր համար :

Պ . Եղօթք ընելու է , և ձեռքէն եկածին չափ՝ Վրիս-
տոսի դարձունելու է անիկայ : ա Առնան . է . 14-16 :

Ն . Անհաւատարիմ , անդութ ու իրենց կնկանը հոգ
չտանող երիկները պիտի փրկութիւն :

Պ . Չէ :

Ն . Աւետարանը կը սորվեցունէ որ երիկներն իրենց
կնիկներուն գլււին են : Իայց անոնք թող զգուշանան
իրենց իշխանութիւնն ու զօրութիւնը չարաչար գործածե-
լին . ու նային որ բարկացող , անդութ , դաժան կամ
անհամբոյր ըլլան : Իսկ ան երիկը որ ասանկ կերպով կը
վարուի իր տկար ու անօգնական կնկանը հետ , անիկայ
նուաստ ու թշուառ հոգւոյ տէր մարդ մըն է :

Բ . Եշրիկները պարտին սիրել իրենց կնիկները , երկրի
վրայ ունեցած իրենց խիստ մտերիմ ու սիրելի բարեկամ-
ները սեպելով անոնք :

Պ . Եշրիկները խնամելու են իրենց կնիկները : Պէտք

է որ ժրածան , զքաստ ու խնայող ըլլան , որ կարողանան իրենց կնիկներուն պիտոյքներն ու միմիթարութիւնները հոգալու :

Դ . Լյորիկները պատուելու են իրենց կնիկները : Եւ պէտք է որ յարգութիւն ու պատիւ ցուցընեն անոնց՝ թէ տանը մէջ ու թէ տնէն դուրս . մանաւանդ անոնց հիւանդութեան ժանանակը քաղցրութեամբ և մարդասիրութեամբ վարուին , համեմերելով անոնց տկարութեանը , հեռու կենալով նախանձու բնութենէ , և մանաւանդ զբուշմանը որ պատճառ շտան կնիկներնուն՝ իրենց հաւատարմութեանը վրայ կասկածելու :

Ե . Լյորիկները հոգ տանելու են իրենց կնկանը փրկութեանը համար : Եշա էրկանն ամենէն մեծ պարտաւորութիւնը՝ որ ունի իր կնկանը վրայ : Ուստի էրիկ մը թող միշտ միտքը բերէ որ ինքը պիտի կայնի Եստուծոյ ատեանին առջել , ու հաշիւ պիտի տայ կնկանը հետ ունեցած՝ իր առէն վարժոնքին համար , և անոր վրայ ունեցած իր բոլոր ազգեցութիւններուն համար : ա Առնիլ . է . 16 , 29-34 :

2 . Կնիկներուն պարտաւորութիւնը

Վատակ . լա . 10-31 :

Ճ . Խօնչ է կնիկներուն յատուկ պարտաւորութիւնը :

Պ . Աիրել ու կազմանդիլ իրենց էրկանը :

Կարկները իրենց էրիկներուն կազմանդ ըլլան՝ որպէս թէ Տէրոջը : Երես . է . 22 : Ասու . գ . 18 : ա Պիտ . գ . 1 : ա Տի . բ . 11-15 : Տիտ . բ . 4 , 5 :

Ճ . Պէտք է որ կնիկները զարդարանք սիրեն , աշխարհի զաւարձութիւն փնտուեն , ու տնէ տուն պտըսելով ամէն օր ացցիլութեան երթան :

Պ . Չէ : ա Տի . բ . 9 , 10 : ա Պիտ . գ . 3 , 4 :

Ճ . Խօնչ տեսակ հոգի ունենալու են անոնք :

Պ . “Հեղու հանդարս հօգի մը” : ա Պիտ . է . 4 :

Ա . Եւ ան կնիկները՝ որոնք աստուածպաշտութեանը յանձնառու կ'ըլլան , ինտե՛ր կը վայլէ որ զարդարուին :

Պ . Կը վայլէ որ բարի գործերով զարդարուին” : ա Տիւ . բ . 9 , 10 :

Ա . Ո՞րն է կնիկներուն սեպհական տեղը , և ժւր կը կայանայ իրենց գլխաւոր հոգն ու պարտաւորութիւնը :

Պ . Իրենց ընտանիքին մէջ : Աւաչ . լա . 10-31 :

Ա . Եշիկներն իրենց ընտանիքին հոգ տանիլը , ու ժրութեամբ և խնայողութեամբ ամէն բան մաքուր և 'ի կարգի պահելը՝ որոնցմէ՞ կը յուսան :

Պ . Իրենց կնիկներէն :

“Ուր խրատեն նորահասակ կնիկները՝ երիկնին սիրող , զաւակնին սիրող ըլլալ , խոհեմ , ողջախոհ , տնաշէն , բարեգործ , իրենց երիկներուն նազանդ . որ չըլլայ թէ Աստուծոյ խօսքը հայհոյուի” : Տիւ . բ . 4 , 5 :

Ա . Բարեպաշտ կնիկները՝ որ աշխարհասէր երիկներ ունին , ի՞նչպէս պիտի աշխատին անոնք Վրիստոսի դարձունելու :

Պ . Իրենց բարի վարքովը : ա Կորնլ . է . 16 : ա Պիտ . է . 1 , 2 :

Ա . Եշիկներուն և կնիկներուն ընտանեկան հոգեւոր պարտաւորութիւնն ի՞նչ է :

Պ . Իրարու համար և իրարու հետ աղօթք ընել , և իրենց ընտանիքին հետ ալ , և իրարու երջանիկ ըլլալուն աշխատիլ , թէ աս աշխարհիս և թէ հանդերձեալ աշխարհին համար :

Ա . Կնիկները՝ Աստուծմէ ետքը իրենց երիկներուն վրայ սէր ունենալու են :

Բ . Փոխանակ՝ բարկացող , անձասէր ու հակառակող

ըլլալու , կրիկները պիտի ֆազանդին իրենց էրիկներուն ամէն բանի մէջ , բաց 'ի անոնցմէ՛ որ օրինաւոր չեն :

Դ . Իրենց ամենէն մեծ հոգն ու գլխաւոր պարտաւորութիւնը կը կայանայ բուն իրենց ընտանիքին մէջ : Ուստի հարկաւոր է որ տնաշէն , ժրածան , կանուխ արթընցող , մարդասէր , խնայող , զգուշաւոր , խաղաղարար և ծանրաբարոյ ըլլան . ու նաև աղէկ կառավարին իրենց զաւկըներն ու ծառաները , առանց ստէպ տուտըռալու , սպառնալու , ու ամեն ատեն զանգատ ընելու : Ան կրիկները՝ որ չափազանց զարդարանք կը սիրեն , ու միշտ տնե տուն կը պարան , շաղակրատութիւն կ'ընեն , ու ըիշներուն բերնէն կը ջանան լուրեր առնել՝ որ ետքը բամբասանք ընեն ու խոռովութիւն հանեն , անանկները թըշուառութեան մէջ կը ճգէն իրենց էրիկներն ու ընտանիքը , ու իրենց անձինքը փորձութեան ու գժբախտութեան կը տանին :

Ե . Իարեպաշտ կնիկները՝ որ աշխարհասէր էրիկներ ունին , պարտին զցոյլ ըլլալ իրենց վարմունքին խօսակցութեանը մէջ , որ չըլլայ թէ նաևապաշարմունքի տակ ճգեն իրենց էրիկները . այլ ընդ հակառակն պէտք է որ ամէն միջոցով համոզեն անոնք որ դարձի գան , ապաշխարեն ու հաւատան :

Դ . Էրիկներն ու կնիկները պէտք է որ միշտ միտքերնին բերն իրենց խոստմունքները և իրենց պարտաւորութիւնները մէկզմէկու վրայ , իրենց զաւկըներուն և ծառաներուն վրայ , ու մանաւանդ դէպ'ի լուսուած ալ . ու ամէն բանի մէջ պէտք է որ ջանան լուսութեանը օրինութիւնը ձեռք բերելու : Ստով . Ճիշ . 1 :

3 . Կանողքներուն պարտաւորութիւնը :

Հ . Կօնչ է բարեպաշտ ծնողաց առաջին պարտաւորութիւնը և արտօնութիւնը , իրենց զաւկըներուն վրայով :

Թ . Անոնց պարտաւորութիւնը և արտօնութիւնն է .

անոնք Ակրտութեամբ ընծայել Տէրոջը՝ որմէ որ ընդունեցին անոնք : ՞Օձո՞ւ ժէ 7-14 : ՞Առաջ ժ 28, 29 : կ 11 : Առաջ ժ 9-12 : Գարդ ժ 38, 39 : ժե 14, 15, 26-34 : Ամարի ժթ 13-15 : ժ Օրին կ 7 : լժ 46 : ժ ՏՄ ա 5 : կ 15 : Յիշ իշ 15 : Ասով հը 4-8 : Դուք ժ 21 :

Ճ Հօնչ ըսաւ մեր Փրկիչը պղտիկ տղոց իրեն գալուն համար :

Պ Ա Շնող տուեք տաք մանր տղոց որ խճի գան, և մի արգիլեք ատոնք ինչու որ Աստուծոյ թագաւորութիւնը ատանկներունն է” : Ամրի ժ 14-16 : Ամարի ժթ 14, 15 :

Ճ Ա Օաւկըները Ի՞նչպէս կրթելու հրամայուեցաւ ծնողքներուն :

Պ Ա Տէրոջը վարժութիւնովը ու խրատովը” : Երիւ կ 4 :

Ճ Ա Ծնողքներն ամէն բանէն աւելի՝ Ի՞նչ բանի պէտք է որ փափաքին իրենց զաւկըներուն համար :

Պ Ա Ազիներնուն փրկութեանը : Ամարի կ 33 :

Ճ Ա Եւ ծնողքներն Ի՞նչ պարտք պիտի պահանջեն իրենց զաւկըներէն :

Պ Ա Ըարունակ և կատարեալ կազանդութիւն :

Ճ Ա Ի՞նչ պէտք է որ սորվեցունեն անոնց՝ որ ամէն իրիկուն ու առտու անպատճառ կատարեն :

Պ Ա Եղօթք ընել Աստուծոյ :

Ճ Ա Ծնողքներն Ի՞նչ դիրք պիտի կարդացունեն իրենց զաւկըներուն, և միշտ անկէ սորվեցունեն անոնց :

Պ Ա Աստուածաշունչ Գիրքը :

Ճ Ա Ծնողքներուն պարտաւորութիւնն է որ իրենց զաւկըներուն հետ և իրենց զաւկըներուն համար՝ ամէն օր աղօթք ընեն :

Պ · Հրամերես :

Ա · Ի՞նչ տեսակ խօսակցութիւն պէտք է որ ընեն անոնք՝ իրենց զաւկըներուն առջևը :

Պ · Խարի և օգտակար խօսակցութիւններ :

Ա · Եւ Ի՞նչ տեսակ օրինակներ տալու են անոնց :

Պ · Խարի և գովելի օրինակներ :

Ա · Երժան է որ ծնողքները բարկութեան գրգռեն իրենց զաւկըները, զօօանքի համար :

Պ · Ջէ՛ քանզի գրուած է . “ Հայրեր՝ ձեր որդիները մի բարկացունեք ” : Եփես . կ . 4 : Առաջ . 4 :

21 :

Ա · Ծնողաց պահոտքն է որ զաւկըներնին չար ընկերութենէ զցուշացընեն ու անկէ հեռու պահեն :

Պ · Հրամերես : Եթառք . ա . 10-15 : Ժէ . 20 : ա Կորնլ . Ժէ . 33 :

Ա · Երբոր տղաք չար ու կամակոր ըլլալով չֆազանգին իրենց ծնողացը, անատեն ի՞նչ է ծնողաց պարտքը :

Պ · Պէտք է որ պատժելով իրատեն անոնք : Եթառք . Ժէ . 24 : Ժթ . 18 : իթ . 15 : իթ . 15, 17 :

Ա · Ի՞նչ խրատ տուաւ խմաստունն ասոր վրայով :

Պ · “ Տղայէն խրատը մի կտրեր . վասն զի թէ որ զանիկայ գաւազանով ծեծես, չմեռնիր : Դուն անիկայ գաւազանով կը ծեծես, բայց անոր հոգին դժոխքէն կ'ազատես ” : Եթառք . իթ . 13, 14 :

Ա · Եւ Ի՞նչ ըսաւ անիկայ, զաւկի մը կրթութեանը համար :

Պ · “ Կրթէ մանուկը իր ճամբան սկսած ատենը, որ իր ծերութեան ատենն ալ անկէ չխոտորի ” : Եթառք . իթ . 6 :

Ա · Հաւատարիմ և արդար ծնողքներուն զաւկըները յատուկ պիտի օրինուի՞ն :

- Պ . Հրամերես : ԾԱՆՏ . ԺՂ . 19 : Ք ՕՐԻ . Ք .
 40 : Է . 9 :
- Հ . Խօնը կ'ըսէ Դաւիթ ասոր վրայով :
- Պ . “Տղայ էի ու ծերացայ . բայց արդարը անտես
 եղած շտեսայ , կամ անոր զաւակը հաց մուրացող : Ա, մէն
 օր կ'ողորմի ու փոխ կու տայ , և անոր սերունդը օրնչուած
 է : Այսը . Է . 25 , 26 :
- Հ . Չար ծնողաց պատիժը՝ իրենց զաւկըներուն կը
 հատուցանէ՛ Աստուած :
- Պ . Հրամերես : ԽԱՅ Ք . 5 : ԼԳ . 7 : Թառաց ժդ .
 18 : Այսը . Է . 28 :

Ա . Բարեպաշտ ծնողաց առաջին գարտաւորութիւնը և
 արտօնութիւնը՝ իրենց զաւկըները մկրտութեան բերեն
 է . քանզի ասանկով իրենց զաւկըներուն համար ուխտ մը
 ըրած կ'ըլլան Աստուածոյ հետ՝ որ Աստուած իրենց զաւկը-
 ներուն Աստուած ըլլայ , և ան զաւակներն Աստուածոյ ծա-
 ռաներ ըլլան : Ուստի ան զաւկըներն հասկընալու կարող
 ըլլանուն պէս , պէտք է որ ծնողքները պատմեն անոնց աս-
 ուխտը , ըսելով թէ անոնք՝ Աստուածոյ ընծայուած են , ու
 իր եկեղեցին մէջ մկրտուած են , և թէ իրենց պարտա-
 ռորութիւնն է որ պապաշխարեն ու հաւատառ Յիսուս Ք. Ը-
 րիսոսուի , և ինքզինքնին Աստուածոյ յանձնեն . և թէ այ-
 նուհետև խոստովանելով զիրենք Աստուածոյ զաւակները՝
 պէտք է որ ընդունին ու յանձն անձն ան ամէնք՝ որ
 ծնողքներն իրենց մանկութեան ատենն ըրին իրենց համար՝
 Աստուածոյ հրամանին պէս :

Բ . ԾԱՆՈՂԸՆԵՐԸ պէտք է որ հոգ տանին զաւակներ-
 նուն , համբերող ըլլան անոնց տկարութիւններուն ու
 պակսութիւններուն . հոգան անոնց պէտք եղածը , պահ-
 պանեն անոնք վնասներէ , աշխատասէր ըլլաւ սորվեցունն
 անոնց , ու անոնք աղէկ վարժեցունն գիտութեան մէջ ,
 որ տաւներէն ու կալուածքներէն աւելի աղէկ բան է :

Պիտք է նաև սորվեցունեն անոնց աղօթք ընել , ու ստեղ աղօթք ընեն անոնց հետ և անոնց համար : Ենոնք տակաւին կարդալ չորված՝ սորվեցունեն անոնց Առւրբ Գիրքին մէջէն : Պղտիկուց տանին անոնք Եստուծոյ տունը , ու մեծ պատիւ մատուցանել տան Եստուծոյ տուրբ օրուան այսինքն Աիրակին . զգուշացունեն ու հեռու պահն անոնք չար ընկերներէ . յանդիմանեն անոնց յանցանքը՝ գաւազանին ալ չխնայելով : Ծնաժլ ծնողքները չքարկացունեն զաւկըներնին . հապա արմատացունեն անոնց ներսը՝ կազանդ , հեզ , խաղաղ , գոհ , ողորմած և ուրախ բնաւորութիւն մը : Հոգ տանին որ անոնք սիրեն եղայրնին ու քոյրենին . բարերար և ակնածու ըլլան ամէն մարդու , մանաւանդ ծերերուն . միշտ անոնց միտքը ձգե՞ն որ երջանիկ ըլլալու համար , անոնք պարտին օգտակար գործի մը մէջ ըլլալ . մանաւանդ պարտին նոր սիրտ մը ունենալ , սիրել Եստուած ամէն բանէն աւելի , և իրենց դրացին ալ իրենց անձին պէս : Խւ թող ծնողքները միշտ յիշե՞ն որ անօգուտ կ'ըլլան իրենց բոլըր խրատները , քանի որ բարի օրինակ չտան իրենց զաւկըներուն :

Դ . Եստուած՝ մասնաւոր խոստմունքներ կ'ընէ հաւատարիմ ու բարեպաշտ ծնողքներուն , թէ անոնց սերունդը պիտի օրկուի : Խայց ասանկ խոստմունքներ չկան՝ անհաւատարիմ ու անբարեպաշտ ծնողքներուն . ասոնք Եստուծոյ անէծքը պիտի բերեն իրենց զաւկըներուն վրայ : Ուստի պէտք է որ՝ առաջ իրենք սկսին Եստուծոյ ծառայել , ու ան ատեն Եստուած անոնց՝ և զաւկըներուն Եստուած պիտի ըլլայ :

4 • Տղայոց պարտաւորութիւնը :

(ՏԵՇ Հինգերորդ պատրուիրան+ը :)

5 • Տէրերուն պարտաւորութիւնը :

Դ. մ. է . է . 1-10

Հ. Աստուած Բօնչ պատուեր տուաւ տէրերուն :

Պ. “Դուաւ ալ տէրեր նոյնը ըրեք անոնց , ու ապառանալիքը թողլ տուեք , գիտնալով որ անոնց ալ ձեր ալ Տէրը երկինքն է . ու անոր քովը աշառութիւն չկայ : Երդեւ ու զ. ջ. : Տէրեր՝ ձեր ծառաներուն իրաւունք ու հաւասարութիւն տուեք , գիտնալով որ դուք ալ Տէր ունիք երկինքը ” : Առաջ . դ. 1 :

Հ. Ո՞վ է մեր ամենուս Տէրը երկինքին մէջ :

Պ. Աստուած է :

Հ. Ուստի տէրերն ու ծառաները՝ ամէնքն ալ հաւասմը են Աստուծոյ առջևը :

Պ. Այս , քանզի անիկայ աշառութիւն լըներ : Յունք . լաւ . 13-15 :

Հ. Կօնչպէս պիտի վարուին տէրերը իրենց ծառաներուն հետ :

Պ. Արդար ու մարդասէր վարմունքով :

Հ. Կօնչպէս կրնան տէրերը անիրաւութիւն ընել իրենց ծառաներուն :

Պ. Այսոնց բաւական ու աղէկ կերակուր տալը զանց ընելով , կամ անոնցմէ չափազանց աշխատութիւն պահանջնելով , կամ իրենց ծառայութեանը փոխարէն արժանաւոր վարձք չտալով , կամ իրենց խոստացած վարձքին

մէկ մասը կտրելով՝, կամ վճարումը երկնցունելով՝ և ուշ հատուցանելով։

Ա. Խօնչ պատուեր տուաւ Ո՞ղվէսին օրէնքը, ծառաներուն վարձքը ժամանակին վճարելու համար։

Պ. “Եթեզի վարձքով բանողին օրական վարձքը մէկ դիշը մինչև առառու քու քովդ չմնայ”։ ‘Ղետ ժի՞՛ ։

13 :

Ա. Խրեմիա մարդարէին բերնովը՝ Կատուած որո՞ւ դէմ կը զրուցէ։

Պ. Ենոր դէմ՝ որ կը չխէ իր տունը անարդարութեամբ, ու իր վերնատունն անիրաւութեամբ։ իր դրացին ձրի կ'աշխատցունէ, ու անոր վարձքը չհատուցաներ։ Երևմ ։ իբ ։ 13 :

Ա. Որո՞ւ դէմ՝ Կատուած պիտի գայ դատաստան ընէ, կ'ըսէ Արդարիա մարդարէն։

Պ. Ենոնց դէմ՝ որո՞նք կը չարչըրկեն վարձկանները իրենց վարձուցը համար։ Արդարութեամբ ։ 4 ։ 5 ։

Ա. Խօնչէս կրնան տէրերը անմարդասէր ըլսաւ իրենց ծառաներուն։

Պ. Խիստ և դաժան կամ տըռտուացող վարմունք մը ունենալով անսնց հետ։

Ա. Տէրերը իրենց ծառաներուն հոգիներուն համար պարտաւորութիւն մը ունի՞ն։

Պ. Արամերես ։ պարտական են կըթեւ իրենց ծառաները, Ոուրբ Գիրքն անոնց սորվեցունելով, և ամէն պատեհութիւն ու քաջալերութիւնը տալով՝ որ իրենց հոգիներուն փրկութեանը հոգ տանին։

Կատուած արդար Կատուած մընէ, ու վերջին օրը պիտի պատժէ ան ամէն անիրաւութիւնը՝ որ մարդիկ տկար և անօգնական անձանց կ'ըսնեն։ Են ատենն ամենուն Տէրը

չշղիւ պիտի քննէ բոլոր մեր ունեցած վարմնւնքներն ան մարդոց հետ՝ որ ինքը գրաւ մեր իշխանութեանը տակը : Ընդհանրապէս ծառաներուն վիճակն անարդ ու թշուառ է : Իարի տէր մը՝ բոլոր իր ջանքը պիտի թափէ , արդար ու քաղցր վարմնւնքով հաձնլի ընելու անոնց վիճակը՝ աս կեանքին մէջ . նաև իր կրցածին չափ պիտի աշխատի խրատով ու օրինակով անանկ ընթացք մը բռնել տալ անոնց՝ որ երջանիկ ու կատարեալ ըլլան հանդերձեալ կեանքին մէջ :

6. Ծառաներուն պարտաւորութիւնը :

Ծ. Օմագ . իդ . 1-67 :

Հ. Ծառաներուն թօնչ պատուէր տուաւ . Եստուած՝ իրենց տէրերուն կազանդելու վրայով :

Պ. “Ծառաներ՝ ամէն բանի մէջ նապանդ եղիք ձեր մարմնաւոր տէրերուն . չէ թէ աչքի առջև ծառայելով՝ մարդահաճներու պէս , հապա սրտի միամտութեամբ՝ Տէրոջմէ վախնալով” : Առա . գ . 22 :

Հ. “Աչքի առջև ծառայելը” թօնչ ըսել է :

Պ. Ես խօսքը կը վերաբերի ան ծառաներուն վարմնւնքին՝ որոնք միայն իրենց տիրոջը աչքին առջևը աղէկ կը ծառային :

Հ. Են ծառան՝ որ իր երկրաւոր տիրոջը աչքին առջևը միայն կը ծառայէ , իր երկնաւոր Տէրոջը առջևն ալ նոյն պէս պիտի վարուի :

Պ. Արամերես :

Հ. Ուրեմն ծառաներն թօնչպէս պիտի ծառայեն իրենց տէրերուն :

Պ. “Յօժարութեամբ պիտի ծառայեն որպէս թէ Տէրոջք , ու չէ թէ մարդոց” : Երեւ . կ . 7 :

Հ . Իրենց տէրերուն ի՞նչ բանի մէջ հաճելի ըլլալու պիտի ջանան :

Պ . “ Ամէն բանի մէջ հաճելի պիտի ըլլան , ոչ հակառակախօսներ ” : Տէր . ք . 9 : ա Պէտք . ք . 18-21 :

Հ . “ Ոչ հակառակախօս ” ըսելով ի՞նչ ըսել կ'ուղէ :

Պ . Ըսել կ'ուղէ որ՝ պէտք չէ անխոհեմութեամբ դիմադրութիւն ընել երբոր կը յանդիմանուի յանցանքի մը համար :

Հ . “ Օառայի մը ներուանծ է որ իր տիրոջմէն գողութիւն ընէ , սուտ խօսի անոր , կամ խարէութիւն բանեցունէ անոր համար բան մը ծախու առած ատենը :

Պ . Չէ . վասն զի իր պարտաւորութիւնն է , “ բոլորին բարի հաւատարմութիւն ցուցընել ” : Տէր . ք . 10 :

Հ . Ուսէ որ ծառաներն իրենց պարտաւորութիւնը հաւատարմութեամբ կատարեն , ու իրենց ծառայական վիճակին մէջ Աստուծոյ ծառայեն , ան ատենը յարգելի պիտի շըլա՞ն մարդոց քով , ու օրինեալ և պատուելի Աստուծոյ առջևը ուրիշներուն պէս :

Պ . Այս պիտի ըլլան . որովհետեւ “ Ամէն մէկը Բնէ բարիք որ ընէ , նոյնը Տէրոջմէն պիտի ընդունի , թէ ծառայ ըլլայ և թէ ազատ ” : Ադէս . զ . 8

Ա . Ուսո՞ղ ծառաները հաւատարմութեամբ ծառայեն իրենց տէրերուն նաև անոնց ետևէն ալ , ինչպէս որ անոնց առջևը : Աստուծած միշտ կը տեսնէ , թէ և տէրերը հոն շըլան :

Ի . “ Օառաները երբեմն անանկ կը կարծեն , որ առանց Աստուծած բարկացունելու՝ կրնան իրենց տիրոջը

սուտ խօսիլ ու խաբէութիւն ընել, և անկից զողնալ.
բայց ասանկ չէ. ինչու որ Եստուած չհամիր ասանկ բա-
նին. անիկայ կը պահանջէ արդարութիւն ու հաւատար-
մութիւն ամէն մարդոցմէ և ամէն պարագայի մէջ:

7. Խշաններուն պարտաւորութիւնը :

Ք Թագէ. Ք. 1-28 : Դաս. Ք. 1-37 :

Ն. Պէտք է որ ամէն երկիր և ամէն ժողովուրդ օրէնք
ունենայ, և հասարակութիւնը ան օրէնքին կազանդեցու-
նելու համար ալ՝ իշխաններ և կառավարիչներ ըլլան :

Պ. Արամերես :

Ն. Տնէ որ քաղաքներնուու մէջ ոչ օրէնք ունենանք ու
ոչ ալ կառավարիչ, կրնանք ապահով կամ երջանիկ
ըլլաւ :

Պ. Չէ. քանզի ան ատենն ամէն մարդ իր ուղածը
կ'ընէ: Դաս. Ժէ. 6: Տիւ նաև ժը և ժիշտ զլուխները:

Ն. Պէտք է որ ամէն կառավարիչ Եստուծմէ կար-
գուած և Ենով մեզ կառավարելու դրուած սեպենք:

Պ. Արամերես. “Ա ան զի չկայ իշխանութիւն մը որ
Եստուծմէ չըլլայ. և անոնք որ կան Եստուծմէ կարգուած
են”: Առով. Ժէ. 1:

Ն. Խշաններն ի՞նչպէս մարդիկ ըլլալու են:

Պ. “Արորդ մարդիկ՝ Եստուծմէ վախցող՝ ճշմարտա-
սէր ու ագահութիւնը ատող մարդիկ” : Ելիշ ժը. 21:

Ն. Ենոնք որո՞ւն վախովը ժողովուրդը կառավարելու
են:

Պ. Եստուծոյ վախովը: Ք Օրին. Ժէ. 14-20: Ծիս.
ա. 8: Ք Թագէ. Ժէ. 3: Ք Մասոյ. Ժիշտ. 4-11:

Հ . Խշանները երկու մարդոց դատը ի՞նչպէս պիտի տեսնեն :

Պ . Արդար դատաստանով : բ Օրին . ժկ . 18 , 19 :
Ժէ . 6 : Առաջի իթ . 12-14 : Երեմ . իբ . 2-4 :

Ե . Խոլոր երկրիս վրայ եղած ամէն ազգի և ժողովրդոց անշուշտ հարկաւոր է օրէնքներ և իշխաններ ունենալ : Ո՞արդս բնականաբար անօրէն էակ մըն է . ուստի պէտք է որ միշտ իշխանութեան տակ ըլլայ :

Ի . Խըրոր մէկը իշխան կ'ըլլայ , Աստուծոյ ձեռքովը կ'ըլլայ . այսինքն՝ Աստուած կը կանէ անիկայ ան պաշտօնին : Աստուած իր նախախնամութեամբը թող կու տայ որ կառափարէ : Աւ անիկայ Աստուծոյ սպասաւորն է , և պէտք է որ ան պաշտօնովը ծառայէ Աստուծոյ : Եւ ժողովուրդն ալ պէտք է որ իրեւ “Աստուծոյ սպասաւոր” հաւա մարին անիկայ : Հառավ . ժդ . 4 :

Գ . Խշանները բարձր պաշտօնի կանշուած են . և որովհետեւ կրնան ժողովուրդին շատ բարիք կամ չարիք ընել , անոր համար պէտք է որ “Կարող մարդիկ՝ Աստուծմէ վախցող՝ ճշմարտասէր ու ագահութիւնը ատող մարդիկ” ըլլան . բարեմիտ և բարեսիրոտ մարդիկ . որ մէկուն մէկալին աւելի աշառութիւն չընեն , որ մէկու մը երեսպաշտութիւն չընեն , որ ծուռ դատաստան կտրելու համար կաշառք ըլւտեն :

Դ . Անոնք պէտք է վարձատրեն արդարները և պատժեն շարերը , ամէն մարդոց իրաւունքը և ապրանքը պաշտպանելով , անանկ որ չարութիւն ընողներն իրենցմէ վախնան , և բարիները քաջալերութիւն առնեն . որ այսպէս իրենց երկիրը բարեհամբաւ ըլլայ ու յաջողութեամբ յառաջ երայ . և ժողովուրդը հանգիստ և ուրախ ըլլայ :

8 • ԺԱՂՋՎՈՒՐԴԻՆ պարտաւորութիւնը :

Հ-առվլ. ժէ . 1-14 :

Հ . Որովհետեւ իշխանները մեր աղէկութեանը համար դրուած Աստուծոյ պաշտօնեաներն են , ուստի պէտք չէ՞ որ պատուենք և յարգենք անոնք :

Պ . Հ-արամերես : ա Պիտք . ք . 17 : Ա-ստի . իէ . 21 :

Հ . Հ-արաման ունի՞նք մեր իշխանները վար զարնելու կամ անոնց դէմ խօսելու :

Պ . Չէ . ինչու որ գրուած է , թէ “ Կատաւորները մի հայհոյեր , և քու ժողովուրդիդ իշխանը մի անիծեր ” : Խէց իք . 28 : Խւ դարձեալ “ Ուստի հատուցէք պէտք եղածը ամենուն . որուն որ տուրք դրաւելու է՝ տուրքը , որուն որ մաքս՝ մաքսը , որուն որ վախ՝ վախնալը , որուն որ պատիւ՝ պատիւը ” : Հ-առվլ. ժէ . 7 : Ա-ստի . իք . 21 : ժէ . 24-26 :

Հ . Կարի քաղաքացին ինչով կը ճանչցուի :

Պ . Խշխաններուն կազմանդելովն ու քաղաքին ամէն օրէնքները բռնելով :

Հ . Անենք օրէնքին կազմանդելէն 'ի զատ՝ ուրիշերն ալ համոզելու պարտաւոր :

Պ . Հ-արամերես :

Հ . Ե՞ն որ օրէնքը կ'աւրէ՝ չկազմանդիր՝ մարդասպանութիւն ու գողովթիւն կ'ընէ , արժան չէ՞ որ բռնուի և օրէնքին հրամայածին պէս պատժուի :

Պ . Հ-արամերես : ք Օքի . իէ . 1-3 :

Հ . Ուստի աղէ՞կ բան է որ գող մը կամ մարդասպան մը ազատենք , ծածկելով իր եղած տեղը և իր փախչելուն օդնելով :

Պ . ԶԵ . քանզի այսպէս՝ քաղաքին ապահովութեանը կը վնասենք :

Հ . Ո՞ր իշխաններուն համար աղօթելու յատուկ հրաման մը եղած կայ մեզի :

Պ . Հրամերես : “ Նրբ՝ կ'աղաջեմ . ամէն բանէն առաջ՝ աղօթք ընել , ինդրուածք , աղաջանք , զոհութիւն՝ ամէն մարդոց համար , հանաւանդ թագաւորներուն և բոլոր իշխանաւորներուն համար . որ խաղաղ ու հանդարտ կեանք վարենք՝ բոլորին աստուածպաշտութիւնով ու պարկեցութիւնով : Խնչու որ ան է աղէկը ու ընդունելին մեր Փրկիւ Կատուծոյն առջել ” : անձ . թ . 1-3 :

Ա . Ժողովուրդին պարտաւորութիւնն է իրենց իշխանները պատուել և յարգել . անոնք Կատուծոյ սպասաւորներն են . ուստի պէտք է որ ժողովուրդը իշխաններուն պատիւն ու յարգը ճանշայ , արժանաւոր զովութիւն տարվ իրենց պաշտօնին մէջ ցըցուցած աղէկ վարքերուն համար . ու իրենց երբեմն ըրած պակսութիւննին և մոռացկոտութիւննին աշ ծածկելով : Ենոնց վրայով նախապաշարնեւնքներ ունենալին և գէշ լուրեր լսելին՝ պէտք է փախչին , և ամէն ինչ որ կ'ընեն կամ կ'ըսեն , զգուշանան իրենց իշխաններուն պատուոյն դպչելին :

Բ . Պէտք է որ ժողովուրդը երկիւղածութիւնով և կատարելապէս վազանդի քաղաքին օրէնքին և իշխաններուն : Ե՞ն՝ որ իշխանները վար կը զարնէ և օրէնքը կ'անարգէ , բոլոր իր քաղաքակից ժողովուրդին դէմ կը մեղանչէ . նաև կը մեղանչէ մեր Տէր Յիսուսին կրօնքին դէմ՝ որ կը սորվեցունէ մեզի վազանդ ըլլալ ամէն անոնց՝ սրոնք մեզ կառավարելու իշխաններութիւն ունին :

Գ . Ո՞նք չէ թէ միայն օրէնքին վազանդելու ենք , հապա նաև ջանք ընելու ենք բոլոր մեր քաղաքակիցներն աշ մեզի պէս վազանդեցունելու : Ու երբոր մէկը օրէնքն անարգէ՝ զողովութիւն , սպասութիւն կամ ինչ և իցէ չա-

բագործութիւն ընելով, պէտք չէ որ մեր օգնութիւնով անիկայ պաշտպանենք կամ փախցունենք, քանզի ասանկով քաղաքին ապահովութիւնը և համբաւը կ'աւրուի :

Դ. Աստուած կ'ուզէ մեզմէ որ, չէ թէ միայն յարգութիւն տանք և վազանդինք իշխաններուն, հապանաեալոթք ընենք անոնց համար, որ Աստուած օրֆի անոնք, և անոնց ընտանիքները • որ բարի իշխաններ ըլլան, աստուածավախ, իրենց պաշտօնը հաւատարմութիւնով կատարող, ժողովրդոց աղէկութիւնը վնտըռող, անանկ որ՝ ամէն խաղաղութիւնով մենք ալ մարդոց ու Աստուածյ մեր ունեցած պարտաւորութիւնիս աղէկ կատարենք :